ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԻՐՎԱՆԶԱԴԵ

ԱՐԱՄԲԻՆ

I

Առավոտյան տասն ու մեկ ժամն էր: Այրի Նատալիան զգուշությամբ բաց արավ յուր երիտասարդ կենողի սենյակի դռներն և հարցրեց.

— Պարոն Ռոստամյան, սուրճ կկամենա՞ք անուշ անել:

— Ուղարկեցեք մի բաժակ, — ասաց Ռոստամյանը, որ սեղանի մոտ նստած, զբաղված էր գրությամբ:

Այրին դռները ծածկեց և մի րոպեից հետո կրկին երևեցավ, երկու ձեռներով բռնած մի մատուցարան, որի վրա դրած էին մի բաժակ սուրճ և մի բուռ քաղցր պաքսիմատ:

— Այսօր ես եմ եփել, Պետրեն միշտ փչացնում է, — ասաց նա, և բաժակը վերցնելով, հանդիսավոր կերպով դրեց Ռոստամյանի առջև:

Մինչև բաժակն դատարկելն այրին, նստած յուր կենողի դեմ ու դեմ, նայում էր նրա երեսին:

— Հավանեցի՞ք, — հարցրեց նա, երբ Ռոստամյանը շտապով խմեց սուրճն ու վերջացրեց:

— Շնորհակալ եմ, շատ լավն է, — պատասխանեց վերջինն և գրիչը վերցրեց:

Մի քանի րոպե, դատարկ բաժակը ձեռին, այրի Նատալիան անշարժ կանգնած էր և մտիկ էր անում յուր երիտասարդ կենողին: Վերջինը, կարծես մոռացած նրա ներկայությունը, գլուխը քաշ, մերթ գրում էր, մերթ մտածում:

— Ստեփան Գրիգորիչ, — արտասանեց այրին, բաժակը դնելով սեղանի ծայրին և ինքը նորից տեղավորվելով աթոռներից մեկի վրա:

Ռոստամյանը գլուխը բարձրացրեց և նայեց այրիի երեսին:

— Ստեփան Գրիգորիչ, բավական է, ասում եմ ձեզ, բավական է, մեղք եք, աստված վկա մեղք եք: Ես չեմ ասում, թե մի գրեք ու կարդաք, է՛ հ, ինչքան ուզում եք պարապեցեք, բայց մի քիչ էլ ձեր առողջության մասին հոգացեք: Չէ՛, որդի, այդպիսով դուք վերջը ձեր սիրտը կմաշեք, ես ձեզ սիրելուց եմ ասում: Ա՛յ, այդպես էր, իսկ և իսկ այդպես էր իմ Գիգոլն էլ, բայց վերջն ի՛նչ եղավ... Ախ, Գիգո՛լ Գիգո՛լ...

Այրիի դեմքն արտահայտեց խորին դառնություն, աչքերի մեջ փայլեցին արտասուքի կաթիլներ: Ռոստամյանը լուռ տհաճությամբ լսում էր նրա խոսքերը:

Երկարատև նստակեցությունը, ծանր մտավոր աշխատությունը, ձմեռային անքուն գիշերները միևնույն սեղանի քով, միևնույն գործով — երեսնամյա երիտասարդի դեմքի վրա դրոշմել էին ծերության առաջին կնիքը: Նրա երեսի թուխ կաշին տեղ-տեղ — աչքերի ներքո, միշտ սեղմված բերանի անկյուններում — նշմարելի կերպով կնճռվել էին: Իսկ ուղղագիծ, սակավ ինչ սրածայր քթի կողմերից սկսած դեպի վայր գծավորվել էին երկու խորշեր, իբրև տոկուն աշխատության և մտքերի հարատև լարման ապացույց: Այս էր, որ մելամաղձային արտահայտություն էր տալիս նրա դեմքին: Բայց արտաքուստ վաղաժամ թառամած երիտասարդի խոշոր մուգ-շագանակագույն աչքերի մեջ փայլում էր մի տեսակ մանկական անմեղություն, որ մանավանդ գրավիչ էր, երբ նա ժպտում էր կամ ծիծաղում: Մարմնապես տակավին նա առողջ էր զգում իրան: Աշխատում էր որպես լարված մի մեքենա: Օրվա մեջ տասն ու չորս ժամ պարապելը նրա համար սովորական էր, իսկ ձմեռը — երբեմն ավելի:

Այրի Նատալիան ակնհայտ փաստերով հաստատում էր, թե երիտասարդը չպիտի այդ տեսակ կյանք վարի, թե «մարդ մի անգամ է ծնվում, ոչ թե երկու անգամ», թե հարկավոր է, որ նա աշխարհի զվարճությունների մասին էլ մտածի: Եվ բարեսիրտ կինն ուղիղ չորս տարի էր, որ այսպես խրատում էր նրան, մայրական անկեղծ ցավակցությունից դրդված: Հայտնի էր նրան, որ Ռոստամյանը մի պանդուխտ երիտասարդ է, զուրկ ծնողներից, հեռու ազգականներից, միայնակ, ինչպես լերկ ժայռի ճակատին բուսած մի վայրենի ծառ: Այրին ինքը, բացի մի ամուսնացած աղջկանից, ուներ մի որդի, որ ուսանում էր Պետերբուրգի համալսարանում: — Միայն մի արու որդի, իսկ մյուսը, որ անդրանիկն էր, մեռել էր ուսանող ժամանակ: Այրին յուր Գիգոլի վաղահաս մահը վերագրում էր ուսմանն և գրքերին: Մորմոքվում էր նրա սիրտն, երբ մտածում էր, թե նրա միակ Գաբոն ևս այժմ նույն կյանքն է վարում, ինչպես մյուս եղբայրն և ինչպես ահա այս երիտասարդը: Ուստի, խրատելով Ռոստամյանին, նրան թվում էր, թե խրատում է և՛ յուր հարազատ որդուն, թե այն, ինչ որ ասում է առաջնին, հասնում է և՛ վերջնի լսելիքին: Ո՛րպիսի քնքշությամբ նա աշխատում էր մեղմացնել այն պաղությունը, որով շրջապատել էր իրան այդ մենակյացը: Բայց ապարդյուն, համառ մենակյացը, բացի յուր գրքերից, ձեռագրներից և սենյակի չորս պատերից, եթե սիրում էր մի ընկերություն, այդ յուր ներքին աշխարհն էր:

Ապարդյուն մնաց և այսօր այրի Նատալիայի մայրական հանդիմանությունը: Նա մատուցարանը վերցրեց և լուռ դուրս գնաց, գլուխը խորհրդավոր կերպով շարժելով, որ արտահայտում էր և՛ սաստիկ տարակուսանք, և՛ անկեղծ սեր, և՛ երկյուղ: Մի փոքր անցած՝ նա դարձյալ ներս մտավ, այս անգամ հագնված-պատրաստ ուր որ է գնալու համար:

— Ստեփան Գրիգորիչ, այս բանալին էլի թողնում եմ ձեզ մոտ, — ասաց նա, մի մեծ բանալի դնելով Ռոստամյանի սեղանի ծայրին, — ես գնում եմ Կատոյի մոտ. Պետրեին էլ հետս տանում եմ: Եթե բնակարանն ուզող լինի, գինր խոմ գիտեք, մի կոպեկ էլ չպակասեցնեք հիսուն մանեթից: Լսո՞ւմ եք, մի կոպեկ էլ:

— Շատ լավ:

Այրին գնաց, Ռոստամյանը, յուր ընդհատված մտքերն ամփոփելու համար, մի քանի վայրկյան դժգոհ հայացքը ձգեց լուսամուտից դեպի դուրս:

Գեղեցիկ էր այն օրվա եղանակը: Այդ — ձմեռավերջի այն օրերից մեկն էր, երբ մարդու սիրտը լցվում է անորոշ անձկությամբ, և նա հոգով ձգտում է օրով առաջ դեպի գարուն: Պարզ, անխառն էր երկինքը. մի շաբաթ էր, որ նա չէր սքողվում ամպերով: Միայն հյուսիսից երբեմն բարձրանում էին մոխրագույն թուխպեր և տարածվում հորիզոնի ստորին կողմերում, բայց կեսօրվա դեմ, հանդիպելով օդի ջերմ հոսանքին, ինքն ըստ ինքյան արագ չքանում էին երկնային տարածության մեջ:

Նույն վայրկյանին, երբ Ռոստամյանը նայում էր դեպի դուրս, նրա լուսամուտը առջևով, զորեղ ձեռքից արձակված քարերի պես, սլանում էին սրաթռիչ ճնճղուկները, խաղաղ օդը շարժելով իրանց թևերի արագ հարվածներով: Ախտաբորբոք աղավնիների մի երամ, դիմացի ցածրաշեն տան կտուրի վրա նստած, կտցահարում էր միմյանց: Ամեն ինչ հրճվում էր գարնան մերձավորությամբ, անգամ մենակյացի սենյակի փոքրաթիվ ճանճերը, որոնք, սև բիծերի նման կպել էին լուսամուտի ապակիներին և ախորժելի թմրության մեջ չէին շարժվում իրանց տեղերից:

Հեռու տարածության մեջ երևում էր Թիֆլիսի հյուսիսային շրջակայքը — Կոլոնիան, Մուշտայիդի անտերև ծառերի սև խտությունը, օձապտույտ Քուռի գեղեցիկ հովիտը և ապա հեռու ու ավելի հեռու լուսավորվում էին Կովկասյան լեռներն, որոնց մեջ թագավորում է Կազբեկն, ինչպես մի պատկառելի նահապետ, շրջապատված յուր զավակներով: Նորեկ ձյունի թարմ ծալքերով ծանրաբեռնված բարձրագագաթ լեռան վրա, բացի մի քանի ուղղահայաց ժայռերից, որոնց վրա ձյուն չի նստում, չէին երևում այն սև գծերն և մեծ խորշերը, որ փորվում է նրա կրծքի վրա միջնամառային հրատապ շոգերից: Յուր սպիտակ զգեստավորության մեջ նա նայում էր ուրախ, սառուցք դարձած ձյունի բյուրավոր աստղիկներով ժպտալով արևի երեսին — ձմեռային արևի, որի ջերմությունը տակավին անզոր էր թափանցել նրա ստորոտային կեղևի մեջ անգամ: Կարծես, օդի մաքրությունը սեղմել, կարճացրել էր հարյուր վերստ տարածությունը, այնքան հսկայական լեռը Ռոստամյանի լուսամուտից երևում էր պարզ ու որոշ, նկարված հակնթագույն երկնակամարի վրա:

Անցել էր կես ժամ այրի Նատալիայի դուրս գնալուց: Ռոստամյանը նոր խորասուզվել էր յուր գործի մեջ: Հանկարծ լսվեց փողոցային դռների զանգակի ձայնը: Սկզբում Ռոստամյանը ուշադրություն չդարձրեց, բայց երբ ձայնը մի քանի անգամ կրկնվեց, տրտնջալով դուրս եկավ և մուգ-կարմրագույն փայտաշեն մաքուր սանդուղքով ցած իջավ: Նա բաց արավ դռներն և պատրաստ էր բարկացած արտասանել, «ի՞նչ եք կամենում», երբ նրա առջև բացվեց մի պատկառելի պատկեր: Նա, փոխանակ կոշտ հարցը տալու, հարգանքով հետ քաշվեց:

Դա մի բարեդեմ ծերունի էր, ալեխառն մազերով ու միրուքով, հագնված խիստ մաքուր և հարուստ: Մի ձեռով հենված ձեռնափայտի վրա, մյուս թևի տակ նա սեղմած ուներ բազուկը մի երիտասարդ կնոջ, որի դեմքը կիսով չափ ծածկված էր նուրբ կինեմոնագույն շղարշով:

— Ասացեք, խնդրեմ, այստե՞ղ են բնակարան վարձով տալիս, — հարցրեց ծերունին դուրեկան ձայնով և քաղաքավարի կերպով գլխարկի ծայրը քիչ շարժեց:

— Այո, — պատասխանեց Ռոստամյանը, նույնպես գլուխ տալով:

— Կարելի՞ է տեսնել։

— Բարեհաճեցե՛ք։

Նա մի կողմ քաշվեց, որ ճանապարհ տա ծերունի տղամարդուն և երիտասարդ կնոջը։

Բնակարանը գտնվում էր պատշգամբի մյուս կողմում, ուղիղ Ռոստամյանի բնակարանի դեմ ու դեմ։ Երեք ամիս էր, որ նա դատարկ էր, և այս երեք ամսվա ընթացքում, գրեթե ամեն օր, այրի Նատալիան Ռոստամյանին խնդրում էր վարձողներ գտնել։ Տունը սեփական էր և մնացել էր այրիի հանգուցյալ ամուսնուց, իբրև միակ ժառանգություն։ Մայր ու որդի ապրում էին այդ տան եկամուտով։ Ներքին հարկը վարձած էր մի ռուս պաշտոնյայի ընտանիք, վերին հարկի կես մասի երկու սենյակներում բնակվում էր ինքն այրին, իսկ մյուս երկուսում՝ Ռոստամյանը։ Դատարկ բնակարանը կազմում էր վերին հարկի երկրորդ կեսը։ Ուստի նրա պարապությունը բավական դժվարացնում էր այրիի ապրուստը։

Ռոստամյանն անծանոթներին առաջնորդեց դեպի վարձվելի բնակարանը։

— Խոնավ չէ՞, — հարցրեց ծերունին, առաջին սենյակը մտնելով և, ինչպես սովորաբար լինում է, առաջին հայացքն առաստաղին ձգելով։

— Ամենևին ոչ։

Երիտասարդ կինը շտապով մոտեցավ այս ու այն լուսամուտին, նայեց դեպի փողոց։ Դա մոտ քսան ու հինգ տարոք, ավելի բարձր, քան միջահասակ, դեմքի կանոնավոր գծագրությամբ, առողջ կազմվածքով մի էակ էր։ Տիկին էր նա, թե օրիորդ — Ռոստամյանը չկարողացավ որոշել։ Նույն վայրկյանին, երբ երիտասարդ կինն երեսը դարձրեց դեպի ծերունին, Ռոստամյանի հայացքը հանդիպեց նրա աչքերին, և նա, որ ամոթխած էր, անվստահ, մինչև անգամ երկչոտ կանանց վերաբերմամբ, շփոթված, աչքերը դարձրեց մյուս կողմ։

Ծերունին անցավ մյուս սենյակները։ Երիտասարդ կինը հետևեց նրան։

Առաջինն ուշադրությամբ զննում էր բնակարանի ամեն մի սենյակն և երբեմն ֆրանսերեն լեզվով յուր նկատողությունները հաղորդում էր երիտասարդ կնոջը։

— Խոհանոց ունի՞, — հարցրեց նա։

— Ունի,

— Մաքո՞ւր է։

— Տեսե՛ք։

Երբ խոհանոցը, պատշգամբը, գավիթը, ամեն ինչ ծերունին տեսավ և չորս սենյակները մի անգամ ևս զննեց, դարձավ երիտասարդ կնոջն և ասաց.

— Հարմար է։

Խոսեցին գնի մասին։ Ծերունին նորից սկսեց խորհրդակցել երիտասարդ կնոջ հետ։

Այդ միջոցին Ռոստամյանն ուշադրությամբ սկսեց դիտել նրան։ Ոչ մեկն և ոչ մյուսն յուր արտաքին տեսքով թիֆլիսեցու նման չէր։ Պարզ էր, որ եկվորներ էին։ Նրանց դեմքերի գծագրությունն և գույնը հայկական էին, թեև խոսում էին Ռոստամյանի հետ մաքուր ռուսերենով, մանավանդ երիտասարդ կինը։ Տեղ-տեղ ծերունու արտասանությունը շեղվում էր բուն ռուսականից, հիշեցնելով հյուսիսային Կովկասի հայերին հատուկ արտասանությունը։ Բայց հետաքրքրելին այս չէր Ռոստամյանի համար։ Հենց առաջին հայացքից նա երիտասարդ կնոջ խոշոր, պարզագույն աչքերի մեջ նկատել էր մի խորին թախիծ։ Այդ ոչ խոնջության նշան էր, ոչ և անցողիկ մի դառնություն. ինչ որ ծանր մտախոհության կամ հոգեկան մի անբաժան վշտի արտահայտություն էր այն, որ նշմարվում էր երիտասարդ կնոջ դեմքի բոլոր գծերի մեջ։

Ծերունին, խորհրդակցելու միջոցին, անկնածությամբ մտիկ էր անում նրան և թվում էր երբեմն, որ նա չի համարձակվում ուղիղ նրա տխուր աչքերի մեջ նայել։

Երիտասարդ կինը խոսում էր հոգնակի դեմքով, իսկ ծերունին-եզակի։

«Երևի հայր ու դուստր են», — մտածեց Ռոստամյանը, միևնույն ժամանակ նկատելով այդ կանացի և այդ այրական դեմքերի մեջ արյունակիցների նմանություն, որ տարիների և սեռերի տարբերությունը չէր քողարկում փոքր ի շատե դիտող աչքերից։

— Ահա ձեր կանխավճարը, — ասաց ծերունին, մի հատ տասը ռուբլիանոց թղթադրամ տալով Ռոստամյանին, — մենք կտեղափոխվենք վաղը։

— Բայց, ասացե՛ք խնդրեմ, — խոսեց այս անգամ երիտասարդ կինը, մի ուշադիր հայացք ձգելով Ռոստամյանի վրա, — այս գավթում կամ հարևանության մեջ աղմուկ լինո՞ւմ է։

— Այդ կողմից կարող եմ երաշխավոր լինել, որ ոչ ոք ձեզ չի անհանգստացնիլ։

— Գիտեք, իմ աղջիկն աղմուկ չի սիրում, — մեջ մտավ ծերունին, — այս պատճառով էլ մենք քաղաքի կենտրոնում չենք վարձում բնակարան։

— Երևի նորեկներ եք դուք, — ասաց Ռոստամյանը։

— Այո, այո, մի ամիս չկա, որ եկել ենք Ռուսիայից։

Հյուրանոցում երկար բնակվել անհնարին է, մանավանդ այստեղի հյուրանոցներում։ Իսկ դուք այս տան տե՞րն եք։

Ոչ, կենող եմ։

— Ձեր ազգանո՞ւնը։

— Ռոստամյան։

— Մեղ հարկավոր է ծանոթանալ միմյանց հետ, — ասաց ծերունին, Ռոստամյանի ձեռը սեղմելով, — Մինաս Կիրիլլիչ Քիրիշչիև… սա էլ իմ աղջիկն է, Վարվառա Մինաևան։

Դուրս գալու ժամանակ երիտասարդ կինը մի անգամ ևս լուսամուտից հայացք ձգեց դեպի քաղաքի հեռավոր շրջակայքն և արտասանեց.

— Ի՛նչ հրաշալի տեսարան է։

Ռոստամյանը լսեց նրա ծանր և երկար հոգոցը։ Երբեք նա մի կնոջ երեսին երկու անգամ միմյանց հետևից նայած չէր, ո՛չ դրսում, ո՛չ մի տան մեջ, եթե երբևիցե նա գտնվել էր մի տան մեջ կանանց շրջանում։ Բայց այդ ավելի նիհար, քան թե գեր, սակավ ինչ գունատ թախծալի դեմքն, այդ խոշոր, տխրափայլ աչքերր մի քառորդ ժամ կաշկանդեցին նրա ուշադրությունը։ Գուցե պատճառն այն հետաքրքիր հայացքներն էին, որոնց նա արժանացավ երիտասարդ կնոջ կողմից — չգիտեր։ Չգիտեր նույնպես, թե ինչու ծերունին և դուստրը դուրս գնալուց հետո, ինքը մի քանի րոպե անշարժ կանգնած էր փողոցի լուսամուտի առջև և նայում էր մոտակա եկեղեցու արծաթափայլ գմբեթին, որ պսպղում էր արևի ճառագայթների ներքո։

Վերադարձավ այրի Նատալիան։

— էէ՛, Նատալիա Պետրովնա, ի՞նչ կտաք, որ մի ուրախալի լուր հայտնեմ ձեզ, — դարձավ Ռոստամյանը ուրախ դեմքով յուր տանտիրուհուն։

— Ով գիտե, վարձել են բնակարանը…

— Հենց այդ է, ահա՛ կանխավճարը։

— Օ՛հ, փառք աստուծո… ապրի՛ս, ապրի՛ս, որդի, — գոչեց Նատալիա Պետրովնան, կարմիր թղթադրամը ծալելով և գրպանր դնելով։ — Ո՞վ վարձեց։

— Մի ծեր մարդ յուր աղջկա հետ։

— Երկու հոգի՞ միայն։

— Երկու էլ ծառա — մի աղախին և մի խոհարար։

— Իսկ և իսկ իմ ուզածն է։ Լա՞վ մարդիկ են։

— Աստված գիտե, գոնե դեմքով լավ երևացին ինձ։ Ահա անունները գրված են այս թղթի վրա։

Նատալիա Պետրովնան ուրախությունից պատրաստ էր գրկել և համբուրել Ռոստամյանին։ Բայց Ռոստամյանն, ինչևիցե, օտար էր, իսկ ինքը չնայելով յուր պատկառելի տարիքին, տակավին երիտասարդ էր համարում իրան։

Ճաշից հետո այրին անմիջապես հրամայեց ծառային վարձված բնակարանի լուսամուտներն ու հատակը լվանալ, պատերն ու առաստաղը մաքրել սարդի ոստայնից: Նա շտապեց յուր աղջկա մոտ, որ նրան հաղորդի ուրախալի լուրը, վերադարձավ և կրկին շնորհակալություն հայտնեց Ռոստամյանին: Ամբողջ օրն այրին ուրախությունից ոտքի վրա էր :

Իսկ Ռոստամյանի առջև մերթ ընդ մերթ պատկերանում էին ծերունու պատկառելի և նրա դստեր տխուր դեմքերը: Այդ անծանոթ անձինք ինչ-որ տարօրինակ և ախորժ տպավորություն էին գործել նրա վրա: Երբեք մենակյաց յուր կյանքում տեսած չէր ծնողի ու զավակի այնքան ներդաշնակ և գրավիչ զույգ, որպես այդ նորեկները — հայր ու դուստր …

II

Առավոտը ծերունին եկավ և նախազգուշացրեց, թե պիտի տեղափոխվեն ճաշից հետո: Նատալիա Պետրովնան նրան ընդունեց խիստ վայելուչ կերպով, քաղաքավարությամբ հրավիրեց ներս, ծանոթացավ և հուսադրեց, թե բնակարանն ամեն կողմից հավանելի կլինի նրան:

— Առաջին անգա՞մն է ձեր Թիֆլիս գալը, — հարցրեց տանտիրուհին:

— Ո՛չ, մի քանի անգամ եղել եմ, բայց շատ վաղուց, — պատասխանեց ծերունին, — հազար ութ հարյուր յոթանասուն ու վեց թվականին, պատերազմից առաջ, ես այստեղ ցորեն էի գնում ռուսաց զորքերի համար: Այն ժամանակ Թիֆլիսում ավելի կենդանություն կար, տիկին, իսկ այժմ նա փոխվել է….

— Մեծ իշխանը որ գնաց, Թիֆլիսն էլ դատարկվեց, — ասաց այրին, հառաչելով: — Այն ժամանակ ձեր վարձած բնակարանում կենում էր… գեներալ… սպասեցե՛ք, սպասեցեք… գեներալ Չուդինովը: Գիտե՞ք որքան էր վճարում, տարեկան ինը հարյուր մանեթ: Այժմ շատ է պակասել տների վարձը, շա՜ տ…

Կեսօրից հետո նորեկները տեղափոխվեցին: Նրանց բոլոր կահկարասիքն էին՝ մի քանի աթոռներ ու բազկաթոռներ, երկու պահարան, երկու գրասեղան, մի գահավորակ, մի քանի պարսկական գեղեցիկ գորգեր, մի դաշնամուր և մի քանի այլ և այլ մանր պարագաներ: Բոլորը նոր էր և, ըստ երևույթին, բազարում գնված:

Ռոստամյանը, դռները փակած, հանգստանում էր յուր սենյակում, երբ նորեկները տանտիրուհու օգնությամբ, դասավորում էին իրանց կահ-կարասիքը: Ամբողջ օրը նա տնից դուրս չեկավ: Ո՛չ մշակների աղմուկը, ո՛չ ծերունու և Նատալիա Պետրովնայի բարձրաձայն պատվերները ծառաներին և ո՛չ երիտասարդ կնոջ մեղմ ու դուրեկան ձայնը, որ մերթ ընդ մերթ լսվում էր դիմացի պատշգամբից, կարծես, չէին հասնում նրա ականջներին:

Մյուս օրը վաղ առավոտ Նատալիա Պետրովնան մտավ նրա սենյակը զվարթ դեմքով, հագստի թևերը հետ ծալած, և սկսեց քանի մի տեղեկություններ հաղորդել յուր նոր կենողների մասին:

— Խիստ լավ մարդիկ են, — ասում էր նա ոգևորված, — հենց երեկ և եթ վարձը տվեցին: Հայրն աղջկանից է լավ, աղջիկը հորից, երկուսն էլ դուրեկան են: Աղջիկր շատ գեղեցիկ է... ասենք, գեղեցիկ չէ, սիրուն է, սիրուն: Ես նրանից ավելի գեղեցիկները շատ եմ տեսել, բայց ուրիշ բան է նա: Եթե ես տղա լինեի, տեղն ու տեղը կսիրահարվեի: Հապա, Ստեփան Գրիգորիչ, մի լավ մտիկ արեք նրան... է՛հ ո՛ւմն եմ ասում, դուք խոմ տղամարդ չեք, հա՛ հա՛ հա՛:

Ճաշի ժամանակ Նատալիա Պետրովնայի խոսակցության առարկան դարձյալ նորեկներն էին: Չէր անցել նրանց տեղափոխվելուց քսան ժամ, և այրին արդեն հափշտակված էր: Նա ոգևորված պատմում էր, թե ինչպես ծերունին այն օրը դիմավորել էր իրան, թե ինչպես Վարվառա Մինաևնան պատվել էր, ոտքի կանգնելով: Երևում է, որ հասարակ մարդիկ չեն. կամ շատ հարո՛ւստ են, կամ մեծ ցեղից են: Աղջկա պահարանը լիքն է տեսակ-տեսակ նորածև հագուստներով. հայրը չորս ու հինգ մուշտակներ ու վերարկուներ ունի: Ծերունին պարզ մարդ է. նա խնդրում է ու աղաչում Նատալիա Պետրովնային շուտ-շուտ այցելություն անել, որ «օտար երկրում տխուր չանցնի մեր օրը», ասում է:

— Ես էլ իրանց համեցեք արի, Ստեփան Գրիգորիչ: է՛հ, թող գան ու գնան, աղջիկը խիստ տխուր է, չեմ իմանում ինչ հոգս ունի, շատ քիչ է խոսում, չի ծիծաղում:

Հետևյալ և երրորդ օրն այրին միևնույնն էր կրկնում նորեկների մասին: Այս անգամ նա իմացել էր, որ նրանք եկել են Մոսկվայից, որ եղել են Պետերբուրգում, շատ և շատ քաղաքներ են տեսել, որ արտասահմանում ևս ապրել են մի առ ժամանակ:

— Մի խոսքով, շատ օրինավոր մարդիկ են... ավարտեց այրին, պարծենալով, որ այնպիսի կենողներ ունի:

Կենդանություն ստացած բնակարանի լուսամուտների փեղկերն ամեն օր առավոտը բացվում էին, երեկոյան փակվում: Ռոստամյանը շարունակում էր յուր գործը: Արդեն անցել էր մի ամբողջ շաբաթ, և նա միայն երկու անգամ էր տեսել ծերունուն ու նրա աղջկան, առաջինին — փողոցում, վերջինին — պատշգամբի վրա: Տակավին նա չէր հետաքրքրվում յուր դրացիների գոյությամբ: Միայն երբեմն նրա աչքի առջև պատկերանում էր երիտասարդ կինն յուր թախծալի աչքերով, որ առաջին օրը բարակ շղարշի տակից այնպես տխուր նայում էին դեպի հեռավոր տարածություն: Հիշեց Ռուստաամյանը մի քանի անգամ երիտասարդ կնոջ և՛ ծանր հոգոցը: Բայց այս բոլորը միայն վայրկենաբար: Այնուհետև գործը դարձյալ խլում էր նրա բոլոր ուշքն ու միտքը, և նա խորասուզվում էր հարատև մտավոր աշխատության մեջ:

Մի անգամ իրիկնադեմին, երբ արևը դեռ մայր չէր մտել, նա յուր սեղանի մոտ կանգնած, մտիկ էր անում դեպի փողոց: Հեռվից նրա ականջին հասավ մի ձայն — նախ ցածր, ապա աստիճանաբար բարձր ու բարձր: Դեպի գավիթ նայող լուսամուտներից մեկը նա փոքր առաջ բացել էր, որ ներսում կուտակված ծխախոտի ծուխը դուրս գա: Թարմ և բավական սառն իրիկնային օդի հետ սենյակի մշտական մռայլ ու լուռ մթնոլորտի մեջ տարածվեցին երգի հնչյուններ, որոնց նմանը նա չէր լսել մինչև այն օրն և, այո, չպիտի լսեր հավիտյան: Երբ նա մանուկ էր, ամառային երեկոներն, յուր հայրենի նահապետական քաղաքի շրջակա այգիներում զբոսնելիս, արևի վերջին ճառագայթների տակ սիրում էր նստել թփերի ստվերում և լսել քաղցրաձայն թռչունների երգր: Այլ բաների հետ նրա սրտի խորքում մի անջնջելի

տպավորություն էր թողել և՛ այգ երգը որ, մերթ ընդ մերթ, անցյալը հիշելիս, զարթնում էր և յուր հետ զարթեցնում մանկության ուրախ և տխուր հիշատակներ: Բայց այդ — անցյալին էր պատկանում: Իսկ ա՛յժմ...

Նա զգուշությամբ, կարծես վախենալով, որ մի գուցե ձայնն ընդհատվի, հուշիկ քայլերով մոտեցավ լուսամուտին: Երգը շարունակվում էր, մերթ բարձրանալով, մերթ իջնելով: Երբեմն նա բոլորովին անլսելի էր դառնում, և այդ վայրկյաններին նրան փոխարինում էր նույն եղանակով, բայց ո՛չ նույն զգացմունքով դաշնամուրի ձայնը:

Գավթում ամեն ինչ խաղաղ էր, կարծես, երգը չխանգարելու համար: Միայն մի քանի ճնճղուկներ տերևաթափ ակացիաների ճյուղերի վրա աղմկում էին: Թվում էր Ռոստամյանին, որ նույնիսկ նրանց ճլվլոցները ներդաշնակություն են պահում դիմացի պատշգամբից լսվող անուշ երգի հետ:

Դադարեց երգը, լռեց դաշնամուրը, բայց նա, դեռ կանգնած լուսամուտի առջև, անթարթ աչքերով նայում էր դեմ ու դեմ: Եվ սթափվեց նա այն վայրկյանին, երբ հայացքն ընկավ դիմացի լուսամուտին: Նրա կասկածը փարատվեց: Երգեցողը նա էր, այն ծերունու երիտասարդ աղջիկը: Տխրադեմ էակն երգում էր մի տխուր երգ: Երկու խոշոր և թախծալի աչքեր մտիկ էին անում ուղիղ Ռոստամյանի երեսին, համարձակ, խելացի, բայց քնքուշ հայացքով: Այդ — կետ առ կետ այն հայացքն էր, որով մի շաբաթ առաջ նույն այդ էակը նայում էր դեպի քաղաքի հեռավոր տարածությունը: Այժմ այդ տարածության վերջնակետը Ռոստամյանն էր...

Ապշությունը տեղի տվեց հիացման: Խառն, անսովոր մի զգացմունք սկսեց պղտորել նրա անդորր սիրտը: Վայրկենաբար նրա մեջ ձայն տվեց բնական ամոթխածությունը: Նա լուսամուտից հեռացավ: Սակայն միայն մի քանի րոպեաչափ: Մի անսպասելի և անհաղթելի ուժ կրկին մղեց նրան դեպի լուսամուտ: Իսկ նա... նույնպես նայում էր: Երբեք Ռոստամյանը մի այդպիսի թափանցող հայացք չէր զգացել յուր վրա: Նա խոսում էր ուղիղ մենակյացի խաղաղ սրտի հետ:

Անցավ մի քանի րոպե: Երիտասարդ կինը հեռացավ լուսամուտից:

Օրն արդեն մթնել էր: Ծառան ներս բերեց Ռոստամյանի կանթեղն և զարմացմամբ տեսավ, որ երիտասարդ պարոնը չնկատեց նրա ներս մտնելն ու դուրս գնալը:

Փոքր ինչ անցած ներս մտավ Նատալիա Պետրովնան: Ռոստամյանն ուրախացավ նրա այցելությանը:

— Ստեփան Գրիգորիչ ես ձեզ ինչքա՞ն եմ պարտք, — հարցրեց այրին խոհուն դեմքով:

— Ի՞նչ պարտք, — գոչեց Ռոստամյանն, որ դեռ ախորժելի տպավորության ներքո էր գտնվում:

— Ո՞նց թե ի՛նչ պարտք, մոռացե՞լ եք: Ասեմ, տասը մանեթ վերցրել եմ Գաբոյին փող ուղարկելիս, տասն ու հինգ մանեթ առել եմ ու տվել Պետրեին. Մեկ էլ օրն էլ ստացա քառասուն:

Հաշվեցե՛ք… Քառասունը դուրս բերեք տան ու ճաշի վարձ մարտ ամսի համար: Ահա՛, այս ձեզ տասն ու հինգ մանեթ, մնացյալը հետո կտամ: Չնեղանաք, որդի…

— է՛հ, Նատալիա Պետրովնա, խոմ ես հարկահան չեմ, որ վռազում եք պարտքս տալու: Ինձ փող հարկավոր չէ, պահեցե՛ք:

— Չէ՛, Ստեփան Գրիգորիչ, ես պարտք չեմ սիրում, պարտք որ ունենում եմ, գիշերները քունս չի տանում: Շնորհակալ եմ, շատ ու շատ շնորհակալ եմ ձեզանից, երանի թե ամեն մարդ ձեր սիրտն ունենար: Ես ամենքին էլ ասում եմ, թե իմ կենողը ոսկի է: Ապրիք, որդի, ես ձեր լավությունը մինչև մահս չեմ մոռանալ, դուք ինձ շատ անգամ եք նեղ դրությունից ազատել: Աստծուն է հայտնի, թե ես ինչքան եմ աղոթք անում ձեզ համար, Ստեփան Գրիգորիչ: Երեկ էլ երկար գովում էի ձեզ Մինաս Կիրիլլիչի ու Վարվառա Մինաևնայի մոտ:

Այրին նստեց և փոխադարձաբար սկսեց Ռոստամյանի մոտ ևս վերջիններին գովել: Երեկ նա Մինաս Կիրիլլիչին առաջարկում է մի թուղթ գրել, որ ինքը ձեռք քաշի, թե բնակարանի մի ամսվա վարձը ստացել է: Մինաս Կիրիլլիչը շատ զարմանում է այս առաջարկության վրա:

Դեհ,, դո՛ւք ասացեք, Ստեփան Գրիգորիչ, ի՞նչպես չգովեմ այդպիսի մարդկանց, — գոչեց Նատալիա Պետրովնան ոգևորված: «Թե որ, ասում է, ինձանից եք վախենում, ահա ձեզ երկու հարյուր մանեթ այս գլխից»: Այս որ լսեցի, ինքս ինձանից ամաչեցի: Մեր ժամանակում քիչ մարդ կլինի, որ այսպես վարվի տանտերերի հետ: Ստեփան Գրիզոգորիչ, եկեք, այս անգամ ինձ լսեցեք, — ավելացրեց հանկարծ այրին, մի քանի վայրկյան լռելուց հետո:

— Ի՞նչ եք կամենում:

Այրին խորհրդավոր ժպտաց և աչքերով ու հոնքերով նշան արավ դեպի նորեկների բնակարանը:

— Հը՛մ, ի՞նչ կասեք, Ստեփան Գրիգորիչ, — ասաց նա, ձեռները հենելով սեղանի ծայրին և գլուխր մոտեցնելով յուր խոսակցին: — Թե որ ամբողջ Թիֆլիսը փնտրեք, ով գիտե, Վարվառա Մինաևնայի պես ուրիշը չեք գտնիլ: Եթե խոսք տալիս եք, ես հիմիկվանից կարող եմ մի կերպ հասկացնել նրանց: Հույս ունիմ, որ կհամաձայնվին, թե Վարվառա Մինաևնան, թե՛ հայրը: Նրանք էլ ձեզ են հավանել, ամեն օր հարցնում են: Երեկ ես մեկ-մեկ ասացի, խոմ գիտեք, թե ի՞նչ կասեի, ես ձեզ վրա ե՞րբ եմ վատ խոսել, որ նրանց մոտ վատ խոսեի: Այնքան գովեցի, որ զարմացան: Ասացի — հատը չկա Թիֆլիսում:

— Շնորհակալ եմ Նատալիա Պետրովնա: Բայց եթե նրանց էլ ինձ մոտ այնպես ավելորդ եք գովում, ինչպես ինձ չափից դուրս գովել եք նրանց մոտ — ես ձեզ չեմ հավատում:

— Ո՛չ նրանք են իմ ազգականները, ո՛չ էլ դուք, պարոն Ռոստամյան, ինչո՞ւ համար պիտի ավելորդ գովեմ. Հը՞մ: Խոմ դուք լեզվիս վարձ չեք տալիս: Իմ ուզածն էլ այն է, որ դուք, վերջապես ձեզ համար մի սիրուն աղջիկ գտնեք ու մարդավարի ապրեք այս աշխարհում, պրծավ գնաց: Վարվառա Մինաևնային ես շատ եմ հավանում… Փող էլ պիտի որ ունենա, հայրը կապալառու է եղել, մեծ-մեծ գործեր է ունեցել: Պսակվեցե՛ք, Ստեփան Գրիգորիչ. ես կդառնամ ձեզ համար մայր, դուք էլ որդի: Խիստ լավ կլինի, աստված վկա. այ, իմ երկու սենյակները

կմիացնեմ նրանց բնակարանի հետ, մեջտեղից դուռը բաց անել կտամ, ես կտեղափոխվեմ ձեր սենյակներն, իսկ դուք այնտեղ կբնակվեք: Լավ չե՞մ ասում, Ստեփան Գրիգորիչ, հը՛մ, ո՞նց եք հավանում ասածս:

Ռոստամյանը լուռ ժպտաց, իբր թե Նատալիայի առաջարկությունը կատակ համարելով:

Այրին գնալուց հետո, Ռոստամյանը նստեց, որ պարապի: Բայց հակառակ սովորությանը, այս անգամ չկարողացավ ընտելանալ գործին: Գրում էր ու ջնջում շարունակ, և երկար ժամանակ չէր հաջողվում նրան գտնել յուր մտքերի թելը: Նրա ականջներին դեռ հնչում էր երիտասարդ կնոջ տխուր մեղեդին, իսկ աչքերի առջևից չէր հեռանում նրա պատկերը, որ այնպիսի հետաքրքրությամբ լուսամուտից մտիկ էր անում:

Ո՞վ է նա, ի՞նչ տեսակ կին: Ինչո՞ւ հայր ու աղջիկ, իրանց հայրենիքը թողած, եկել են, Թիֆլիսումն են բնակվում և, վերջապես ո՞րն է նրանց հայրենի քաղաքը: Արդյոք, Մինաս Կիրիլլիչը բախտախնդիր թափառականներից մեկը չէ՞, արդյոք այդ երիտասարդ կինը նրա աղջիկն է իսկապես:

Նույն գիշեր պես-պես քաղցր, սակայն հոգետանջ երազներ, իրարու հաջորդելով, ընդհատում էին նրա սովորական անդորր քունը: Հայտնի չէր ո՛ր ժամին, մի անգամ նա հանկարծ զարթնեց, այնպես թվաց նրան, որ մեկը զարկում է դռներին: Նա մոտեցավ լուսամուտին, նայեց դեպի դուրս: Ոչինչ չկար, տիրում էր մի այնպիսի խավար, որ դիմացի բնակարանի ուրվագիծը հազիվ-հազ նշմարվում էր: Սաստիկ անձրև էր գալիս:

Առավոտը նա զարթնեց ավելի վաղ, քան երբևիցե զարթնել էր վերջին տարիները: Նրա սիրտր լեցված էր անորոշ թախծությամբ: Ցավում էր նա, որ ամբողջ երեկոն անցուցել էր անօգուտ: Տրտմությամբ նա թերթեց յուր գրած ու ջնջած էջերր, հազիվ-հազ մնացել էին մի քանի չջնջված տողեր:

Այն օրը Ռոստամյանը պիտի գնար յուր պաշտոնակիցներից մեկի մոտ մի քանի կարևոր տեղեկություններ վերցնելու յուր աշխատության համար: Օրն ամպամած էր, թեթև անձրև էր շաղում, իսկ գիշերային հորդառատ հեղեղից փողոցներում գոյացել էր անանցանելի ցեխ: Այն փողոցն, ուր գտնվում էր այրի Նատալիայի տունը, բավական նեղ էր, բարձրադիր, մայթերը զառիվայր, իսկ սալահատակը տեղ-տեղ քանդված: Անձրևային եղանակին այդ փողոցով ոտքով անցնելն ուներ յուր անհարմարությունը, սլկուն ցեխի մեջ մարդ ստեպ սայթաքում էր և երբեմն ընկնում: Իսկ Նատալիա Պետրովնայի տունը գտնվում էր փողոցի վերին անկյունում: Ռոստամյանը փողոցներում սովորաբար քայլում էր շտապ-շտապ, գլուխը քաշ գցած, ձեռները վերարկվի գրպաններում դրած, և շատ անգամ չէր նկատում յուր մոտով անցնողներին: Արդեն ճաշի ժամանակն էր, երբ նա, մի մեծ մատյան ձեռին, վերադառնում էր տուն: Փողոցի անկյունից դեպի վեր բարձրանալիս, հանկարծ նա դիպավ մեկին: Նա գլուխը բարձրացրեց, որ ներումն խնդրի, և երես առ երես հանդիպեց յուր նոր հարևանին:

— Ոչինչ, — ասաց ծերունին, — մեղավորը ձեր քաղաքային վարչությունն է, որ փողոցներր լավ չի պահում: Ես միշտ ասել եմ, որ Թիֆլիսը դեռ Ասիա է:

Ռոստամյանն հետևից, ծերունին առջևից — մի քանի րոպե ընթանում էին միասին: Մինաս Կիրիլլիչը հագած էր մեծ և խորը կրկնակոշիկներ, լայն մուշտակ մշկյա բեշկի օձիքով: Մի ձեռքով նա գլխին բռնած էր մի մեծ հովանի, մանր անձրևից պաշտպանվելու համար, մյուսով — մի կլորակ թղթյա կապոց: Իսկ ձախ գրպանից ցցված էին ռուս լրագրների մի քանի համարների ծայրերը: Նա, տրտնջալով փողոցի անմաքրության վրա, քայլում էր զգուշությամբ, որ չցեխոտվի:

Պատահեց մի փոքրիկ միջնադեպ, որն և պատճառ եղավ ծերունու և Ռոստամյանի առաջին բարեկամության:

Դատարկ տաշտը կռնատակին բռնած, նոսր ցեխի մեջ սրընթաց վազեց ծերունու մոտով մի շրջավաճառ և, կարծես դիտմամբ, մի քանի անգամ ոտները գետնին սաստիկ խփեց: Մինաս Կիրիլլիչի մուշտակը շաղախվեց ցեխի բծերով:

— Անպիտա՛ ն, — գոչեց մաքրասեր ծերունին բարկացած:

Կինտոն կանգնեց և, լեզուն հանելով, ծերունուն մի ծաղրական նշան արավ:

— Հանդո՛ւգն, — ձայնը բարձրացրեց ծերունին, — բավական չէ վարմունքդ, դեռ կապկություն էլ ե՞ս անում… Ոստիկա՛ն:

Բայց ոստիկան չկար փողոցում: Դեմ ու դեմ մի գինեխանութի առջև երկու կիսահարբ կինտոներ կանգնած, զվարճությամբ մտիկ էին անում հեռվից: Ռոստամյանը նշան արավ շրջավաճառ կինտոյին, որ հեռանա: Բայց կինտոն զանազան միմոսություններով շարունակեց ծաղրել Մինաս Կիրիլլիչին:

— Կորե՛ք, — գոռաց ծերունին վրդովված ձայնով:

Կիսահարբ կինտոները հրհոռացին, խրախուսելով միմոսող շրջավաճառի հանդգնությունը:

— էդ լոդին որ հագիլ ես, միթամ ինձմեն մինձ մարթիս էլի՛, — ասաց վերջինը, մի ոտն առաջ դնելով, — էն օրն էլ ինձ փախցրիր, «տվոյ շամայկա գնիլոյ», ասացիր… մնոգո ֆարսիշ ա՛յ…

Ռոստամյանն աշխատեց ծերունուն հանգստացնել, որ ուշադրություն չդարձնի կինտոյի վրա: Բայց Մինաս Կիրիլլիչը դեռ չգիտեր, թե որքան կոպիտ է շրջավաճառ կինտոն, երբ մանավանդ ծախել, վերջացրել է յուր վաճառքը: Նա, բաց հովանին բարձրացնելով, մոտեցավ յուր հակառակորդին: Կինտոն տաշտը դրեց գետնին և մի ավելի անամոթ ծաղրական շարժում գործեց: Ռոստամյանի արյունը գլխովը տվեց: Նա, կատաղած, բռունցքները սեղմած, շրթունքները կրծոտելով, արյունալի աչքերով հարձակվեց անամոթ շրջավաճառի վրա: Վերջինը, հենց առաջին հարվածից զգալով նրա կռների ուժը, շտապեց տաշտը վերցնել և հեռանալ, բարձրաձայն հայհոյելով:

— Ասիա, կատարյալ Ասիա է այս երկիրը, — գոչեց ծերունին, որ բարկությունից գունաթափվել ու դողում էր:

Հասնելով դռներին, Մինաս Կիրիլլիչը բարեկամաբար սեղմեց Ռոստամյանի ձեռն և որովհետև շատ էր վրդովված: ուստի չափազանցություն չհամարեց ասել, թե իբր հավիտյան չի մոռանալ նրա պաշտպանությունը:

Ահա այսպես արժանացավ Ռոստամյանն առաջին դեպքում այն մարդու համակրությանը, որ ապագայում չարագուշակ դեր պիտի կատարեր նրա ճակատագրի վերաբերմամբ:

Մյուս օրը Նատալիա Պետրովնան պատմեց, թե որքան ծերունին շնորհակալ է Ռոստամյանից նախընթաց օրվա պաշտպանության համար:

— Ոնց, որ տեսնում եմ, — ավելացրեց այրին, — հայր ու աղջիկ խիստ են սիրում ձեզ, Ստեփան Գրիգորիչ, մի գլուխ ձեզ վրա են խոսում:

— Շատ ուրախ եմ:

— Ապա ինչո՞ւ չեք ուրախ լինիլ, նրա նման աղջիկը, որ ինձ վրա խոսի, ես էլ ուրախությունից կպարեմ: է՛հ, հույս ունեմ, որ բանը գլուխ կգա, գուք միամիտ կացեք....

Ռոստամյանը, վախենալով, թե մի գուցե այրին իսկապես մտադիր է որևէ ակնարկություն անել հարևանների մոտ, կամ կարելի է արդեն արել է, շտապեց խնդրել, որ նա թողնի յուր անտեղի միջամտությունն այն բանում, որի մասին ինքը չի մտածել և չի մտածում:

— Կատակ եմ անում որդի, — արդարացավ այրին, — ես խոմ երեխա չեմ, որ իմ գլխու բաներ սարքեմ: է՛հ, դո ւք գիտեք: Բայց մի բան խնդրեմ, կկատարե՞ք:

— Հրամայեցե՛ք:

— Այս երեկո նրանք հայր ու աղջիկ պիտի գան իմ մոտ. ես եմ համեցեք արել, դուք էլ եկեք, Ստեփան Գրիգորիչ, է՛հ, կխոսեք դեսի-դենից: Պետրեին կուղարկեմ, որ Կատոյին էլ հրավիրի: Կգա՞ք:

— Կգամ, — համաձայնվեց Ռոստամյանը: Այրի Նատալիան մի ժամանակ շատ սիրում էր հյուրեր ընդունել և հյուր գնալ: Ամուսնության առաջին տարիներում հազիվ անցնում էր մի օր, որ նա միայնակ մնար: Քանի երիտասարդ էր, նա յուր ուրախ բնավորությամբ զգում էր ծանոթների և բարեկամների կարոտություն: Բայց երբ դարձավ հարսնացու դստեր մայր, աշխատեց յուր ծանոթների շրջանն ավելի ընդարձակել, հանուն յուր միակ Կատոյի բախտավորության: Նրա, ամուսինը միջակ աստիճանի պաշտոնյա էր, ուստի նրա շրջանը բաղկացած էր պաշտոնյաների և մեծ մասամբ օտարազգի պաշտոնյաների ընտանիքներից: Ինքն այրին աշխատում էր հարաբերություն ունենալ քաղաքի և՛ փողավոր դասակարգի հետ, դարձյալ հանուն յուր միակ Կատոյի բախտավորության: Եվ, պետք է ասել, նա մասամբ կարողանում էր գրավել յուր տան վրա շատերի ուշադրությունը: Պատճառը նրա բարեհամբույր բնավորությունն էր և մի փոքր էլ արտաքին արժանավորությունները: Կար ժամանակ, որ Նատալիա Պետրովնային կարելի էր գեղեցկուհի համարել: Նույնիսկ վերջին ժամանակ, չնայելով, որ մի կողմից ամուսնու և անդրանիկ որդու մահը, մյուս կողմից ժամանակը — միանգամայն թառամացրել էին նրա գեղեցկությունը — նրա բարձր հասակը, առողջ

կազմվածքը, վառվռուն աչքերը, քաղաքավարի շարժվածքը և խոսելու բարեկիրթ ձևերը բավական բարձր էին պահում նրան յուր հասակակիցների շրջանում։

Աղջկա բախտը մի կերպ կարգավորելուց հետո, նա այլևս «պիկնիկներ» չէր սարքում, բայց սիրում էր երբեմն այցելել յուր ազգականներին և բարեկամներին։ Տաղտկությունից նա վերջին տարիները սկսեց խառնվել ուրիշների ամուսնական հարցերում — պսակել, նշանել։ Եվ երբեմն այսպիսի դեպքերում նա կատարում էր դրական դեր, դրդված անկեղծ և անշահ փառասիրությունից — մի փառասիրություն, որ հատուկ է այրիների և ամուսնացյալ կանանց մեծամասնության։ Միացնել յուր երիտասարդ կենողի վիճակը որևէ մի օրիորդի հետ — նա վաղուց էր մտադիր։ Շատ մայրեր այս մասին նրան բացորոշ ակնարկություններ էին անում։ Բայց Ռոստամյանի համառ մենասիրությունը բոլորովին զինաթափ էր անում այրի Նատալիա Պետրովնային։ Այս պատճառով, ճարահատված, նա հետաքրքրվող և անհամբեր մայրերին պատասխանում էր,

— Իմ կենողն ուզում է, որ վարդապետ օծվի. ձեռք վերցրեք նրանից, քա՛։

III

Նատալիա Պետրովնայի հյուրասենյակը լուսավորված էր մի բարձր և գեղեցիկ կանթեղով։ Այդ կանթեղն այրին վառում էր միմիայն այն երեկոները, երբ հյուրեր պիտի ընդուներ։

Ռոստամյանը նստած էր սենյակի անկյունում դրած գահավորակի մի ծայրում և ձեռներով խաղում էր սեղանի գույնզգույն ասեղնագործ սփռոցի ծոփերի հետ։ Գահավորակի մյուս ծայրում նստած էր այրին և հյուսում էր յուր անբաժան գուլպան։ Դեմ ու դեմ փափուկ բազկաթոռի մեջ խրված էր մի փոքրահասակ, սև աչքունքով, բավական գեղեցիկ երիտասարդ կին։ Դա այրիի դուստրն էր — Կատոն։ Տիկինը հագած էր նուրբ հյուսված, ալիքավոր ժապավեններով զարդարված մետաքսյա հագուստ։ Կարելի էր կարծել, որ նա պճնվել է մի փառավոր հանդիսի համար, եթե նրա մինչև արմունկները հասնող երկայնավիզ կինեմոնագույն ձեռնոցներն ավելի թարմ լինեին։ Նա պատմում էր յուր մորը կանացի հագուստի ինչ որ նոր ձևերի մասին, որ Թիֆլիսում ստացվել էին գարնան համար։

Նախասենյակից լսվեց Մինաս Կիրիլլիչի ձայնը։ Այրին շտապեց հյուրերին դիմավորելու։

Ներս մտավ նախ աղջիկն և ապա, ծանր քայլերով, հայրը։ Վարվառեն առանց գլխարկի էր։ Պարզ գույնի փայլուն, խիտ. ծայրերը փոքր ինչ խոպոպ մազերը, մի հասարակ մետաղյա հերակալով ժողովված, հանգչում էին կանոնակազմ գլխի վրա։ Հերակալից ազատ մնացած մազերի կարճ մասերը, իբրև գեղեցիկ ժապավեն, զարդարում էին նրա ճակատի վերին կողմը։ Նրա մեջքը բարակ էր և սեղմված կորսեի մեջ, թիկունքն ու կուրծքը բավական զարգացած։ Արդարև, ինչպես ասաց Նատալիա Պետրովնան, նա ավելի համակրելի էր, քան գեղեցիկ։ Ամբողջ նրա կազմվածքից բուրում էր մի տեսակ հանգիստ հպարտություն։

Նատալիան հյուրերին ընդունեց անշփոթ քաղաքավարությամբ, ինչպես բավական փորձված և աշխարհ տեսած կին: Նա բոլոր յուր շարժումներով և դեմքի արտահայտությամբ, կարծես, ասում էր.

«Ուրախ եմ ընդունելու ձեզ իմ տանը, բայց իմացեք, որ սովոր եմ ձեզանից ավելի նշանավոր հյուրեր ընդունել»:

Ռոստամյանը, ոտքի կանգնելիս, շփոթվեց, դիպավ սեղանին և քիչ էր մնում, որ կանթեղի լուսամփոփը գցեր: Կատոն տեղից չշարժվեց, մինչև որ հյուրերն իրանք կմոտենային:

— Սա իմ աղջիկն է, մադամ Բիզիրգանովա, — ասաց այրին, Կատոյին ներկայացնելով յուր հյուրերին:

Երբ ամենքը նստեցին, Ռոստամյանը տեղավորվեց Մինաս Կիրիլլիչի ձախ կողմում, իսկ աջ կողմում — Վարվառեն: Այրին սկսեց զբաղեցնել յուր հյուրերին ամենահասարակ խոսակցությամբ: Սովորական սառնությունը շուտով անցավ, և հյուրերը փոքր առ փոքր ընտելացան իրարու: Խոսում էին մեծ մասամբ Նատալիա Պետրովնան և Մինաս Կիրիլլիչը: Առաջինը, հիացած Վարվառեի շնորհալի կերպարանքով, աշխատում էր խոսակցությամբ զբաղեցնել նրան էլ, որ, կարծես, խոսելու տրամադրություն չուներ:

— Ի՛նչ գեղեցիկ ձայն ունիք, Վարվառա Մինաևնա, — ասաց նա, հոնքերը վեր քաշելով և «թասակրավի» տակից դուրս ցցված մազերը հետ ժողովելով:

— Միթե դուք լսե՞լ եք Վարիայի երգեցողությունը, — հարցրեց Մինաս Կիրիլլիչը:

— Ինչպե՛ս չէ, ինչպե՛ս չէ: Երեկ Վարվառա Մինաևնան տանր երգում էր, ես այստեղից ականջ էի գնում: Շատ սիրուն ձայն ունիք, շատ, — դարձավ այրին Վարվառեին:

— Միթե դուք երգել գիտե՞ք, — մեջ մտավ Կատոն, որ մինչև այդ ժամանակ լուռ էր և միայն նախանձոտ աչքերով Նայում էր Վարվառեին:

— Երբեմն տանն ինձ համար զբաղվում եմ, — պատասխանեց Վարվառեն համեստությամբ:

— Ոչ միայն երգում է, Կատյուշա, դու պիտի լսես, թե ինչպես է խաղում դաշնամուրի վրա, — խոսեց դարձյալ այրին ոգևորված, — ես հիացած եմ...

— Այժմ ամենքն էլ երգում են ու խաղում, — արտասանեց Կատոն, հեգնորեն ժպտալով, — Թիֆլիսը երաժշտական քաղաք է...

— Գիտեք, Վարվառա Մինաևնա, — ընդհատեց այրին յուր աղջկա նախանձոտ նկատողությունը, — իմ Կատոն էլ խիստ լավ երգում է ու խաղում, մի օր կի»նդրենք ձեր երկուսին, որ մեզ համար միասին երգեք: Լավ չե՞մ ասում, Մինաս Կիրիլլիչ:

— Կեցցե՛ք, Նատալիա Պետրովնա, — գոչեց ծերունին ուրախությամբ, — շատ լավ եք ասում: Մի օր ամենքդ եկեք մեր տուն հյուր, մենք Կատերինա Սիմոնովնային և Վարիային կստիպենք, որ երգեն:

— Ես խաղում եմ ու երգում ինքս ինձ համար, ուրիշներին իմ ձայնով զարմացնելու շնորհք չունիմ, — ասաց Կատոն կծու ձայնով:

Այրին գաղտնի հանդիմանությամբ նայեց աղջկա երեսին և գլուխը շարժեց:

Կատոն բնավորությամբ, ինչպես և կազմվածքով, յուր մոր հակապատկերն էր: Նախանձամիտ, կրքոտ, բծախնդիր տիկինը չէր կարողանում երիտասարդ կանանց հետ բարեկամանալ, մանավանդ գեղեցիկ կանանց հետ: Վարվառեն հենց առաջին վայրկյանից գրգռեց նրա նախանձը, մանավանդ յուր հասակով, որովհետև այս այն առավելությունն էր, որ սիրում էր Կատոն և որից զուրկ էր: Այսքանը միայն բավական էր Կատոյի սիրտը թունավորելու համար: Եվ ահա այդ նորեկ սիրուն կինը, ասում են, դեռևս «հիանալի» երգելու և խաղալու ձիրք էլ ունի: Խայթված ինքնասիրությամբ նա աշխատում էր Վարվառեի մեջ գտնել որևէ մի արտաքին թերություն, և երբ մի խոշոր բան չգտավ, սկսեց ինքն իրան հավատացնել, թե Վարվառեն անկասկած, արհեստական միջոցներ է գործադրում թե՛ իրան այդպես կանոնավորելու և թե հասակը բարձրացնելու համար: Երեսի գույնր շատ էլ պարզ չէ և եթե թարմ է, ո՛վ կարող է հաստատել, որ երիտասարդ լինելուցն է: Կանանց գեղեցկացնելու համար արտասահմանում, ասում են, հազար տեսակ արհեստական միջոցներ կան, դա էլ այնտեղ սովորած կլինի: Կատոն լսել է, որ վերջին ժամանակ Փարիզում մի բժիշկ չորս հարյուր ֆրանկով կանանց ծնոտի կողմից մի քիչ ծակում է և կաշվի տակ ինչ որ դեղ է սրսկում: Այդ դեղը հավիտյան պահպանում է երեսի թարմությունը: Շատ հավանական է, որ Վարվառեի մազերն էլ կեղծ են, պետք է մոտիկից մի լավ զննել: Գալով երգելուն և նվագելուն, ո՞վ գիտե, շատ կասկածելի է, որ նա լավ ձայն ունենա, ի՛նչ է հասկանում Նատալիա Պետրովնան, որ կարողանա ճիշտ գնահատել «գեղարվեստը»:

Կատոն այս խորհրդածությամբ չբավականացավ: Նրա գեղեցկությունը նսեմացել էր փոքրիկ շրջանում, երեկոն թունավորված էր, ուստի պետք զգաց մի փոքր վրեժխնդիր լինելու: Նրա փոքրիկ ու սուր աչքերից խույս չտվեց, որ Ռոստամյանն երբեմն մտիկ էր անում այդ, «իբր թե» սիրուն, նորեկի վրա, իսկ դեպի յուր կողմր բոլորովին ուշադրություն չի դարձնում: Ո՞վ է այդ կինր, այդ պառավ մարդու աղջի՞կն է իսկապես, թե՞… Վերջապես, շատ էլ երբեմն մաքուր մարդիկ չեն լինում «Թիֆլիս եկողները»:

Նատալիա Պետրովնան գնաց մյուս սենյակ և, մի քանի վայրկյան անցած, մատուցարանի վրա ներս բերեց չոր մրգեղեններ, մի քանի փոքրիկ և մեծ բաժակներ, մի շիշ գինի և մի շիշ կառիս, որով ամուսնու կենդանության ժամանակից նա սովոր էր հյուրասիրել ընտիր հյուրերին: Առաջին բաժակը քաղցր խմիչքից այրին առաջարկեց Վարվառեին: Վերջինը դրականապես հրաժարվեց խմելուց:

— Վարիան երբեք ոչ մի խմիչք չի խմել մինչև այսօր, — պաշտպանեց ծերունին իր աղջկան այրիի թախանձանքի դեմ:

«Խիստ է կոտրատվում», — ասաց յուր մտքում Կատոն և կարմիր հեղուկը համարձակ մոտեցրեց շրթունքներին։

— Իսկ դո՞ւք, — դիմեց այրին Ռոստամյանին, որ նույնպես հրաժարվում էր խմելուց, — լաա՛վ, երիտասարդ մարդ եք, վերցրե՛ք, ամոթ է…

— Մի բաժակը մեզ խելքից չի հանիլ, — ասաց ծերունին և, յուր բաժակը զարկելով Ռոստամյանի բաժակին, ավելացրեց, — խմենք ազնիվ ու բարի մարդկանց կենացն, ո՛ր երկրացի որ են նրանք։

Շնորհիվ Նատալիա Պետրովնայի հաջող և պարզ վարվողության, հյուրերը սկսեցին զվարճանալ — նույնիսկ Կատոն, որ, գեթ ակամա ուրախությամբ և ծիծաղով, ուզում էր նսեմացնել Վարվառեին։

Ամենից ավելի խոսում էր Մինաս Կիրիլլիչը։ Խոսում էր նա ոգևորված, անցնելով մի առարկայից դեպի մյուսը, քաղաքային հարցից — դեպի քաղաքականը, մասնավորից — հասարակականը։ Նա միջոց չէր տալիս Ռոստամյանին յուր մի հարցին պատասխանելու, առաջարկում էր մյուսն և բոլորին պատասխանում էր ինքը։ Նրա խոսակցությունից երևում էր, որ, բացի օտար երկրներից, նա ճանապարհորդել է և՛ Կովկասում, տեսել է շատ քաղաքներ։ Խոսում էր Անդրկովկասյան ազգերի մասին։ Վայրենիներ են բոլորը, Մինաս Կիրիլլիչի կարծիքով, նողայներից և թունգուզներից հեռու չեն գնացել իրանց քաղաքակրթությամբ։ Առանձնապես նա պախարակում էր յուր համազգիներին, թշնամի էր մանավանդ հոգևորականության։

— Բացի երկուսից, — դարձավ նա Ռոստամյանին, որը թեև նայում էր ծերունու երեսին, բայց լսողությունը լարած էր դեպի Վարվառեի, այրիի և Կատոյի առանձին խոսակցությունը, — բացի երկուսից։

Մինաս Կիրիլլիչը մի քանի օրինակներ ևս բերեց Հաշտարխանի, Մոզդոկի, Մոսկվայի, Պետերբուրգի քահանաների կյանքից, տգետ են, օտարների առջև իրանց չեն կարողանում լավ ցույց տալ։ Հետո նա անցավ վաճառականներին, փաստերով ապացուցեց նրանց խարդախությունները։ Հետո անցավ այլ և այլ դասակարգերին…

Ի վերջո, նա յուր դատողությունները կնքեց հետևյալ եզրակացությամբ։

— Ես շատ երկրներ եմ տեսել, շատ ազգերի հետ եմ գործ ունեցել, բայց հայերի պես համառ ժողովուրդ ոչ մի տեղ չեմ տեսել։ Ոչ, ոչ, պարոն Ռոստամյան, զուր եք հակառակում, ես շատ եմ փորձել, շատ։

Այդ միջոցին Վարվառեն նստած էր յուր հոր դեմ ու դեմ։ Ռոստամյանը մի կողմից լսում էր ծերունուն, մյուս կողմից, մտիկ էր անում դեպի աղջիկը։ Նա նկատեց, որ ծերունին վերջին թունավոր խոսքերը արտասանելիս, Վարվառեն գաղտնի հանդիմանությամբ նայեց հոր երեսին։ Կարծես, նա լուռ նշանով խնդրում էր ծերունուն, որ չշարունակի։ Երբ երիտասարդ

կինը ժպտում էր, նրա ժպիտը թվում էր ակամա, բռնադատյալ: Երբ լռում էր, նրա պայծառ ճակատը մթնում էր մի մռայլ գծով և բերանի անկյուններում երևում էին բարակ խորշեր:

— Սո՞ւտ եմ ասում, Նատալիա Պետրովնա, — դարձավ Մինաս Կիրիլլիչը այրիին, տեսնելով, որ Ռոստամյանն յուր հայտնած մտքերին բացարձակ հավանություն չի տալիս:

— Ճշմարիտ եք ասում, Մինաս Կիրիլլիչ, իմ արևը, շատ ճշմարիտ եք ասում, — վավերացրեց Նատալիա Պետրովնան, որ աշխատում էր ոչ մի կերպ չհակառակել ոգևորված ծերունուն:

Վերջինն ավելի խրախուսվեց և սկսեց խստությամբ մտրակել յուր ազգակիցների վատ հատկությունները: Այս անգամ նա օրինակ բերեց արտասահմանը: Այնտեղ մարդուն սիրում են, հարգում են, իսկ մեզանում միմյանց պատիվը ոտքի տակ են ձգում, հանգստությունը խլում են, աշխատում են անունը ցեխի հետ հավասարել: Թող Ռոստամյանը Մինաս Կիրիլլիչի մոտ չպարծենա յուր փորձառությամբ: Նա շատ և շատ երիտասարդ է, դեռ չի ճաշակել կյանքի դառնությունները:

— Իսկ ես շատ բաներ եմ տեսել, շատ եմ չարչարվել և այժմ ևս չարչարվում եմ հայերի բամբասանքից, — կրկնեց մի քանի անգամ վրդովված ծերունին, կարծես, մոռանալով յուր շրջապատողներին:

Աղջիկը հոր ոգևորությունից հուզված, աշխատում էր որսալ նրա հայացքը: Այնինչ հայրն ակնհայտ խույս էր տալիս նրա աչքերից, գլխավորապես յուր խոսքը դարձնելով Նատալիա Պետրովնային կամ Ռոստամյանին:

Հանկարծ Մինաս Կիրիլլիչը լռեց: Հայր ու աղջիկ մի քանի վայրկյան նայեցին միմյանց երեսին — աղջիկը հանդիմանությամբ, հայրը մեղանչած մարդու դեմքով: Ոչ ոք չհասկացավ այս լուռ նշանախոսության իմաստը: Ոպեն խորհրդավոր էր, ամենքը լուռ էին, միայն Նատալիա Պետրովնան անդադար կրկնում էր.

— Ճշմարիտ եք խոսում, Մինաս Կիրիլլիչ:

Բայց Մինաս Կիրիլլիչն այլևս չէր համարձակվում շարունակել: Նա լուռ ու տխուր ծխում էր, յուր ալեխառն ընչացքի միջով բաց թողնելով դեպի վեր թանձր ծխի մոխրագույն սյունակներ, աչքերը հառած սեղանի մի կետին:

Այրին շուտով ընդհատեց լռությունը, պարզամտությամբ խոսակցությունը դարձնելով այլ առարկաների վրա: Նա սկսեց պատմել յուր նախկին կենողների մասին զանազան հետաքրքրական եղելություններ: Խոսելով ռուսերեն լեզվով վայրիվերո, բայց խիստ բնական եղանակով, նա պատմեց մի քանի զվարճալի դեպքեր, որ և ամենքին ստիպում էին ծիծաղել: Ի միջի այլոց, նա չխնայեց և Ռոստամյանին, ծաղրելով նրա մենակեցությունը և տարօրինակ սովորությունները: Վարվառեն լսում էր հետաքրքրությամբ, ստեպ-ստեպ ժպտալով Ռոստամյանի երեսին: Մի անգամ նա ծիծաղեց, երբ այրին անեկդոտի բովանդակությամբ պատմում էր, թե ինչպես «ճգնավորը» մի երեկո հրավիրված է լինում իր իշխանավորի մոտ:

— Իրիկունը լվացվեց, հագնվեց, ես էլ ասացի, էհ, փառք աստուծո, մի անգամ գոնե վճռեց մի տուն գնալ: Դուրս եկավ, գնաց, տասը րոպե չանցած, մեկ էլ տեսնեմ հետ եկավ: «Ի՞նչ կա, Ստեփան Գրիգորիչ», — հարցնում եմ: «Ոչինչ, ասում է, թաշկինակս չէի վերցրել, եկել եմ, որ վերցնեմ»: Լա՛վ: Թաշկինակը դրեց գրպանը, դուրս եկավ պատշգամբ, էլի ներս մտավ: «Հը՞մ», — հարցնում եմ: «Վաղ է, ասում է, Նատալիա Պետրովնա, ամոթ է, որ այսպես վաղ գնամ»: Շորերը հագին այնքան նստեց, հետս խոսեց, խոսեց, ուշացավ ու հետո ասաց. «Հիմա էլ ուշացա, ամոթ է, որ այսպես ուշ գնամ»: Չգնաց, ի՞նչ եք ասում, չգնաց: Այս տեսակ մարդ տեսե՞լ եք աշխարհում, Մինաս Կիրիլլիչ: Հիմա պատմեմ, թե ուրիշ տեղեր տարեկան քանի անգամ է գնում... մեկ կամ երկու անգամ թատրոն, մի երկու անգամ էլ կլուբ, հետո մեծ պասը էլի սկսվում է... Այ, ինչ տեսակ մարդ է մեր պարոն Ռոստամյանը, — ավելացրեց այրին, բարեկամաբար ծիծաղելով յուր երիտասարդ կենողի երեսին:

Ռոստամյանը ներողամտաբար ժպտում էր նրա կատակների դեմ, թույլ տալով ասել ինչ որ ուզում է:

Արդեն բավական ուշ էր: Վարվառեն հորը գլխով նշան արավ, թե ժամանակ է գնալու: Ծերունին, որի թախծությունն արդեն անցել էր, դեռ տրամադրված էր երկար վայելելու Նատալիա Պետրովնայի զվարթ հյուրասիրությունը: Ըստ երևույթին, նա զվարճություն էր զգում այս փոքրիկ շրջանում: Այնինչ Վարվառեն պնդեց, թե ժամանակ է գնալու և ինքը վեր կացավ տեղից: Այրին ցավ հայտնելով, որ թանկագին հյուրերն այդպես շտապում են, ճանապարհ դրեց մինչև պատշգամբ և հրավիրեց, որ ամեն երեկո շնորհ բերեն:

— Հըմ, ո՛նց եք, — դարձավ նա Ռոստամյանին, հյուրերը գնալուց հետո: — Հավանեցի՞ք Վարվառա Մինաևնային:

— Ոչ միայն հավանել է, երդվում եմ, որ մինչև անգամ սիրահարվել է, — խոսեց Կատոն ծաղրական եղանակով: — Ախ երիտասարդներ, երիտասարդներ, — ավելացրեց նա, զլուխն աջ ու ձախ շարժելով, — միթե կարելի՞ է այդպես շուտ հափշտակվել:

— Ո՞վ ասաց ձեզ, թե հավշտակվեցի, — գոչեց Ռոստամյանը տրտմտությամբ:

— Լա՛վ, լավ, իզուր մի՛ թաքցնեք: Ամբողջ ժամանակ ես աչք չէի հեռացնում ձեզանից: Ճշմարիտն ասած, մամա, ես չհավանեցի քո այդ գոված աղջկան: Ի՛նչ է, կարծես թմրած լինի, կենդանության նշան չկա մեջը, մեկ էլ, որ շատ գոռոզն է երևում: Ես ատելով ատում եմ ինքնահավան գոռոզներին:

— Ի՞նչ, Վարվառա Մինաևնա՞ն է գոռոզ, — գոչեց այրին զայրացած, — երեսիդ խաչակնքի՛ր, Կատյուշա, նրա պես հասարակ, խոնարհ և սիրուն աղջիկ մեր Թիֆլիսում շատ քիչ կա, չկա էլ իսկի...

— Թիֆլիսում չկա՞, հա՛ հա՛ հա՛, — ծիծաղեց Կատոն ակամա, — Թիֆլիսում չկա՞: Այ հազվագյուտ թռչուն: Այդ դու և Ստեփան Գրիգորիչն եք հիացել, տեսնենք մի ուրիշ տղամարդ էլ կհիանա՞ նրանով: Ափսոս, որ չեմ լսել, թե ինչպես է երգում: Այնքան գովեցիք, մամա, որ հնդուհավի պես փքվեց:

— Աստուծով, կլսես և ինձանից ավելի կհավանես, Կատյուշկա։

— Չեմ ուզում, իմ ականջներն երկաթից չեն, որ ամեն մի կռոյի ձայնը լսեմ։

— Կռո՛, — կրկնեց Ռոստամյանը անգիտակցաբար։

— Այո, հենց կռո. Ովքե՞ր են, մամա, ի՞նչ մարդիկ են, իմանո՞ւմ ես, որ այդ գավառականներին այդքան գովում ու երկինք ես բարձրացնում։

Ռոստամյանը, տեսնելով, որ գոռոզ Կատոն տրամադրված է ավելի հեռու գնալու յուր վատաբանության մեջ, շտապեց ազատվել նրանից։ Վիրավորական էր նրա համար լսել այդ նախանձամիտ կնոջ անարդար պախարակելն այն էակին, որը նրա վրա թողել էր շատ խոր տպավորություն։

— Մամա, ինձ դո՛ւ պիտի ուղեկցես մինչև տուն, — ասաց Կատոն, մի կողմնակի հայացք ձգելով Ռոստամյանի վրա, երբ վերջինը մոտեցավ, որ ձեռ տա նրան։

— Մնացիր այստեղ, խոմ Լազար Մարկիչն այս երեկո չի գալու Բաթումից։ Թե չէ, ուզում ես, որ անպատճառ գնաս, ես ու Պետրեն կգանք քեզ հետ կառքով։

Ռոստամյանն, իբր չհասկանալով Կատոյի ակնարկությունը, դուրս գնաց։

— Իսկ և իսկ կինտո է կենողդ, մամա, — գոչեց Կատոն, սաստիկ վիրավորված։ — Ինչ անքաղաքավարություն, ինժեներ է… fi donc… Ես երբեք չէի համաձայնվիլ նրա հետ գնալու, բայց նա տղամարդ է, պարտավոր էր առաջարկել ինձ յուր ուղեկցությունը։

Երկար ժամանակ և այդ գիշեր չկարողացավ քնել։ Սեղանի վրա դրած կանթեղի լույսը տարածվում էր միմիայն ցիր ու ցան թափված ձեռագրերի վրա. լուսամփոփը խանգարում էր լուսավորելու սենյակի մյուս անկյունները, բարձր առաստաղն և մեխակագույն պաստառով ծածկված պատերը։ Ռոստամյանը հավաքեց թղթերը, մի կողմ դարսեց. պարապելու ցանկություն չէր զգում, և բավական ուշ էր գործ սկսելու համար։ Ստեպ-ստեպ նա մոտենում էր պատուհաններին և նայում դեպի դուրս, թե դեպի փողոց և թե դեպի գավիթ։ Շոգու գոլորշիներով ծածկված ապակիների միջով նրա աչքերը դրսում նշմարում էին միայն մի թանձր խավար։ Եվ այդ անընդմեջ խավարի մեջ անգամ նրա աչքերի առջևից չէր հեռանում մի լուսավոր աստղ — Վարվառեի թախծալի պատկերը։

Ինչո՞ւ նա տխուր է, ի՞նչ մի դառն վիշտ է դրոշմել նրա ճակատի վրա այդ մռայլ ստվերը։ Ո՛չ, ինչ ուզում է լինի, այդ օրիորդը մի հասարակ կին չէ. նա մի տարօրինակ էակ է, որ բնավ չի նմանվում մյուս կանանց։ Կա նրա մեջ ինչ-որ մի անհասկանալի բան, որ հասարակ մահկանացվի տեսողությամբ ըմբռնել անկարելի է։ Որքա՜ն վեհություն, ազնվություն և, միևնույն ժամանակ, գրավիչ մի հրապույր են արտահայտում նրա ձայնը, շարժվածքը, նրա ամբողջ էությունը, անգամ նրա խորհրդավոր լռությունը։ Եվ որքա՜ն բարի և մեղմ տպավորություն է թողնում նա մարդու վրա, չնայելով յուր արտաքին սառնությանը, երբեք մի կնոջ ներկայությամբ Ռոստամյանն այնքան հոգեկան թեթևություն չի զգացել։

— Բայց այս ի՞նչ է, ինչո՞ւ չեմ կարողանում քնել, — ասաց նա, րնդհատելով յուր մտքերը, — կարծես թե սիրահարված պատանի եմ, — ավելացրեց նա, աշխատելով մըտքում ծիծաղել յուր համեմատության վրա։

Իրավ, ինչո՞ւ նա այսքան հետաքրքրվում է այդ երիտասարդ կնոջով, մի՞թե արդարև, նա, որի սիրտը մինչև այժմ չի բաբախել կնոջ համար, կարող է գրավվել այսպես շուտ, գրեթե հանկարծակի, գրեթե հետը չխոսած։ «Հապա, ինչո՞ւ չէ. ի՞նչ զարմանալի բան կլիներ, եթե ես սիրահարվեի անգամ»։ — «Սիրահարվե՞լ»... կրկնեց Ռոստամյանը, հեգնությամբ ժպտալով... ո՛չ, ուշ է... անցել է ժամանակը։ Անցե՞լ է. մի՞թե երեսուն տարին տղամարդի համար կատարյալ մեռելություն է նշանակում։

Եվ այս հարցերը Ռոստամյանի մտքում զարթնելիս՝ բնականաբար մի հայացք ձգեց դեպի յուր անցյալը։

Ուշ գիշերր և հոգեկան տարօրինակ հուզումը մենակյացի առջև այդ — մինչև այժմ չի քննված — անցյալը պատկերացրին տխուր, դատարկ և մռայլ։ Նրա մանկությունն անցել է չքավորության լծի ներքո, պատանեկությունը ծնողների վաղահաս մահվան խորին դառնության մեջ։ Իսկ հետո ... Ուսանողության սովատանջ օրեր, գիշեր ու ցերեկ հոգս մի փոր հացի համար, մտավոր աշխատանքի ներքո ճնշված, հեռու ուսանողների աղմկալի շրջաններից, հեռու հասարակությունից, հեռու մանավանդ կանանց սեռից, կապված միմիայն գրքերի և դասախոսությունների հետ։ Հետո՞ ... Սի թեթև, կարճատև հեղաշրջումն, երբ նա ուսանողությունից անցնում է բուն կյանքի սահմանը։ Այնուհետև մի տարի ու կես անխոնջ ուսուցչի չոր ու ցամաք պարապմունք, ուղեղները մանկավարժական կանոններով ցանցոտված վարժապետների սահմանափակ շրջան։ Այնուհետև պաշտոնական մի զբաղմունք... Եվ բոլորը միատեսակ, ձանձրալի տարիների մի շարք, երբ այս օրը նման է երեկվան, վաղն այսօրվան։

Ինչո՞ւ մինչև այժմ այս հասարակ խորհրդածությունները չէին պաշարում նրա միտքը։ Ինչո՞ւ այս համր ինքնասպանության մեջ մի օր, մի ժամ նա չզգաց, թե, արդարև, Նատալիա Պետրովնայի փիլիսոփայությունը ճիշտ է. «Մարդ մի անգամ է ծնվում, ո չ թե երկու անգամ»։ Ինչո՞ւ նա գոհ էր յուր աշխատավոր կյանքի խաբուսիկ օգտավետությամբ։

Օգտավետություն... Ումի՞ համար է արդյոք օգտավետ նրա կյանքը, ինչո՞ւ համար է նա տքնում գիշեր ու ցերեկ, ու՞մ ինչ օգուտ նրա պաշտոնական չոր ու ցամաք շարադրություններից։ Այնինչ՝ նա որքա՜ն արյուն է փչացրել և տակավին փչացնում է այդ բոլորի վրա։

Անկասկած, նա ուրիշ ոչինչ է, եթե ոչ ճակատագրի մի խաղալիք, բնության կատակներից մեկն, ուրիշներին զվարճացնելու համար ստեղծված մի մեքենա։ Դարձյալ ոչինչ, եթե այդ մեքենան գործեր մի հարատև փառքի համար, մի փառք, որ նրա անունը լսելի դարձներ գեթ կենդանության միջոցին... Բայց նա մի հասարակ մշակ է և ուրիշ ոչինչ...

— Այո, այլևս ուշ է այս մասին մտածել, — ասաց նա լսելի ձայնով, կանթեղի առջև կանգնած։

Սակայն ինչո՞ւ հուսահատվել: Եթե, իրավ, անցել է նրա կյանքի պահը, ապա ինչո՞ւ այս զգացմունքները խավար գիշերվա մեջ խորտակում են նրա քունը: Ոչ, տակավին վաղ է հուսահատվել: Տակավին ժամանակ կա անձնատուր լինելու կյանքի երջանիկ հոսանքին: Թող նա սկսի յար հասակի այն շրջանում, երբ ուրիշներն ավարտում են, փույթ չէ, միայն թե կարողանա սկսել: Թող նա հանրության մեջ դառնա մի աննշան հյուլե, թող կյանքի փոթորկի մեջ մի փոքրիկ կոհակի դեր կատարի, միայն թե իմանա, որ ապրում է, շնչում է, զգում է և ոչ թմրում, որպես մի սառնարյուն որդ ծառի խոնավ արմատի մեջ...

IV

Հետևյալ օր Ռոստամյանը, թեյ խմելուց հետո, յուր սովորությամբ, անմիջապես նստեց սեղանի մոտ, որ պարապի: Առաջին ժամր նա աշխատեց սովորական եռանդով: Նա թերթում էր այս ու այն ձեռագիրր, ժողովում էր յուր առջև դրած փոքրիկ թերթիկներն, ուր մանր տառերով գրված էին ինչ-ինչ հաշիվներ, գումարում. էր համարակալի վրա և գրում ձեռքի տակ դրած հաստ ձեռագրի մեջ: Մի խոսքով, նա շտապում էր առաջ տանել իրան հանձնված աշխատությունը, որ պիտի ավարտեր մինչև հաջորդ ամսի վերջը: Բայց անցավ առաջին ժամը. նա զգաց մի անսովոր հոգնածություն, գրիչը շպրտեց մի կողմ, ծխախոտ վառեց և սկսեց հետ ու առաջ շրջել: Նա կրկին կորցրեց յուր մտքերի թելը, նրա գլխում զարթնեցին նախընթաց գիշերվա հիշողություններն և, փոխանակ գործի, անձնատուր եղավ այդ հիշողություններին:

Դարձյալ Վարվառեի տխուր և լուրջ կերպարանքը կենդանացավ նրա առջև և դարձյալ նույն թախծալի աչքերը սկսեցին նայել նրա վրա:

— Ոչ. այս աններելի է, — ասաց նա ինքն իրան, — ամբողջ գիշեր մտածել մի օրիորդի մասին, մի՞թե սրանից ավելի թեթևամիտ բան կարող է լինել:

Այո՛, մի օրիորդի մասին, որն այժմ գտնվում էր նույն տան մեջ, ուր բնակվում է Ռոստամյանը, մի քանի քայլ հեռու, ահա՛, այն դիմացի սենյակներում: Հետաքրքրելի է իմանալ, զարթնե՞լ է նա, թե՞ ոչ: Եվ Ռոստամյանը մտիկ արավ յուր լուսամուտից դեպի դեմ ու դեմ: Ոչ ոք չէր երևում, լուսամուտների փեղկերը դեռ փակ էին. այնինչ արդեն տասը ժամն էր:

Բայց ահա փեղկերը բացվեցին, արևի թույլ ճառագայթները թափանցեցին նրանց սենյակները: Ահա ծերունին, յուր տնային երկայն, մոխրագույն «խալաթով» և կարմրագույն տաճկական «ֆեսը» գլխին: նա հազալով դուրս եկավ պատշգամբից, նայեց դեպի վայր, հետո աջ ու ձախ և անհայտացավ:

Վերջապես, երևեցավ և նա, որին ուզում էր տեսնել Ռոստամյանը: Արդեն հագնված նստած, Վարվառեն թեյ էր պատրաստում, դարձյալ տխուր, դարձյալ մռայլ: Իսկ հայրը ժպտում է, ծիծաղում: Անշուշտ նա աշխատում է զվարճացնել աղջկան — անշուշտ, որովհետև հեռվից անգամ այս է արտահայտում ծերունու դեմքը:

Ռոստամյանը զգում էր, որ քաղաքավարության սահմանից դուրս է ուրիշների ընտանեկան տեսարանին ականատես լինել: Բայց այս — խելքի թելադրությունն էր, իսկ սիրտը ստիպում էր ամոթխած երիտասարդին անշարժ մնալ յուր լուսամուտի առջև:

Սինաս Կիրիլլիչը թեյ խմեց, հագուստը փոխեց և, մի քառորդ ժամ անցած, դուրս եկավ փողոց, յուր հետ տանելով ծառային: Աղախինը սկսեց սրբել սենյակները:

Վարվառեն դուրս եկավ պատշգամբ, մտիկ արավ տերևաթափ ակացիայի ճյուղերին, դիմացի տանիքին, ներքև, վերև, հետ ու առաջ, բայց տակավին ոչ դեմ ու դեմ — դեպի Ռոստամյանի բնակարանը:

Մինչդեռ երիտասարդը ցանկանում էր որսալ նրա հայացքը, արդյոք, այն միևնույնն է, ինչ որ նախընթաց երեկո, ինչ որ երեկ ու անցյալ օրերը: Աղախինը սենյակները սրբեց, վերջացրեց: Վարվառեն գնաց ներս:

Ռոստամյանը դարձյալ նստեց սեղանի մոտ: Սակայն ահա գրիչը նրա ձեռքում առաջ չի շարժվում, նրա աչքերը նայում են թղթին, իսկ միտքը թափառում է սենյակից դուրս Մի անգամ ևս մոտենալով լուսամուտին, նա երես առ երես հանդիպեց խորհրդավոր էակի որոնող հայացքին: Ո՞ւմ է որոնում, ի՛նչ է ուզում, ծաղրո՞ւմ է արդյոք խեղճ մենակյացին, կամենում է արդյոք, յուր կանացի քմահաճության զվարճալի՞ք դարձնել, ծիծաղել նրա թուլության վրա՞: Ո՛չ, անկարելի է, որ այդ խոհուն աչքերի և տխուր դեմքի տեր էակը կամենա մեկին ծաղրել կամ խաղալիք դարձնել: Նա բարձր է մարդկային այդ անվայել զգացումներից:

Ճաշի ժամանակը մոտեցավ. Ռոստամյանը գրեթե ոչինչ չէր ավելացրել յուր աշխատությանը, սկսած տասը ժամից: Պետրեն երկու անգամ ներս մտավ, հրավիրեց, բայց նա տակավին ախորժակ չուներ:

Վաղուց Վարվառեն չէր երևում, իսկ նա դեռ արծանացած էր յուր լուսամուտի առջև:

— Ստեփան Գրիգորիչ, խոմ ծոմ չե՞ք պահում այսօր, — լսեց Ռոստամյանը հանկարծ, երեսը հետ դարձրեց և կարմրեց:

— Կերակուրը պաղում է, գնա՛նք, — հրավիրեց Նատալիա Պետրովնան:

Հակառակ սովորականին, ճաշի ժամանակ Ռոստամյանն երեք բաժակ գինի խմեց, և այս անսովոր քանակությունն յուր ազդեցությունն ունեցավ: Նա սկսեց զվարճախոսել յուր տանտիրուհու հետ, որով և մեծ զարմանք պատճառեց վերջինին: Մի անգամ նա հանկարծ սկսեց բարձրաձայն ծիծաղել, նայելով կերակուրներ մատուցանող ծառայի հետևից:

— Հըմ, ի՞նչ կա, — հարցրեց Նատալիա Պետրովնան, ավելի ու ավելի զարմանալով:

— Պետրեն այսօր աչքիս ծիծաղելի է երևում, — պատասխանեց Ռոստամյանն, աշխատելով զսպել յուր բուռն ծիծաղը: — Գիտե՞ք, Նատալիա Պետրովնա, նա ոտով-գլխով ինչ բանի է

նմանվում... — Ծածկած հովանու: Գլուխը բարակ, սրածայր, ուսերը նեղ, արխալուղն երկայն, փեշերը լայն, իսկ և իսկ ծածկված հովանի... Լա՛վ նայեցեք, եկավ ... հա՛ հա՛ հա՛:

Նատալիա Պետրովնան վարակվելով յուր երիտասարդ կենողի ծիծաղով, անձեռոցիկը բռնեց բերանին և սկսեց նույնպես բարձրաձայն քրքջալ: Հետո նա աչքերը սրբեց, մի քիչ գինի խմեց և ասաց.

— Երանի, որդի, որ միշտ այդպես ուրախ տեսնեի ձեզ, ի՛նչ սազում է ձեզ ծիծաղը, ախ, ի՛նչ սազում է ...

Ճաշը դեռ չվերջացած, վոստային նամակաբերն այրիի անունով մի նամակ բերեց: Նատալիա Պետրովնան անմիջապես բաց արավ նամակը: Գրողը Գաբոն էր և գրում էր վրացերեն: Այրին շտապով կարդաց: Գաբոն հայտնում էր, թե այս տարի արդեն ուսման ընթացքն ավարտում է, հետևաբար երկու-երեք ամսից հետո կգա բժշկի վկայականով:

— Աչքդ լույս Նատալիա Պետրովնա, — գոչեց բարձրաձայն Ռոստամյանը, — Այս էլ Գաբոյի կենացը — ավելացրեց նա, կես բաժակ ևս մուգ- դեղնագույն հեղուկից խմելով:

Երկուսն ևս — այրին ավետաբեր նամակի, իսկ Ռոստամյանը գինու ազդեցությամբ — շատ ուրախ տրամադրության ներքո, երկար ժամանակ ոգևորված խոսում էին: Ի վերջո, Ռոստամյանը խոսակցությունը դարձրեց Վարվառեի վրա: Սակայն պատկառելի այրին, հայտնի չէր ինչու, այդ օրն առաջին անգամ խույս տվեց այս մասին խոսելուց: Լսելով Վարվառեի անունը, նա հանկարծ ընկավ մտախոհության մեջ, և վայրկենաբար նրա դեմքը փոխվեց: Ապա նա լռիկ, ինքնուրույնաբար գլուխը շարժեց և ցուցամատի ծայրը շտապով կծեց: Ռոստամյանը զարմացած նայեց նրա երեսին և այլևս համարձակություն չունեցավ խոսքը շարունակել ցանկալի առարկայի վերաբերմամբ: Առանց այլևս մի բան արտասանելու, նա բարձրացավ տեղից, գլուխ տվեց և հեռացավ յուր սենյակը:

Երեկոյան Ռոստամյանը դուրս գնաց փոքր ինչ զրոսնելու: Շատ չանցավ, նա վերադարձավ տխուր մտածության մեջ:

Այսպես անցավ երեք-չորս օր: Այլևս Ռոստամյանը նախկին եռանդով և համբերատարությամբ աշխատել չէր կարողանում: Մի անհաղթելի ցանկություն էր զգում նա մեկի հետ մտերմաբար խոսելու, մեկին յուր զգացմունքներն արտահայտելու: Գուցե թեթևացներ սրտի անորոշ ծանրությունը: Այլևս մանկությունը նրան թվում էր տխուր, անտանելի, նույնիսկ ամոթալի: Սակայն ո՞ւր գնար, ո՞րտեղ գտներ մի մտերիմ ընկեր, քանի որ ամենքից հեռացած, չուներ ոչ ոքի հետ սրտակից հարաբերություն, բառիս ընդարձակ նշանակությամբ: Կային Թիֆլիսում նրա նախկին ուսումնակիցներից ոմանք, բայց, բացի ուսանողական «դու»-ից, նրանց հետ այլ սերտություն չուներ նա: Կկամենար նա գեթ Նատալիա Պետրովնայի հետ խոսակցությամբ անցկացնել յուր ձանձրալի երեկոների մի մասը: Բայց, անհասկանալի բան, Նա տալիա Պետրովնան ևս առաջվանը չէր: Այրին փոխվել էր, ծածկամիտ և սակավախոս էր դարձել, մանավանդ յուր նոր կենողների վերաբերմամբ:

Առավոտ ու երեկո դիմացի լուսամուտներում երևում էր Վարվառեն միևնույն տխուր դեմքով: Երբեմն նա խաղում էր դաշնամուրի վրա, երբեմն դուրս էր գալիս պատշգամբ, երբեմն գրքեր էր կարդում, իսկ տնից դուրս էր գալիս շատ սակավ, այն ևս հոր ուղեկցությամբ և միայն երեկոները:

Մի բավական տաք երեկո ծերունին, յուր աղջկա հետ թև թևի տված, դուրս եկավ տնից: Ռոստամյանին մի ներքին ուժ դրդեց հետևել նրանց: Նա շտապով հագնվեց և դուրս եկավ: Հայր ու աղջիկ դիմեցին դեպի Գալավինսկի պրոսպեկտ: Մի քանի քայլ հեռվից Ռոստամյանը հետևում էր նրանց: Անցորդներն ուշադրությամբ մտիկ էին անում նրանց վրա: Ծերունու պատկառելի դեմքը, Վարվառեի հպարտ և ինքնավստահ քայլվածքը ամենքի աչքում մի խորհրդավորություն էին տալիս անծանոթ զույգին: Երիտասարդ զբոսնողներից ոմանք, միմյանց բոթելով, ցույց էին տալիս այդ զույգի վրա:

Երբ հայր ու աղջիկ հետ դարձան, Ռոստամյանն երես առ երես հանդիպեց նրանց, գդակը վերցրեց, մոտեցավ, բարևեց, միացավ և սկսեց զբոսնել նրանց հետ: Ծերունին ուրախ տրամադրության ներքո էր, աղջիկը նույնպես: Նրանք գովեցին Թիֆլիսի կլիման, կապույտ երկինքը, պարզ օդը: Մոտ կես ժամ միասին զբոսնելուց հետո, նրանք վերադարձան տուն: Օրն արդեն մթնում էր: Ծերունին հրավիրեց Ռոստամյանին յուր մոտ թեյի, Վարվառեն կրկնեց հրավերը, և Ռոստամյանն առաջին անգամ վստահացավ գնալ նրանց մոտ:

Կանթեղները վառած, պատրաստ էին, սեղանի վրա եռում էր մաքուր, ոսկեփայլ հեշտաեռը: Վարվառեն սովորաբար ինքն էր թեյ ածում, ուստի, վերարկուն և ձեռնոցները հանելով, նա անմիջապես սկսեց մաքուր բաժակները մի անգամ ևս լվանալ և մաքրել: Մինաս Կիրիլլիչն, րստ երևույթին, մոռացել էր Ռոստամյանի ընդդիմադրությունն յուր հայացքներին: Նա դարձյալ սկսեց քննադատել Թիֆլիսի բնակչությունը, որին անարժան էր համարում երկրի բնությանն ու գեղեցիկ դիրքին: Սակայն Ռոստամյանն այս անգամ, անպայման համաձայնվելով ծերունու հետ, վիճաբանության առիթ չտվեց: Այս լուսավոր սենյակում, պատկառելի ծերունու և երիտասարդ կնոջ այս փոքրիկ շրջանում նա զգում էր մի ծայրագույն երջանկություն, որ երբեք, երբեք չէր զգացել: Ծերունին սկսեց, վերջապես, հարց ու փորձ անել Ռոստամ յանի գործերի մասին:

— Զարմանում եմ, — ասաց Մինաս Կիրիլլիչը, — որ դուք ինժեներ եք և բավականանում եք այդ համեստ նստակյաց պաշտոնով: Այժմ ինժեներները երկաթուղիների վրա տասնյակ հազարներ են վաստակում:

— Ես ինժեներ չեմ, Մինաս Կիրիլլիչ, — պատասխանեց Ռոստամյանը, ժպտալով, — Նատալիա Պետրովնան է իմ անունը այդպես կնքել:

— Հապա ի՞նչ է ձեր մասնագիտությունը:

— Իմ մասնագիտությունը — երկրագործություն է:

— Աա՛, — արտասանեց Մինաս Կիրիլլիչը մի փոքր հիասթափված մարդու եղանակով, — ուրեմն դուք ո՞ր ուսումնարանումն եք ավարտել:

— Մոսկվայի Պետրոսյան երկրագործական ճեմարանում։

— Հասկացա, երկրագործ եք։ Բայց ի՞նչ գործ ունեք սենյակի պատերի մեջ։

— Ո՞ւր գնամ։

— Գյուղը, — պատասխանեց ծերունին վճռողաբար։

— Կցանկանայի գնալ, բայց դրա համար հարկավոր է երեք բաներից մեկը։

— Օրինա՞կ։

— Կամ դրամագլուխ, կամ սեփական կալվածք, կամ մեր հարուստ կալվածատերերի հավատարմությունը։

— Եվ ոչ մեկը դրանցից չունի՞ք։

— Չունիմ, ինչպես և ինձ նման շատերը չունին։

Մինաս Կիրիլլիչը խորհրդավոր կերպով գլուխը շարժեց և ծանր եղանակով ասաց.

— Չէի՞ ասում ձեզ, պարոն, որ մենք դեռ տգետ ենք։ Ասացեք խնդրեմ, ի՞նչ կլիներ, որ մեր հարուստ կալվածատերերից մեկը ձեզ ընկերացներ իրան հետ և յուր կալվածքը տար, որ դուք եվրոպական ձևով մշակեիք։ Ո՛չ, եղբայր, մեզ համար վաշխառությունն ավելի հեշտ է, քան թե երկրագործությունը։ Ձհուդ ենք մենք...

Հետո ծերունին հարցրեց, թե, արդյոք, Ռոստամյանի ներկա աշխատությունը, փոքր ի շատե համապատասխանում է յուր մասնագիտությանը։ Ռոստամյանը պատասխանեց, թե նրա գրավոր աշխատությունը, ճշմարիտ է, վերաբերվում է յուր մասնագիտությանը, բայց միայն տեսականի կողմից, թե նրան կառավարությունից հանձնված է կազմել և ընդարձակել երկրի մասին զանազան տնտեսական տեղեկություններ և այլն, և այլն։

Խոսակցությունն անցավ այլ առարկաների վրա, և Ռոստամյանը մնաց յուր հարևանների մոտ մինչև երեկոյան տասը ժամը։ Դուրս գնալիս, Մինաս Կիրիլլիչը բարեկամաբար հայտնեց նրան, թե յուր դռները միշտ բաց են նրա համար և խնդրեց, որ շուտ-շուտ շնորհ բերի։

Այդ օրվանից սկսած և այլևս չէր վարանում ստեպ-ստեպ այցելել ծերունուն և նրա աղջկան, և միշտ այն ժամանակ, երբ գիտեր, որ Մինաս Կիրիլլիչը տանն է։ Վերջինը հետզհետե ավելի ու ավելի բարեկամանում էր նրա հետ։ Թեև շատ բաներում նրանք չէին համաձայնվում միմյանց մտքերին և շատ անգամ Ռոստամյանը տաք-տաք հակառակում էր ծերունուն, բայց Մինաս Կիրիլլիչին դուր էին դալիս երիտասարդի առողջ, համարձակ և երբեմն մոլեռանդ դատողություններն այն մասնավոր, հասարակական և մերթ րնդ մերթ ազգային խնդիրների վերաբերմամբ, որ միշտ հետաքրքրում էին անգործ ծերունուն բացասականի կողմից։ Նրանց խոսակցությանն ու վիճաբանությանը մասնակցում էր և՛ Վարվառեն յուր մեղմ ձայնով, խոսելու համեստ եղանակով և պարզ, ժամանակակից կեղծությունից զերծ ձևերով։ Հաճախ ծերունին

լռում էր, վիճաբանության ասպարեզը թողնելով յուր աղջկան և Ռոստամյանին: Հարկավ, նրա ներկայությամբ երկու երիտասարդ անձանց խոսակցությունը երկար չէր կարող տևել այն առարկաների վրա, որ մատչելի չէին ծերունու ուղեղին և զգացմանը: Բայց, այսուամենայնիվ, երբեմն նրանք, կարծես, մոռանալով Մինաս Կրիլլիչի ներկայությունը, շոշափում էին միմյանց սրտին մոտիկ խնդիրներ: Այսպես, մի երեկո Ռոստամյանը սեղանի վրա տեսավ Գյոթեի «Վերթեր» անունով գրքույկը, որ Թիֆլիսի գրադարանների մեկից վերցրել էր ծերունին աղջկա խնդրանոք: Ռոստամյանը հարցրեց Վարվառեին, թե կարդացե՞լ է այդ գրքույկը, արդյոք: Վարվառեն նույն օրը միայն ավարտել էր գրքույկի րնթերցանությունը և, երևում էր, տակավին նրա տպավորության ներքո էր: Նա նախ շփոթվեց, ապա մութ կերպով սկսեց խոսել վեպի բովանդակության մասին: Խոսակցությունը չէր կարող շարունակվել այն բարդ գաղափարի մասին, որ արծարծում էր բանաստեղծը, ըստ որում Մինաս Կիրիլլիչը ներկա էր, թեև, հարկավ, տեղյակ չէր գրքի բովանդակությանը:

Ահա հենց այդ երեկո էր, երբ Ռոստամյանը յուր սենյակը վերադառնալուց մի քանի րոպե անցած, ներս մտավ Պետրեն և ասաց, թե Նատալիա Պետրովնան խնդրում է նրան շնորհ բերել յուր մոտ:

Այրին, մի համրիչ ձեռին, թախտի ծայրին նստած, խորին մտածության մեջ էր: Նա լուռ ընդունեց յուր երիտասարդ կենողին և, տխուր հառաչելով, հրավիրեց նստել:

— Խոմ վռազ գործ չունի՞ք, — հարցրեց նա:

— Ոչ, — պատասխանեց Ռոստամյանը, զարմանալով այրիի անսովոր մտախոհության վրա:

— Որտեղ էիք, — հարցրեց այրին :

— Ռոստամյանն ասաց, թե որտեղ էր:

— Նոր բան չիմացա՞ ք:

Այս հարցն առաջարկելիս այրին աչքի տակով խորհրդավոր նայեց Ռոստամյանի երեսին: Վերջինը զգաց, որ այրին ինքն անշուշտ մի նշանավոր նորություն ունի հաղորդելու: Համրիչի հատիկներն յուր փափուկ մատների մեջ չրխկչրխկացնելով, Նատալիա Պետրովնան քանի մի վայրկյան լռեց: Հետո նա, յուր առողջ իրանը ուղղելով, հառաչեց, մազերն ուղղեց և ասաց,

— Աշխարհս, Ստեփան Գրիգորիչ, վատացել է, խե՛ղճ մարդ, խե՛ղճ կնիկ ...

— Ի՞նչ է պատահել, Նատալիա Պետրովնա, — հարցրեց Ռոստամյանն, այս անգամ համբերությունը հատած:

— Այն է պատահել, որդի, որ մեր Վարվառա Մինաևնան — աղջիկ չէ:

Ռոստամյանը, տակավին չհասկանալով այրիի ասածը, զարմացմամբ լի աչքերը հառեց նրա երեսին:

— Հապա՛, — շարունակեց այրին, գլուխը շարժելով, — Վարվառեն մարդ ունի, պսակված է և մարդուց բաժանված։

Ռոստամյանը գունաթափվեց։ Այրին, ոտը ոտի վրա դնելով, շարունակեց։

— Բայց ես ու դուք կարծում էինք, որ նա անմեղ աղջիկ է։ Միտնե՞րդ է, Ստեփան Գրիգորիչ, թե ինչքան ես խնդրում էի ձեզ, որ նշանվեք նրա հետ։ Հետո տեսա, որ դուք չեք ուզում, ասացի, թող իմ Գաբոյի համար պահեմ։ է՛հ, ի՛նչ մեղքս թաքցնեմ, ես սուտ ասել չեմ կարողանում, եթե դուք խնդրեիք ու աղաչեիք էլ, ես չէի թողնիլ, որ Վարվառեն ձեզ հասներ։ Ես շատ սիրեցի նրան և ուզում էի, որ նա անպատճառ իմ Գաբոյի հարսնացուն դառնա։ Հիմա, դուք աստծու բանին մտիկ արեք, որ ոչ ձերը կարող է լինել և ոչ իմ Գաբոյինը... փառք քեզ, տեր աստված...

— Բայց ձեզ ո՞վ ասաց, որ Վարվառա Մինաևնան մարդ ունի, — հարցրեց Ռոստամյանը, հազիվ կարողանալով զսպել յուր բուռն հուզմունքը։

— Համբերեցե՛ք ու ես մեկ-մեկ կպատմեմ։ Մի օր, որդի, սիրտս տխրեց, ասացի գնամ նրանց մոտ։ Գնացի. Մինաս Կիրիլլիչը տանը չէր. Վարվառա Մինաևնան տխուր նստած էր միայնակ։ Սկսեցինք խոսել դեսից դենից։ Մեկ էլ տեսնեմ, դու ես իմ պարոն Ստեփան Գրիգորիչ, այդ մեր Վարվառա Մինաևնան դարձավ ինձ ու ասաց, — «Նատալիա Պետրավնա ես մի խնդիր ունիմ ձեզ»։ Ասացի, «հրամայիր, որդի»։ — «Դուք ինձ, ասաց, այսուհետև բարիշնա չանվանեք, այսինքն ազապ աղջիկ չկարծեք»։ — «Ինչո՞ւ, որդի, հարցնում եմ ես»։ — «նրա համար, որ ես պսակված կնիկ եմ», ասում է։ Ես տեղն ու տեղը զարմացա, լեզուս կապվեց։ — «Կենդանի՞ է ձեր մարդը», հարցնում եմ։ «Ուրիշների համար կենդանի է, ինձ համար մեռած», ասում է։ Հետո, Ստեփան Գրիգորիչ, նա սկսեց մեկ-մեկ պատմել յուր մարդու մասին։ Զարմանո՞ւմ եք, որդի, հապա՛, ո՞վ կմտածեր, որ այդ ջահել աղջիկը պսակված է ու անբախտացած։

«Ահա, ուրեմն, ինչումն է թաքնված նրա տրտմության գաղտնիքը», կայծակի արագությամբ անցավ Ռոստամյանի մտքով։ Այլևս նա չէր հոգում, թե յուր հետաքրքրությամբ և դեմքի արտահայտությամբ ակամա արտահայտում է այրիին այն, ինչ որ դեռ միմիայն յուր հոգու ու սրտի գաղտնիքն էր։

— Բայց ո՞վ է Վարվառեի մարդը, ո՞րտեղ է, ինչո՞ւ են բաժանվել նրանք, — հարցրեց Ռոստամյանը անհամբերությամբ միմյանց հետևից։

— Ականջ դիր, մեկ-մեկ կպատմեմ, — պատասխանեց Նատալիա Պետրովնան։

Եվ սկսեց մանրամասն պատմել բոլորն, ինչ որ լսել էր Վարվառեից։

Նատալիա Պետրովնան խոսում էր մերթ հայերեն, մերթ ռուսերեն և երբեմն, նեղ տեղն ընկած ժամանակ, դիմում էր վրացերենին։ Իսկ այնտեղ, ուր խոսք չէր գտնում, միտքը հասկացնում էր յուր հսկայատիպ մարմնի պես-պես շարժումներով։ Ինչևէ, նրա պատմության էական իմաստն այսպես հասկացավ Ռոստամյանը։

Մինաս Կիրիլլիչն և Վարվառա Մինաևնան բուն մոզդոկցիներ են, թեև բնակվել են մեծ մասամբ Մոսկվայում։ Վարվառա Մինաևնան յուր հոր միակ աղջիկն է։ Նա ունեցել է երկու եղբայր և

երեք քույր, որոնք մեռել են մանկության հասակում: Իսկ մայրը մեռել է Վարվառեի ծննդյան վրա: Զրկվելով յուր հինգ զավակներից և ամուսնուց, Մինաս Կիրիլլիչը յուր սերը տվել է Վարվառեին: Աստված խնայել է Վարվառեին: Օօ՜օ, խեղճ մարդն ինչե՛ր է արել յուր միակ աղջկա համար, ինչ նեղություննե՜ր է քաշել, ինչ փողե՛ր է ծախսել, մինչև նրա մեծանալը: «Բայց վերջն ի՜նչպես ղժբախտացրել է նրան էլ, իրան էլ»...

Այստեղ բարեմիտ այրին, հուզվելով, մի քանի վայրկյան ընդհատեց յուր պատմությունը: Ռոստամյանը գրեթե շունչը զսպած, անհամբերությամբ լսում էր, սպասելով այրիի պատմության շարունակության: Խե՜ղճ երիտասարդ, նույն ժամին նա մոռացել էր ամեն ինչ, հոգով ու մտքով կենտրոնացել էր մի կետի վրա — ո՞վ է արժանացել Վարվառեի կենակցությանը և ի՛նչ է պատճառը, որ թունավորվել է նրա կյանքը: Բայց բարեմիտ այրին, չնայելով ունկնդրի անհամբերությանը և յուր ոգևորությանր, չէր շտապում պատմությունը համառոտելու:

Վարվառեն մեծանում է, հայրը նրան յուր հետ տանում է Մոսկվա, տնային ուսուցիչներ է վարձում — ֆրանսերենի, հայերենի, ռուսերենի, երաժշտության, երգեցողության, ամեն մի բանի համար ջոկ-ջոկ: Վերջապես, Վարվառեն քսան տարեկան է դառնում, բայց սիրտը դեռ անմեղ, ուրիշ բանի մասին չի մտածում:

— Այնքան հորս սիրում էի, ասում է, որ կարծում էի, թե առանց նրան մեկ օր էլ չեմ կարող ապրել:

Բայց Մինաս Կիրիլլիչը վճռում է նրան ամուսնացնել:

Նա մի քանի հարուստ երիտասարդների անուններ է հիշում: Վարվառեն ոչ մեկին չի հավանում: Վերջը Մինաս Կիրիլլիչը կանգնում է, թե Մոսկվայում ապրող հաշտարախանցի ծեր Միզանդրոնցովն յուր եղբոր որդու համար առաջարկություն է անում, թե Վարվառեն չպիտի մերժի, թե Միզանդրոնցովն ինքը ընտանետեր չէ, թե եղբոր որդին նրա հարստության միակ ժառանգն է և այլն, և այլն: Մի օր մի ընտանիքում Վարվառեին ծանոթացնում են երիտասարդ Միզանդրոնցովի հետ: Այն օրից սկսած այդ երիտասարդն ընկնում է Վարվառեի հետևից: Որտեղ գնում է խեղճ աղջիկը, նրան է հանդիպում — թատրոններում, հանդեսներում, այգիներում: Սի խոսքով, այդ մարդր շվաքի նման հետևում է նրան: Մի օր նա յուր սերը հայտնում է Վարվառեին: Վարվառեն մերժում է, պատասխանելով, թե առայժմ ամուսնանալու ցանկություն չունի: Միզանդրոնցովը չի հուսահատվում, իսկ Մինաս Կիրիլլիչը նրան ընդունում է գրկաբաց, ինչպես արդեն մի նշանված փեսացվի: Վերջը Վարվառեն ուշադրություն է դարձնում Միզանդրոնցովի վրա:

— Խոմ խեղճ աղջիկը չէր կարող աչքերը կապել, որ յուր շվաքը չտեսնի, — շարունակեց այրին: — Կնիկը, Ստեփան Գրիգորիչ, շուտ է խաբվում, ևս առավել ջահիլ աղջիկը: Հոր գովասանքն, աղաչանքն ու պաղատանքը — այ պետք է անպատճառ նրան գնաս, ա'յ հարուստ ժառանգություն է ստանալու, ա'յ ջահել է, ուսում առած է, գրանիցումն է եղել, ա'յ եթե չես գնալ, սիրտս կկոտրես, մինչև գերեզման հետդ չեմ խոսիլ, ձեռք կվերցնեմ, խեղճ եմ, համ հայրդ եմ, համ մայրդ, ինձ լսիր, դես-դեն — վերջր Վարվառեին խելքից հանում է մարդր: Գիտե՞ք, Ստեփան Գրիգորիչ, որ անձրևն, եթե շարունակ միևնույն տեղը կաթի ու կաթի — վերջը քարին էլ կծակի: Մի տարի ու կես հայրն աղաչում է ու պաղատում — գնա , գնա, վերջը խեղճ աղջիկը,

գլուխն ազատելու համար, գնում է Միզանդրոնցովին, որին «ոչ սիրում էի, ոչ էլ ատում», ասում է Վարվառեն։

— Հետո՞, — ստիպեց Ռոստամյանն, ավելի ու ավելի համբերությունը կորցնելով։

— Հետո, Ստեփան Գրիգորիչ, չնեղանաք, որ ասեմ թե տղամարդը վատ, շատ վատ արարած է։ Դուք ուզում եք իմանալ, թե Վարվառեն որ ամուսնանում է, հետո ինչո՞ւ է բաժանվում։ Գնացեք այդ բանը հարցրեք մեր ժամանակվա փուչ տղամարդերից, որ պսակված են... Ակիմ Աբրոսիմիչ Միզանդրոնցովը դուրս է գալիս մի աղվես։ Այդ մարդը, ո՞վ կարող էր իմանալ, մտքում դրած է լինում խոնարհ, անմեղ մարդ ձևանալ, քանի որ հորեղբայրը կենդանի է, որ նրա ժառանգությունը ստանա և հետո ինչ որ ուզում է, այն անի։ Այսպես էլ լինում է. ծերացած Միզանդրոնցովն, յուր եղբոր որդուն պսակելուց վեց ամիս անցած մեռնում է ու կարողությունը թողնում աղվեսին։

Այնուհետև Վարվառեի մարդը դուրս է գալիս յուր կեղծ մորթուց։ Առաջ նա ցերեկներն է սկսում ուշանալ, հետո գիշերները։ Մի գիշեր մինչև լույս տուն չի գալիս։ «Ո՞րտեղ էիր», հարցնում է Վարվառեն։ «Ընկերներիս մոտն էի, ասում է, առևտրական հաշիվներ էինք անում»։ Լա՛վ։ Մի ուրիշ անգամ էլ ուշանում է, ուրիշ պատճառ է բերում։ Վարվառեն բանի էությունը հասկանում է, տեսնելով, որ մարդն ամեն գիշեր ուշանում է։ Վերջը մի օր Միզանդրոնցովը հանկարծ կնոջը թողնում է ու գնում Պետերբուրգ, երկու շաբաթ ժամանակով, իբրև թե գործերով։ Երկու շաբաթը դառնում է չորս ամիս։ Գալիս է հետ, դարձյալ նույն կյանքն է շարունակում, այս անգամ առավոտներն է տուն վերադառնում, աչքերն անքնությունից ուռած, կարմրած, երեսը դեղնած։

— Հենց որ ինձ տեսնում էր, — շարունակեց այրին Վարվառեի խոսքերով, — գլուխր կրծքին քաշ էր ձգում, համեստ, խոնարհ, սկսում էր ձեռք ու ոտքս համբուրել, երդվում էր յուր հոր ու մոր գերեզմանով, թե ինձ օրեցօր ավելի է սիրում։

Մի օր Վարվառեի ընկերուհիներից մեկը կատակով նրան մի բան է ասում Ակիմ Աբրոսիմիչի մասին։ Վարվառեն ծիծաղում է, բայց սիրտը սկսում է ցավել։ Մյուս օրը մի ուրիշից էլի մի բան է լսում։ Վարվառեն, ամոթից, սկսում է պաշտպանել յուր կեղտոտ ամուսնուն ուրիշների մոտ։ Հետո նա չի ուզում յուր ծանոթների աչքում երևալ, կարծում է, որ ամենքը ծաղրում են նրան իրանց մտքում։ Մյուս կողմից էլ նկատում է, որ Մինաս Կիրիլլիչը օրեցօր պաղում է դեպի փեսան, տեսնվելիս — առաջվա պես սիրով չի ընդունում նրան։ Բանը բոլորովին պարզվում է։ Միզանդրոնցովի փողերը գնում են ջրի պես։ Վարվառեն յուր ցավը հայտնում է հորը։ Հայրն այնպես է ցույց տալիս, թե չի հավատում, բայց ո՜ւր... ամբողջ քաղաքին է հայտնի լինում Միզանդրոնցովի արարքը։ Իսկ Միղանդրոնցովր շարունակում է Վարվառեի մոտ երդվել, որ սիրում է, պաշտում է և այլն...

— Ա՛խ Ստեփան Գրիգորիչ, — գոչեց Նատալիա Պետրովնան, գլուխը դառնությամբ շարժելով, — քանի-քանի մարդիկ կան հենց մեր Թիֆլիսումն է, որ տանը համբուրում են իրանց կանանց ձեռը, իսկ դրսում անառակների ոտը։

Վարվառեն մի օր կանգնում է և յուր մարդու երեսին ասում. «Ակիմ, կամ արարմունքդ թող, կամ ինձ»։ Մարդը մեղա է գալիս, բայց շարունակում է յուր անառակությունները։ Վարվառեն էլի

խնդրում է, չի լինում: Մի անգամ նա կառքով գնալիս է լինում յուր ազգականներից մեկի մոտ, հանկարծ տեսնում է, որ Ակիմը մեկ ռուս դերասանուհու հետ կառքով անցնում է...

— Կնիկը համբերող է, Ստեփան Գրիգորիչ, — գոչեց այրին, ձայնը բարձրացնելով, — բայց էլի մարդ է, աստված չէ: Վարվառեն կառքը քշել է տալիս ուղիղ յուր հոր տունը: «Կամ սպանիր ինձ, կամ թող, որ քեզ հետ ապրեմ», ասում է: «Վարվառե, խելքի եկ»: Չի լինում, ո՛չ հոր աղաչանքը, ո՛չ մարդու նոր մեղա գալը — չեն օգնում:

Մի ամիս անցած, Միզանդրոնցովր Մոսկվայից անհետանում է: Բոլոր ծանոթներր սկսում են խոսել, որ նա «մի դերասանուհու հետ փախել է Օդեսա»: Մի փոքր ժամանակից հետո, Վարվառեն նամակ է ստանում նրանից հազար ու մի սատանայություններով լի: Նա գրում է, թե մեղավորը Վարվառեն է, որ խայտառակեց նրա անունը, թե այլևս նա չի կարող Մոսկվայում երևալ, թե Վարվառեն, եթե ուզում է, թող ինքը գնա նրա մոտ և այլն, և այլն: Քաղաքում երկար բամբասում են. հարցնում են Մինաս Կիրիլլիչին, նա հարցնողներից գլուխ է փախցնում: Վարվառեն գիշեր ու ցերեկ տնից չի դուրս գալիս, օրից-օր բաները վատանում են:

— Հիմա գանք Մինաս Կիրիլլիչի խղճմտանքին, — շարունակեց Նատալիա Պետրովնան, մի անգամ ևս հառաչելով: — Բայց ինչ պատահեց ձեզ, Ստեփան Գրիգորիչ, դուք ինձ չե՞ք լսում:

Արդարև, և այլևս չէր լսում այրիի խոսքերը: Գունաթափ, դողդոջուն շրթունքներով, ատամները սեղմած, նա յուր հայացքը հառել էր սենյակի դեպի մութ անկյունը:

— Ես... ո՛չինչ... լսում եմ... — արտասանեց նա սթափվելով:

— Ո՛չ, դուք ականջ չեք դնում, ներողություն, ես ձեր գլուխը ցավացրի:

— Ծխախոտի ծուխը գլուխս պտտեցրեց, ի՞նչ էիք ասում, շարունակեցե՛ք, խնդրեմ: Բայց ոչ, ուշ է, Նատալիա Պետրովնա, ներեցե ք: Բարի գիշեր...

Թողնելով այրիին զարմացած և խոսքը կիսատ, Ռոստամյանն արագությամբ դուրս վազեց: Նա անհապաղ անցավ յուր ննջարանն և, դռները չփակած, հագուստը հագին, երեսնիվայր պառկեց անկողնի վրա:

Այսպես ուրեմն, Վարվառեն օրիորդ չէ: Նրա բախտն արդեն խորտակված է ճակատագրի անողոք հարվածով: Ահա ինչն է պատճառը նրա անբաժան տխրության, այն մռայլ ստվերի, որ սքողել է նրա մատաղ դեմքը: Այդ — անհաջող կյանքի դառն արտահայտությունն է, այդ — վշտալի վիճակի սև դրոշմն է: Արդյոք կարելի՞ է այստեղ մեղադրել ճակատագիրը կամ նախախնամությունը, արդյոք, անիմաստ բառեր չե՞ն սրանք: Վարվառեն զոհ է դարձյալ եսամոլ հոր քմահաճության, ուրիշ ոչինչ: Անսիրտ ծնողն յուր հայրական սերն աղջկան վաճառել է նրա բախտի արժեքով: Նա ի չարն է գործ դրել որդիական սերը, հարգանքն և անձնուրացությունը: Դուստրն յուր անմեղ սիրտը զոհել է բռնակալ հոր ինքնասիրությանը, և սա ընդունել է մի այդպիսի ծանր զոհաբերություն: Մի ծերունու քիմքը գոհացնելու համար, ջարդ ու փշուր է եղել մի ծաղիկ կյանք: Համեստությունն ու գեղեցկությունը հանձնվել են ժամանակակից

անարգանքի իշխանության: Աղավնին րնկել է ագռավի գիրկը, որ նեխված լեշով է հագեցնում յուր անխտրական կոկորդը: Առաքինությունն ապականվել է գարշելի մեղսագործությամբ:

«Եվ ո՞վ է մեղավորը»:

— Միակ զավակի սիրող հայրը:

«Անարգվածն ումի՞ց պիտի պահանջի յուր վրեժը»:

— Հորից և միմիայն յուր հարազատ ծնողից:

Բայց նա դեռ սիրում է այդ բռնակալին, դեռ կարողանում է ներել նրա այդ ծանր հանցանքը: Առաքինությո՞ւն է այդ արդյոք, թե՞ կնոջ դարավոր ստրկության արգասիք: — Ստրկություն, որ կրավորական արարածի մեջ ոչնչացրել է ամեն մի ինքնակամություն:

Զարհուրելի է մարդկային հակասությունը: — Այդ բռնակալը դեռ համարձակվում է ուրիշներին դատապարտել, դեռ հավակնություն ունի առաքինի և բարոյական մարդ ձևանալ: Նա դեռ բողոքում է մարդկության դեմ, մրոտում է մի ամբողջ ժողովրդի անունը, թե սա խլում է նրա հանգստությունը, թունավորում է նրա գոյությունը: Կե՛ղծ ազատամտություն: Սու՛տ են նրա հայրական ղգացմունքները, ծնողի սերը մի մաքուր դիմակ է այլանդակ բարբարոսությունը սքողելու համար:

Իսկ ա՛յժմ... այժմ ինչ է ուզում նա յուր հայրական կամքով անբախտացրած արարածից: Մի՞թե մի ձեռով տված վերքը կամենում է մյուս ձեռով բուժել: Եվ ի՞նչ դեղերով: — Աշխարհի ունայն շուքը օտար երկրներում նրան ցույց տալո՞վ: Մի՞թե նա այնքան միամիտ է, որ կարծում է, թե մի երիտասարդ կնոջ ամայի սիրտը կարող է լիանալ կյանքի լոկ արտաքին շքեղությունները տեսնելով: Ո՛չ, ո՛չ, հազար անգամ ոչ: Կենդանի մատաղ սիրտը մի երաժշտական գործիք չէ, որ հնչի այն եղանակն, ինչ որ կամենում է մի ուրիշի կամքը, լինի ույդ ուրիշը հարազատ հայր և տասն անգամ ավելի սիրող հայր: Այդ հակառակ է բնությանը:

Ծերունին բռնակալ է:

— Բռնակալ է, բայց ի՞նձ ինչ... գոչեց հանկարծ Ռոստամյանը, ծանրացած գլուխը բարձի վրայից բարձրացնելով և աջ ձեռը ճակատին դնելով:

Եվ ճշմարիտ, նա ո՞վ է, ի՞նչ իրավունքով է դատապարտում այդ ծերունուն, և ո՞ւմ պատճառով: Մի հասարակ ծանոթի: Մի հասարակ կնոջ պատճառով, որի հետ ընդամենը երկու ամիս չկա, որ ծանոթացել է: «Մի դրացի կի՞ն, մի հասարակ ծանո՞թ»: Այսպե՞ս է, արդյոք ճի՞շտ է, որ Վարվառեն նրա համար սրանից ավելի մեծ և խորհրդավոր նշանակություն չունի: Իսկ այն երկար խոսակցությունն ե՞րը, ախորժելի վիճաբանությունները, իսկ նրա իմաստալի հայացքն ե՞րը, ժպիտն ե՞րը, հառաչանքն ե՞րը: Իսկ այն երեկոյան խոսակցության նյո՞ւթը, նրա գաղտնի ոգևորությո՞ւնը մի վիպական չարաբախտ հերոսի մասին, որի դրությունն այնքան կարող էր մոտիկ լինել Ռոստամյանի դրությանը: Սպասեցե»ք: Ոչ, ոչ, այստեղ թաքնված է

ավելի խորին գաղափար, քան թե կարող է գտնել լոկ սառն դատողությունը: Սակայն այլևս ուշ և ավելորդ է այս մասին մտածել:

— Եվ ոչ միայն ուշ է, այլևս անկարելի, — շարունակեց Ռոստամյանը վճռական եղանակով, մի քանի րոպե ևս լուռ մտածելուց հետո: — Ինձ մնում է մոռացության տալ նրա կերպարանքն և շարունակել իմ տխուր մենավորությունը: Եթե կա մի կայծ, պիտի շուտով հանգցնել այդ կայծը: Իմ և նրա մեջ բացվեց մի խոր անդունդ — հասարակական նախապաշարմունքն և քրիստոնեական կրոնի խստությունը: Անցնե՞լ, արդյոք, այս վիհը: — Ո չ, «նա» չի կարող, իսկ ես չեմ համաձայնվիլ:

Նա հագուստը հագին դարձյալ պառկեց: Սակայն ուղեղի րոպեական խսւբուսիկ սառնությունը չազդեց բորբոքված սրտի վրա: Նրա գլխում պտտում էր այրիի պատմությունը, աչքերի առջև — Վարվառեի տխուր կերպարանքը: Իսկ քունը, հոգեկան տանջանքների այս ժամանակավոր դարմանը, խույս էր տալիս նրանից:

Երկար միջոց նա հայացքն ուղղած էր սենյակի առաստաղին, մինչև որ մի տեսակ նիրհ տիրեց նրան: — Այդ — քնի և արթնության միջին սահմանն էր, ուր պտտում էր նրա հոգին: Նա մերթ ընդ մերթ բաց էր անում աչքերն և տեսնում էր առաստաղի վրա կանթեղի աղոտ լուսու կոլորաձև ցոլացումը, իսկ երբ փակում էր աչքերը — տեսնում էր այլ բաներ, Ահա Վարվառեն, նա կանգնած է մի ճահճի եզրում համեստ, մաքուր, անմեղ: Ճահիճը լիքն է կռնչող գորտերով: Վարվառեն փակում էր ականջները, որ նրանց անախորժ ձայնը չլսի: Գորտերը դուրս են գալիս ճահճի միջից, փաթաթվում են նրա ոտներին, մաքուր հագուստի փեշերին: Ռոստամյանը նայում է հեռվից զարհուրանքով: Նա գիտե, որ երազ է, ուզում է զարթնել... և զարթնում է: Ո՞րտեղ է նա: — Յուր սենյակում, յուր անկողնակալի վրա պառկած: Իսկ այն կոլորակ դեղնագույն շրջանը կանթեղի լուսո ցոլացումն է :

Նա դարձյալ աչքերը փակում է, և դարձյալ նա կանգնած է ճահճի մոտ: Նա տեսնում է Վարվառեին, գլխիկոր մոտենում է նրան, գրկում է, որ ճահճից հեռացնի: Այս անգամ նա յուր հետևից լսում է Մինաս Կիրիլլիչի ձայնը: Նա կրկին սթափվում է երազից, աչքերը բաց է անում...

Ցերեկվա լույսն արդեն թափանցել էր ներս:

— Սամովարը բերել եմ, — Լսեց նա մի ծանոթ ձայն, — թողեք, ձեր կոշիկները հանեմ, որ սրբեմ:

— Դա Պետրեն էր, որ թեքվում էր Ռոստամյանի կոշիկները հանելու: Ռոստամյանը նայեց նրա վրա և նոր միայն նկատեց, որ հագուստով էր քնել: Նրան թվաց, որ Պետրեն ծիծաղում է յուր մտքում իրան: Եվ, արդարև, Ռոստամյանը չէր սխալվում...

V

— Բավական է ինչքան քաղաքից քաղաք, երկրից երկիր թափառեցինք, սիրելի Վարիա, բավական է: Պետք է, որ մոռանաս անցած գնացած բաները: Դու գիտես, որ աշխարհիս երեսին,

բացի քեզանից, ուրիշ մխիթարություն չունիմ: Տեսնո՞ւմ ես իմ գլխի մազերը, ես, փառք աստուծո, այնքան էլ ծեր չեմ, բայց ահա՛, նայի՛ր և տես, թե վերջին երկու տարվա մեջ ինչպես ճերմակել են: Հիսունուհինգ տարիս պիտի լրանա հունիսի քսանումեկին, բայց տեսնողը կարծում է, որ յոթանասունուհինգից ավելի եմ: Ի՞նչ է պատճառը: — Ցավերս, և բոլոր ցավերիս մեջ — դու, քո հոգսը: Սկսած տասնութ տարեկանից, մինչև երեսունուհինգ տարեկան հասակս աղքատություն եմ քաշել, բայց ոչինչ, ես էլի ժամանակից առաջ չեմ ծերացել: Ես ապրել եմ ինքնագլուխ, կրթվել եմ ինքնագլուխ, փող եմ աշխատել իմ արյուն ու քրտինքով, էլի աղքատացել եմ, էլի հարստացել եմ, անուն եմ ձեռք բերել, է՛հ ինչ ասեմ, հազար տեսակ նեղություններ եմ քաշել, բայց այսքան չեմ տանջվել: Հինգ երեխա, հինգ միմյանցից գեղեցիկ երեխաներ և քսանույոթ տարեկան երիտասարդ կնիկ եմ թաղել և, ճշմարիտ է, տանջվել եմ, բայց այսքա՜ն ո՛չ, ու՞մ պատճառով եմ այժմ այս օրին հասել: — Քո պատճառով: Դու անբախտ ես, ես էլ եմ անբախտ: Այժմ, Վարիա, ինքդ քեզ չես խնայում, ինչ անեմ, մի՛ խնայիր, բայց գոնե ինձ խղճացիր: Ա՜խ, Վարիա, Վարիա, դու սիրտ չունիս, թե չէ կթողնեի՞ր, որ ես այսքան աղաչեմ քեզ:

Արտասանելով վերջին խոսքերը, Մինաս Կիրիլլիչը սկսեց հուզված անցուդարձ անել սենյակի մեջ: Հետո նա դարձյալ կանգնեց Վարվառեի առջև և, մեջքից փոքր ինչ թեքվելով, շարունակեց ավելի ցածր ձայնով.

— Միթե ես չե՞մ իմանում, որ մեղավորը նա է, որ նա կեղտոտ է, անպիտան է, փչացած է: Բայց, ի՞նչ պիտի արած, լավ է, վատ է, քոնն է, դո՛ւ պետք է թաքցնես քո ցավերը: Թողություն է խնդրում, աղաչում է, երդվում է, որ այսուհետև գլուխը քո կոշիկներից վեր չի բարձրացնիլ: Վարիա, հոգիս, մարդասպանի հանցանքը ներում են, մի՞թե Միզանդրոնցովը մարդասպանից էլ ստոր է, դու չե՞ս հավատում, ահա կարդա և կհավատաս:

Մինաս Կիրելլիչը բաց արավ սյուրտուկի վերին կոճակը, ծոցից հանեց մեկ պատռած ծրար, դուրս բերեց մի նամակ և գրեց Վարվառեի առջև:

— Կարդա՛, կարդա՛, սիրելի Վարիա: Այս առաջին նամակը չէ, ոչ էլ վերջինը կլինի: Այժմ ինքը Մոսկվայումն է:

Վարվառեն չկարդաց նամակը, չվերցրեց սեղանի վրայից և անգամ չնայեց նրա վրա: Աջ ձեռի արմունկը հենած սեղանի ծայրին, ծնոտը դրած ափի մեջ, նա մտիկ էր անում լուսամուտից դեպի գավիթ: Մինաս Կիրիլլիչն ակնածությամբ նայում էր նրա թախծալի կիսադեմքին, սպասելով, թե նա ե՛րբ ուշադրություն կդարձնի նամակի վրա: Սակայն Վարվառեն անշարժ էր և լուռ:

— Ես չար լեզուների բամբասանքից եմ վախենում, — շարունակեց Սինաս Կիրիլլիչը, դարձյալ ցածրացնելով ձայնը: — Կարծում էի, որ Թիֆլիսում մեզ խաղաղ կթողնեն: Բայց ի՛նչ... այստեղ էլ լսել են, այստեղ էլ խոսում են: Երեկ իմ ծանոթներից մեկին հանդիպեցի, մարդը հարցնում է, թե ի՛նչ եմ անում քեզ հետ այստեղ, ես չկարողացա մի բան պատասխանել: Բայց երեում էր, որ նա առանց իմ ասելու էլ, լսել է ամեն բան: Հավատացիր, սիրելի Վարիա, ես քեզանից տասնապատիկ ավելի եմ տանջվում : Ինչո՞ւ: — Որովհետև... է՛հ, թողնենք: Աստուծո կամքն էր, անցյալը վերադարձնել չի կարելի: Հիմա մնում է, որ վերջապես, թշնամիների, բարեկամների,

ազգականների և ծանոթների բերանը կապես, պետք է հաշտվես, Վարիա, պետք է հաշտվես և ա յսուհետև նրա կապը քո ձեռքում պահես...

— Կապը ձեռքումս պահե՛մ, — պատասխանեց Վարվառեն, դառնությամբ ժպտալով:

— Այո, կարող ես, ես երաշխավորում եմ, որ կարող ես:

— Ախ, պա՛պա, պա՛պա:

— Ի՞նչ, միթե ինձ չե՞ս հավատում, Վարիա:

— Ես շատ հավատալուց հոգնեցի, պապա, և ինձ համար շատ ցավալի է, որ դուք եք այժմ հավատում նրա խոսքերին: Ի՞նչ հարկավոր է, որ ես նրա նամակը կարդամ, առանց այն էլ, ես գիտեմ թե ինչ է գրում: Բայց, ինքներդ ասացեք, պապա, քանի՞երորդ անգամն է, որ նա այդպես զղջում է և քանի՞ անգամ եմ ես ներել նրան: Եվ ինչ, պահե՞ց նա յուր երդումները մինչև այժմ:

— Մի անգամ էլ ներիր, Վարիա, մի անգամ, ինձ համար, հասկանո՞ւմ ես, ինձ համար:

Վարվառեն, որ մինչև այժմ դեռ նայում էր դեպի դուրս, երեսը դարձրեց հոր կողմը:

— Ներե՞մ, պապա, ներե՞մ, ի՞նչը ներեմ... — գոչեց նա վրդովված: — Մի՞թե նա կարող է ազատվել մի հիվանդությունից, որ նրա մարմնի և արյունի մեջ արմատացած է մշտնջենապես: Դուք նրան չեք ճանաչում, պապա, և ես ցավում եմ, որ դարձյալ խաբվում եք նրա խոսքերից: Ես նրա սանձը կկարողանա՞մ պահել, ե՞ս ... Ո՛չ, պապա, այդ իմ կարողությունից բարձր է: Ի՞նչ օգուտ, եթե կարողանայի էլ մինչև անգամ նրան հպատակեցնել իմ կամքին, ի՞նչ օգուտ, քանի որ իմ կյանքը դարձյալ ինձ համար տանջանք պիտի լինի: Միթե նա երեխա՞ է, իսկ ես — մայր, որ գիշեր-ցերեկ արթուն հսկեմ նրա վրա, ամեն օր, ամեն ժամ աչքս նրանից չհեռացնեմ, որ նա մի ծուռ քայլ չանի: Եվ ո՞ւմ համար պիտի այդպես տանջվեմ: Միզանդրոնցովի համա՞ր, որին ատում եմ, որից զզվում եմ, որին տեսնելն անգամ ինձ համար սարսափելի տանջանք է: Ոչ, մի ստիպեք ինձ, պապա, ես նրան լավ ճանաչեցի: Ես ուզում էի, որ նա յուր կամքով ապրեր, աներ այն, ինչ որ յուր սիրտն ու խելքն էր ուզում: Ուզում էի, որ նա ինքը կառավարեր յուր զգացմունքները, զսպեր յուր թուլությունները: Չեղավ, նա արավ այն, ինչ որ կարող էր: Ուրեմն, թող ես էլ անեմ այն, ինչ որ կարող եմ:

— Խելոք ես խոսում, Վարիա, շատ խելոք ես խոսում: Բայց այդ ասածներդ գիտեմ ինչ տեղից ես սովորել: Շատ կարելի է, որ քո կարդացած գրքերը ճշմարիտ են ասում, բայց այդպես չէ, Վարիա, գրքերի ասածն ուրիշ է, կյանքի ասածն — ուրիշ: Միթե չե՞ս հասկանում, որ հասարակություն կա, խոսողներ կան, թշնամիներ ու բարեկամներ կան:

— Պապա, համաձայն եմ ձեզ հետ, գիտեմ, որ հասարակությունն ինձ բամբասում է: Բայց մի թե նա իրավունք ունի պահանջելու, որ կրկին մտնեմ այն դժոխքը, որտեղից դուրս եմ եկել...

— Գոնե ի՛նձ խնայիր, սիրելի Վարիա, տեսնո՞ւմ ես, — հուզված ձայնով պատասխանեց Մինաս Կիրիլլիչը, ձեռով դարձյալ ցույց տալով ալեզարդ գլուխը:

Վարվառեն երեսը շուռ տվեց, որ թաքցնի յուր արտասուքը: Հայրը խրախուսվելով, առաջ տարավ յուր հորդորանքը:

— Եթե ուրիշներն իսկական պատճառներն իմանային և հետո խոսեին, ես այսքան չէի տանջվիլ, հասկացի՛ր, Վարիա: Բայց ո՞ր մեկին հավատացնեմ, ո՞ր մեկին, թե Միզանդրոնցովը վատ մարդ է, թե մեղավորը միմիայն նա է, թե նա քո մի եղունգին չարժե: Ո՞վ է ուշադրություն դարձնողը, ո՞վ: Դու ասում ես, թե հասարակությունն իրավունք չունի քեզ ստիպելու, որ կրկին այն դժոխքը մտնես: Հասկանում եմ, Վարիա, քո ասածը, շատ լավ եմ հասկանում: Բայց ո՞ւմ կարող ես համոզել, թե ոչ ոք իրավունք չունի ուրիշի վրա, թե ոչ ոքի իրավունքը չէ ուրիշների ընտանեկան գործերի մեջ խառնվիլը: Հասարակությունն ասում է. ահա աստծու հրամանը, քրիստոնեական պատվերը և մարդկային օրենքները, հպատակվիր նրանց, իրավունք չունիս չհպատակվելու, կին ես, ասում է, պիտի ապրես եկեղեցական օրենքով պսակված մարդուդ հետ: Ահա, Վարիա, մարդիկ ինչ են պահանջում, և ուրիշ ոչինչ, ոչինչ չեն ուզում լսել. դու ես մեղավորը, թե Միզանդրոնցովը — այդ միևնույնն է...

— Բավական է, պապա, ես շատ ցավում եմ միայն նրա համար, որ դուք իմ պատճառով ամեն օր ինքներդ ձեզ այդպես տանջում եք: Երանի թե ես էլ իմ մյուս քույրերի և եղբայրների հետ մանուկ հասակումս մեռնեի, կամ ծնված չլինեի: Գոնե ա յժմ թող աստված ձեզ ինձանից ազատի:

— Լռի՛ր, Վարիա, այդ խոսքերով դու ինձ ավելի վշտացնում ես...

Մինաս Կիրիլլիչը սկսեց հուզված անցուդարձ անել սենյակի մեջ: Մի քանի րոպե հայր ու աղջիկ լուռ էին: Հետո հայրը նորից սկսեց հորդորել աղջկան և, երբ տեսավ, որ այլևս Վարվառեն ոչինչ չի խոսում, հայտնեց, թե ինքը մտադիր է այսօր անպատճառ պատասխանել Միզանդրոնցովին: Թող Վարվառեն շուտով մի պատասխան տա, եթե ինքը չի ուզում գրել, թող ասի, Մինաս Կրիլլիչն ինքը կգրի Միզանդրոնցովին:

— Ես երբեք գրիչ չեմ վերցնիլ նրա անունով, — պատասխանեց Վարվառեն հակիրճ:

— Ուրեմն, ես կգրեմ, — ասաց Մինաս Կիրիլլիչը:

— Իզու՛ր:

— Ի՞նչ գրեմ, ասա՛, — գոչեց ծերունին, վերջապես, համբերությունը կորցրած:

— Ոչի՛նչ:

— Անկարելի է: Ես կգրեմ, որ դու համաձայն ես հաշտվել Ակիմ Աբրոսիմիչ Միզանդրոնցովի, այսինքն քո օրինական ամուսնու հետ:

— Պապա, — արտասանեց Վարվառեն աղերսալի ձայնով: Մինաս Կիրիլլիչը մի աթոռ վերցրեց, նստեց Վարվառեի մոտ և նայեց նրա երեսին լուռ:

— Վարիա, ների՛ր, — ասաց նա, ձայնը ցածրացնելով, — դու մայր չունես, ես քեզ համար և՛ հայր եմ, և՛ մայր, ուրեմն թող պարզ խոսեմ հետդ: Առանց ամուսնու, Վարիա, մարդու կյանքը... կյանք

չէ, հասկանո՞ւմ ես: Տղամարդի և կնոջ համար աստված օրենքներ է դրել... հասկանո՞ւմ ես: Վարիա, դու երիտասարդ ես, քսանուվեց տարիդ նոր է լրացել:

Վարվառեն, երեսը ձեռներով ծածկեց և հազիվ լսելի ձայնով շշնջաց.

— Բավական է, պապա, մի խոսեք այդ մասին... ես... թույլ արարած չեմ...

Մինաս Կիրիլլիչը դարձյալ ոտքի կանգնեց:

— Վարիա, խնդրում եմ, տեսնո՞ւմ ես, նրա անունով եմ խնդրում:

Այս ասելով, նա ձեռը մեկնեց դեպի սենյակի պատն, ուր քաշ արած էր նրա հանգուցյալ ամուսնի մեծադիր լուսանկարը:

Վարվառեն կրկին երեսը ծածկեց, որ թաքցնի աչքերի մեջ փայլող արտասուքն, և ոչինչ չասաց: Այնինչ՝ Մինաս Կիրիլլիչը, տեսնելով, որ թանկագին մոր հիշատակն անգամ չի ազդում ղստեր վրա, հուսահատվեց:

— Վարվառա Մինաևնա, — գոչեց նա սրտմտությամբ, — վերջապես, ես հայր եմ, դուք որդի, պարտավո՞ր եք հարգել իմ աղաչանքը, թե՞ չէ:

Այսպես հոգնակի դեմքով սովորաբար ծերունին յուր ղստեր հետ խոսում էր այն ժամանակ, երբ արդեն բարկացած էր լինում:

— Պապա, սպանեցեք ինձ, բայց մի՛ ստիպեք նրա երեսը տեսնել, — ասաց Վարվառեն, հուսահատությամբ ձեռներն ուժգին սեղմելով իրարու:

— Ապերա՛խտ աղջիկ, դուք ինձ անպատվում եք, — գոռաց ծերունին բարձրաձայն, ոտներն ուժգին զարկելով հատակին:

— Հա՜յր...

— Լռի՛ր, հանդուգն:

Այլևս համառ դուստրը չկարողացավ զսպել իրան: Նա վեր թռավ աթոռի վրայից, մոլոր քայլերով մոտեցավ և երեսնիվայր ընկավ գահավորակի վրա: Նա սկսեց սաստիկ արտասվել: Նրա գեղակազմ թիկունքն ուժգին հեկեկանքից բարձրանում ու ցածրանում էին: Եվ այդ րոպևին նրա ճնշված կրծքից հատ -հատ դուրս էին բխում հետևյալ խոսքերր.

— Ես ձեզ ձանձրացրել եմ, գիտեմ: Բայց ժամանակ տվեք... ես մի պաշտոն կգտնեմ... Վարժուհի կդառնամ...կար անել կսովորեմ... իմ ձեռքի աշխատանքով կապրեմ: Միայն, ի սեր աստուծո, մի՛ ստիպեք ինձ նրա հետ ապրել... ես սարսափում եմ... ես չեմ կարողանում սառնարյուն մտաբերել նրա հետ անցկացրած օրերս... Ոչ... անկարելի է... իմ ուժից վեր է... ես չեմ կարող հաշտվել:

Մինաս Կիրիլլիչը մի տեղ արձանացած, լսում էր վշտացած սրտից հնչող այս դառն խոսքերը: Նա գիտեր, որ այդ լոկ խոսքեր չեն, որ յուր դուստրն ընդունակ է գործելու այն, ինչ որ ասում է:

Երբ Վարվառեի ձայնը խեղդվեց հետզհետե զորանող հեկեկանքից, հանկարծ ծերունին ձեռով օդի մեջ մի հուսահատական շարժում գործեց: Մի վայրկյանում բարկության արտահայտությունը ջնջվեց նրա դեմքից: Ծնողական խորին սերը պատերազմում էր հասարակական պատվասիրության հետ: Եվ առաջինը հաղթեց: Հայրն արագ քայլերով մոտեցավ հեկեկող աղջկան և գրկեց:

— Վարիա, Վարինկա, այդպես մի՛ անիլ, դու երեխա չես, որ լալիս ես... Բավական է. գիտես որ քո արտասուքը տեսնելու սիրտ չունիմ... քո լացն արտասվել է տալիս և խեղճ մորդ յուր գերեզմանի մեջ: Վե՛ր կաց, Վարինկա, ների՛ր, լա՛վ, տեսնո՞ւմ ես, որ ես այլևս չեմ խոսում: Ե՞ս, ե՞ս քեզանից ձանձրանամ... — Հավիտյան: Ո՛վ է մնացել ինձ համար այս աշխարհի երեսին, որ քեզանից էլ զրկվեմ...

Նա երկու ձեռներով զգուշությամբ բարձրացրեց դստեր գլուխր, գրկեց ու մի քանի ջերմ համբույրներ դրոշմեց նրա ճակատին և արտասվաբուխ աչքերին:

— Հանգստացի՛ր, որդի, տեսնում ես, որ հայրդ աղաչում է քեղ: Լա՛վ, ի՞նչ անեմ, հետո ինքդ կմտածես և ինչ որ խելքդ դասի, այն կանես: Դեհ, այժմ գնա, երեսդ սառը ջրով լվացիր... գլույխդ կցավի դու ջղային ես, կհիվանդանաս:

Վարվառեն, աչքերր սրբելով, հանդարտությամբ ազատվեց հոր գրկից, վեր կացավ տեղից և տխուր նստեց աթոռի վրա:

— Այդպես, սիրելիս, հանգստացի՛ր. մի՞թե ես քո թշնամին եմ, որ վատդ ցանկանամ: Ո՛չ, Վարվառե, ինձ դու դեռ չես ճանաչում:

Այս սրտաշարժ տեսարանից հետո, Մինաս Կիրիլլիչն, արդարև, մի առ ժամանակ հանգիստ թողեց աղջկան և ոչինչ չէր խոսում Միզանղրոնցովի վերաբերությամբ: Սակայն Վարվառեն նկատում էր, որ հայրն, այդ օրից սկսած, ավելի մտախոհ է դարձել, թեև նրա հարաբերությունը տակավին չէր փոխվում: Ծերունին միայն առաջվանից ավելի հաճախ էր տնից դուրս դալիս և ստեպ-ստեպ Վ արվառեին ևս թախանձում էր՝ յուր հետ միասին գնալ զբոսնելու: Նա տանը միայնակ մնալ չէր կարողանում, լրագրերն անգամ առաջվա նման չէին զբաղեցնում նրան: Սիրում էր նա Վարվառեի հետ խոսել յուր անցյալի մասին, երիտասարդությունից զանազան անցքեր էր պատմում, թե ինչպես յուր հասարակ կրթությամբ նա սկսել է օրըստօրե առաջ գնալ կյանքի մեջ, թե ինչպես ինքն իրան համար ուժով ճանապարհ է հարթել: Նա եղել է առաջ մի հասարակ գրագիր, հետո մի փոքրիկ գումարով տերունական մի փոքրիկ կապալ է վերցրել, հետզհետե հարստացել է, հետո դարձյալ աղքատացել է և դարձյալ աստուծո կարողությամբ, ոտքի է կանգնել: Թե հարյուր մանեթ փող է ունեցել, կեսը ծախսել է հարսանիքի համար, մյուս կիսով գործերն է շարունակել: Թե հետո ինչպես ամենքը սիրելիս են եղել նրան, օգնել են, բարձրացրել են նրա առևտրական վարկը նախ Մոզդոկում, ապա Մոսկվայում: Ընտանեկան դժբախտությունները — կնոջ և զավակների վաղաժամ մահը — նրան հուսահատեցրել են. նա սկսել է զզվել յուր գործերից և թողել է փող վաստակելու պարապմունքը: Այժմ, թեև նա

հարուստ չէ, բայց ինչ է անում հարստությունը. Մոզդոկում երկու տուն ունի և նրանց եկամուտը բավական է, որ նա անգործ ապրի յուր աղջկա հետ, միայն թե... աղջիկը...

Բայց այստեղ Մինաս Կիրիլլիչը կանգ էր առնում և չէր շարունակում: Երբեմն նա միայնակ գնում էր այրիի մոտ, երկար ժամանակ մնում էր այնտեղ: Եվ Վարվառեն զգում էր, որ նա յուր ցավերը պատմում է Նատալիա Պետրովնային, ըստ որում Մինաս Կիրիլլիչը միշտ այրիի մոտից վերադառնում էր ավելի թեթևացած սրտով, զվարթ դեմքով, աչկունքը բաց:

VI

Նույն օրերը Ռոստամյանը, սեղանի մոտ նստած, զուր ճգնում էր յուր մտատանջությունը մոռանալ աշխատության մեջ: Չարագուշակ գիշերից հետո, նա հանգստություն չուներ: Զուր նա վճռեց, Նատալիա Պետրովնայի պատմությունը լսելուց հետո, վերջ տալ յուր հոգեկան պատերազմին, զուր երդվեց հավիտյան մոռացության տալ Վարվառեին: Ընդհակառակը, վերջինի կերպարանքն, անբաժան ստվերի պես, հետևում էր նրան ամեն տեղ և ամեն վայրկյան: Նա ոչ միայն գործելու ուժ և ցանկություն չէր զգում յուր մեջ, այլև մի տեղ խաղաղ նստել չէր կարողանում: Սենյակների սւռաստաղը, կարծես, ճնշում էր նրա հոգին, ստեպ-ստեպ նա դուրս էր գալուս պատշգամբ կամ փողոց և շուտով վերադառնում: Մի ցանկություն նրա մեջ օրըստօրե զորանում էր — ինչպես ևիցե, ուրևիցե, առանձին տեսնվել Վարվառեի հետ: Եվ նա հուսով էր, որ քաջություն կունենա երես առ երես խոսակցել անբախտ կնոջ հետ նրա արդի վիճակի մասին և յուր «անկեղծ, եղբայրական» ցավակցությամբ մխիթարել նրան: Դարձյա՛լ երիտասարդական կույր ինքնախաբեություն:

Բայց ո՞րտեղ Ռոստամյանը կարող էր առանձին տեսնել Վարվառեին: Անմիջապես այցելել նրան, երբ հայրը տանը չէ — կլիներ հանդգնություն, գոնե այսպես էր կարծում Ռոստամյանը: Օրական մի քանի անգամ նա պատշգամբի վրա տեսնում էր Վարվառեի տխուր և խոհուն կերպարանքը: Արդյոք, կամենո՞ւմ է նա վերջ տալ յուր երկդիմի կացությանը, արդյոք չի՞ մտածում, որ մի չափազանց համարձակ քայլ է գործել հասարակական նախապաշարմունքների դեմ կամ մի գուցե արդեն, զղջալով յուր արածի մասին, մտադիր էր կրկին ընդունել ատելի լուծը:

Այս խորհրդածությունների մեջ Ռոստամյանը մի օր, տուն վերադառնալու ժամանակ, պատահեց Մինաս Կիրիլ լիչին: Ծերունին կանգնած էր Դվարցովայա փողոցի մագազիններից մեկի առջև և, կարծես նայում էր դեպի ներս:

— Դրացի, բարև, — ասաց Մինաս Կիրիլլիչը, ձեռը մեկնելով Ռոստամյանին: — Այս հայտարարությունն էի կարդում, — ավելացրեց նա, մատով ցույց տալով մի տպագիր մեծ թերթ, որ դրած էր մագազինի պատուհանում: — Վաղը բարեգործական նպատակով նվագահանդես է, ուզում եմ Վարվառեի համար տոմսակ վերցնել, մեծ պաս է, թատրոն չկա, իսկ նա երաժշտություն շատ է սիրում: Դուք գնալո՞ եք:

— Այո, — արտասանեց անգիտակցաբար Ռոստամյանը, որ մտադիր չէր որևէ նվագահանդես գնալու:

Նրանք միասին մտան մագազին, ուր սովորաբար վաճառվում էին բարեգործական ներկայացումների համար տոմսակներ: Ծերունին վերցրեց առաջին կարգից երկու բազկաթոռ, իսկ Ռոստամյանն յուր համար վերցրեց հետին աթոռներից մեկը: Դուրս գալու ժամանակ, տոմսավաճառ պարոնը, որի հետ Ռոստամյանը հեռավոր ծանոթություն ուներ, մի քանի վայրկյան պահեց նրան:

— Ո՞վ է այդ ծեր մարդը, — հարցրեց պարոնը, հետաքրքրվելով:

Ռոստամյանն ասաց ծերունու ազգանունը:

— Մոզդոկցի չէ՞, Մոզդոկցի է:

— Ասա, — ծգծգելով արտասանեց տոմսավաճառը, ապա դառնալով խանութում կանգնած երկու կարմրադեմ պարոններին, ավելացրեց. — չասացի՞ որ դա այն Քիրիշչիևն է:

Ավելորդ հարցերից ազատվելու համար, Ռոստամյանը շտապեց դուրս գալ խանութից: «Անշուշտ հայր ու աղջիկ խոսակցության առարկա են դարձել բամբասասեր Ռիֆլիսում», ասաց նա յուր մտքում, հասնելով Մինաս Կիրիլլիչին, որ հանդարտ քայլերով դիմում էր առաջ:

Հետևյալ օրն երեկոյան Ռոստամյանը, մի թեթև զբոսանք կատարելուց հետո, մտավ հասարակական ժողովարան, ուր պիտի կայանար նվագահանդեսը: Հասարակությունն արդեն հավաքվել էր, իսկ Մինաս Կիրիլլիչն և Վարվառեն բազմաթիվ հանդիսականների մեչ դեռ չէին երևում: Նվագահանդեսը սկսվեց, դուրս եկավ մի գեր օրիորդ, ինչ որ սկսեց նվագել երկար ժամանակ: Դահլիճը լիքն էր, շատերը կանգնած էին ոտքի վրա և, որը թմրած դեմքով, որը կեղծ ուշադրությամբ, որը ձանձրությամբ — լսում էին նվագածությունը: Իսկ Ռոստամյանը ոչ նայում էր դեպի բեմ և ոչ լսում էր: Նա անդադար մտիկ էր անում աջ ու ձախ, դռների կողմը:

Վերջապես առաջին ձախակողմյան դռներից ներս մտավ Վարվառեն, ապա հայրը: Անցքերի մոտ հավաքված հանդիսականների միջից նրանք աշխատում էին դուրս գալ և հասնել բազկաթոռների առաջին կարգին: Շատերն իրանց հայացքր դարձրին դեպի Վարվառեի կողմը և, երբ նա անցավ առաջ, առաջին կարգերի կանայք ու օրիորդները աջ ու ձախ կողմից դիտակներն ուղղեցին նրա վրա:

Ինչ խաղացին և ո՛վ խաղաց — Ռոստամյանը չիմացավ: Նա անհամբեր սպասում էր խաղամիջոցին, աչքերը դարձրած դեպի առաջին կարգն, ուր նստած էին հայր ու աղջիկ: Դժբախտաբար գլուխների բազմության միջից, նա չէր տեսնում ո՛չ աղջկան և ո՛չ հորը:

Նվագահանդիսի առաջին բաժինն ավարտվեց, հանդիսականներն անցան մյուս դահլիճները: Նախագավիթի մեջ Ռոստամյանը պատահեց Քիրիշչիևներին:

Մինաս Կիրիլիչը հետաքրքիր աչքերով դիտում էր հասարակությունը: Վարվառեն կանգնած էր նրա մոտ: Ռոստամյանը մոտեցավ, բարևեց և սկսեց խուռն բազմության մեջ շրջել նրանց հետ: Նրանք անցան սեղանատուն, և այստեղ ծերունին անհայտացավ:

Առանձնանալով Վարվառեի հետ, Ռոստամյանին տիրեց սովորական ամոթխածությունը: Քանի մի հասարակ հարցերից հետո նվագողների և երգողների մասին, նա վհատվեց և լռեց: Արդյոք, անծանոթ լինե՞լն էր պատճառո, ընտանեկան գաղտնի՞քը, թե՞ մի այլ բան, հայտնի չէր, բայց ամենքի ուշադրությունը գրավել էր Վարվառեն: Եվ այս ավելի պղտորում էր Ռոստամյանին: Աջ ու ձախ նայելով, նա ամաչում էր այն հետաքրքիր աչքերից, որ, չար ոսոխի պես, դիտում էին չորս կողմից:

— Վի՞ն արիս:

— Կտո՞ տակա յա:

— Ո՞վ է:

— Վատ չէ:

— Ընդհակառակը, համակրելի է:

— Ես հավանում եմ:

— Դատարկ բան է:

Ահա թե անդադար ինչ էր լսում Ռոստամյանը: Հասարակության մեջ երևեցավ Նատալիա Պետրովնայի աղջիկը — Կատոն: Ռոստամյանը բարևեց նրան հեռվից, և մոռանալով գլխաբաց լինելը, ձեռը տարավ դեպի վեր՝ իբր գդակը վերցնելու և ավելի շվաթվեց: Կատոն հազիվ-հազ յուր փոքրիկ և գոռոզ գլուխը շարժեց ի պատասխան Ռոստամյանի խոնարհ և Վարվառեի քաղաքավարի ու հպարտ բարևին:

Քանի մի հեռավոր ծանոթ երիտասարդներ, որոնց ուրիշ ժամանակ Ռոստամյանն հանդիպելիս կամ բարևում էր կամ — ոչ, աշխատում էին նրա ուշադրությունն իրանց վրա դարձնել: Նրանք կանգ էին առնում, գլուխ էին տալիս և, կարծես, ուզում էին անամոթաբար մոտենալ: Այնինչ՝ Վարվառեն միանգամայն անտարբեր էր թե՛ դեպի շրջապատող հասարակությունն և թե՛ դեպի հետաքրքրվող աչքերը: Սառն, անվրդով, հպարտ գլուխը բարձր պահած, նա անց ու դարձ էր անում, զանազան անկապ հարցեր տալով Ռոստամյանին Թիֆլիսի մասին: Հանկարծ նա կանգնեց սեղանատան մի անկյունում, ուր ոչ ոք չկար, և անսպասելի կերպով հարցրեց.

— Ինչո՞ւ դուք այսօր տխուր եք, պարոն Ռոստամյան:

— Նույնն ես էի կամենում հարցնել ձեզ ձեր մասին, — պատասխանեց Ռոստամյանը:

— Ի՞մ մասին:

— Այո: Եվ ոչ միայն այսօր եք տխուր, այլև՛, ներեցեք, դուք միշտ այդպես եք: Մինաս Կիրիլլիչն երեկ ասում էր, թե դուք սիրում եք երաժշտություն և հասարակություն, այնինչ ես հակառակն եմ տեսնում:

— Հասարակություն… այո, սիրում էի մի ժամանակ… — պատասխանեց Վարվառեն թախծալի ձայնով և, ապա, հայացքր մի կողմ դարձնելով, հազիվ լսելի ձայնով ավելացրեց., բայց այդ վաղուց էր…

Այդ րոպեին մի նորաձև հագնված երիտասարդ և մի ճաղատ գլխով ու տգեղ դեմքով տղամարդ անցան նրանց առջևից, խիստ ուշադրությամբ մտիկ արին մի քանի վայրկյան և հեռացան, ծիծաղելով և իրար բոթելով: Ռոստամյանը ճանաչեց ճաղատ գլխով տղամարդին: Դա Նատալիա Պետրովնայի փեսան — Կատոյի ամուսինն էր:

— Բավական հետաքրքիր են ձեր թիֆլիսեցիները, — ասաց Վարվառեն:

— Նույնիսկ չափից դուրս, այդ պատճառով էլ նրանք շատերին ատելի են, — պատասխանեց Ռոստամյանը:

— Գուցե հենց այդ պատճառով դուք հեռու եք պահում ձեզ նրանցից, այսպե՞ս է, — հարեց Վարվառեն, ժպտալով: — Չէ՞ որ դուք կամավոր բանտարկյալի կյանք եք վարում: Ես Մոսկվայում ծանոթ էի մի հայ ուսանողի հետ, որն իսկ և իսկ ձեզ պես ատում էր հասարակությունը:

— Ինձ պե՞ս, Վարվառա Մինաևնա… միթե ես երբևիցե ասե՞լ եմ, թե ատում եմ հասարակությունը:

— Գոնե շատ էլ չեք սիրում: Բայց ինչ փույթ, քանի որ առանց հասարակության ևս կարողանում եք ավելի օգտավետ կյանք վարել:

Ռոստամյանը ժպտաց և, գլուխը մի փոքր ինչ ցած թեքելով արտասանեց:

— Ես չեմ հանդգնիլ այդ ասել, Վարվառա Մինաևնա: Միայն ուղիղն այն է, որ հասարակությունն ինձ ճնշում է. անսովոր եմ նրան, ես ինքս ինձ կորցնում եմ ամբոխի մեջ: Հավատացնում են, որ այս — եսական և կիսավայրենի մարդկանց հատկությունն է: Գուցե ճիշտ է…

Ձանգակը հնչեց, հանդիսականները ծանր քայլերով գնացին դահլիճ, սեղանատունը փոքր առ փոքր դատարկվեի վարվառեն և Ռոստամյանը հապաղում էին գնալ: Երկուսն էլ գանկանում էին միասին մնալ և շարունակել խոսակցությունր: Ռոստամյանր նոր էր միայն համարձակություն ստացել մտերմաբար խոսելու, նա միայն նոր էր մտադիր ակնարկություն անելու Վարվառեի դրության մասին: Եվ նա անպատճառ կամենում էր, որ Վարվառեն այսօր իմանա, թե յուր գաղտնիքը հայտնի է նրան: Ո՛րպիսի սիրով նա մտածում էր խրախուսել նրան, ուժ ներշնչել, պաշտպանել հասարակական նախապաշարմունքների դեմ, արդարացնել նրա համարձակ քայլը:

Բայց ահա՛ ծերունին, ահա՛ նրա բարի և պատկառելի դեմքը: Զարմանալի՛ փոփոխություն. երբ Ռոստամյանր երես առ երես հանդիպում էր Մինաս Կիրիլլիչին, մոռանում էր վերջինի հայրական բռնակալությունը, որ այն գիշեր այնչափ վրդովեցնում էր իրան: Միթե այս պատկառելի, բարեդեմ մարդը կարո՞ղ է բռնակալ հայր լինել: Կարո՞ղ է, արդյոք, քանի որ նրա հարաբերության մեջ դեպի յուր դուստրը զգացվում է այնքան խորին սեր ու զգվանք: Ո՛չ,

չպիտի շտապել մեղադրելու այդ ծերունուն, առանց տեղյակ լինելու եղելության մանրամասն հանգամանքներին:

Ռոստամյանն, որ բոլորից ուշ մտավ դահլիճ, հասարակության ուշադրությունը չխանգարելու համար, յուր տեղը չգնաց, այլ ամբողջ ժամանակ կանգնած մնաց դռների առջև: Այս անգամ ջութակի վրա նվագում էր մի երիտասարդ: Հետո դուրս եկավ մի ուրիշը, կուրծքը դուրս ցցեց, գլուխը բարձրացրեց և սկսեց անգիր կարդալ մի ինչ-որ ոտանավոր տխուր բովանդակությամբ: Նա ոգևորվեց, ձեռը զարկեց կրծքին և աղերսալի դեմքով դարձավ հասարակությանը, ցածր ձայնով մի քանի խոսք արտասանեց, գլուխ տվեց և հեռացավ:

Բեմը դատարկվեց, դահլիճում դղրդոցը հանդարտվեց, տիրեց մի խուլ շշնջյուն: Երևեցավ մի ամրակազմ, բարձրահասակ կին, սպիտակ հագուստով և գլուխը զարդարած երկու մեծ սպիտակ արվեստական գեղեցիկ ծաղիկներով: Բարձրացան միահամուռ ծափահարություններ, լսվեցին «bravo»-ներ: Դա մի բավական նշանավոր օտար երգչուհի էր, ժամանակավորապես եկել էր Թիֆլիս և այգ օրը բարեհաճել էր մասնակցել բարեգործական երեկույթին:

Երեկույթի կարգադրիչներից մեկն երգչուհուն նվիրեց թարմ ծաղիկների մի ահագին փունջ: Տիրեց խորին լռություն: Ռոստամյանը նայեց գլուխների այդ խիտ բազմության վրա — ճաղատ գագաթներ, սևամազ, տափակ ծոծրակով հայկական գլուխներ, կանացի զարդեր, անընդհատ շարժվող հովհարներ և այլն — այս բոլորը հարյուրավոր մոմերի լուսավորության ներքո, նրա աչքում ներկայացնում էր մի անընդմեջ խառնուրդ:

Դաշնամուրի մի թեթև նախերգանքից հետո, երգչուհին գլուխը հետ թեքեց և աչքերր հառեց առաստաղին:

Նրա ձայնը հնչեց նախ, կարծես, կոշտ եղանակով, ապա մեղմ, ներդաշնակ, հետո բարձր ու բարձր: Եվ նրա առողջակազմ ու լայն կրծքից սկսեցին բխել մետաղաձայն խառն հնչյուններ, որ անլսելի էին դարձնում դաշնամուրի ձայնը:

Այս անգամ միայն Ռոսաամյանի ուշագրությունր գրավվեց դեպի բեմ: Սկզբում երգչուհու ձայնը նրա վրա ոչինչ ազդեցություն չէր անում: Հետո նա աշխատեց այդ անկանոն հնչյունների մեջ գտնել այն դյութական զորությունը, որ նույն րոպեին գրեթե կաշկանդել էր հարյուրավոր ամբոխի լսելիքը: Հանկարծ երգչուհին մի ձեռը գրեց կրծքին, գլուխը մեղմիկ ծռեց դեպի աջ ուսն, և աչքերը դարձնելով դահլիճի ծայրը, աղերսալի դեմքով արտասանեց մի տխուր մեղեդի. «Օ՛հ, անքուն գիշերներ, դառն արցունքներ...» Այստեղ Ռոստամյանն յուր կրծքի տակ զգաց մի բաբախում: Կարծես, երգչուհին այս խոսքերն արտասանում էր Ռոստամյանի համար, կարծես այգ ազդու ձայնի յուրաքանչյոլր ելևէջը բխում էր նրա սրտից:

«Անքուն գիշերներ... դառն արցունքներ...» կրկնեց երգչուհին:

Եվ այս անգամ Ռոստամյանին թվաց, թե երգչուհին ինքն ևս անբախտ է և թե նա ողբում է յուր կորցրած երջանկությունն, և խղճաց նրան:

Երգն ավարտվեց, դահլիճը կրկին դղրդաց ծափահարություններով և բարձրաձայն bravo և bis — գոչյուններով: Երգչուհին դուրս եկավ, գլուխ տվեց, ամբոխն ավելի բարձր գոռաց և ստիպեց նրան մի կարճ կտոր ևս երգել: Այնուհետև, որքան հրավիրեցին, այլևս ոչինչ չերգեց, միայն ուրախ և հպարտ ժպտալով, աջ ու ձախ գլուխ էր տալիս ու գնում: Նրա ուրախ ժպիտը Ռոստամյանին խիստ անախորժ թվաց: Ի՞նչպես… նա, որ մի քանի վայրկյան առաջ այնպիսի զգացմունքով ողբում էր յուր «անքուն գիշերներն ու դռան արցունքները», հանկարծ ծիծաղո՞ւմ է…, կե՛ղծ ոգևորություն, մեքենա դարձա ծ սիրտ:

Նվագահանդեսը վերջացավ, բայց երեկույթը դեռ ոչ: Հասարակության մեծագույն մասը մնաց, ոմանք դաշնամուրի նվագածությամբ պարելու, ոմանք պարողներին նայելու, ոմանք ընթրելու, իսկ շատերը… հենց այնպես:

— Կկամենա՞ս ընթրել, — հարցրեց Մինաս Կիրիլլիչը յուր աղջկան:

— Տանը կարող ենք ընթրել, — պատասխանեց Վարվառեն:

Ռոստամյանը խուռն բազմության մեջ, նեղ նախագավթում կանգնած, աչքերով որոնում էր Վարվառեին:

— Ստեփան Գրիգորիչ, — լսեց նա մի կանացի ձայն և հետ նայեց:

Դա Կատոն էր, որ մի երիտասարդի հետ կանգնած էր պատի մոտ:

— Բարև, — ասաց Կատոն, մի խորամանկ ժպիտ խաղացնելով յուր բարակ և հրող շրթունքների վրա, — այս ո՞ր քամին է ձեզ այսօր այստեղ բերել:

— Իմ սեփական ցանկությունը, — ասաց Ռոստամյանը բավական սառն եղանակով:

— Բայց ո՞րտեղ էր մինչև այժմ ձեր այդ սեփական ցանկությունը, պարոն Ռոստամյան, — շարունակեց Կատոն հեգնորեն, — ո՞րտեղ էր, որ դուք ամբողջ բարեկենդանին տնից դուրս չէիք գալիս: Հիմա, խոմ, մեծ պաս է, ճգնավորների համար ապաշխարելու օրեր են:

— Ես կարծում եմ, տիկին, իմ բացակայությունն այնքան աննշան մի հանգամանք է, որ ոչ ոքի համար նկատելի չէ, ուրեմն և՛ իմ ներկայությունն էլ չի կարող հետաքրքրելի լինել, — պատասխանեց Ռոստամյանը, ներքուստ վիրավորված խորամանկ Կատոյի արհամարհական ակնարկությունից:

— Բայց տեսնո՛ւմ եք, ինձ համար խիստ հետաքրքրելի է ձեր ներկայությունն այստեղ: Ո՞րտեղ է ձեր «դամա»-ն:

— Ո՞ւմ մասին եք հարցնում, տիկին:

— Իբր թե չեք հասկանում… ձեր հարևանի մասին եմ հարցնում… ա խ, ինչպես է նրա ազգանո՞ւնը… Սպասեցե՛ք, սպասեցե ք, ես շատերի անունները չեմ կարողանում հիշել, ե. հարկավոր էլ չէ, բայց ազգանունը, ա՛խ, մադամ… մադամ, ի՞նչպես է, տեր աստված, նրա

մարդու ազգանունը, հա մադամ Միզանդրոնցով... Ահա, նա ինքն յուր հոր հետ: Գնանք նրանց մոտ. ինչպես երևում է, նրանք, առանց Ստեփան Գրիգորիչի, տխրում են:

Բայց Ռոստամյանը չմոտեցավ Վարվառեին: Կատոն, թողնելով նրան, գնաց վերջինի մոտ, հետևից քաշելով և յուր կավալերին: Դա այն նորածև հագնված երիտասարդն էր, որ Կատոյի ամուսնու հետ առաջին խաղամիջոցում անցավ և Վարվառեի վրա խեթ — խեթ նայեց:

Կատոն բարևելով Մինաս Կիրիլլիչին ու «մադամ Միզանդրոնցովին», հարցրեց, արդյոք, չեն տխրում «մեծպասման» երեկույթում: Նորածև հագնված պարոնը սկսեց միջամտել խոսակցությանը, աշխատելով Վարվառեի ուշադրությունը յուր վրա դարձնել, զանազան հրապուրիչ ձևեր տալով յութ կրծքին, դեմքին, նույնպես և անդադար ոլորելով յուր բարակ ընչացքը: Նա ձգտում էր ծանոթանալ նորեկների հետ: Սակայն «անգութ» Կատոն նրա լուռ խնդիրն անուշադիր թողեց, այնպես որ նորածև երիտասարդը չհասավ յուր նպատակին: Նրա բարկությունն ավելի գրգռվեց, երբ Կատոյի մարդը մոտեցավ, և կինը ծանոթացրեց նրան ծերունու ու սրա աղջկա հետ: Վարվառեն ակամա յուր մատների ծայրերը միայն տվեց Կատոյի ամուսնուն: Իսկ Մինաս Կիրիլլիչը թեև սեղմեց նրա ձեռն արտաքին քաղաքավարությամբ, բայց ներքուստ — նույնպես ակամա: Թե՛ հոր և թե՛ աղջկա վրա Կատոյի կողակիցը հենց առաջին անգամից անախորժ տպավորություն գործեց:

Կատոն հարցնում էր Վարվառեի կարծիքը հայտնի երգչուհու մասին, կանխապես ինքը պարսավելով նրան, որպեսզի ցույց տա յուր «գեղարվեստական» ճաշակի նրբությունը: Նորածև երիտասարդը, տեսնելով, որ Վարվառեն միանգամայն իրան անուշադիր է թողնում, հեռացավ խմբից: Նա մոտեցավ մի երիտասարդ տիկնոջ — թե օրիորդի, — և սկսեց քաղցրախոսել ժպտալով ու ծիծաղելով: Կատոն նայեց նրա վրա, հովհարի ծայրն ատամներով թեթև կրծեց և հետո, թողնելով Վարվառեին, մոտեցավ յուր կավալերին: Իսկ ամուսինը վազեց Կատոյի հետևից...

— Խոմ չե՞ս ձանձրանում, Վարիա, — հարցրեց Մինաս Կիրիլլիչը:

— Առայժմ ոչ, — պատասխանեց Վարվառեն:

— Շատ ուրախ եմ:

Մոտեցավ Ռոստամյանն, և նրանք, երեքը միասին, անցան ժողովարանի հյուրասենյակը, որ զարդարված էր արևվելյան ճաշակով: Ծերունին հետաքրքրությունից դրդված, մտավ հյուրասենյակին կից ընթերցարանը, Վարվառեին թողնելով Ռոստամյանի հետ:

Վարվառեն նստեց տաճկական բազմոցներից մեկի վրա, Ռոստամյանը — նույնպես, մի քայլ տարածությամբ նրանից հեռու: Դահլիճում պարում էին, լսվում էր դաշնամուրի ձայնն և պարողների ոտների տրոփյունը: Հյուրասենյակում, բացի ժողովարանի մշտական հաճախորդ մի քանի ծերերից, կային և՛ մի քանի երիտասարդ կանայք ու տղամարդիկ:

Երևեցավ դարձյալ Կատոյի ամուսինն, այս անգամ միայնակ, և կրկին անցավ Վարվառեի ու Ռոստամյանի առջևից: Ռոստամյանն երեսը դարձրեց մյուս կողմ, կարծելով, թե նա կամենում է

մոտենալ իրան: Իսկ նա մի քանի քայլ հեռու կանգնեց և սկսեց, իբրև թե, մտիկ անել կանթեղի մոտ, պատի վրա քաշ արած յուղանկարին:

Վարվառեն բավական ուրախ էր երևում: Նա սկսեց հաղորդել Ռոստամյանին յուր տպավորությունը, որ ստացել էր երեկույթից: Ռոստամյանը լսում էր արտաքուստ ուշադրությամբ, բայց ներքուստ նրա միտքը զբաղված էր միմիայն յուր խոսակցի դրությամբ: Երբեմն նա յուր վրդովված հայացքը դարձնում էր Կատոյի ամուսնու վրա, որ աննշմարելի կերպով փոքր առ վւոքր մոտենում էր նրանց:

— Այդ մարդն ի՛նչ երկար ժամանակ նայում է նկարին, — նկատեց Վարվառեն, ակամա ուշադրություն դարձնելով Կատոյի ամուսնու վրա:

— Ա՛խ, նա նկարին չի նայում, Վարվառա Միևանա, — պատասխանեց Ռոստամյանը:

— Բայց ինչո՞ւ է կանգնել այդտեղ, նայեցե՛ք, մոտենում է մեզ:

— Մոտենում է, և գիտե՞ք ինչու:

— Ինչո՞ւ:

— Որ ականջ դնի մեր խոսակցությանը:

— Մի՞թե հետաքրքրելի է նրա համար ուրիշների խոսակցությունը:

— Յուր համար — չեմ կարծում, բայց նա ուղարկված է յուր կնոջ կողմից:

— Կնոջ կողմի՞ց:

— Այո՛:

— Ուրեմն նա մեզ լրտեսո՞ւմ է յուր կնոջ հրամանով:

— Ինչպես տեսնում եք, այո , — պատասխանեց Ռոստամյանը, — նա ինքն հավատարիմ ամուսին է, — ավելացրեց նա իսկույն օգտվելով առիթից, որ մի քայլ մոտենա Խոսակցության ցանկալի առարկային:

— Տերը նրա հետ, թո՛ղ լրտեսի, բայց ի՞նչ պետք է լրտեսի ...

Այստեղ մի քանի վայրկյան խոսակցությունն ընդհատվեց:

— Իրավունք ունի... — արտասանեց հանկարծ Վարվառեն խուլ ձայնով, — ես արժանի եմ բամբասանքի:

— Ինչո՞ւ, — հարցրեց Ռոստամյանը, տակավին այնպես ձևանալով, որ իբր չհասկացավ Վարվառեի ասածը:

— Նրա համար, որ ամեն տեղ բամբասում են ինձ, — պատասխանեց Վարվառեն, — չէ՞ որ, պարոն Ռոստամյան, ես թողել եմ իմ օրինավոր ամուսնուն…

Այդ րոպեին Կատոյի ամուսինը մի քայլ ևս մոտեցավ: Բայց Ռոստամյանը և Վարվառեն խոսում էին ոչ այնքան բարձր ձայնով, որ նա կարողանար պարզ մի բան լսել: Տիրեց այն րոպեն, երբ ամենահարմարն էր Ռոստամյանի համար արտահայտելու յուր ցավակցությունը Վարվառեին: Բայց հանկարծ նա ակամա կորցրեց յուր սառնությունը, հետևաբար և չկարողացավ ասել այն, ինչ որ հոգեկան համեմատաբար խաղաղ դրության ժամանակ խորհել էր: Եվ նա միայն կարողացավ արտասանել.

— Թող բամբասեն, Վարվառա Մինաևնա, այո՛ ես էլ եմ լսել, ձեր կյանքի տխուր եղելությունը ինձ էլ հայտնի է: Բայց միթե այդպիսիները կարո՞ղ են հասկանալ ձեր արդարացուցիչ պատճառները…

Այլևս նա չկարողացավ հեռու գնալ, լռեց, շփոթվեց և միանգամայն րնկճվեց, նայելով Վարվառեի, ըստ երևույթին, սառն և անվրդով դեմքին:

Երկուսն ևս լուռ նայում էին հեռվից անցուդարձ անող հանդիսականների վրա: Մինաս Կիրիլլիչը դուրս եկավ ընթերցարանից և, տեսնելով աղջկան, մոտեցավ նրանց: Դահլիճում դեռ պարում էին, բայց հանդիսականների թիվը հետզհետե պակասում էր: Ասկայն դեռ միայն տասներկու ժամն էր. ծերունին տուն գնալու ցանկություն հայտնեց: Վարվառեն իսկույն վեր կացավ տեղից:

— Իսկ դուք մնո՞ւմ եք, — հարցրեց Մինաս Կիրիլլիչը: Ռոստամյանին:

— Այո , — պատասխանեց վերջինը:

Վարվառեի գնալուց հետո, Ռոստամյանին թվաց, թե բոլոր հանդիսականները գնացին, դահլիճը դատարկվեց: Նա խորին հաճությամբ կուղեկցեր Վարվառեին, Բայց Մինաս Կիրիլլիչը հարցը՝ «իսկ դուք մնո՞ւմ եք», նրան շփոթեցրեց: Ռոստամյանը կարծում էր, որ ծերունուն հաճելի չի լինիլ, եթե նա ուղեկցի նրանց: Նա մտավ սեղանատուն, որ տակավին լիքն էր ընթրողների բազմությամբ, նստեց միայնակ մի սեղանի մոտ և ընթրիք պահանջեց, չնայելով, որ ուտելու ախորժակ չէր զգում:

Տուն վերագառնալիս երիտասարդը փողոցից նկատեց, որ Վարվառեի սենյակի պատուհանից ճրագի լույս էր երևում: Նա զգաց, որ տիկինը դեռևս արթուն է:

Արդարև Վարվառեն արթուն էր: Մի թեթև ընթրիքից հետո, նա անմիջապես անցավ յուր սենյակը:

Թույլ լույսով սեղանի վրա վառվում էր մանիշակագույն լուսամփոփով ծածկված կանթեղը: Նա լուսամփոփը վերցրեց, կանթեղի լույսն ավելացրեց և սկսեց հագուստը փոխել: Քանի մի րոպե անցած, նա տնային թեթև զգեստով նստած էր անկողնակալի ծայրին, կանթեղի առջև: Նրա

քունը չէր տանում և ոչ էլ կարդալու ցանկություն ուներ: Կամենում էր առանձնանալ յուր սենյակում, և ահա միայնակ էր: Դռները փակ էին, իսկ պատուհանները բաց:

Մինաս Կիրիլլիչը նույնպես առանձնացել էր յուր սենյակում: Վարվառեն դրսից ո՛չ մի ձայն, ո՛չ մի շունչ չէր լսում: Նրա սենյակի լռությանն ընդհատվում էր միայն սեղանի ծայրում գրած փոքրիկ ոսկե ժամացույցի չխկչխկոցով: Նա նայեց ժամացույցին — ուղիղ մեկ ժամն էր: Սկսեց շրջել հետ ու առաջ: Մերթ ընդ մերթ կանգ էր առնում սենյակի մեջտեղում, երբեմն հանկարծակի ցնցումներ էր գործում, և այդ վայրկյաններին նրա մերկ պարանոցի և կիսամերկ թիկունքի վրա հանգչող արծակ, ոսկեփայլ մազերը սփռվում էին դեպի կուրծքը: Նրա այտերի վրա վառվում էր մի անսովոր կարմրություն, շրթունքները հազիվ նշմարելի կերպով դողում էին, աչքերի մեջ փայլում էր ներքին հուրը: Արդարև, այդ կատարյալ հուր էր, որ բորբոքում էր նրա արյունը, որ սաստկացնում էր նրա շնչառությունը, որ հաճախեցնում էր երակների զարկը և ուժգին բաբախել էր տալիս նրա կուրծքը:

Միամի՛տ ինքնախաբեություն: Դեռ մի քանի օր առաջ նա կարծում էր, թե այդ մի անցողական զգացմունք է: Իսկ ա՞յժմ... Այժմ այլևս ուշ էր թվում նրան, այլևս նրա ուժերը տկար էին զսպելու այն, ինչ որ այնպես օրըստօրե զարգանում էր նրա մեջ զարմանալի արագությամբ:

Շո՞ւտ, միթե նա նո՞ր է ճանաչում Ստեփաննոսին, միթե նրա երևակայությունը վաղուց չէ՞ր ստեղծել վերջինին: Միթե Վարվառեն չէ՞ր, որ տարիների ընթացքում հոգով որոնում էր մի այդպիսի հեզ պատկեր, առողջ հոգի և աշխարհի զեխություններից և անառակություններից զերծ, անապական սիրտ: «Ահա նա», անգիտակցաբար ասաց Վարվառեն ինքն իրան այն օրը, երբ «նա» բնակարանը ցույց էր տալիս: Եվ, արդարև, դա «նա» էր: Բայց ո՞ւր էր նա մինչև այժմ, ինչո՞ւ ճակատագիրն երևան հանեց նրան այն ժամանակ, երբ արդեն ուշ է, երբ Վարվառեն արդեն կապված-կաշկանդված է ոտքով ու ձեռքով: Արդյոք նախախնամությունը կամենում է նրան փորձե՞լ: Ինչո՞ւ, միթե նրա դժբախտության չափը դեռ չի՞ լրացել: Միթե բավական չէ՞ և՛ ծերունի հոր տվայտանքը Վարվառեի պատճառով, որ նրա միակ մխիթարությունն է:

— Հա՛յր, զգո՞ւմ ես, արդյոք, թե ի՞նչ հանցավոր մի զգացմունք է տանջում քո աղջկան այս րոպե, — դառնագին շշնջում էր բորբոքված երիտասարդ կինը:

Այո, հենց նույն րոպեին, երբ միամիտ ծերունին յուր սենյակում գուցե երազում է, որ դուստրը կրկին պիտի հաշտվի յուր նախկին դրության հետ:

— Ի՛նչ... ե՛ս հաշտվեմ Միզանդրոնցովի հետ, — դարձյալ շշնջաց Վարվառեն, — երբեք, երբեք...

Չէ՞ որ Վարվառեն ամեն կերպ աշխատում էր ուղղել նրան, որ անուղղելի է, որ ապականված է մինչև ոսկորների ծուծը: Սակայն ինչո՞վ վերջացավ նրա համբերությունը, ի՞նչ հետևանք ունեցավ նրա ամուսնական մոլի հավատարմությունը: — Ունեցավ ավելի վատթար հետևանք, քան գուցե — եթե Վարվառեն հետևեր այն բազմաթիվ կանանց օրինակին, որոնք իրանց մարդկանց նմանօրինակ ամուսնական անարգությունն անարգությամբ են պատժում: Բայց չէ՞ որ նրանք ճարպիկ են, գիտեն իրանց խղճի առջև պայմաններ դնել, իսկ Վարվառե՞ն... Կարո՞ղ էր մտածել անգամ այս տեսակ վրիժառության մասին, քանի որ նրա անապական զգացմունքները բնավ չէին կարող նույնը թելադրել, ինչ որ թելադրում է շատերի խիղճը: Նա

ավելի դյուրին և ավելի բարվոք համարեց ազատություն տալ ամուսնուն, թողնել նրան յուր սեփական կամքին: Այժմ տերը նրա հետ, Վարվառեն այլևս ոչինչ չունի նրա դեմ, թող ապրի, ինչպես կամենում է: Այժմ Միզանղրոնցովը կարող է ազատ համարել իրան մինչև անգամ Վարվառեի ատելությունից: Արդեն ամեն մի կապ խախտված է «հավիտյան» նրանց մեջ:

Վարվառեն նստեց անկողնակալի վրա, կրկին վեր կացավ և կրկին սկսեց անցուդարձ անել, ձեռներն երբեմն շփելով և երբեմն կրծքին դարսելով:

Նա գիտեր, որ Ռոստամյանն իրան օրիորդ էր համարում, ուստի դիտմամբ էր, որ նա յուր դրությունը պատմեց Նատալիա Պետրովնային, համոզված լինելով, որ վերջինն իսկույն յուր լսածը կպատմի Ռոստամյանին: Այսպիսով, նա մտածում էր նախազգուշացնել մոլորված երիտասարդին, որ սա այլևս դադարի իրան հետամուտ լինելուց:

Այժմ Ռոստամյանին հայտնի է նրա դրությունը. Վարվառեն մինչև անգամ այս երեկո առաջին ակնարկությունն արավ նրան, թե ինքը ամուսնացած է և ամուսնուց բաժանված:

— Տեր աստված, տեր աստված, միթե նա չի՞ զզվում ինձանից, իմ այս դրությունից... Բայց... ո՛չ, այս երեկո նրա աչքերի մեջ ավելի ջերմ սեր էի կարդում, քան մինչև այսօր:

Սակայն, սպասի՛ր երևակայություն, ճի՞շտ է, որ Ռոստամյանը սիրում է Վարվառեին, մի գուցե նրա սիրտը խաբում է, կամ մի գուցե Ռոստամյանը միայն խղճում է նրան: «Խղճա՛լ, ի՞նձ, ինչո՞ւ, — գոչեց Վարվառեն բավական բարձրաձայն: — Ո՛չ, ամենևին, ես խղճալի չեմ. չե՞մ ուզում ես նրա կարեկցությունը, և ոչ ոքի կարեկցությունն, և ոչ քոնը, պապա՛», — ավելացրեց նա...

Այս ծանր խորհրդածությունների ներքո նա երկար ժամանակ չէր կարողանում հանգստանալ: Գիշերն անցնում էր. արդեն հինգերորդ ժամն էր: Վերջապես, նա հոգնած նյադերով, խառն մտքերով պառկեց: Բայց ի՛նչ... վերմակը, կարծես, այրում էր նրա մարմինը, նա քնել չէր կարողանում: Եվ ի՛նչպես քունը մոտենար մի կնոջ, որի բախտն այնքան մոտիկ էր իրան և այնքան հեռու...

VII

Առավոտյան մոտ տասն և մեկ ժամին Կատոն եկավ յուր մոր մոտ: Նրա հետևից, կռնատակին մի թղթե կապոց դրած, ներս մտավ ամուսինը, մասնավոր կապալառու Լազար Մակարիչ Բեզիրգանովը:

Այս մարդու տգեղ դեմքն և ավելի տգեղ բերանը, առողջ կլորիկ մարմինն և կարմիր թշերն արտահայտում էին խորին գոհունակություն կյանքից: Կարելի էր հավաստի ասել, թե այդ գոհունակության գլխավոր պատճառն այն էր, որ նրա տգեղությունը բախտ ուներ ուղեկցել մի բավական գեղեցիկ կողակցի, այսինքն փոքրահասակ Կատոյին:

Իրավ, Կատոն Լազար Մակարիչի կյանքի բարձրագույն զվարճությունն էր: Երևալ նրա հետ կից առ կից թե՛ փողոցներում, թե՛ մագազիններում և թե հասարակական ու մասնավոր հանդեսներում — ահա. բացի փողից, ինչումն էր կայանում Մակարիչի գոյության

քաղցրությունը: Նա պարծենում էր յուր կնոջով, նրա գեղեցկությամբ, թեև այդ գեղեցկությունը շատերի համակրությունը չէր գրավում, պարծենում էր և՛ նրա ծանոթներով, որոնց թիվը բազում էր: Շատ անգամ, երբ որևէ հասարակության մեջ խոսվում էր այս կամ այն փոքր ի շատե հայտնի անձնավորության մասին, Լ՛ազար Մակարիչն ակնհայտ պարծանքով ասում էր.

— Կինս նրա հետ ծանոթ է:

Կամ.

— Երեկ կինս նրան հրավիրել էր ճաշի:

Լինելով աննշան և մութ անցյալի տեր, իսկ ներկայումս, ասենք թե, բավական հարուստ, սակայն մի հասարակ վաճառական, Լազար Մակարիչը, հարկավ, պիտի գնահատեր Կատոյին, որի մայրն իշխանական ցեղից էր, որի հայրը պաշտոնյա էր և որն երգում էր, նվագում էր և հասարակական հանդեսներում պարում էր ընտիր «կավալերների» հետ»:

Այս բոլորն երկնից պարգևած մի անփոխարինելի բախտավորություն էր նախկին հավլաբարցու համար, որ մի ժամանակ մարդկանց մեջ որոշվում էր լոկ «քաչալ Լազարե» մականունով: Հենց վերջին ժամանակներում ևս շատերն այս մականունով էին կոչում նրան, բայց հեռվից-հեռու, ոչ երես առ երես: Հակառակ դեպքում, հանդգնողը կպատժվեր Կատոյի զորավոր լեզվից: Անախորժ մականունը Մակարիչի ճակատին հիշելու արտոնությունը տակավին պահում էր ինքը Կատոն: Եվ պիտի ասել, որ հենց միայն այս արտոնությունը բավական էր, որպեսզի Կատոն ստիպեր Մակարիչին՝ մոռանալ յուր բնական «զզվելի ժլատությունը», ինչպես ասում էր Կատոն, մոռանալ — միմիայն կնոջ քմահաճություններին հագուրդ տալու համար: Արդարև, Լազար Մակարիչն յուր հարստությունը չէր խնայում Կատոյի զարդ ու պչրանքի համար: Եվ նույնիսկ այրի Նատալիան այս պատճառով բավական հարգում էր յուր փեսային, թեև մտքում նրան շատ էլ արժանավոր ամուսին չէր համարում, քանի որ, նրա կարծիքով, Մակարիչը բոլորովին «անկիրթ» էր, Կատոյի պես «կրթված» կնոջ համեմատությամբ:

Ինչ վերաբերվում է այն բանին, թե Թիֆլիսում աղքատ ու այրի զոքանչները հաճախ ապրում են իրանց հարուստ փեսաների հաշվով, այս կողմից Լազար Մակարիչն ապահով էր: Նախ, Նատալիա Պետրովնան չքավոր չէր. նա, գիտենք արդեն, յուր ամուսնուց ժառանգած ուներ սեփական տուն և ինքն ու որդին ապրում էին այդ տան եկամուտով: Երկրորդ, նա հպարտ էր յուր փեսայի վերաբերմամբ: Բավական էր, նրա կարծիքով, որ Կատոյին պսակել էր առանց որևէ օժիտի, այդ մի դժվար բան էր Թիֆլիսի նման քաղաքում, ուր փեսացուներ ձեռք են բերվում փողով, բառի բուն նշանակությամբ: Ուստի շատ անգամ, փողի կարոտություն ունեցած ժամանակ, այրին բարվոք էր համարում «ձեռապարտ» վերցնել Ռոստամյանից, որ միշտ տալիս էր ուրախությամբ, քան թե Լազար Մակարիչից, որ մթնչև ձեռը դեպի գրպանը տանելը, հոնքերը կիտած, մի րոպե մտածում էր:

— Բարով եք եկել, Լազար Մակարիչ, — այս խոսքերով դիմավորեց այրին յուր փեսային պատշգամբի ծայրում:

— Եկա, վերջապես, հը՛մ, տխրո՞ւմ էիք առանց ինձ, Նատալիա Պետրովնա, — գոչեց Լազար Մակարիչը, թեքվելով, որ համբուրե զոքանչի փափուկ աջը։

— Ո՞նց չէ։ Ե՞րբ եք եկել։

— Մեկէլ օրը։

— Լա՛վ փեսա եք, — հանդիմանեց այրին, — մեկէլ օրն եկել եք, այսօ՞ր եք միտք բերել ինձ։

— Մեկ էլ օրր դադրած էի, չկարողացա գալ. երեկ էլ Կատոն կանգնեց, թե գնանք կոնցերտ։ Խոմ գիտեք, Նատալիա Պետրովնա, որ ես Կատոյիս խոսքից չէի կարող դուրս գալ։ Երեկ ցերեկով էլ խիստ շատ գործեր ունեի։ Ուղի՞ղ եմ ասում, Կատո։

— Ճշմարիտ է։ Բայց, տե՛ս, մամա, քեզ համար ինչ նոր-նոր համբավներ ենք բերել երեկվա կոնցերտից։ Դեռ սպասիր, կպատմեմ։ Լազրո, կապոցը բաց արա ու գնած կտորը ցույց տուր մամային, տեսնենք, հավանո՞ւմ է։

Լազար Մակարիչը, սպիտակ թաշկինակով լերկ ճակատը սրբելուց հետո, բաց արավ կապոցը, հանդիսավոր կերպով դուրս բերեց մի ասվյա կտոր և տվեց Նատալիային։

— Ի՛նչ լավն է, ի՛ֆ, ի՛ֆ, ի՛ֆ, — գոչեց այրին, պարզ- մեխակագույն ծաղկանկար նուրբ կտորը բռնելով դռան լուսի դեմ։

— Լազար Մակարիչ Բեզիրգանովն յուր Կատոյի համար երբեք վատ կտոր չի առնիլ, — ասաց Կատոյի ամուսինը պարծանքով և ձեռր մեկնեց, որ մատի ծայրով շոշափե յուր կողակցի այտը, բայց զոքանչից ամաչեց և հետ քաշվեց։

— Ո՞վ պիտի կարի, — հարցրեց այրին — խոմ, հիմա զատկամոտ է, շվեյկաները խիստ շատ գործ ունին։

— Շատ հո՛գս եմ անում նրանց գործի մասին, — գոչեց Կատոն արհամարհանքով։ — Ապրի Լազոն, մեկի տեղ — երկու, երեք կվճարի, և ո՛վ ասես, մի քանի օրում կպատրաստի։

— Մեկ էլ, երկու էլ ու տասն էլ ավելի կտամ, Կատո ջան, — ասաց Լազար Մակարիչը, ներքուստ դժգոհ, արտաքուստ ուրախ ժպտալով։ — Փողն ո՛ւմ համար եմ աշխատում, որ քեզ համար էլ խնայեմ։ Դու այն ասա, Կատո ջան, որ ես մոռացել եմ Բաթումից քեզ համար լավ-լավ բաներ բերել։

— Դու միշտ մոռանում ես, — հեգնորեն նկատեց Կատոն։

— Է՛, ի՞նչ նորություն եք բերել կոնցերտից, — հարցրեց այրին հետաքրքրությամբ։

— Հա, մոռացա. նորություն և ի՞նչ նորություն, մամա, — Գոչեց Կատոն, գլուխր խորհրդավոր կերպով շարժելով։ — Նստի՛ր, պատմեմ։

Այրին և Հազար Մակարիչը, որ մինչև այժմ կանգնած էին, տեղավորվեցին բազկաթոռների վրա — Մակարիչն յուր կողակցի մոտ, այրին դեմ ու դեմ։

— Առաջ-առաջ դու ինձ ասա, մամա, քո այդ կենողիդ, քո այդ գոված կինստոյիդ անունն ինչ է՞։

— Ստեփան Գրիգորիչ… խոմ հարյուր անգամ հարցրել ես, Կատո։

— Ես քեզ ասել եմ, մամա, որ այդ տեսակ կռոների անունները մտքումս չեմ պահում։ Շատ հարկավո՞ր է։ Էէ՛, ի՞նչպես է այդ քո խելոք Ստեփան Գրիգորիչը, լա՞վ է, ուրա խ է։

— Ի՞նչպես։

— Հը՛մ… — արտասանեց Կատոն, խորհրդավոր հայացքով նայելով մոր երեսին, — բաս քեֆը լավ է է՞լի։

— Է՛ ասա, ինչ որ ասելու ես, ի՞նչ ես պատեպատ գցում ինձ, — գոչեց այրին անհամբերությամբ։

— Ասեմ, քո այդ գոված կռոն սիրահարվել է։

— Ո՞վ, Ստեփան Գրիգորի՞ չն, ո՞ւմ վրա, — գոչեց այրին զարմացած։

— Ո՞ւմ վրա… այ, այն մարդուց փախածի, ի՞նչ է նրա անունը, տեր աստված… հա, մադամ Միզանդրոնցովի վրա։

Այրին մի խոշոր հարցական հայացք ձգեց աղջկա երեսին։

— Զարմանո՛ւմ ես, մամա, աչքովս եմ տեսել ու ականջովս լսել։ Այսուհետև է՛լ չասես, թե Կատոյի լեզուն չար է։

Լսի»ր։ Երեկ նրանք հայր ու աղջիկ կոնցերտումն էին։ Քո այդ ճգնավորդ էլ այնտեղ էր։ Ես ու Լազրոն նստած էինք երկրորդ կարգում, պատի տակ, մարդուց փախածն, յուր հոր հետ, նստած էր առաջին կարգում, դա էլ, քո այդ գովածն էի նստած էր մեզանից մի քանի կարգ հեռու։ Դա մտիկ էր անում նրան, նա էլ դրան, երկուսն էլ ոչինչ չէին լսում կոնցերտից, իսկ ես ու Լազրոն ծիծաղում էինք։ Ճշմարի՞տ եմ ասում, Լազրո։

— Ճշմարիտ է, ճշմարիտ է, — վավերացրեց Լազրոն։

— Հետո՞, ի՞նչ անենք մտիկ էին անում, այդտեղ ի՞նչ սիրահարվելու նշան կա, ա՛խ Կատո, Կատո, — ասաց այրին, գլուխը հանդիմանորեն շարժելով։

— Մամա, լսի՛ր ու հետո ինձ հանդիմանիր։ Սիրահարվելն էլ այնպես կլինի, խոմ այնքան մարդկանց մեջ չէին ընկնելու իրար վզովն ու պաչպչվելու։ Հետո… երկար ժամանակ միասին ման էին դալիս, ազջիկը փախչում էր հորից, խոսում էին, տեր աստված, խոսում էին, տաքացած, աչքերը վառված, կարմրած։ Սո՞ւտ եմ ասում, Լազրո, չէին խոսո՛ւմ։

— Շաա՛տ, — պատասխանեց Լազրոն։

— Ես Լազրոյին ասացի. «Լազրո, մի գնա, թաքուն կանգնիր նրանց մոտ ու ականջ դիր»։ Դե, հիմա թող Լազրոն ինքն ասի, թե ինչ է լսել…

— էէ՛ թող նրանց, ի սեր աստուծու, Կատո, ի՞նչ մեր գործն է այդ, — ասաց Լազար Մակարիչը կնոջ թախանձանքից ազատվելու համար։

— Քեզ բան եմ հարցնում, պատասխանի՛ր, — գոչեց Կատոն բարկացած։ — Ի՞նչ լսեցիր։

— Ոչի՛նչ, — պատասխանեց Լազար Մակարիչը կատակի ձևով։

— Ինչպես թե ոչինչ, գժվե՛լ ես, ի՞նչ է, — բացականչեց Կատոն, ծուռ-ծուռ նայելով ամուսնու երեսին։

— Այսինքն, Կատյուշա, ուզում էի ասել, որ մի խելոք բան չեմ լսել, դիփ ծրտի-պրտի բաների վրա էին խոսում։

— Քեզ ո՞վ է հարցնում, հիմար էին խոսում, թե խելոք, դու ասա ա՛յն ինչ որ լսել ես։

— Ասե՞մ, լավ, ասեմ, սպասի՛ր… է՛է… մոռացել եմ, Կատո, աստված վկա, մոռացել եմ։

— Աա՛խ, դո՛ւ չէիր, որ այս գիշեր ասում էիր, թե լսեցի, որ մեկն ասաց, «Կյանքս տանջանք է, մյուսն էլ. «Ես ձեռք եմ վերցրել իմ մարդուց… գնանք այստեղից, հեռանանք» և այլն, և այլն։ Դու չէի՞ր, Լազրո, որ ասում էիր, թե մեկզմեկու ձեռը թաքուն սեղմում էին։ Հը՞մ, հիմա ի՞նչ պատահեց քեզ, որ մոռացար։

— Միթե ես այդպե՞ս եմ ասել, Կատո, — հարցրեց Լազար Մակարիչը զարմացած։

— Ուրեմն , ես սո՞ւտ եմ ասում։

— Արևդ վկա, Կատո, չեմ հիշում։ է՛հ, միևնույնն է, ասա սիրահարված են, պրծավ գնաց…

— Դու հիմար ես, Լազրո, շատ հիմար ես, միշտ հարկավոր բաները մոռանում ես։ Բայց միևնույնն է, դու մոռացել ես, ես չեմ մոռացել, ես էլ իմ ականջովս լսել եմ ու աչքովս տեսել նրանց ասածն ու արածը։ Ինչ օգուտ ունիմ ես, որ մամային խաբեմ։ Հա՛, ինչ էի ասո՞ւմ, — շարունակեց Կատոն, կատարյալ ազատություն տալով յուր բորբոքված երևակայությանը։ — Հա՛, ես, մամա, քո պատմածը պատմեցի մադամ Սազանդարովին, նա էլ պատմեց յուր եղբոր կնոջը, հետո մեկը՝ մյուսին, ամենքը սկսեցին մտիկ անել նրանց վրա։ Ով ասես, ծիծաղում էր քո այդ խելոք կենողիդ վրա, թեկուզ շատերն էլ չէին ճանաչում։ Խեղճն այնքան անկիրթ է, որ հասարակության մեջ ման գալու ձևն էլ չի իմանում, շուտ շուտ դիպչում է անցնողներին։ Սա ու նա, ծիծաղելով ինձ ասում են. «Ձեր մոր մոտ կենողը, բացի յուր հետ ման եկողից, այստեղ ոչ ոքի չի տեսնում, սիրահարված է»։ Դեհ, այժմ, մամա, ինքդ ասա, ի՞նչ պատահեց այդ տղին, որ մինչև հիմա տարենը մի քանի անգամ հանդեսներ չէր գնում, հիմա տանը չի կարողանում նստել։ Սիրահարված է, հավատա, աստված վկա, սիրահարված է, թե՛ դա և թե նա, երկուսն էլ։

Բայց դա ո՞ւմ վրա է սիրահարվել, ո՞ւմ վրա, տեր աստված, դու հեռու պահես մեզանից… Ֆի դո՛ն…

— Եթե իմ ձեռքում իրավունք լիներ, — իսկույն կախ կտայը այդպիսիներին, — ավելացրեց Կատոն։

— Ես կախ չէի տալ, մատներով կխեղդեի, — հարեց Հազար Մակարիչը։

— Կինը մարդուն թողել է, բավական չէ, օտար քաղաքներ է փախել, բավական չէ, հիմա էլ ուզում է մի ուրիշին ձեռք գցի, որ հետո նրան էլ թողնի ու փախչի։ Մամա, ինչ ուզում ես ասա, ես կյանքումս կարող չէի երևակայել, որ կնիկարմատը կարող է այդպես փչանալ։

— Եվս առավել տղամարդը, — ավելացրեց հավատարիմ ամուսին Հազար Մակարիչը։

— Տղամարդն էլի, ասենք, այնքան մեղադրելի չէ, բայց կնիկարմա՛տը… թյո՛ւ… — գոչեց Կատոն։

— Ճշմարիտ է, — ասաց Հազար Մակարիչը։

— Անպիտաննե՛ր։

— Անպիտաննե՛ր, — կրկնեց Լազար Մակարիչը։

— Ես այսուհետև նրանց ոչ մեկին ձեռք չեմ տալու, մամա, թեկուզ դու ինձանից նեղանաս։

— Էս էլ, — միացավ յուր կնոջ վճռին հավատարիմ ամուսինը։

— Երեսներն էլ չեմ ուզում տեսնել, — ավելացրեց Կատոն։

— Էս էլ — շեշտե ց «քաչալ Լազրեն», քայլ առ քայլ հետևելով յուր սիրելի կողակցին։

— Սպասեցե՛ք, սպասեցե՛ք, — ընդմիջեց, վերջապես, զարմացած, Նատալիա Պետրովնան։ — Կատո, ի՛նչ ես վռազում, ո՛վ է իմանում, շատ կարելի է դու անմեղ տեղը կասկածում ես, շատ կարելի է նրանք հենց այնպես, ծանոթներ են։ Ինչ կուզե — լինի, ես էլի չեմ հավատում, որ թե՛ Ստեփան Գրիգորիչն ու թե Վարվառա Մինաևնան մի անխելքություն անեն։

— Ինչո՛ւ չես հավատում, դու ո՞րտեղից ես նրանց ճանաչում։

— Ստեփան Գրիգորիչի՞ն, ե՞ս չեմ ճանաչում, Կատո. չորս տարի է ինձ մոտ բնակվում է։ Չէ՛, Կատո, ես նրան լավ եմ ճանաչում, նա շատ խելոք մարդ է, ուսում առած է։ Վարվառա Մինաևնան էլ խելոք է, նա էլ ուսում առած է։ Երկուսն էլ լավն ու վատը հասկանում են։ Նրանք այնպիսի բան չեն անիլ, Կատո, դու սխալվում ես։

— Հա հա հա՛, — սրտի խորքից բարձրաձայն ծիծաղեց Լազար Մակարիչը, — ուսում առած են, հա հա հա՛։ Ա՛խ, Նատալիա Պետրովնա, դուք չեք իմանում, որ հիմիկվա ժամանակում ինչ որ վատ-վատ բաներ ասեք ուսում առածներն են անում։ Այ ձեզ օրինակ, Գուրգենյանը, ճանաչո՞ւմեք, խոմ, լսե՞լ եք. Թիֆլիսում նրա պես կրթված, ուսում առած մարդ չկա։ Խնդրեմ,

ասեք, ինչո՞ւ աշկարա այն բանն արավ… ինչո՞ւ մարդկանցից չամաչեց: էհ, մամա, էլի ամոթ ու պատկառանք ինձ նման հասարակ, տգետ մարդկանց մեջ է մնացել, թե չէ՝ ուսում առածների երեսում մեռոն չկա: Այրին, հայտնի փաստի մասին լսելով, չհակառակեց: Բայց նա այնքան հարգում էր յուր կենողներին, որ տակավին կամենում էր պաշտպանել նրանց յուր աղջկա և փեսայի հարձակումների դեմ:

— Դուք զուր եք Վարվառեին մեղավոր համարում, որ նա յուր մարդուց բաժանվել է, — ասաց նա, բավական ժամանակ լռելուց հետո: — Ես քեղ պատմել եմ պատճառը, Կատո. ի՞նչ աներ խեղճը, քանի որ Միզանդրոնցովը գազանից էլ վատ էր եղել:

— Սո՛ւտ է ասում, — տաքացավ Կատոն, — սո՞ւտ է ասում: Հենց ասենք, թե վատ մարդ էր Միզանդրոնցովն, ի՞նչ անենք, նա խոմ չէր սպանում կնոջը: Շատ կանայք կան, որ իրանց մարդկանց չեն հավանում, ուրեմն, քո ասելով, ամենքն էլ պիտի թքեն ու փախչեն իրանց ծնողների մո՞տ: Հետո՞, վերջն ի՞նչ կլինի …

— Ճշմարիտ է, Կատյուշա, — դարձյալ մեջ մտավ Լազար Մակարիչը, — շատ ճշմարիտ է, մարդ պետք է աշխատի, որ մարդկանց մեջ չխայտառակվի, հենց որ խայտառակվեց, բանը պրծավ, հոգոցն հանգուցելոց… Ինչո՞ւ պիտի իմ տան, իմ ընտանիքի գաղտնիքներն ուրիշների խոսակցության առարկա դառնան… Հը՞մ, լավ չե՞մ ասում: Եթե ցավ ունիս, գլուխդ քաշ տա՛ր քո ցավն, էլ ի՞նչ ես հռչակում ամբողջ աշխարհում: Լավ չե՞մ ասում, Կատո, հը՞մ:

— Օրինակ, մեկն ե՛ս, մամա, — ավելացրեց Կատոն, — շատ ժամանակ հենց ինքս Լազրոյից նեղանում եմ, — հարցրու իրանից, ինքն էլ կասի: — Նեղանում եմ, որ ինձ հետ մարդավարի չի վարվում, կարող եմ ասել, որ շատ ու շատ գազանաբար է վարվում: Խոսք է եկել, ասում եմ, մի՛ նեղանար, Լազրո, — դարձավ նա Լազար Մակարիչին, որ, գլուխն աջ ուսի կողմը ծռած, աչքի տակով կես հեգնաբար և կես հանդիմանորեն մտիկ էր անում կնոջ երեսին:

— Ախ, Կատո, Կատո, ի՛նչ ասեմ, — արտասանեց Լազար Մակարիչը, հառաչելով. — դու ու քո աստվածը, ասա՛ պատահե՞լ է, որ ես եղունգիս չափ նեղացրած լինեմ քեզ:

— Սո՛ւս, Լազրո, էլ մի՛ խոսիր, մեր ցավը թող մենք իմանանք. — ընդհատեց Կատոն, գլուխը շարժելով, և շարունակեց. — հիմա դո՛ւ ասա, մամա, ես այսպիսի մարդուն պիտի թողնեմ ու վազեմ քո մո՞տ: Լա՞վ, այս որ անեմ, ի՞նչ կասեն, ի՞նչ կխոսեն ամբողջ քաղաքում, չէ՞ որ կխայտառակեմ ինձ էլ, նրան էլ, քեզ էլ, եղբորս էլ, ով գիտե, մեր բոլոր ազգականներին էլ…

— Բայց, իհարկե, ո՛չ ես մազու չափ վատ կվարվեմ Կատյուշայիս հետ, ոչ էլ նա ինձ կթողնի ու կփախչի, — լրացրեց Լազար Մակարիչը: — Այնպես չէ՞, Կատյուշա, — դարձավ նա յուր ամուսնուն և դարձյալ կամեցավ յուր հաստլիկ ցուցամատի ծայրը շփել նրա ծնոտին, դարձյալ ամաչեց Նատալիա Պետրովնայից և դարձյալ իսկույն ձեռը հետ քաշեց երկյուղով:

Այս եղանակով խոսակցությունը մի փոքր ևս շարունակվեց: Մարդ ու կին քննեցին, քննադատեցին և, վերջ ի վերջո, համոզեցին Նատալիա Պեարովնային, որ նա զգույշ լինի և թույլ չտա, որ յուր տան մեջ հասարակության աչքին ընկնող մի այնպիսի նշանավոր երևույթ

տեղի ունենա, որի մասին այնպես համոզված խոսում էր Կատոն: Քանի դեռ վաղ է, թող Նատալիա Պետրովնան դուրս բերի յուր տնից Ռոստամյանին էլ ու Քիրիշչիևներին էլ:

Այրին, թեև հայտնեց, որ ինքը չի հավատում Կատոյի ասածին, բայց առաջուց իսկ մութ կերպով զգում էր, որ իրավ յուր կենողների մեջ կա ինչ-որ փոխադարձ համակրություն: Այժմ հանգամանքները փոքր առ փոքր սկսեցին պարզվել նրա աչքում, մանավանդ մտաբերելով Ռոստամյանի այլայլվելն այն երեկո, երբ այրին պատմում էր նրան Վարվառեի դրությունը: Սակայն այրին, այդ այլայլման մասին ոչինչ չասաց Կատոյին և չհայտնեց, թե ինքը բոլորովին հավատում է Ռոստամյանի և Վարվառեի սիրային հարաբերությանը:

Կատոն յուր կապոցը տվեց Լազար Մակարիչին: Հավատարիմ ամուսիններ դուրս եկան փողոց:

— Լազրո, — դարձավ Կատոն յուր ամուսնուն, — դու ինձ խայտառակում ես:

— Ինչո՞ւ, հոգիս:

— Միթե ինքդ չե՞ս հավատում, որ նրանք սիրահարված են:

— Էէ՛, նրանց հերն էլ...

— Չէ, դու շատ անքաղաքավարի ես, — պնդեց Կատոն, — եթե դու մարդ լինեիր, ինձ չպիտի հակառակեիր:

— Բայց, Կատյուշա, ախար ես քեզ ուրիշ կերպ ասացի երեկ:

— Միևնույնն է, իմ սխալը ղու կարող էիր հետո տանն ինձ ասել և ոչ թե մորս մոտ:

— Ներողություն, Կատո, — ասաց Լազար Մակարիչը, վիզը ծռելով ստրկորեն, ինչպես մի ժամանակ սովոր էր ծռել «մուշտարու» առջև, երբ գովում էր յուր փոքրիկ խանութի փտած ապրանքը:

— Դու մի՛ համարձակվիր ինձ հակառակել, լսո՞ւմ ես, Լազրո: Ասում եմ այո — դու էլ ասա այո, ոչ — ոչ, թե չէ ճանաչո՞ւմ ես ինձ:

— Է՛է՛է՛, լավ, քո հորն օղորմի, շատ էլ մի բարկանար, արի, գնանք, բուլվարում մի քիչ ման գանք, եղանակը խիստ լավն է:

— Այդ կապոցը ձեռո՞ւմդ պիտի ման գաս հետս, — ասաց Կատոն կեղծ զարմանքով:

— Ի՞նչ կլինի:

— Ամոթ է, սո՛ւս: Տար տուն, հետո եկ: Բայց ոչ, ոչ, մի՛ գար, ես պիտի գնամ Սոփիոյի մոտ մի քանի նոտաներ վերցնելու:

— Ես էլ կգամ հետդ։

— Ի՛նչ, ուզում ես ինձ խայտառակ անել, այդ կապոցը տնից տուն հետս մանացնելով։ Աստված սիրես, թող բազազխանի հին սովորություններդ։ Գնա տուն, ծառաներին մտիկ արա։

— Ա՛յ խորամանկ Կատո. դու ինձ խաբում ես, — ասաց Լազար Մակարիչը կատակով։

Կատոն մի կատաղի հայացք ձգեց նրա վրա։ — Ափսոս, որ փողոցումն ենք, թե չէ — ես քեզ ցույց կտայի... Անամո՛թ...

Մարդը տրտնջալով գնաց տուն, որ գտնվում էր Սոլոլակի փողոցներից մեկում։ Կինը դիմեց դեպի մի այլ կողմ։ Փողոցի ծայրում նա հանկարծ հանդիպեց այն նորաձև հագնված, երեսը սափրած, բարակ ընչացքով և համարձակ դեմքով տղային, որից նա չէր բաժանվում նվագահանդեսի երեկո։ Նրանք քաղցրությամբ բարևեցին միմյանց...

Եվ ամուսնական առաքինության նախանձախնդիր կնոջ դեմքը մի վայրկյանում փոխվեց։ Կատոն դարձավ ուրախ, զվարճախոս, և նրա սևորակ աչքերի մեջ սկսեց փայլել մի կայծ, հրապուրիչ — ոմանց համար, հրիչ — այլոց համար։ Նա երիտասարդի հետ միացավ զբոսնող ամբոխին։ Փողոցային ընդհանուր աղմուկի մեջ նա լսում էր ուղեկցի երկիմաստ զվարճախոսությունը, ներքին հաճույքով — յուր համար և արտաքին սառը լրջությամբ — ուրիշների համար։ Չէ՞ որ նա բացառություն չէ, ո՛չ առաջինն է և ոչ վերջինն առաքինություն կոչված քողի տակ պատսպարված «քաղաքակիրթ» հասարակության մեջ։ Ապա ուրեմն, թո՛ղ «քաչալ Լազարեն» առժամանակ կռվի խոհարարի հետ, թե ինչու նա կերակուրների վրա չափից դուրս շատ յուղ է գործածում և սպասավորին հանդիմանի, թե ինչու շաքարը գողանում է։ Իսկ հետո յուր ճաղատ գլխով և տգեղ բերանով, փույթ չէ, թող ճաշի սեղանի մոտ մի ժամ ևս ավելորդ սպասե յուր գեղեցիկ կողակցին....

Այնինչ՝ Նատալիա Պետրովնան, մնալով միայնակ, սկսեց լրջորեն խորհրդածել Ռոստամյանի ու Վարվառեի հարաբերության մասին։ Նա, հարկավ, Ռոստամյանի սիրո դեմ չէր լինի եթե միայն Վարվառեն օրիորդ լիներ։ Ի՛նչ անենք, մի տղա մի աղջկա կարող է սիրել, իսկ ամուսնացած կնոջ — ոչ, այդ աններելի է, մեղք է, հանցանք է։ Բայց շատ կարելի է Ռոստամյանը սիրած է եղել Վարվառեին հենց առաջին օրից, երբ դեռ չէր իմանում, թե նա պսակված է։ Իսկ այժմ նրան հայտնի է, որ Վարվառեն մարդ ունի, ուրեմն, հավատալի չէ, որ Ռոստամյանը դարձյալ շարունակի սիրել նրան։

Այստեղ հանկարծ այրիի խելքը սկսեց այլ ուղղությամբ դատել։ Լա՛վ, ասենք, թե Ռոսսյամյանի և Վարվառեի սրտերն այժմ իսկապես այնպես կպել են միմյանց, որ բաժանվել դժվար է. ի՞նչ կլինի նրանց վերջը, պետք է տանջվե՞ն հավիտյան, թե կարող են մոռանալ իրար։

Այս կետի վրա այրին երկար մտածեց, մտածեց և վերջը, ձեռով օդի մեջ մի հուսահատական շարժում գործելով, լսելի ձայնով արտասանեց,

— Խիստ դժվար օրենքներ են մեր օրենքները։

Ի՞նչ անի խեղճ Վարվառեն, վերցրել են, ուժով պսակել են մի անպիտանի, մի փչացած մարդու հետ ու ասում են, «տանջվի՛ր նրա ձեռքում, ուզում ես, չես ուզում — տանջվի՛ր»: Քանի-քանի խեղճ կանայք է ճանաչում Նատալիա Պետրովնան, որ այնպես տանջվում են իրանց մարդկանց ձեռքում, ինչպես Վարվառեն է տանջվել: Բայց արի ու նրանց ցավը հասկացրու ուրիշներին: Հիմա Վարվառեն թողել է մարդուն ու հեռացել, ի՞նչ պիտի անի.. էլի եթե պառավ լիներ, է՛հ, ոչինչ, սև օրերը մի կերպ կտաներ յուր հոր տանը: Բայց նա քսան ու վեց տարեկան ջահել կնիկ է... պիտի հավիտյան զրկվա՞ծ մնա աշխարհի երջանկությունից:

— Խիստ դժվար են մեր օրենքները, — կրկնեց Նատալիա Պետրովնան և, հառաչելով, վեր կացավ տեղից ու գնաց Վարվառեի մոտ:

VIII

Չարչարանքի շաբաթն էր: Քաղաքի ամբողջ բնակչությունը զբաղված էր քրիստոնեական նշանավոր տոների նախապատրաստությամբ:

Մինաս Կիրիլլիչը երկուշաբթի օրից սկսած, ամեն առավոտ թեյ խմելու ժամանակ, հարցնում էր.

— Վարվառե, ամենքը պատրաստվում են՝ ուրախ զատիկ վայելելու, մենք տպի՞տի ուրախանանք:

Բայց տոների մերձավորությունը, կարծես, բնավ չէր շարժում Վարվառեի սիրտը: Նա միշտ յուր հոր հարցին տալիս էր միևնույն պատասխանը.

— Պապա, ինձ համար ոչինչ պատրաստություն հարկավոր չէ, ինչ կամենում եք, արեք:

— Իսկ ես ուզում եմ, որ դու էլ, ամենքի պես, ուրախանաս այդ օրերը:

Դուստրը, պարզ հասկանալով հոր խոսքերի ներքին իմաստը, մի խորին հառաչանք էր արձակում կրծքից ու լռում:

Այնինչ՝ Մինաս Կիրիլլիչը, ընդհանուր հոսանքից մղվելով, ցանկանում էր զատիկը դիմավորել ուրախ սրտով: Նա ամեն օր դուրս էր դալիս և տեսնում էր, որ ամենքը շարժման մեջ են: Փողոցներում տիրում էր անսովոր կենդանություն, շուկաներում խռնվում էր գնողների և վաճառողների ահագին բազմություն: Եվ ինչպես նա ջերմ սրտով չցանկանար խառնվել ամբոխին, մասնակցել ընդհանուրի ուրախությանը, քրիստոնեական տոնը հանդիպել իբրև քրիստոնյա, այնպես, որպես մի ժամանակ նա հանդիպում էր Մոզդոկում և Մոսկվայում:

Բայց ի՞նչպես տոնել և ո՞ւմ հետ, քանի որ նրա տան միակ կենդանությունը, նրա կյանքի միակ մխիթարությունն անտարբեր է դեպի ընդհանուրի ուրախությունն ու տրտմությունը:

Ամեն կողմից Մինաս Կիրիլլիչը դժբախտ էր զգում իրան այն օրից, երբ Վարվառեն բաժանվել էր ամուսնուց, բայց երբեք այդ դժբախտության լուծն այնքան ծանրացած չէր նրա վրա: Մարդկանց ուրախությունն ավելի դառնացնում էր նրա սիրտը: Բոլոր քրիստոնյաների մեջ նա

զգում էր, որ միայն ինքն և Վարվառեն կազմում են բացառիկ ու անջատված մի մարմին և ոչինչ կապ չունին հասարակական ամբողջության հետ։

Հոգեկան այս տրամադրության մեջ նա մի տարօրինակ մխիթարություն էր զգում, երբ դրսում տեսնում էր զանազան թշվառ և մուրացիկ արարածներ։ Իսկ այդպիսիների թիվը, տոների պատճառով, փողոցներում օրեցօր ավելանում էր, մանավանդ Գալավինսկի պրոսպեկտի վրա, ուր ամեն օր զբոսնում էր ծերունին։

Եվ ի՜նչ տեսակ խեղճեր, խեղանդամներ էին սփռված այդտեղ։ Ահա՛ մեկը, զուրկ երկու թևերից, փայտի պես ցցվում է սրա ու նրա առջև։ Ահա՛ մյուսը, առանց ոտների։ — Խեղճության զարմանալի հնարագիտությո՞ւն։ Անդամալույծ արարածը, երկուսի փոխարեն, ութ հատ երկաթյա ոտներ է շինել — չորս-չորս յուրաքանչյուր կունետ ծնկան տակ — և, երկու ձեռներում մի-մի փայտ բռնած, շրջում է տասն ոտներով։ Նա, կարծես, բավական է համարում յուր ծանր դժբախտությունը, որպեսզի շարժի անցորդների գութը, նա ոչ ոքի առջև չի աղերսում, լուռ անցնում է ընդարձակ մայթով, և ողորմած մարդիկ իրանց սև լուման ձգում են նրա ափի մեջ։

Բայց ահա մի ավելի դժբախտը։ Մի փոքրիկ սայլակի վրա, ցնցոտիների մեջ, գտնվում է ինչ-որ սև, կեղտոտ բան։ Դա մարդ է, երևում են միայն ծերունական նիհար, կաշին կուչ-կուչված մի դեմք և երկու կիսամար աչքեր։ Առջևից սայլակը քաշում է մի առողջ պատանի, իսկ հետևից մղում է մի ավելի առողջ երիտասարդ։ — Երկու մարդ տանում են երրորդին, որ չորրորդից ողորմություն մուրան։ Մեկն անդամալույծ ծերունի է, և նրա անօգուտ գոյությունը դիմավորում է երկու զույգ առողջ ձեռների ծուլությունը։ Մոտենում է նրանց մի երիտասարդ մուրացկան, կարմիր երեսով, մի ոտն առողջ, մյուսը գոսացած, մերկ, վարդագույն։ Նա հանդիմանում է սայլակը քշողներին, հայհոյում է նրանց «ծուլությունը», փախցնում է ճանապարհից և ինքը, ոստոստալով, ցցվում է ողորմած անցորդի առջև։

Մինաս Կիրիլլիչն ոչ ոքի չէր մերժում, նա ինքը մոտենում է և յուրաքանչյուրի ափի մեջ մի-մի սպիտակ դրամ դնում։ Թշվառների գոհունակ դեմքը մի րոպեական մխիթարություն է շնորհում նրա վշտացած սրտին; Բայց անցնում է րոպեն, և նրան դարձյալ տիրում է սովորական տխրությունը։

Ա՛խ, որքա՛ն նա բախտավոր կլիներ, եթե Վարվառեն լիներ երջանիկ ամուսին։ Սակայն ո՞վ է մեղավորը, որ նա այժմ դժբախտ է։

Այս հարցն ինքն իրան տալիս, Մինաս Կիրիլլիչը միշտ զգում էր խղճի մի սարսափելի խայթոց։ Որքան Միզանդրոնցովի արարքը գարշելի էր նրա աչքում ամուսնական անկողնի մաքրության վերաբերությամբ և որքան Վարվառեն ատում էր այդ թշվառ մարդուն, նույնքան Մինաս Կիրիլլիչի խիղճն ավելի էր տանջվում։

— Մեղավորն ես եմ, — ասում էր նա ինքն իրան։ Եթե ես չստիպեի, Վարվառեն բնավ չէր գնալ նրան։ Նա չէր սիրում Միզանդրոնցովին, այս հայտնի էր ինձ։

Բայց Մինաս Կիրիլլիչը, հուսալով, որ ամուսնական կյանքը վերջ ի վերջո նրանց հարաբերությունների մեջ կմտցնի եթե ոչ սեր, գոնե հարգանք և, հափշտակված

Միզանդրոնցովի ապագա հարստությունով ու հասարակական դիրքով, սիրտ արավ յուր անմեղ և միակ դստեր բախտը հանձնել նրա ձեռքը:

Գիշեր ու ցերեկ այս միտքը հետևում էր Մինաս Կիրիլլիչին: Վարվառեի տխուր կերպարանքը մի կենդանի հանդիմանություն էր նրա ծնողային սխալ ինքնասիրությանը:

— Ես շտապեցի, շատ շտապեցի, — կրկնում էր նա հաճախ իր մտքում, խորին վշտակցությամբ նայելով Վարվառեի երեսին:

Բայց անցյալը վերադարձնել անհնարին էր, մնում էր — մտածել ներկայի մասին: Ի՞նչ պիտի անել ներկայում: Նա գիտեր, որ Վարվառեն մի տարվա բացակայությունից հետո, դարձյալ ատում է Միզանդրոնցովին: Սակայն, այնուամենայնիվ, հույս ուներ հաշտեցնել այս երկու ծայրահեղությունները և թե՛ Վարվառեի, թե յուր անունն ազատել չար լեզուների բամբասանքից — մի հանգամանք, որ նրան տանջում էր ավելի, քան աղջկա դժրախտությունը:

Այս պատճառով, Մոսկվայից հեռանալուց հետո, նա Մոզդոկից նամակ գրեց Միզանդրոնցովին, խնդրելով, որ սա թողնի յուր թշվառ սովորություններր և հաշտվի օրինական կնոջ հետ: Երկու ամիս անցած միայն ստացավ յուր նամակի պատասխանն, ուր անարգ ամուսինն երդվում էր, թե միշտ սիրել է Վարվառեին, իսկ այժմ կրկնապատիկ է սիրում, թե պատրաստ է դարձյալ հաշտվել, եթե միայն Վարվառեն արժանի կհամարի հաշտվել: Երկրորդ նամակով Մինաս Կիրիլլիչը հուսադրեց նրան, թե Վարվառեն փոքր առ վաքր մեղմանում է, թեև վերջինի կողմից այդ չէր նշմարվում:

Եվ ահա այս վերջին նամակի պատասխանն էր, որ Մինաս Կիրիլլիչն այն օրն առաջարկում էր Վարվառեին կարդալ: Այդ անցքից հետո Մինաս Կիրիլլիչն երկար մտածում էր, թե ինչ պատասխանի Միզանդրոնցովին: Նա յուր փեսայի զղջմանն այս անգամ անպայման հավատում էր: Այս էր պատճառը, որ նա այն քանի օրերը մտախոհ էր և չէր խոսում աղջկա հետ: Վերջապես, վճռեց դիմել վերջին միջոցին: Գրեց Միզանդրոնցովին, թե Վարվառեն համաձայն է հաշտվել և խնդրեց, որ անպատճառ ինքը գա: Նա հույս ուներ, որ ամուսնու ներկայությունն և անձամբ ներում խնդրելը կարող է մեղմացնել Վարվառեին ավելի շուտ, քան հեռվից հեռու: Եվ ժամ առ ժամ սպասում էր յուր փեսայի գալստյանը ...

Ձատկի առաջին երկու օրերն անցան: Վարվառեն տնից դուրս չեկավ այդ օրերը: Իսկ Մինաս Կիրիլլիչն ավելի հաճախ էր զբոսնում դրսում: Առաջին օրը նա գնաց Նատալիա Պեարռվնայի մոտ զատիկը շնորհավորելու և վերադարձավ, հետը բերելով այրիին և Ռոստամյանին: Վերջինը շատ երկար չմնաց, շնորհավորեց Վարվառեին, փոքր ինչ նստեց և դուրս գնաց: Նա երևում էր մի տեսակ տենդային շփոթության մեջ և ավելի գունատ, քան երբևիցե եղել էր: Իսկ այրին բավական երկար նստեց և սկսեց խոսել տոների առթիվ. թե ինչպես են թիֆլիսեցիները զատիկն անցկացնում, ինչ են ուտում, ուր են դնում և այլն, և այլն: Ի միջի այլոց, նա խոսեց և «մեռելոցի» մասին: Մինաս Կիրիլլիչը դարձյալ հիշեց յուր անցյալն, յուր հանգուցյալ ամուսնուն, վաղաթառամ զավակներին: Չէ՞ որ ամեն տարի, զատկի երկրորդ կամ երրորդ օրը, նա ճշտությամբ օրհնել էր տալիս նրանց գերեզմանները: Իսկ այժմ նա գտնվում է պանդխտության մեջ, հեռու այդ թանկագին գերեզմաններից:

— Ո՞ր գերեզմանատանն է շատ ժողովուրդ լինում, — հարցրեց Նաաալիա Պետրովնայից։

— Խոջիվանքի գերեզմանատանը, — պատասխանեց այրին։

Ծերունու մեջ ցանկություն հղացավ՝ գնալ գերեզմանատուն։ Երեքշաբթի առավոտը նա առաջարկեց Վարվառեին եթե կամենում է, միասին գնան։

Վարվառեն մերժեց։ Մինաս Կիրիլլիչը հակառակ յուր սովորության, չթախանձեց նրան։ Մի թեթև նախաճաշիկից հետո, նա ուղևորվեց դեպի Խոջիվանք։

Վարվառեն մնաց միայնակ։

Օրը պարզ էր և բավական շոգ։ Ապրիլի սկիզբն էր. ծառերը, դաշտերն արդեն կանաչել էին։ Քաղաքի այգիները մի գեղեցիկ, խայտաբղետ տեսարան էին ներկայացնում։ Սոսիներն ու կաղամախները փոքրիկ դեղնականաչավուն տերևներ էին արձակել, իսկ պտղատու ծառերից շատերը զարդարվել էին սպիտակ և վարդագույն ծաղիկներով։

Վարվառեն յուր լուսամուտից մի հայացք ձգեց հրապուրիչ գարնանային տեսարանի վրա և հառաչեց։ Սի այլ ժամանակ այդ օրն, այդ եղանակն և հոր գերեզմանատուն գնալը նրա մեջ կզարթնեցնեին անցյալի հիշատակներ։ Նա կմտաբերեր յուր մանկությունն, երբ հայրն ամեն տարվա զատկին յուր հետ տանում էր նրան գերեզմանատուն, ցույց էր տալիս մոր, քույրերի և եղբայրների գերեզմանները։

— Ահա՛, այստեղ թաղված է, սիրելի Վարիա, քո եղբայր Սրաֆիոնը… — կհիշեր նա հոր խոսքերը… — վեց տարին չէր լրացել, բայց տեսնողը կարծում էր, թե տասը տարեկան է… խելոք, գեղեցիկ։ Այս փոքրիկ Ռոզայի գերեզմանն է, ա՛խ, մայրդ ի՛նչքան սիրում էր նրան։ Ահա՛, այս տեղ թաղված է Լիզան։ Լիզայի աչքունքը սև էին, մազերը խիստ երկայն, բոլոր դրացիները սիրում էին նրան։ Այդ մեկր Սաշայի քարն է. համբուրի՛ր, Վարիա, համբուրի՛ր, քո եղբոր գերեզմանն է… Այն էլ Սիրունիկն է… Տեր Գրիգորը տվեց նրան այս անունր, օրհնեց և ասաց, «թող աստված սրան երկար կյանք տա»։ Բայց աստված նրան էլ չպահեց։ Այս կո՛ղմ եկ, այս կո՛ղմ եկ, դա Սոնիան է, դեռ քար չեմ գցել տվել, փոքրիկ էր, շատ փոքրիկ… Վարինկա, քաղի՛ր այն սպիտակ ծաղիկը… Այստե՛ղ եկ, այս մեծը տեսնո՞ւմ ես… ճանաչո՞ւմ ես, Վարինկա… Դա նա է, քո…

Հոր ձայնն այստեղ ընդհատվում էր, խուլ հեկեկանքը չէր թույլ տալիս նրան շարունակել։ Իսկ մանկահասակ Վարվառեն վազվզում էր շիրիմների շուրջր, համբուրում էր, ծաղիկներ էր քաղում, չնկատելով հոր արցունքն յուր թանկագին զավակների և անբախտ ամուսնու մասին։

Ո՛չ, այդ չէր հիշում Վարվառեն այս անգամ, նրա միտքն ուղղված էր դեպի ա՛յլ կողմ, նրա սիրտն ուժգին ալեկոծվում էր ա՛յլ զգացմունքներով։

— Ի՞նչ անեմ, տեր աստված, ի՛նչ անեմ, — շշնջում էին նրա շրթունքներն անդադար, և նա երկու ձեռներով մերթ սեղմում էր ճակատը, մերթ ծածկում էր երեսը։

Արդեն նվագահանդիսի երեկոյից հետո, անթիվ անգամ նա այս հարցը կրկնել էր ինքն իրան: Մթնում էին նրա մտքերը, շփոթվում էին զգացմունքները, պղտորվում էր սովորական առողջ և խելացի դատողությունն, երբ նրա առջև պատկերանում էր Ռոստամյանը: Իսկ Ռոստամյանը պատկերանում էր նրա աչքերի առջև առավոտ երեկո, ամեն ժամ, ամեն րոպե, ավելի — քայլ առ քայլ հետևում էր նրան, ցերեկը խլում էր նրա հանգստությունը, գիշերը բորբոքում էր արյունը: Քնից առաջ Վարվառեն ամբողջ ժամերով շրջում էր յուր սենյակում մի հասարակ ներքնազգեստով: Ստեպ-ստեպ նա մոտենում էր, բաց էր անում դեպի գավիթ նայող լուսամուտի փեղկերը: Դիմացի լուսամուտի ապակիների վրա րոպե առ րոպե նկարվում էր Ռոստամյանի ստվերը, մերթ երևում էր նա ինքը շեմքի վրա, մերթ դրսում, արմունկները հենած պատշգամբի ճաղերին:

Այժմ Վարվառեի համար պարզ էր, թե ինչու նա այդպես հաճախ դուրս է գալիս պատշգամբ: Նատալիա Պետրովնան գրեթե ամեն օր այցելում էր յուր կենողներին: Վարվառեն տակավին զգուշությամբ էր վարվում տանտիրուհու հետ. նա չէր խոսում Ռոստամյանի մասին: Տանտիրուհին ինքը պատմում էր այն ամենն, ինչ որ անում էր Ռոստամյանը: Նա բոլորովին փոխվել է, չի պարապում, չի նստում տանր, կարգին չի ճաշում, դուրս է գալիս ու ներս մտնում, դեղնած, ապշած, ոչ ոքի հետ չի ուղում խոսել:

— Վախենում եմ, որ գժվի, — կրկնում էր Նատալիա Պետրովնան յուր հին երգը: — Ջատկի երեկո մի իրան նման ջահել տղա եկավ, հետը գնաց նրանց տուն: Մինչև լույս տուն չեկավ:

Այս բոլորից Վարվառեն զգում էր, որ Ռոստամյանն, արդարև, տանջվում է: Քանի՞ անգամ Վարվառեն տեսել է նրան ցերեկով, լուսամուտից գաղտնի իրան դիտելիս, հուզված դեմքով, վառ աչքերով: Տանջվում է, այո, բայց ո՞վ է մեղավորը: Չէ՞ որ նա հանգիստ և խաղաղ կյանք էր վարում մինչև Վարվառեին հանդիպելը:

— Բայց ես ինչո՞վ եմ մեղավոր, տեր աստված, — ասում էր Վարվառեն:

Միթե նա կարո՞ղ է գուշակել, որ այդ տան մեջ նա պիտի գտնե նրան, որին անգիտակցաբար որոնում էր երկար տարիների ընթացքում:

— Ո՛չ, անկարելի է այսպես շարունակել, — շշնջաց Վարվառեն բորբոքված, անխնա ջարդելով մատները: — Այս երկու կրակի մեջ ապրելու ուժ չունիմ: Բավական է, որքան տանջվեցի, կամ այսպես, կամ այնպես…

Բայց ի՞նչպես: Աջ է նայում — կանգնած է ջերմ սիրով սիրող հայրը, որին ինքը ևս պաշտում է յուր բոլոր ծնողասիրական զգացմունքներով և որի հանգստությունը կազմում է նրա գոյության տարրերից մեկը: Ձախ է նայում — հանդիպում է հասարակական անողոք դատաստանին, կրոնի խստագույն սպառնալիքին: Իսկ այնտեղ, դյութական զորությամբ մղում է նրա սիրտը Ռոստամյանը: Մի կողմում, հոր պատիվը, հանգստությունը, մարդկանց նախապաշարմունքները, կրոնը, մյուս կողմում, աներկբա երջանկությունը: Ո՞րն ընտրել, ո՞ւր դիմել — ահա բարդ հարցը, ահա երկսայրի սուրը, ահա դիլեմման, որ կարճ միջոցում սպառնում է մաշել, ոչնչացնել նրա հոգին:

Եթե նա այնքան չսիրեր հորն, եթե հայրն այնքան չերկնչեր հասարակությունից, այն ժամանակ գուցե դյուրին լիներ մի վճիռ կայացնել: Իսկ ա՞յժմ…

— Ո՛չ, ես .չեմ կարող այս անդունդն անցնել… Ինչո՞ւ, մի՞թե, արդարև, անկարելի է: Եթե մեկին նա չի սիրում մի՞թե մյուսին սիրելու իրավունքից էլ զրկվում է: Սարսափելի՛ խստություն… անգո՛ւթ հասարակություն: Մեկը պանդում են, առանց մյուսը նախատեսնելու, և տակավին բնական օրենքներն արհամարհում են սառն, անսիրտ կանոններով, սնահավատությամբ: Մարդկանց աչքում հերետիկոս դառնալ — ոչ, Վարվառեն այդ չի կամենում, նա ձեռք չի բարձրացնում ոչ ոքի սկզբունքների դեմ: Բայց մի՞թե մի ոք այնքան անողոք պիտի գտնվի, որ յուր հեղինակությամբ խլե նրա անհատական ազատությունն, արհամարհե՞ ա՛յն, ինչ որ նրա համար ավելի սուրբ է և ավելի պաշտելի: Ինչո՞վ վարձատրեցին նրան այն վշտերի փոխարեն, որ երկու տարի — շարունակ մաշում էին նրան Միզանդրոնցովի հարկի տակ: Ինչու և այժմ ստիպում են նրան ընդունել այն, ինչ որ գարշ է, և խլում են նրանից այն, ինչ որ երջանկություն է: Այդ բնության օրենքներն են: Ինչո՞ւ հակասում են բնությանն, որն ինքն աստվածն է: Ո՛չ, այդ անկարելի է, այդ բռնություն է… քրիստոնեական ազատամիտ սկզբունքները չեն կարող այդքան խստադատ լիներ…

— Տեր աստված, տեր աստված, ոչինչ չեմ հասկանում, ոչի՛նչ, — գոչեց Վարվառեն, այս խոկումների ծանրության ներքո ճնշված, — աչքերս մթնում են, գլուխս պտտում է այս բոլորից:

Մի՞թե նրան էր միայն վիճակված լուծել այս դժվար խնդիրը:

Ինչո՞ւ, ի՞նչ մեղքերի պատճառով, ո՞ւմ է վնասել, ե՞րբ է մեկին նախանձել կամ մեկին չար կամեցել: Նա բախտավորության մասին այլ գաղափար ուներ, նրա երևակայությունը ստեղծել էր բոլորովին այլ կենսական իդեալ: Բայց ճակատագիրը թշնամացավ նրան: Վաղօրոք խլեցին նրան բնության ձեռքից և հանձնեցին դժբախտության ձեռքը:

— Պա՛պա, պա՛պա, ես քեզ չեմ մեղադրում: Դու ինձ անկեղծ ցանկանում էիր բախտավորություն: Դու համոզված էիր, որ այդ բախտավորությունն ես կվայելեմ Մեզանդրոնցովի հետ: Գիտեմ, որ դու էլ դժբախտ ես իմ պատճառով… ի՛նչպես մեղադրեմ քեզ: Բայց իմանո՞ւմ ես, արդյոք, թե ինչ դրության մեջ եմ ես: Ո՛չ, եթե իմանայիր, ղու չէիր կարող այդպես անտարբեր մնալ Այժմ կիմանաս… այժմ ուժ չունիմ այլևս թաքցնելու իմ սրտի զգացածը: Ախ, տեր աստված, ի՞նչ կպատահի, արդյոք, նրան, եթե իմանա…

Նա թուլացած, հաղթահարված նստեց աթոռի վրա և գլուխը հենեց կոներին: Շատ մնաց այդ դրության մեջ, թե՛ քիչ — չգիտեր, հանկարծ գլուխը բարձրացրեց և վճռական եղանակով արտասանեց.

— Այդ կլինի սպանություն… ես չեմ կարող այդ քայլն անել, հարկավոր է հետ կանգնել, քանի որ միայն անդունդի ծայրումն եմ: Ես չեմ թողնիլ, որ իմ երջանկության համար հայրս ստանա մահացու հարված… Քանի որ նրան հայտնի չէ, ես կվերջացնեմ ամեն ինչ…

Նա շտապով գրասեղանի վրայից վերցրեց գրիչ ու թուղթ և նստեց: Տասը րոպեի չափ նա, գրիչը ձեռքին, գլուխը կրծքին թեքած, ձախ ձեռով ճակատը սեղմած, մտածում էր: Մի քանի

անգամ նա գրեց, ջնջեց, թերթը պատռոտեց, նորը վերցրեց, դարձյալ գրեց, ջնջեց և դարձյալ թերթը պատռոտեց։

Վերջապես, ավելի հուզված, գրիչը մի կողմ շպրտեց և վեր կացավ տեղից։ Նա կամենում էր նամակով խնդրել Ռոստամյանին՝ դադարել իրան հետամուտ լինելուց։ Բայց ի՞նչ իրավունքով նա պիտի մի այդպիսի համարձակ պատվեր տա այն մարդուն, որը դեռևս խոսքով մի ակնարկություն չի արել յուր սիրո մասին, որի սիրտը դեռ կիսով չափ մութն էր նրա համար։ Մի գուցե երևակայությունը խաբում էր նրան։ Երբ այդ երիտասարդը կհայտնի յուր սերը, եթե սիրում է, նա կաշխատի հաղթել ինքն իրան և կբացատրի, թե անկարելի է, որ միմյանց սիրեն։ Թո՛ղ լինեն եղբայր ու քույր։ Քույր ու եղբա՛յր... ո՛րքան մեծ բախտավորություն է այնպիսի եղբայր ունենալ։ Իսկ Վարվառեն չունի եղբայր, նա էլ քույր չունի։ Բայց կարելի՞ բան է այս։ — Ամենևին, այդ կլիներ ինքնախաբեություն։ Նրանք պիտի հեռու լինեն իրարուց, չպիտի տեսնվեն։ Եվ, իհարկե, պիտի հեռանա Վարվառեն։ Այո, նա կխնդրի հորը, որ տեղափոխվեն այս բնակարանից... Այն ժամանակ թող նա մնա միայնակ յուր զգացմունքների հետ, նա կհաղթի ինքն իրան, կաշխատի հաղթել։ Ուրիշ կերպ անկարելի է... նա պարտավոր է մոռանալ նրան...

Սակայն այս մի րոպեական վճիռ էր, որ իսկույն փոխվեց, և Վարվառեի մտքերն ու զգացմունքները ավելի շփոթվեցին։ Անորոշ մտատանջության մեջ նա երկար ժամանակ անցուդարձ էր անում սենյակի մեջ։ Մի րոպե կանգնեց պաարանի առջև, նայեց հայելու մեջ։ Նրան թվաց, թե վերջին երկու երեք շաբաթվա ընթացքում ավելի նիհարել է և ավելի գունաթափվել, չնայելով, որ գարնանային եղանակը նրա այտերի վրա ևս սփռել էր այն թեթև պարզ կարմրությունը, որով տարվա այդ միջոցին օծվում է ամեն մի գունասպառ կնոջ երեսը։ Բայց նրա աչքերի մեջ փայլում էր ավելի կենդանություն, քան առաջ։

Դռները բացվեցին, ներս մտավ աղախին Մատրենան։

— Տիրուհի, դուք զբաղվա՞ծ եք, — հարցրեց ռուս պառավը։

Վարվառեն շփոթված հետ նայեց։

— Ի՞նչ ես կամենում, — հարցրեց նա բարկացած։

— Ձեզ ուզում են տեսնել։

— Ո՞վ,

— Ա՛յ, Ա՛յն երիտասարդ պարոնը։

Մատրենան ձեռով ցույց տվեց պատշգամբի մյուս ծայրը։

— Այստե՞ղ է։

— Դրսում սպասում է, տիրուհի։ Այսօր երկու անգամ եկել է ու հարցրել։ Մեկ ուզում էի ասեի որ տանը չեք, բայց հետո մտածեցի, թե ավելի լավն է ձեզանից հարցնեմ։ Հրավիրե՞մ։

Վարվառեն մի քանի վայրկյան լռեց և հետո, կարծես, մտքում մի բան վճռելով, հրամայեց։

— Հրավիրի՛ր մյուս սենյակ։

Մատրենան դուրս գնաց։ Վարվառեն ուղղեց հագուստը, գլխի մազերն ու հանդարտ քայլերով անցավ հյուրասենյակ։

Բազկաթոռի վրա նստած սպասում էր Ռոստամյանը, սև հագուստով, գունատ, տխուր աչքերը հառած այն դռներին, ուսկից դուրս եկավ Վարվառեն…

IX

Մինչդեռ Վարվառեն ոչինչ չէր նկատում, Ռոստամյանը Մինաս Կիրիլլիլի հարաբերությունների մեջ զգում էր փոփոխություն։ Թվում էր նրան, որ ծերունին այլևս առաջվա պես բարեկամաբար չի վերաբերվում իրան։

Այս բանն ավելի զգալի էր ավագ չորեքշաբթի երեկո, երբ Մինաս Կիբիլլիչն և Ռոստամյանը այրիի տանն էին։ Հակառակ յուր սովորության, այդ երեկո ծերունին Ռոստամ յանի հետ խոսում էր, կարծես, ակամա։ Նա չէր վիճաբանում որևէ խնդրի մասին, չէր հակառակում և, առհասարակ, երկար խոսակցությունից խույս էր տալիս։ Ծերունու այս հանկարծակի փոփոխությունը Ռոստամյանին և՛ զարմացրեց, և՛ վիրավորեց։

Հետևյալ և երրորդ օրը նա փողոցում ու գավթում երկու անգամ բարևեց։ Ծերունին նրա ողջույնն ընդունեց գլխի մի թեթև շարժումով։ Նրա կասկածն ավելի զորացավ։ Բացի այն, որ Մինաս Կիրիլլիչը կարող էր յուր աղջկա և երիտասարդ հարևանի հարաբերությունների ներքին դրդիչ պատճառն զգալ, ինքնըստինքյան ծերունու սառնությունը վիրավորական էր Ռոստամյանի համար։ Մենակեցությունը, բնականաբար, նրա մեջ զարգացրել էր զգայուն ինքնասիրություն։ Նա, որ բնավ յուր բարեկամությամբ կամ ծանոթությամբ, մեկին ձանձրացրած չէր, այժմ զգում էր, որ տաղտկացնում է մի ծերունու։ Ահա ինչու զատիկ օրվա այցին նա երկար չմնաց։

Բայց ինքնասիրության այդ վիրավորանքը շուտով անցավ։ Մնաց միայն մի կասկած, արդյոք, Մինաս Կիրիլլիչն իսկապես զգո՞ւմ է Ռոստամյանի այցելությունների դրդիչ պատճառը։ Եթե զգում է — հետևաբար իրավունք ունի ոչ միայն սառն վարվել, այլև ատել նրան, այլև չընդունել յուր տան մեջ։ Այդ շատ բնական կլիներ։ Վարվառեն ամուսնացած կին է, իսկ Մինաս Կիրիլլիչը — նրա և յուր սեփական պատվի նախանձախնդիր հայր։ Ի՛նչ փույթ նրան, թե Ռոստամյանին ինչ զգացմունք է մղում դեպի նրա աղջիկը, ի՞նչ փույթ, եթե աղջիկը մինչև անդամ… սիրում է այդ երիտասարդին։ Նրանց մեջ կա մի զորեղ պատնեշ, և ով կհամարձակվի այդ պատնեշը խորտակել — կխորտակի և Մինաս Կիրիլլիչի պատիվը, անունը։ Նա դեպի անդունդը կգլորի և՛ յուր և՛ Վարվառեի պատիվը։

Այսպես է Մինաս Կիրիլլիչի գաղափարը, նույնն է և շատերի համոզմունքը։ Ուրեմն, Ռոստամյանն եթե չի հարդում այդ նախապաշարմունքը, գոնե չունի իրավունք և՛

դատապարտելու Մինաս Կիհրիլլիչին: Երկու զորեղ սպառնալիքներ, Դամոկլեսի սրի պես, կանգնած են նրա գլխին — հասարակություն և կրոն:

Առաջին օրից նա դեպի այդ պատկառելի ծերունին զգաց որդիական հարգանք: Երբ լսեց Վարվառեի պատմությունը, հարգանքը վերափոխվեց ատելության, պատկառելի մարդը դարձավ բռնակալ հայր: Անցավ և ատելությունր. Ռոստամյանը սկսեց կարեկցել ծերունու դժբախտությանը: Այժմ այս փոփոխական զգացմունքների տեղը բռնեց ամոթի զգացմունքը: Նա ամաչում էր Մինաս Կիրիլլիչից և վերջին օրերն աշիւատում էր խույս տալ նրանից, չտեսնել նրան:

Բայց խույս էր տալիս հորից, իսկ աղջկա՞ն... Պիտի տեսնվել Վարվառեի հետ առանձին:

Այս նպատակով Ռոստամյանն աշխատում էր որսալ մի հարմար ժամ: Եվ ահա, հասավ ցանկալի պահը: Երբ Մինաս Կիրիլլիչը դուրս գնաց, Ռոստամյանն հետևից նայեց, մինչև որ նա անհետացավ վաղոցի ծայրում: Դեպքը հաջող էր. այրին ևս տանր չէր: Գավթում աղախինը Ռոստամյանին հաղորդեց, թե «պարոնը» ուշ կվերադառնա: Առաջին պահ պատշգամբի վրա նրան տիրեց մի անսպասելի վիատություն: Նա հետ դարձավ և, մի քառորդ ժամ տատանվելուց հետո վճռեց, վերջապես, հարմար ժամը բաց չթողնել:

Եվ ահա Ռոստամյանը Վարվառեի մոտ էր, միայնակ, դեմ հանդիման:

Առաջին հայացք Վարվառեի անսովոր սառնությունը նրան ապշեցրեց:

— Բարև ձեզ, — ասաց նա, մի քանի քայլ առաջ դիմելով:

Վարվառեն հանդարտ դրեց յուր ձեռը նրա ափի մեջ և լուռ ցույց տվեց բազկաթոռներից մեկը:

— Հուսով եմ, որ իմ այցելությունն անժամանակ չեք համարի, — շարունակեց Ռոստամյանը, նստելով նրա դեմ:

— Ընդհակառակը… — պատասխանեց Վարվառեն, կարծես, ակամա:

Երկուսն էլ սովորականից դուրս գունաթափ էին, երկուսի սիրտն ևս ալեկոծում էր և երկուսն էլ աշխատում էին արտաքին սառնությամբ քողարկել իրանց հուզմունքը: Այս նրանք նկատեցին միմյանց դեմքից: Ահա ինչու մի քանի րոպե նրանք չգիտեին ինչ խոսել: Վերջապես, ծանր լռությունն ընդհատելու համար, Վարվառեն հարցրեց Ռոստամյանին գործերի մասին:

Ոչինչ գործ այժմ չի հետաքրքրում նրան:

— Ինչո՞ւ, — հարցրեց Վարվառեն:

Ռոստամյանը ոչինչ չպատասխանեց: Նրանք դարձյալ լռեցին: Ռոստամյանը, կարծես, վախենում էր նայել Վարվառեի երեսին: Թվում էր նրան, որ յուր ամեն մի հայացքը պարզ պատկերացնում է այն, ինչ որ զգում էր նույն րոպեներին: Այնինչ նրա դրությունը հետզհետե ավելի դժվարանում էր:

— Ո՞րտեղ է Մինաս Կիրիլլիչը, — հարցրեց նա։

— Գնացել է գերեզմանատուն, — պատասխանեց Վարվառեն ժպտալով։

— Ճշմարիտ, երեկ և այսօր մեռելոց է, տեր աստված, ի նչպես մարդ հետզհետե մոռանում է քրիստոնեությունը, — ասաց Ռոստամյանն անկեղծ համոզմունքով։

— Այո , մոռանում է, — գրեթե անգիտակցաբար արտասանեց Վարվառեն։

Միևնույն ժամանակ, Վարվառեն աշխատեց ծիծաղել, բայց նրա ձայնի մեջ, փոխանակ ծիծաղի, զգացվեց մի անզսպելի դողոց։ Նա շարունակեց մռայլ եղանակով։

— Հայրս առաջարկեց ինձ յուր հետ գնալ, ես մերժեցի։ Իսկ դուք սովորություն ունի՞ք, պարոն Ռոստամյան, այս օրերում գերեզմանատուն այցելելու։

— Այս օրերում — ոչ, բայց սիրում եմ այցելել, երբ տխուր եմ լինում։

— Երբ տխո՞ւր եք լինում։

— Գուցե ձեզ համար ծիծաղելի լինի, Վարվառա Մինաևնա, ես տխրությունս փարատում եմ տխրությամբ։ Գերեզմանատանր զգում եմ անբացատրելի հոգեկան թեթևություն…

— Այդ մասամբ հասկանալի է, — ընդհատեց Վարվառեն թախծալի ձայնով։

— Հասկանալի՞ է, — կրկնեց Ռոստամյանր, ներքուստ ուրախանալով և, միևնույն ժամանակ, մի առանձին ոգևորությամբ ներշնչված։ — Հասկանալի է, այո, երբ դառնացած սրտով նայում ես այնտեղ աջ ու ձախ, լուռ ու մռայլ գերեզմանները, կարծես, քեզ պարգևում են մի տեսակ մխիթարություն։ Ես միշտ այնտեղից վերադառնում եմ ավելի ուրախ, թեթևացած սրտով, քան գուցե ուրիշները մի զվարճալի հանդիսից։ Ինչի՞ցն է այս… Գուցե նրանից, որ ճակատագիրն ինձ մանկության հասակից ստիպել է սիրել մեռելների հանգստարանը, սիրել, երբ այնտեղ հանգչում են իմ սիրելի էակների մարմինները…

— Ի՛նչ տխուր խոսակցություն սկսեցինք, — ասաց Վարվառեն, երբ Ռոստամյանը հանկարծ լռեց, ասաց և ինքը հազիվ զսպեց յուր հառաչանքը։

Այնինչ Ռոստամյանի թախծալի խոսքերը թափանցեցին նրա սրտի խորքր, ըստ որում մռայլ խոսակցությունը համապատասխանում էր նրա հոգեկան տրամադրությանը։ Նա անկեղծ ցավակցությամբ նայեց Ռոստամյանի երեսին, նայեց և իսկույն աչքերը խոնարհեցրեց, գլուխը թեքեց դեպի կուրծքը։ Եվ նրա այտերը շառագունեցին։ Ռոստամյանի շրթունքներր դողդողում էին, նա հազիվ կարողանում էր խեղդել յուր ներքին ալեկոծությունը։

«Նա տանջվում է, ես ի՞նչպես հայտնեմ նրան իմ միտքը»։ — մտածում էր Վարվառեն, չհամարձակվելով նայել Ռոստամյանի երեսին։

Չէ՞ որ նա դեռ մի տասը րոպե առաջ վճռել էր հայտնել, թե այսուհետև անկարելի է, որ նրանք միմյանց տեսնեն։ Չէ՞ որ հենց այս դիտավորությամբ նա հրամայեց աղախնին ներս հրավիրել

նրան: Իսկ ա՞յժմ… ի՞նչպես կատարել այդ վճիռը — ահա հարց, որի մասին սառն խորհելու ուժ չուներ Վարվառեն, քանի որ մի այլ, ավելի զորեղ զգացմունք հետզհետե խավարեցնում էր նրա միտքն ու հոգին…

Գավթում ամեն ինչ խաղաղ էր, նույնիսկ աղախինը, որ սովորաբար անցուդարձ էր անում պատշգամբի վրա, չէր երևում: Լսվում էին միայն պատշգամբի առաստաղի տակ թռչկոտող ծիծեռնակների ճայներն և երբեմն հեռավոր փողոցներից անցնող կառքերի խուլ դղրդյունը: Լուսամուտների ապակյա փեղկերը փակ էին: Վարվառեն վեր կացավ, բաց արավ փեղկերից մեկը: Արևի ջերմ ճառագայթներով տոգորված մաքուր օդը թարմ հոսանքով մղվեց սենյակի անշարժ մթնոլորտի մեջ, մեղմիկ շոշափելով Վարվառեի գունատ դեմքը:

Նա կրկին վերադարձավ յուր տեղը: Ռոստամյանը, անշարժ նստած, անթարթ աչքերով հետևում էր նրա յուրաքանչյուր շարժմանը: Նրանք սկսեցին նորից խոսել: Սեղանի ծայրում դրած էր ինչ-որ գիրք: Ռոստամյանը, մի բան ասած լինելու համար, հարցրեց, այժմ ինչ է կարդում Վարվառեն:

— Ո՛չինչ, — պատասխանեց վերջինն և գլուխը թեքեց կրծքին:

Այնուհետև խոսակցությունն առաջ չգնաց, բացի հատ և անկապ խոսքերից:

Լռությունն ավելի սաստկացնում էր երիտասարդական սրտերի բաբախումը…

— Ոչ, այլևս չեմ կարող երկար զսպել ինձ, — ասաց մտքում Ռոստամյանը:

Նույն վայրկյանին նրա աչքերը հանդիպեցին Վարվառեի ալքերին: Այս եղավ մի զորեղ հարված նրա բռնի անձնակալության: Հայացքները պարզ արտահայտում էին այն, ինչ որ լեզուն վարանում էր խոսել:

Ռոստամյանը մի անզոր ճնշում ևս գործեց բուռն զգացմունքների վրա: Բայց այլևս ուշ էր: Նա տեսավ, որ Վարվառեն հանկարծ վեր կացավ տեղից, մոտեցավ փողոցի կողմի լուսամուտին և նայեց դեպի դուրս, աջ ու ձախ:

Ռոստամյանը նույնպես բարձրացավ տեղից, բոլորովին դեղնած, շնչասպառ, աչքերը մթնած, գրեթե խելակորույս: Նա մոտենում էր Վարվառեին: Սենյակի մեջտեղում նա կանգ առավ: Վարվառեն լուսամուտի կողմից հետ դարձավ, և այդ րոպեին նրանք երես առ երես հանդիպեցին իրարու, միմիայն մի քայլ հեռավորության վրա: Քանի մի վայրկյան նրանք շվարած նայում էին միմյանց երեսին:

— Ի՞նչ պատահեց ձեզ… — գոչեց Վարվառեն երկյուղալի ձայնով:

Ռոստամյանը լուռ էր:

— Ի՛նչ պատահեց ձեզ… — կրկնեց Վարվառեն շշնջյունով:

Ռոստամյանը դարձյալ լուռ էր:

Վարվառեն անգիտակցաբար մի քայլ հետ կանգնեց: Նույն վայրկյանին նա յուր երկու ձեռների վրա զգաց մի ջերմ շփումն: Մի ակնթարթում նրա աչքերր մթնեցին, սենյակը խավարվեց, գլուխը պտտեց: Արյան տաք, ախորժելի հոսանքը խփեց գլխին, և նա հաղթված, թուլացած ընկավ, բայց ո՛ւր…

Նույն րոպեին լուսամուտի առջևով, պատշգամբի վրա, կատվի քայլերով, անցավ մի փոքրահասակ արարած: Նրանք ոչինչ չնկատեցին, և չէին կարող նկատել…

Վարվառեն սթափվեց: Երկու ուժեղ թևեր մեղմիկ գրկած էին նրա բարձր իրանը: Նա դուրս ազատվեց այդ հրապուրիչ շղթայից, ոտքից գլուխ ուժգին դողալով, մի քանի քայլ հետ դրեց և խուլ, ալեկոծված ձայնով գոչեց.

— Խելագա՛ր, ի՞նչ եք անում…

— Վարվառե, Վարիա… — Հնչեց նրա ականջին Ռոստամյանի ձայնը տարօրինակ եղանակով:

— Հեռացե՛ք, այստեղից, դուք ինձ անդունդն եք գլորում,. — արտասանեց Վարվառեն, երեսը դողդոջուն ձեռներով ծածկելով:

— Անդո՛ւնդ … — կրկնեց Ռոստամյանն… — ես ուզում եմ անդունդից դուրս բերել ձեզ:

Նա բռնեց Վարվառեի ձեռն և, յուր երկու ձեռների մեր սեղմելով, աչքերը հառեց նրա աչքերին ու հուզված ձայնով շարունակեց.

— Դուք գիտեք, որ ես չէի կարող ուրիշ կերպ վարվել: Րոպեական խելագարություն չէ այս: — Ո՛չ ամենևին: Ձեզ ամեն ինչ հայտնի է: Վարիա, Վարվառա Մինաևնա, ես… շատ եմ մտածել… շատ եմ զգացել, օօ օ, շա՛տ եմ զգացել: Կարո՞ղ է մարդ հաղթել բնությանը: Ես… քեզ… ոչ… ձեզ անդո՞ւնդն եմ գլորում… ե՞ս: Նայեցե՛ք, բացի այս շնչառությունից մի ուժ մնացե՞լ է իմ մեջ: Միթե ես չե՛մ մտածել արգելքների մասին. միթե երկու ամիս շարունակ գիշեր ցերեկ չեմ պատերազմել ինքս ինձ հետ: Բայց այժմ տկար եմ, անկարող, այո, թուլացած, ոչնչացած այս անհաղթելի զգացմունքից: Գուցե կարողանայի զսպել ինքս ինձ, եթե հավատացած չլինեի, որ դուք կարհամարհեք նախապաշարմունքները: Այո, հավատում եմ, դուք կարող եք մոռանալ մանր մարդկանց կեղծ հասկացողությունն առաքինության մասին: Դուք բարձր եք այդ թզուկներից… նայեցեք ուրեմն նրանց վրա անվեհեր… Մի պահանջեք նրանցից ճիշտ գաղափար իսկական հերոսության մասին:

Նրա ձայնը հետզհետե խեղդվում էր: Նա հազիվ հազ շունչ էր առնում: Մի քանի վայրկյան դարձյալ լռեց, որ շունչ քաշի, և ապա շարունակեց.

— Ում հոգին մեծ է, ընդարձակ է և՛ նրա մտքերի հորիզոնը… դուք հասկանում եք իմ ասածը, Վարվառա Մինաևնա: Երբ կապանքն անտանելի է դառնում, նրան… գիտեք… պիտի ատել, արհամարհել, պիտի խորտակել: Ասացե՛ք, զգո՞ւմ եք դեպի ինձ գեթ տասներորդ չափն այն սիրո, որ ահա ինձ հասցրել է այս օրին: Եթե զգում եք, անկարելի է, որ երկար մտածեք: Բայց, տեր աստված, դուք դեռ սարսափում եք նախապաշարմունքներից: Ա՛խ, եթե իմանայիք, թե ինչ է թաքնված՛ առօրյա առաքինության դիմակի տակ, թե որն է հանցանքը և որն է սողուններից

հանցանք համարված անարատությունը: Խոսեցե՛ք, Վարվառե, մի լռեք: Ահա՛, ձեր առջև կանգնած է մի ոչնչություն, որ առաջ մարդ էր, ապրում էր, դո՛ւք միայն կարող եք նրան կրկին կենդանություն տալ… Կարդացե՛ք, ուրեմն, իմ ճակատագրի վճիռը… Տեսնո՞ւմ եք ինչ օրի եմ հասել…

Արդարև, նա ներկայացնում էր մի խղճալի պատկեր, այնքան ծայրահեղ զգացմունքներն ընկճել էին նրան և այնքան նա մոռացել էր ինքն իրան: Իսկ Վարվառեն, մի ձեռը հենած կոլորակ սեղանի ծայրին, մյուս ձեռով աչքերը ծածկած, լուռ, անշարժ, լսում էր բորբոքված սրտից բխող խոսքերը, որ երբեմն կրկնվում էին և երբեմն արտասանվում թերի, անկապ:

— Լռո՞ւմ եք… — շարունակեց Ռոստամյանը, դարձյալ մոտենալով Վարվառեին և հանդարտ ձեռն աչքերից հեռացնելով: — Դուք չե՞ք ուզում խոսել, միթե ա՞յդ է ձեր պատասխանը, մի սառն լռություն իմ կրած տանջանքների համար: Ուրեմն ես զո՞ւր իմ կյանքը հանձնեցի սրտիս ու հոգուս հաճույքին… ուրեմն իմ ներքին ձայնն անգթությամբ խաբե՞ց ինձ և դարձրեց ծիծաղելի ձեր աչքում…

— Ես հայր ունիմ… — ցածր ձայնով արտասանեց Վարվառեն, բուռն ջանք գործ դնելով, որ զսպե իրան:

— Գիտեմ…

— Ես սիրում եմ նրան…

— Իսկ ինձ… ո՞չ:

— Մի ստիպեք ինձ խոսել իմ սիրո մասին: Նա պարզ է ձեզ համար, Ստեփան, ո՛չ այսօր, ո՛չ երեկ… Հիշում ե՞ք այն օրն, երբ մեզ ցույց էիք տալիս այս բնակարանը: Ես չպիտի տեսնեի ձեզ, տեսա, և հենց առաջին րոպեից իմ մեջ հղացավ այն, ինչ որ մինչև այն օրը չէի զգացել: Ապացույցնե՞ր եք պահանջում… Անքուն, վշտալի արտասուքով ողողված գիշերները լեզու չունին… Ինչո՞ւ չեք հարցնում ձեր սրտից: Թե ինչը ձեր մեջ գրավեց ինձ — մի ստիպեք բացատրել… ես անկարող եմ… ես ինքս չեմ հասկանում… Ոչինչ չեմ հասկանում:

Նա հազիվ կարողացավ զսպել յուր հեկեկանքը: Մշտական թախծալի աչքերի մեջ փայլող հուրը, ցնցողաբար դողացող շրթունքները, ձայնի կաթոգին հնչյունը — այս բոլորը ոչնչացրին և՛ այն վերջին թույլ կասկածը, որ տակավին մնում էր Ռոստամյանի սրտում: Վարվառեն մի քանի վայրկյան լուռ նայեց հատակին, հետո գլուխը բարձրացրեց և, երբ նրանց հայացքները կրկին հանդիպեցին միմյանց, Ռոստամյանը գրկաբաց դիմեց դեպի նա:

— Ո՛չ, հեռո՛ւ կացեք… Լսեցե՛ք, հա՛յրս, հա՛յրս, հասկանո՛ւմ եք, անբախտ մարդ, ես նրան սիրում եմ: Բավական է այսքանը… Ո՛չ, մեր մեջ ո՛չ մի կապ չի կարող լինել:

— Վարվառե …

— Ձուր եք տանջում ձեզ և ինձ: Ասացե՛ք, — ինչ կապ կարող է լինել մեր մեջ:

— Սիրո ամուր շղթան… Նա սուրբ է, հաստատ է, քան որևէ օրինական կապ։

— Բայց… արգելված է։

— Ամենևի՞ն… մենք կարող ենք… ամուսնանալ։

Վարվառեն դառն ժպտաց։

— Գուք կարող եք ազատություն պահանջել, օրենքը ձեզ իրավունք է տալիս, — շարունակեց Ռոստամյանը վստահ ձայնով։

— Ազատությո՞ւն,.. — կրկնեց Վարվառեն կսկծալի հեգնությամբ… — ումի՞ց պիտի պահանջեմ նրան։

— Միզանդրոնցովից։

— Միզանդրոնցովց… Նա դեռ հույս ունի կրկին ինձ հետ միանալու։

— Բայց ի՞նչ օրենքով… ո՞ր իրավունքով։

— Չգիտեմ, չգիտեմ… ես ոչինչ չեմ հասկանում… — գոչեց հուսահատ ձայնով Վարվառեն։

— Օրենքն իրավունք է տալիս ապահարզան պահանջելու, լսո՞ւմ եք, Վարվառե, մեղանչող ամուսինը պարտավոր է տալ ապահարզան։ Ես այս հաստատ գիտեմ…

— Իսկ եթե նա չի համաձայնվի՞։

— Պարտավոր է համաձայնվել, մեղանչողը նա է… դուք կարող եք ապացուցանել…

— Ոչ. նա երբեք հանձն չի առնիլ յուր հանցանքն, երբե՛ք, ես ճանաչում եմ նրան։ Կամենո՞ւմ եք, որ ե՛ս հանձն առնեմ մի չկատարած հանցանք… Տեր աստված, ես… ես… պատրաստ եմ։ Բայց ո՛չ, զուր կլինի։ Ես դարձյալ կմնամ կապված, ազատությունը կստանա նա միայն։ Իսկ հա՞յրս…

Նա դարձյալ թուլացած նստեց աթոռի վրա և երեսը ձեռներով ծածկեց։

— Վարվառե, մի հուսահատվիր, մենք ուրիշ ելք կգտնենք, — գոչեց Ռոստամյանը, խելագարի պես ճանկելով Վարվառեի ձեռն և հպելով յուր բոցավառ շրթունքներին։ Թո՛ղ մեզ հալածեն, թող զզվեն մեզանից, փույթ չէ, ես չեմ վախենում ոչ ոքից…

— Հա՛յրս, հա՛յրս, մտածեցեք նրա մասին, — ասաց Վարվառեն, թողնելով յուր ձեռը Ռոստամյանի ձեռների մեջ, — Դուք գիտե՞ք, որ նա չի կարող մի այդպիսի զոհաբերություն անել…

— Նա բարի է, ազատամիտ է, նախապաշարված չէ… Նա քեզ սիրում է։

Վարվառեն լուռ բացասաբար շարժեց գլուխը: Ռոստամյանը շարունակեց ,

— Ի՛նչ, միթե յուր միակ աղջկա բախտը չի՞ համոզիլ նրան, չի՞ կակղեցնիլ նրա սիրտը: Վարվառե, ասացե՛ք, նա ձեզ սիրո՞ւմ է:

— Ես իրավունք չունիմ պահանջել նրանից անկարելին, հասկացեք… — պատասխանեց Վարվառեն… — Նա սիրում է ինձ, բայց իրավունք չունիմ այդ սիրո փոխարեն նրանից անկարելի զոհաբերություն պահանջել — պահանջել, որ նա յուր անունը, պատիվը հասարակության խոսակցության առարկա դարձնի:

Ռոստամյանը, դառն հեգնությամբ գլուխը շարժելով, հուսահատված ու թուլացած, նստեց բազկաթոռի վրա:

— Ուրեմն, ես սխալված էի ձեր վերաբերմամբ… — - արտասանեց նա տաքացած, ճակատը ձեռներով սեղմելով և երեսը ծածկելով: — Ես այդպես չէի կարծում, — շարունակեց նա նույն դրության մեջ, — ես ուրիշ համոզմունք ունեի ձեր մասին: Բայց… փո՛ւյթ չէ՛… այո, գիտեմ այսուհետև, թե ինչ պիտի անել, — ավելացրեց նա, տեղից բարձրանալով և կես սպառնողական, կես աղերսալի մի հայացք ձգելով Վարվառեի վրա:

— Դուք չե՞ք հավատում ինձ, Ստեփան, այդ ավելի վշտալի է ինձ համար, քան իմ դրությունը, — ասաց Վարվառեն ե ապա, երեսը դարձնելով մյուս կողմ, ավելացրեց, — ո՞րքան դառն է սիրել և իրավունք չունենալ սիրելու… Հեկեկանքը խեղդեց նրա ձայնը, նա սկսեց լալ: Խղճի մի տարօրինակ խայթոց զգաց Ռոստամյանը: Նա շտապով վեր կացավ, գրկեց Վարվառերն և տարավ դեպի գահավորակը: Վարվառեն, անգիտակցաբար հպատակվելով նրան, նստեց գահավորակի վրա, իսկ Ռոստամյանը չոքեց նրա առջե և յուր բորբոքված շրթունքներով սկսեց համբուրել նրա ձեռները…

Պատշգամբի վրա դարձյալ մի շարժման ձայն լսվեց: Այս անգամ Վարվառեն, որ նստած էր երեսը դեպի դուրս, նշմարեց մի մութ պատկեր, որ շտապով անցավ լոլսամուաի առջեով, ինչպես գող կատու:

— Հեռացի»ր, բավական է, հեռացի՛ր, — գոչեց Վարվառեն, դուրս սպրդելով Ռոստամյանի գրկից ե ոտքի կանգնելով… — Նա, կարծեմ, գալիս է… Դո՛ւրս եկ… ես չեմ ուզում, որ նա մեղ միասին տեսնի, նա կհասկանա, հարվածը հանկարծակի կլինի…

Այս ասելով, նա վազեց դեպի դռները, կարծելով, թե պատշգամբի վրա երևացողը հայրն է: Բայց ոչ ոքի չտեսավ: Այնինչ Ռոստամյանը, տակավին կաշկանդված դյութական մերձավորությամբ, չէր շարժվում յուր տեղից:

Փողոցի լուսամուտից լսվեց կառքի դղրդյուն, որ հանկարծ ընդհատվեց:

— էսո՞ւմ եք: Նա եկավ… հեռացե ք, եթե սիրում եք ինձ …

Արդեն սանդխտի վրա լսվեց մեկի ոտնաձայնը: Այլևս ուշ էր թաքնվելը: Ռոստամյանը, հուսահատ դրության մեջ, դուրս եկավ դռներից ոլոր-մոլոր քայլերով:

Մի ձեռում մի փունջ մանուշակ, մյուս ձեռում ձեռնափայտը, սենյակի դռներին մոտենում էր Մինաս Կիրիլլիչը:

Եթե Ռոստամյանը նույն րոպեին կարողանար համարձակ նայել ծերունու կողմ, կտեսներ, թե ինչպես վերջինն ապշած, անշարժ մնաց պատշգամբի վրա, տեսնելով նրան դռների մոտ: Բայց նա, հազիվ-հազ քայլերր վախելով, շտապում էր խույս տալ ծերունուց:

Այդ միջոցին նրա ականջին հասավ մի բարձրաձայն ծիծաղ: Սա գլուխը բարձրացրեց և յուր մթնած աչքերով Նատալիա Պետրովնայի բնակարանի լուսամուտներից մեկի մեջ տեսավ մի փոքրիկ գլուխ երկու սևորակ խորամանկ աչքերով:

X

Օրը բավական շոգ էր, ամենքը զբոսանքից հոգնած, վերադառնում էին իրենց տները, ճաշելու ժամանակ էր: Հուզված սրտով, ամոթահար, շփոթված մտքերով, սակայն երջանիկ զգացմունքով Ռոստամյանը դիմեց դեպի քաղաքի կենտրոնը:

Ո՛ւր էր գնում — ինքն էլ չգիտեր: Նա կամենում էր առանձնանալ մի տեղ և անձնատուր լինել յուր զգացմունքներին: Քաղց նա տակավին չէր զգում և ոչ էլ գիտեր, թե արդեն երրորդ ժամն է: Քաղաքի առաջնակարգ փողոցներից մեկում, մի բարձր շինության ներքին հարկի ապակյա դռների վրա, նրա աչքին րնկավ խոշոր ֆրանսերեն տառերով դրված «Կոֆե-ռեստորան» խոսքը: Այդ մի ծանոթ հյուրանոց էր, ուր նա մի քանի անդամ ճաշել էր: Նա մտավ ներս:

Մի մեծ սենյակում դրված էին մի քանի սեղաններ, ծյունի պես ճերմակ և մաքուր սփռոցներով ծածկված: Մոտ մի տասնյակ հյուրեր, այս ու այնտեղ առանձին-առանձին նստած, լուռ ճաշում էին, աչքի տակով նայելով միմյանց վրա:

Ռոստամյանն անցավ մի ուրիշ փոքրիկ սենյակ, ուր ոչ ոք չկար: Նրա առջև իսկույն ցցվեց սև հագնված մի իմերել սպասավոր, կերակուրների ցուցակը ձեռին և մի երկայն անձեռոցիկ ուսով գցած: Ռոստամյանն առանց ընտրելու, պատվիրեց առաջին աչքին ընկած կերակուրն և մի շիշ գինի:

Մինչև ծառան պատվերր կկատարեր, նա, արմունկները սեղանին հենած, ծանրացած գլուխը ձեռներով բռնած, մտածում էր յուր արարմունքի մասին:

Անսպասելի՛ անցք... ո՛չ, բախտավոր եղելություն: Ի՞նչպես հանկարծ տեղի ունեցավ այն: Միթե Ռոստամյանն այդ մտադրությունն ունե՞ր, երբ. գնում էր Վարվառեի մոտ: Ո՛չ. նրան ձգում էր Վարվառեին տեսնելու ցանկությունը: Բայց ինչո՞ւ համար, ինչո՞ւ դարձյալ ինքնախաբեությամբ պարապել, չէ՞ որ վերջ ի վերջո ամեն ինչ պիտի պարզվեր, չէ՞ որ նրա համար այլևս անտանելի էր դարձել անորոշ դրությունը: Ուրեմն, կատարվեց այն, ինչ որ վաղ թե ուշ պիտի կատարվեր...

Այժմ գեթ փարատվեցին նրա կասկածները — Վարվաեն սիրում է նրան: Բայց չէ՞ որ նույն Վարվառեն նրա առջև բաց արավ և՛ այն խոչընդոտները — հոր ինքնասիրությունը, մարդկային օրենքներն և կրոնի կանոնները, Ո՞րն ընտրել — արհամարհա՞նքն, անե՞ծքն, ատելությո՞ւնը, թե՞ մշտնջենական հոգեկան ծանր, մաշող վիշտը, կենդանի մահը, բարոյական ոչնչությունը:

Այստեղ Ռոստամյանի մտքերը շփոթվեցին: Նա մոռացավ իրան և սկսեց մտածել միմիայն Վարվառեի մասին: Միթե կարելի է մի կնոջից պահանջել այնչափ քաջություն... միթե սերը կարո՞ղ է Վարվառեին ստիպել, որ նա մի այնպիսի ծանր զոհաբերություն անի — զրկվի հոր սիրուց, ենթարկվի նրա հավիտենական անեծքին, հասարակության նախատինքին, ծաղրին և ատելությանը: «Հայրս չի կարող տանել այդ ծանր հարվածը, նա շատ է սիրում ինձ», ասաց Վարվառեն:

Սիրո՞ւմ է. ի՞նչ մի բռնակալական սեր է այդ, ի՞նչ սեր է, որ հանուն մի անբախտ և թշվառ կապի, դրդում է հարազատ հորն իսպառ ոչնչացնել յուր միակ դստեր կյանքը: Ո՛չ, այդ — մոլեռանդ հոր եսամոլություն է, մի եսամոլություն, որ, սակայն, ծնողական սիրո անունով թունավորում է զավակի գոյությունը: Մինաս Կիրիլլիչը սիրում է ինքն իրան, յուր հանգստությունն, և ո՛չ երբեք Վարվառեին:

Սպասավոռն արդեն բերել էր նրա պահանջածը: Նա մի քանի պատառ կերակրից դրեց բերանը, մի բաժակ գինի խմեց և լիք շիշը զզվանքով հեռացրեց մի կողմ:

Ի՞նչ է անում այժմ այդ սիրող հայրը արդյոք նախատո՞ւմ է աղջկան, իսկ աղջիկը, նրա առջև չոքած, արտասվալի աչքերով ներումն է խնդրում...

Նա մտաբերեց և՛ Կատոյի խորամանկ աչքերը, չարախնդիր ծիծաղը: Ուրեմն այդ կինը լրտեսել է նրանց: Վերջապես, թաքցնել այսուհետև այլևս անկարելի է: Վաղը, մյուս օրն անզուսպ կինն ամբողջ քաղաքի մեջ հռչակելու է կատարված անցքը, հարկավ, մեկին հինգ ավելացնելով:

Անա՛րգ: Ի՞նչն է այդ կնոջը ստիպում թշնամանալ ուրիշների բախտին: Նախա՞նձը: — Ո՛չ, կա մի այլ պատճառ... Չէ՞ որ մի բանով պիտի արդարացնի յուր հանցավոր խիղճը: Տեր աստված, և այդպիսինե՞րը պիտի դատավոր լինեն Վարվառեի գլխին...

Հյուրանոցը տակավ առ տակավ դատ արկվեց, մյուս սենյակից ձայն չէր լսվում: Սպասավորն անդադար ներս էր մտնում ու դուրս գալիս: Ռոստամյանը վճարեց և դուրս գնաց:

Փողոցում նրա տխրությունը կրկնապատկվեց, ո՞ւր գնալ այժմ: Տո՞ւն վերադառնալ: Ոչ — անկարելի է առայժմ: Ամոթի զգացմունքը դարձյալ գրգռվեց նրա մեջ: Ի՞նչ երեսով նա պիտի հանդիպի Մինաս Կիրիլլիչին: Անշուշտ ծերունին գիտե արդեն, թե ինչու յուր հարևանն այնպես այլայլված դուրս եկավ մեռելոցի:

Թո՛ղ իմանա, թո՛ղ հայտնի լինի և՛ ամենքին: «Ո՛չ ոք, ո՛չ ոք այլևս չի կարող մեզ բաժանել, ո՛չ հասարակության բամբասանքը, ո՛չ օրենքի խոչընդոտներր և ո՛չ Մինաս Կիրիլլիչի պատվասիրությունը, միայն թե Վարվառեն սիրե ինձ այնպես, ինչպես ես եմ սիրում»...

— Ռոստամյան, — լսեց նա հանկարծ մի ծանոթ ձայն, հետ նայեց և կանգ առավ:

Փողոցի մյուս կողմից շտապ քայլերով մոտենում էր մի երիտասարդ պարոն:

Դա Ռոստամյանի ուսանող ընկեր Սարգսյանն էր: Այս երիտասարդի հետ Ռոստամյանը Մոսկվայում համեմատաբար ավելի մոտիկ բարեկամություն ուներ, քան մի որևէ ուրիշի հետ, թեև Սարգսյանն ուսանում էր համալսարանում, իսկ ինքր՝ երկրագործական ճեմարանում: Սարգսյանն ի բնե բարեսիրտ, անկեղծ և մտածող, խոսել սիրող տղա էր: Նրա բուն թիֆլիսեցի ծնողները բավական ունևոր մարդիկ էին, ուստի շատ անգամ նա յուր ստացած թոշակի ավելվածով կարողանում էր օգնել աղքատ ընկերներին: Ի միջի այլոց, նա մի անգամ նեղությունից ազատել էր և՛ Ռոստամյանին, հակառակ վերջինի համառությանը, տալով նրան փոխադարձաբար մի գումար ուսման և բնակարանի վարձն յուր ժամանակին վճարելու համար: Ռոստամյանն, այս օգնությունից հետո, ի սրտե հարգում էր Սարգսյանին և թեև նրանց բարեկամությունը մտերմության աստիճանից տակավին հեռու էր, բայց դեպք եղած ժամանակ Սարգսյանն յուր անկեղծությամբ կարողանում էր մերձենալ նրա սրտին...

— Ո՞ւր ես գնում այսպես մտամոլոր, — հարցրեց Սարգսյանը, բարեկամաբար ժպտալով և երկու ձեռներով սեղմելով Ռոստամյանի աջը:

— Հենց այնպես, զբոսնում եմ, — պատասխանեց Ռոստամյանը:

— Ուրեմն թույլ տուր քեզ ընկերանալ: Զարմանալի է, տոներին ես սաստիկ տխրում եմ անգործությունից: Գնա՛նք միասին:

Նրանք խոսակցելով, անցան դեպի Միքայելյան կամուրջի կողմը: Սարգսյանը հարցրեց Ռոստամյանի առողջության և գործերի մասին, պատմեց յուր դրությունը, հաղորդեց մի քանի նորություններ: Հետո խոսակցությունն անցավ նրանց նախկին ուսումնակիցների վրա: Սարգսյանը սկսեզ մեկին պախարակել, մյուսին քննադատել, մի երրորդի մասին խոսել արհամարհանքով:

— Գիտես ինչ, — ասում էր նա կյանքից հիասթափված մարդու եղանակով. — այս անպիտան կյանքը մարդուս շատ է փչացնում: Նա մի սարսափելի փորձություն է: Այն, ինչ որ ատում էինք ուսանողության ժամանակ, այժմ մեզ շատ հրապուրիչ է երևում, մենք նրանով հափշտակվում ենք: Օրինակ, ես... պարզ զգում եմ, որ օրից օր ընկնում եմ, անկեղծ եմ ասում, ընկնում եմ, Ռոստամյան: Երբեմն նայում եմ ինձ նախկին Սարգսյանի աչքերով և ի՛նչ եմ տեսնում, գիտե՞ս, տեսնում եմ, որ արդեն մինչև ծնկներս, խոզի պես, խրվել եմ կեղտոտ, հոտած ճահճի մեջ և մի փոքր ևս անցնի, պիտի բոլորովին նստեմ: Այդ դեռ ես եմ... կան ինձանից վատերը: Սաթունյանը, այն ծայրահեղ նիհիլիստը, այժմ ծայրահեղ չինովնիկ է դարձել: Մեսրոպյանը, հիշո՞ւմ ես այն մոլեռանդ քարոզչին, որ միշտ ժողովրդի շահերի համար փրփուրը բերանին կխոսեր, երևակայի՛ր, այժմ չի ամաչում ասել, «Ձոհում եմ իմ բոլոր այն ժամանակվա գաղափարները մի կնոջ քաղցր ժպտին»: Ծաղրում է, ծիծաղում է, բամբասում է, է՛հ, ինչ ասես, անում է. մաշում է յուր կոշիկներով պարահանդեսներում դահլիճների հատակը, խանդում է, նախանձում է, աշխատում է վայր ձգել յուր հակառակորդի անունը: Եվ այս բոլորն ինչո՞ւ

համար: — Երբեմն մի կնոջ աչքին լավ երևալու համար: Ախ, Ստեփան, չես կարող երևակայել, թե կին ասած արարածը որքան աղավաղում է մեր բնությունը: Նա ինձ էլ է փչացրել ...

— Կինն աղավաղո՞ւմ է մեր բնությունը, — կրկնեց Ռոստամյանը: — Եվ այդ ասում ես դո՞ւ, որ մի ժամանակ պաշտպանում էիր կանանց:

— Այո՛, պաշտպանում էի, ինչու թաքցնեմ մ՛եղքս, պաշտպանում էի և հիանում այն փիլիսոփաներով, որոնք գոռում ու գոչում են, թե կինը տղամարդի ստրուկն է, թե նա հարստահարում է և այլն, և այլն: Որովհետև մեր բոլորի աշխարհայացքներն ու գաղափարները փոխվել են, ես էլ եմ փոխել իմ համոզմունքը: Բայց ես գտել եմ ճշմարտությունը: Ես պնդում եմ այժմ, որ մենք տղամարդիկս ենք կանանց ստրուկները և ոչ թե նրանք — մերը: Ուսումնասիրի՛ր կյանքի մանրամասնությունները և դու շատ ապացույցներ կդտնես: Ասա, խնդրեմ, որո՞նք են ստրուկի հատկությունն՛երը: Չէ՞ որ կեղծավորությունը, հաճոյախոսությունը, բութ սրախոսությունը, ստախոսությունը, երկյուղը, հլու հնազանդությունը: Այժմ ասա, ո՞վ ո՛րի առջև ավելի է կեղծում, հաճոյախոսում, ստում, ո՞վ ո՛րի կամքին ավելի է հպատակվում կյանքի մեջ — կի՞նը, թե՞ տղամարդը: — Տղամարդը: Ես շատերին եմ ճանաչում, որ հաջողություն ունին կանանց շրջանում լոկ այն պատճառով, որ գիշեր ու ցերեկ կեղծավորում են նրանց, ուղղակի կամ ակնարկություններով գովում են նրանց քիթը, բերանը, աչքերը, հասակը, հլու հնազանդությամբ կատարում են նրանց կամքը: Այլևս չեմ խոսում այն անթիվ հիմարների մասին, որ կնոջ մի ժպիտի համար կրկեսային ծաղրածվի դեր են կատարում: Ահա՛, մտիկ արա այն, տուտուցին, — ավելացրեց Սարգսյանը, Ռոստամյանի ուշադրությունը դարձնելով մի բավական երիտասարդ տղամարդի վրա, որ անցնում էր երկու կանանց հետ: — Ինչո՞ւ նա մեջքից այնպես թեքվում խոսելու ժամանակ և ոչ թե կանայք: Բայց նայի՛»ր, ինչպես կանայք հպարտ, գլուխները բարձր պահած, լսում են, առանց անգամ նրա երեսին նայելու: Իսկ նա հիմարներից չէ. մարդը Թիֆլիսի մեջ հայտնի է ինչպես ամենախելոք դատախազ: Եվ այսպես, կանայք տղամարդկանց ստիպում են նախ մեջքը թեքել, հետո լեզուն, հետո ամբողջ բնավորությունն և հետզհետե ստորացնում են նրանց ու գցում...

Մինչ Սարգսյանը խոսում էր, Ռոստամյանը լուռ խորհում էր նրա ասածների մասին: «Շատ կարելի է, որ քո ասածը ուղիղ է», մտածում էր նա, մերթ ժպտալով և մերթ հավանական կամ բացասական բառեր արտասանելով:

Նրանք արդեն Միքայելյան փոզոցումն էին: Օրը սկսել էր մթնել:

Հանկարծ Սարգսյանը կիսահեգնական եղանակով ասաց.

— Դու էլ բավական փոխվել ես, Ռոստամյան: Առաջ ես քեզ վրա ծիծաղում էի, որ դու, պառաված կույսի պես, աշխարհից հեռացած, փակվել ես տանը: Բայց հետո, երբ մի փոքր կյանքի համն առա, քեզ ամենախելոք մարդն էի համարում և նախանձում էի: Այժմ, եղբայր, տեսնում եմ չէ, քեզ էլ կյանքի հոսանքը փոքր առ փոքր քշում է: Ախ, կանա՛յք, կանա՛յք:

Այս անսպասելի նկատողությունն և խորհրդավոր եղանակը, որով Սարգսյանը կրկնեց «կանայք» խոսքը, Ռոստամ յանին շփոթության մեջ ձգեցին:

— Ես չեմ հասկանում քո ասածը, պա՛րզ խոսիր, Սարգս յան, — ասաց նա հետաքրքրված։

— Լավ, հրեշտակ մի՛ ձևանար։ Ո՞վ է այն կինը, որի հետևից այնպես ընկել էիր նվագահանգիսի երեկո։ Հիշո՞ւմ ես… Այնքան հափշտակված էիր, որ ինձ էլ չնկատեցիր։

— Նա իմ հարևանն է։

— Պսակված է և մարդուց բաժանված, չէ՞։

— Այո, — պատասխանեց Ռոստամյանը լուրջ եղանակով։

— Հը՛մ, ուրեմն գուր չե՞ն խոսում։

— Ո՞վ է խոսում, ի՞նչ են խոսում։

— Ես, ճշմարիտն ասած, ուրիշների ասածներին շատ էլ չեմ հավատում, բայց խոսում են, ի՞նչ արած։ Ճանաչո՞ւմ ես տիկին Բեզիրգանովին, քո տան տիրուհու աղջկան։ Ուղիղն ասած, ես այդ կնոջ երկրպագուների՛ց չեմ, գիտեմ ինչ պտուղ է։ Բայց նա ընդունված է մի լավ ընտանիքում։ Այդ ընտանիքի հետ, անունը մի՛ հարցնիր, ես շատ լավ ծանոթ եմ, այցելում եմ։ Ահա, այնտեղ եմ լսել։

— Բայց ի՞նչ ես լսել։

— Որ դու սիրահարված ես այն կնոջ վրա։ Ես չեմ հավատում, միայն զգույշ կաց թակարդի մեջ չընկնիս, Ստեփան, քեզ նմանները ոտքով ու ձեռքով են ընկնում։ Բայց, կրկնում եմ, չեմ հավատում, որ դու սիրահարվես ամուսնացած կնոջ վրա, այդ դու չես անիլ։

— Իսկ եթե անե՞մ, — հարցրեց Ռոստամյանը, տակավին կարողանալով պահել յուր սառնությունը։

— Այն ժամանակ, է՛հ, ինչ ասեմ, պիտի զգույշ լինել։ Այդպիսի դեպքերում ճարպիկները հետ դառնալու միշտ ճանապարհ են թողնում, եթե ոչ — հետևանքը կարող է վատ լինել …

Այս խոսքերը վիրավորեցխն Ռոստամյանի զգացմունքը։ Նա հասկացավ Սարգսյանի միտքը։ «Ահա, ուրեմն, ինչպես է մտածում ու խորհում նույնիսկ կրթված մարդը»։ — ասաց նա յուր մտքում։ Նա լռեց, Սարգսյանը — նույնպես, զգալով, թե ի՛նչ ազդեցություն արին յուր խոսքերը նրա վրա։ Փողոցի ծայրում նրանք ձիաքարշ նստեցին և վերադարձան։ Այլևս խոսակցությունը չշարունակվեց. Ռոստամյանն առիթ չէր տալիս, թեև Սարգսյանն աշխատում էր մեղմացնել յուր խոսքերի ծանր տպավորությունը։

Արդեն խուլ գիշեր էր, երբ Ռոստամյանն եկավ յուր բնակարանը…

Ճաշի ժամանակ, ճաշից հետո Մինաս Կիրիլլիչը լուռ, անդադար տարօրինակ հայացքներով մտիկ էր անում Վարվառեի շփոթված դեմքին։ Երեկոյան սովորական պահին դուրս եկավ

փողոց, բայց դռներից հեռու չգնաց, կես ժամ անցուդարձ արավ տան առջև, հետո ներս մտավ և փակվեց յուր առանձնասենյակում։

Հաջորդ առավոտը ծերունին կանչեց խոհարարին, օրվա ուտելիքի համար պատվերներ տվեց և, հակառակ մշտական սովորության, այդ մասին չհարցրեց աղջկա ցանկությունը։ Յուր սենյակից նա դուրս եկավ միայն ճաշի ժամանակ, իսկ երեկոյան թեյը խմեց այնտեղ և գնաց այրիի մոտ։ Երկու ժամ անցած, նա հետ եկավ, ավելի հուզված և դարձյալ փակվեց յուր սենյակում։

Վարվառեն հուսաբեկ, սիրտը դառնությամբ լի, լուռ, չէր համարձակվում ուղիղ մտիկ անել հոր երեսին։ Պարզ էր նրա համար, որ հայրը մի բան հասկացել է, ուստի առաջին պահ ամոթն ավելի էր տանջում նրան, քան սիրո հագուրդ չստացած զգացմունքը։ Նա ավելի կցանկանար, որ հայրը պարզեր յուր կասկածը, նախատեր նրան բացարձակ, կամ լռեր։ Հոր անխոսությունն, իմաստալի հայացքները, մերթ ընդ մերթ հառաչելն և, վերջապես, անսովոր խուսափումը, միանգամայն կեղեքում էին դստեր սիրտը։

Սիևնույն ժամանակ, Վարվառեն գիտեր, որ այդ լարված դրությունն երկար տևել չի կարող, վաղ թե ուշ հայրը բացատրություն պահանջելու է, ուրեմն բարվոք է վաղ, քան թե ուշ։

Ի՞նչ պատասխան պիտի տար հորը, սիրո՞ւմ է, թե՞ չէ Ռոստամյանին, եթե հայրը հարցն այսպես պարզ կերպով առաջարկեր։ — Այո, սիրում է։ Բայց կարո՞ղ է նա այնքան քաջություն ունենալ կամ խստասիրտ լինել, որ չխաբի հորն, այն հորը, որի առջև երբեք նա չէր ստել։ Ոչ, թաքցնել յուր երջանկությունը — նա չի կարող։ Իսկ հայտնել... ավելի դժվար է։

— Նա ուժ չի ունենալ հարվածին դիմանալու... — կրկնում էր Վարվառեն անդադար...

Երեկոյան նրա դառնությունն ավելի զորացավ, երբ, յուր սենյակի դռներից նայելով, Ռոստամյանի պատուհանում լուսո նշույլ չտեսավ։ Ո՞րտեղ է նա, արդյոք, ի՞նչ պատահեց նրան, մի գուցե հուսահատությունից յուր գլխին մի փորձանք բերեց։

Ամբողջ երեկո, սենյակի մեջ անցուդարձ անելով, նա չարաչար տանջվում էր այն մտքից, թե ինչու Ռոստամյանին հեռացրեց իրանից հուսահատ դրության մեջ, ինչու այդ տագնապալի րոպեներին հիշեցրեց նրան խոչընդոտների մասին։ Դողդոջուն քայլերով, գունաթափ դեմքով երբեմն նա մոտենում էր գավթի կողմի լուսամուտին և երբեմն փողոցի կողմի լուսամուտին։ Նայում էր դեպի գավիթ, նայում էր դեպի փողոց, և գիշերային մթությունը ահով լցնում էր նրա սիրտը։ Ի՞նչ անել, ո՞ւմ դիմել, ո՞րտեղ գտնել Ռոստամյանին։ Հանկարծ նրա երևակայությունը սկսեց սոսկալի պատկերներ ստեղծել։ Մերթ Ռոստամյանն երևում էր նրան Քուռի ափում, կամուրջի վրա, պատրաստ գետը ձգելու իրան, մերթ արդեն խեղդված, կամ գնդակահար և արյունաներկ կրծքով թավալված խուլ փողոցներից մեկում կամ մի հյուրանոցում։ Վարվառեն խելագարված– հարձակվում է նրա սառն դիակի վրա, բայց արդեն ուշ է, նրա ականջին հնչում են երեք սարսափելի բառեր։

«Պատճառը դու էիր»։

Վայրկենաբար նրա մեջ բուռն ցանկություն հղացավ դուրս վազել, որոնել Ռոստամյանին, գտնել, հետ դարձնել: Թող նա չհուսահատվի, Վարվառեն նրան է պատկանում հավիտյան, այո, հավիտյան, ոչ ոք չի կարող բաժանել նրանց: Նա զոհում է յուր կյանքը... մինչև անգամ... հոր սերը, պատիվը:

Նա հարձակվեց դեպի դռները, նայեց մի անգամ ևս դեպի գավիթ և արդեն պատրաստ էր դուրս գալ, երբ նրա ականջին պատշգամբի մյուս կողմից հասավ խոսակցության թույլ ձայն: Երկու մարդկային ուրվագծեր երևացան հեռվից — մեկն անցավ տանտիկնոջ բնակարանի մյուս կողմը, բաց արավ Ռոստամյանի սենյակն և մտավ ներս: Վարվառեն հառաչելով հետ դարձավ: Նա կենդանի է, այո, ահա՛ նրա ստվերը աղոտ լուսավորված պատուհանի ապակիների վրա: Ուրախության արցունքը թրջեց Վարվառեի այտերը: Նա թեթևացած սրտով մտավ անկողին: Բայց բորբոքված նյարդերն երկար միջոց հանգստություն չէին գտնում...

Նույն դրությունը շարունակվեց երկրորդ օրն և երկրորդ գիշեր: Առավոտը Ռոստամյանը կանուխ դուրս գնաց և չերևաց մինչև կես գիշեր:

Երրորդ օրը ծերունին առավոտը թեյ խմեց, խոհարարին ուղարկեց շուկա, աղախնին ուղարկեց մի ուրիշ տեղ, դռները փակեց և Վարվառեին կանչեց յուր առանձնասենյակը:

— Նստի՛ր, — ասաց նա սառն և հանդիսավոր եղանակով, ձեռով ցույց տալով յուր դեմուդեմի աթոռը, և ինքը, տնային խալաթը հագին, նստեց սեղանի մյուս կողմում:

Նրա այտերր դեղնած էին, ձեռները դողում էին: Վերջին երկու օրվա ընթացքում նա, կարծես, ավելի նիհարել էր ու ավելի ծերացել:

Վարվառեն զգաց, որ հասել է վճռական րոպեն և աշխատեց, որքան կարելի է, զսպել յուր ներքին ալեկոծությունը:

— Վարվառա Մինաևնա, — խոսեց ծերունին հանդիսավոր եղանակով, — ես ձեզ հրավիրել եմ, որ հարցնեմ այն, ինչ որ հարցրի երկու շաբաթ սրանից առաջ, և դուք վճռական պատասխան չտվեցիք: Ասացե՛ք, վերջապես, համաձա՞յն եք ապրել ձեր ամուսնու հետ, թե՞ ոչ:

Վարվառեն ոչինչ չպատասխանեց:

— Համաձա՞յն եք, թե՞ ոչ, — կրկնեց Մինաս Կիրիլլիչն, այս անգամ ամենախիստ դատավորի քննող ձայնով ու շարժումով:

— Պապա... — ասաց Վարվառեն և աջ ձեռով ծածկեց աչքերը,

— Համաձա՞յն եք, թե՞ ոչ, — կրկնեց հայրը:

— Ես այն օրը ձեզ պատասխանեցի...

— Թողե՛ք, աստված սիրեք, այդ փափուկ ձևերը, ձեր քնքշությունն ինձ արդեն ձանձրացրել է: Պատասխանեցե՛ք հարցիս. կամենո՞ւմ եք հաշտվել ձեր օրինական ամուսին Ակիմ Աբրոսիմիչ Միզանդրոնցովի հետ:

— Ո՛չ,

Մինաս Կիրիլլիլի աչքերը փայլեցին: Սակայն զսպեց յուր բարկությունը:

— Ա՞յդ է ձեր վերջին պատասխանը:

— Այո, — արտասանեց Վարվառեն զարմանալի համարձակությամբ, որ ներշնչում էին նրան հոր խստահնչյուն ձայնն և վճռական հարցը:

Ծերունին մի վայրկյան լուռ մտածեց:

— Շնորհակալ եմ ձեր վերջնական պատասխանի համար, — շարունակեց նա, հառաչելով, — շատ շնորհակալ եմ: Այժմ թույլ տվեք հարգելի տիկին, մի ուրիշ հարց ևս առաջարկել ձեզ: — Ես վճռել եմ այս մոտ օրերս ուղևորվել Մոզդոկ, կկամենա՞ք, արդյոք, ինձ հետ գալ...

Ավելի շարունակել հարկավոր չէր. Վարվառեն հասկացավ հարցի բուն բովանդակությունը: Նա գլուխը խոնարհեցրեց կրծքին և ոչինչ չպատասխանեց:

— Մենք չենք կարող Թիֆլիսում մնալ այսուհետև, — ասաց ծերունին, յուր զննող հայացքն ուղղելով աղջկա երեսին, — այո, չենք կարող, պետք է այստեղից գնանք, հասկանո՞ւմ եք, պետք է գնանք շուտով, մյուս օրը, վաղը, հենց այսօր...

Այլևս նա կորցրեց յուր սառնությունը: Նրա ներքին շուրթն ու ծնոտն սկսեցին դողալ և ձայնը զգացվեց: Նրա յուրաքանչյուր մի խոսքն ասեղի պես ցցվում էր Վարվառեի սրտի մեջ: Դուստրը հազիվ կարողացավ զսպել իրան, որ աթոռի վրայից չընկնի հոր ոտների առաջ: Այսպես, ուրեմն, հայրը հասկացել է ամեն ինչ և ուզում է բաժանել նրանց:

— Դուք չե՞ք խոսում, տիկին, — գոչեց ծերունին, — հասկանում եմ պատճառը: Եվ ինչպես չհասկանամ, պարզ է, պարզ... Անամ...

Նա, ատամները կրճտելով, ձեռն ուժգին զարկեց սեղանի ծայրին և ոտքի կանգնեց:

— Հա՛յր... — արտասանեց Վարվառեն թույլ ձայնով:

— Աա, ուրեմն, հարգելի տիկին, չե՞ք հերքում... ուրեմն այն գարշելին, որին ես հիմարություն արեցի իմ տունն ընդունել, խելքից հանե՞լ է ձեզ: Նա՞, այն լի՞րբը... Ախ, եթե ես կիմանայի... Անամոթ աղջիկ, ասա՛, ուշ չէ՞...

Վարվառեի աչքերի առջև խավարվեց ամեն ինչ, նա ցնցողաբար վեր թռավ տեղից և չոքեց հոր ոտների առջև...

— Հա՛յր, սիրելի, բարեսիրտ հայր, մի՛ անիծեք ինձ, խնայեցեք, ո՛չ, ուշ չէ, հայր, մեղավորն ես եմ…

Դառն հեկեկանքը կոկորդում խեղդում էր նրա խոսքերը: Դողդոջուն ձեռներով նա բռնեց հոր խալաթի փեշերը և մոտեցրեց յուր շրթունքներին:

— Հեռո՛ւ կաց, անիծված, հեռո՛ւ, ասում եմ… — բացականչեց բարկությունից խելագարված ծերունին:

Բայց Վարվառեն, հոր փեշերը գրկած, աղերսալի հայացքով նայում էր դեպի վեր, նրա կատաղի դեմքին:

— Հեռացի»՛ր… — կրկնեց հայրը, հոդաթափի ծայրով խփելով աղջկա կրծքին… — Գնա՛ սիրի՛ր նրան, սիրեցե՛ք միմյանց, վայելեցե՛ք… թո՛ղ Քիրիշչիևի պատիվը ցեխի հետ հավասարվի… Թո՛ղ ատեն նրան… Թո՛ղ տեսնողները մատով ցույց տան նրա վրա և զզվանքով երես դարձնեն.., Գնա՛, ես աղջիկ չունիմ… Նա մեռավ ինձ համար, ա՛խ, եթե մեռներ մյուսների հասակում… Ի՞նչ էր անում նա այստեղ, ասա, ի՞նչ էր անում այստեղ այն անամոթը…

— Նա մեղավոր չէ… զուր եք անիծում նրան…

— Մեղավո՛ր չէ, դեռ համարձակվում ես պաշտպանե՞լ նրան: Նա մեղավոր չէ և այստեղից դուրս է վաղում խելագարի պե՞ս, ինձ տեսնելով, չի իմանում որտեղ թաքցնի գլուխը, և մեղավոր չէ: Հարցրու հարևաններին, նրանք կպատմեն քեզ: Դու ինչ դիտես, խեղճ ողորմելի, դու անմեղ ես… կիրքն այնքան կուրացրել է Ջեզ, որ չեք նկատել պատուհանից ձեզ նայող ու ծաղրողներին: Չորանա՛ր քո ծնունդը:

Նա ազատեց յուր փեշերն աղջկա ձեռներից և հեռացավ: Ձեռները փշրտելով, Վարվառեն կանգնած էր պատի տակ: Ուժգին շնչառությունից նրա կուրծքը սաստկությամբ բարձրանում էր և ցածանում: Բայց տակավին ուշքը վրան էր, թեև գունաթափվել էր, որպես մի անշնչացած դիակ: Ի՞նչ ասել, ի՞նչպես արդարանալ, հերքե՞լ, որ չի սիրում Ռոստամյանին, խաբե՞լ ծերունի հորը: — Ո՛չ, այդ անկարելի է և զուր կլինի խաբել: Նրան ամեն ինչ հայտնի է… կամ ինքն է անձամբ պատուհանից լսել նրանց խոսակցությունը կամ մի ուրիշը լսել է և պատմել: Վարվառեն մտաբերեց այն սև պատկերն, որ այն օրը սրընթաց անցավ պատուհանի առջևով: Ո՞վ էր նա:

— Ինձ նման հո՞րն ես անպատվում, ապերախտ աղջիկ, — շարունակեց ծերունին: — Լա՛վ, ասենք, թե ես եմ պատճառը, որ քո ամուսնությունը դժբախտ եղավ, բայց, անիծված, միթե ուրիշ միջոց չունեի՞ր, որ վրեժդ հանեիր ինձանից, միթե միայն այդ խայտառակությո՞ւնն էր մնում ինձ պատժելու համար: Հազար անգամ բախտավոր կլինեի, եթե դու թույն տայիր ինձ, սպանեիր: Իսկ ա՞յժմ… ի՞նչ անեմ, ասա, ի՞նչ անեմ… գնամ, սպանե՞մ այն սատանայի ծնունդին…

— Հա՛յր, — գոչեց Վարվառեն, ձեռները պարզելով դեպի կատաղած ծերունին… — սպանեցե՛ք ինձ, ես ուրախությամբ պատրաստ եմ մեռնել ձեր ձեռքից: Ես հանցավոր եմ, խոստովանվում եմ: Բայց հանցավոր եմ նրանով միայն, որ սիրում եմ… ուրիշ ոչինչ: Ես չեմ ուզում ձեզ սուտ ասել, խաբել, ինչո՞ւ երկրորդ անգամ հանցանք գործեմ: Եթե իմ կամքից լիներ կախված, ես նրան չէի թողնիլ, որ ոտք դնի այստեղ: Բայց… չկարողացա: Ինչո՞ւ բերիք դուք ինձ այստեղ, ինչո՞ւ ինձ և

նրան կրակի մեջ գցեցիք: Ի՞նչ եմ ասում: Ոչ, դուք մեղավոր չեք, այսպես պիտի լիներ և եղավ: Բայց ուշ չէ, երդվում եմ մորս գերեզմանով, որ ուշ չէ, հավատո՞ւմ եք, պապա: Մինչև այս րոպե ինձ միմիայն նրա սերն է հայտնի... ուրիշ ոչինչ: Այժմ մնում է, որ ես մոռացության տամ այդ սերն էլ: Գնա՛նք, պապա, հեռանա՛նք Թիֆլիսից... ես պատրաստ եմ... ես... կմոռա...

Վարվառեն չկարողացավ ավարտել վերջին խոսքը, գլուխը թուլացած ծռվեց դեպի աջ ուսը: Նա անշնչացած ընկավ հատակի վրա:

Մի քանի վայրկյան սառն, ապշած ծերունին նայում էր դստեր անշունչ դիակի վրա: Հանկարծ նրա դեմքը փոխվեց, նա մի խուլ հնչյուն բաց թողեց կրծքից, հարձակվեց Վարվառեի դիակի վրա և ձեռը դրեց նրա ճակատին: Նույն վայրկյանին նա սթափված վեր թռավ տեղից, վերցրեց սեղանի վրայից լիքը շիշն և սկսեց ջուր շփել Վարվառեի գլխին, երեսին, կիսաբաց կրծքին:

Սակավ առ սակավ Վարվառեն ուշքի եկավ, ծանրացած կոպերը բարձրացրեց և անորոշ հայացքով նայեց շուրջը: Նրան թվաց, որ հայրը սենյակից դուրս է գնացել:

Այնինչ ծերունին այդ վայրկյանին, աթոռի վրա նստած, ալեզարդ գլուխր կոների վրա դրած, դառն արտասուք էր թափում աչքերից...

XI

Օրը կիրակի էր: Այրի Նատալիան նստած էր յուր սենյակում, թախտի վրա: Նրա առջև անցուդարձ էր անում Կատոն, զուգված, ամառային բարակ մետաքսյա ուսնոցն ուսերին, գեղեցիկ փետուրով զարդարված բարձր գլխարկր գլխին և ձեռին խաղացնելով շքեղ պարզ-վարգագույն հովանին:

— Ի՛նչ ուզում ես, ասա, Կատո, — խոսեց այրին, գլուխը տրտմությամբ շարժելով, — դու չպիտի այդ բանն անեիր. Ինչ քո գործն էր:

— Ա՛խ, մամա, դու էլ մի մեծ պատմություն շինեցիր իմ խոսքը: Ես խոմ իմ բերանով չեմ ասել, նա ինքը մտիկ տվեց երեսիս զարմացած, ես ծիծաղեցի, հասկացավ: Առանց ինձ էլ նա պիտի հասկանար, դեմ ու դեմ ինքը պատահեց Ռոստամյանին, որ կույր էլ լիներ, պիտի իմանար, թե ինչ է պատահել յուր տանը: էհ, ի՛նչ եմ ասում, հիմա ամբողջ Թիֆլիսին է հայտնի:

— Անիծվի Թիֆլիսդ — գոչեց այրին սրտմտությամբ: — Ո՞վ այսպես շուտ հռչակեց:

— Ա՛յ բան, ա՞յդ ինչ ասել է. Թիֆլիսն ի՞նչ մեղք ունե: Օտար քաղաքներից կռոներր գալիս են, թիֆլիսեցիների անունը խայտառակում ու էլի Թիֆլի՞սն է մեղավոր: Շատ լավ են անում, որ խոսում են, ես էլ եմ խոսում:

Այս ասելով, Կատոն մանրիկ քայլերով հետ ու առաջ էր գնում: Երբեմն նա կանգ էր առնում պատին քաշ արած բարձր հայելու առջև և, կոտրատվելով, նայում էր յուր բարձրադիր «տուրնյուրին», որ նրա կազմվածքին տալիս էր փղքված սիրամարգի տեսք:

— Դու էլի լինո՞ւմ ես նրանց մոտ, մամա, — հարցրեց նա հանկարծ։

— Լինում եմ, բայց շատ քիչ։

— Հըմ, ուրա՞խ է, թե՞ լաց է լինում այդ քո հրաշալի Վարվառա Միևաևևան։

— Դու ծիծաղում ես, Կատո, բայց ծիծաղելի չէ, թե տեսնես — չես ճանաչիլ, ոտքի վրա մեռածի է նմանվում։ Մի քանի օր հիվանդ պառկած էր, երեկ է վեր կացել։ Ինքն ասում է — «ոչինչ», բայց չէ, շատ վատ է դրությունը։ Գիտե՞ս, շուտով գնալու են Թիֆլիսից, — ավելացրեց բարեսիրտ այրին և հառաչեց։

— Էէ՛, ի՞նչ ես ասում։ Ռոստամյանն իմանո՞ւմ է, որ սիրականին փախցնում են։

— Ո՛վ գիտե, ինձ հետ նա չի խոսում, ամաչում է, ես ինքս էլ քաշվում եմ խոսք բանալու։ է՛հ, Կատո, ճշմարիտ է, չեմ հավանում նրա արածը, բայց մեղքս գալիս է խեղճ տղին։

Այն օրից հետո քանի գնում, մաշվում է, ցերեկները տանը չի նստում, չորս օր իմ մոտ չճաշեց, հետո էլի սկսեց։ Խե՛ղճ տղա…

— Թող կորչի քո խեղճ տղան է՞է, — գոչեց Կատոն արհամարհանքով։

Պատշգամբի վրա երևաց Լազար Մակարիչը, մաքուր հագնված, զուգված, զարդարված, փայլուն «ցիլինդրը» գլխին, լայն կզակր նոր սափրած և սև հաստլիկ ընչացքը ոլորած։

— Ահա, ես էլ եկա, բարով Նատալիա Պետրովնա, — գոլեց նա, ուրախ և զվարթ դեմքով ներս մտնելով, — Կատո՛, քեֆ արա, ամառանոցը վարձեցի Բորժոմում, կամքդ կատարվեց, այս ամառ այնտեղ ենք անցկացնում։ Նատալիա Պետրովնա, դուք էլ պետք է գաք մեզ հետ։

— Վարձեցի՞ր, — գոչեց Կսոոոն զայրացած, — քեզ ո՞վ ասաց, որ այդպես շտապես, կարելի է, ես Բորժոմ չէի ուզում գնալ, մի ուրիշ տեղ էի գնալու։

— Հեր օրհնած, խոմ ինքդ ասացիր, որ Բորժոմում պիտի ապրենք այս ամառ։

— Ասացի, բայց չասացի որ իսկույն վազես ու վարձես ապրիլ ամսին։ Այս տարի Բորժոմ գնացողներից շատերն ուրիշ տեղեր են գնալու։ Եթե նրանք չգնան, ինչի՞ս է պետք Բորժոմը։

— Դե լավ, մեկը կգնա, մի ուրիշը կգա, մեր ինչ գործն է, մենք ամառանոց ենք գնում, խոմ մարդ տեսնելու չենք գնում։

Նատալիա Պետրովնան, որ այս խոսակցության ժամանակ լուռ նայում էր մերթ աղջկա, մերթ փեսայի երեսին, գլխով հավանական նշան արավ վերջինին։

— Դու ինձ այն ասա, վարձել ու վերջացրե՞լ ես, փող տվե՞լ ես այս գլխից։ — հարցրեց Կատոն։

— Ամառանոցը Մախսուդովինն է, Մախսուդովն էլ իմ բարեկամն է, մեր խոսքը խոսք է, հետ չենք կանգնիլ։

— Նո՛ւ, ուրեմն, եթե չուզեցի — չենք գնալ, պրծավ, գնաց։ Հիմա դու ինձ ասա, հենց դրա համա՛ր ես հետևիցս վազել, եկել, թե՞ ուրիշ գործ ունիս։

— Ուրիշ էլ ի՞նչ գործ, առաջին անգամ քեզ Բորժոմ եմ տանում, քի՞չ բան է։

— Ո՞վ է ասում, որ մեծ բան չէ, — ասաց Կատոն հեգնորեն, — բայց, ների՛ր, այժմ ես Բորժոմիդ համար մտածելու գլուխ չունիմ։ Դու նստիր մամայի մոտ, ես իսկույն կգամ։

— Ո՞ւր ես գնում, — հարցրեց Լազար Մակարիչը զարմացած։

— Վաղը երգչուհի Սալավեևան գնում է, այսօր նա գա_ու է տիկին Սաթոյանի մոտ, ես ուզում եմ նրա հետ ծանոթանալ։

— Պրծավ, գնաց, — արտասանեց Լազար Մակարիչը, հեգնաբար ժպտալով։

— Ի՞նչ ես ուզում, ի՞նչ, — գոչեց Կատոն բարկացած, աչքերի բիբերը սաստիկ խաղացնելով։

— Ուզում եմ, որ որտեղ գնում ես, ինձ հետ գնաս, — պատասխանեց Լազար Մակարիչը դարձյալ կատակի ձևով։ — ես խանդոտ եմ, հասկանո՞ւմ ես, — ավելացրեց նա նույն եղանակով։

— Ասիացի, — գոչեց Կատոն, ծաղրելով, — այդ էր պակաս, որ հետևիցս ընկած, տանես ինձ այստեղ ու այնտեղ։ Բան ասաց, խանդոտ եմ. վաղն էլ կասես, հավլաբարցու պես, թե տանը նստիր ու մի դուրս գնար։ Ամաչի՛ր, ամաչի՛ր, Լազրո, լսողներն ի՞նչ կասեն։ Այն հին ժամանակներն էր, որ մարդը կնոջ գլխի տերն էր, հիմա ուրիշ ժամանակ է, հասկանո՞ւմ ես։

— Դրուստն ասեմ, ինձ համար հին ժամանակները հիմիկվանից շատ ու շատ լավ էին։

Կատոն աչքերի բիբերն ավելի կատաղի ոլորեց դեպի ամուսնու կողմը։

— Ի՞նչ... ես կալատոզի, դաբաղի, թե՞ կոշկակարի աղջիկ եմ քեզ համար, — գոչեց նա վրդովված։ — Ափսոս... դու էլ, այ, այնպիսի կնիկ պիտի ունենայիր, քեզ խրատեր, — ավելացրեց նա, գլուխը խորհրդավոր կերպով շարժելով դեպի հարևան բնակարանի կողմը, — խոմ խեղճ մարդն աղջկանից չէր հեռանում, տեսա՞ր ինչ արավ։

— Դե լավ, հերիք է, Կատո, — մեջ մտավ այրի Նատալիան, խրատելով յուր աղջկան, — նա քեզ խոմ մի բան չասաց, հանաք արավ։

— Թող մյուս անգամ քաղաքավարի հանաք անի, — ասաց տիկինը հանդիմանական եղանակով, — թե չէ, դու էլ կկարծես, թե ես երկար թրև եմ գալիս դրսերում։ Գնա՛նք, — դարձավ նա ամուսնուն, — գնա՛նք, մի քիչ կառքով ման գանք, հետո տասներկու ժամին ինձ կտանես տիկին Սաթոյանի տունը։

Աղջիկն ու փեսան դուրս գնալուց հետո, այրին մի երկար հառաչանք արձակեց կրծքից և ինքն իրան արտասանեց.

— Երանի թե դուք մինչև մահ հաշտ մնաք:

Մի քանի ժամ անցած, Պետրեն՝ այրիի ծառան, սկսեց ճաշի սեղանը պատրաստել: Առավոտյան Ռոստամյանը այրիի հարցին պատասխանել էր, թե տանն է ճաշելու, բայց արդեն երրորդ ժամն էր, նա դեռ չէր վերադարձել տուն: Վերջապես, նա եկավ, և այրին անմիջապես հրավիրեց նրան ճաշի:

Ռոստամյանը հոգնած էր, քրտնած, կոշիկներն և վարտիկի եզերքը փոշոտ:

— Շա՞տ եք ման եկել, — հարցրեց այրին:

— Գնացել էի հեռու, քաղաքից դուրս, — պատասխանեց Ռոստամյանը հոգնած ձայնով:

Նա սկսեց շտապով ճաշել: Այրին ագահությամբ դիտում էր նրա դեմքը գաղտնի կերպով: Թվում էր նրան, որ յուր երիտասարդ բնակիչը վերջին օրերը ոչ միայն նիհարել է, այլև ծերացել: Արդարև, նրա լայն ճակատի կողմերում, քունքերի մազերի մեջ ճերմակների թիվը, կարծես, ավելացել էր: Բերանի անկյունների խորշերը մի փոքր ևս խորն էին ընկել, իսկ կարճ խուզած նոսր միրուքն ավելի նկատելի էր կացուցանում նրա նիհարությունը:

Ճաշից հետո, Ռոստամյանը, հակառակ սովորականին, մնաց այրի Նատալիայի մոտ: Նա նստեց թախտի վրա, ծխախոտը ձեռին: Այրին զգում էր, որ նա բան ունի ասելու: Իրավ, Ռոստամյանը մտադիր էր յուր բարեսիրտ տանտիկնոջ հետ խոսակցություն բանալու... Վարվառեի մասին: Այն նշանավոր օրից հետո անցել էր ամբողջ տասներեք օր, իսկ Ռոստամյանը տակավին չէր տեսել Վարվառեին: Հինգ-վեց օր շարունակ նա ցերեկները թափառում էր դրսերում: Վերջը նրա համբերությունը սպառվեց, և նա վճռեց անպատճառ տեսակցել Վարվառեի հետ: Իսկ Վարվառեն չէր երևում ո՛չ պատշգամբի վրա և ո՛չ լուսամուտների առջև: Ի՞նչ պատահեց արդյոք, մի գուցե հիվանդ է: Երևի հիվանդ է, եթե ոչ գոնե կերևար դրսում: Միայն մի անգամ Ռոստամյանը կանթեղի լուսով նշմարեց Վարվառեին լուսամուտի առջև, բայց նրա կասկածը չփարատվեց հիվանդության մասին:

Մի թեթև կողմնակի խոսակցությունից հետո, Ռոստամյանը հաջողություն ունեցավ այրիի հետ խոսք բանալու յուր ցանկալի առարկայի մասին: Նա շատ լավ գիտեր, որ այրիին ամեն ինչ հայտնի է, բայց դեռևս չէր համարձակվում նրա հետ պարզ խոսել: Իսկ այրին քաղաքավարությամբ լռություն էր պահում խորհրդավոր հարցի մասին:

— Մինաս Կիրիլլիչն էլ չի երևում, — ասաց Ռոստամյանը կեղծ անտարբերությամբ:

— Ինչո՛ւ, — պատասխանեց այրին, — մեկ-մեկ դուրս է գալիս տնից:

— Դուք գնո՛ւմ եք այնտեղ, — առաջ տարավ Ռոստամյանը յուր խոսքը նույն անտարբերությամբ:

— Երեկ այնտեղ էի։

— Հիվանդ խոմ չե՞ն։

Այս հարցը բաց արավ այրի Նատալիայի լեզուն։ Նա, հառաչելով, տնքտնքալով, սկսեց նկարագրել յուր կենողների դրությունը։ Հայրը խիստ տխուր է, իսկ աղջիկը ոչ հիվանդ է հիվանդի պես, ոչ էլ առողջ։ Բայց այս վերջին օրերը Վարվառեն մի գլուխ մաշվում է։

— Պառկա՞ծ է, — հարցրեց Ռոստամյանը դեռևս զսպելով իրան։

— Մի քանի օր պառկած էր, բայց հիմա ոտքի է։ Ռոստամյանը ներքին հուզմունքից շրթունքը կծեց։

— Երեկ Մինաս Կիրիլլիչը ինձ հայտնեց, որ շուտով դուրս են գալու իմ տնից, — շարունակեց այրին։

— Նոր բնակարա՞ն են տեղափոխվում, — հարցրեց Ռոստամ յանը։

— Ոչ, գնում են, Ստեփան Գրիգորիչ։ — Ո՞ւր։

— Չեմ իմանում։ Չեն ուզում, որ Թիֆլիսում մնան։

— Ե՞րբ են գնալու, — հարցրեց Ռոստամյանը հազիվհազ կարողանալով ընդունել այդ անսպասելի հարվածը։

— Դեռ հայտնի չէ. Մինաս Կիրիլլիչը որտեղից որ է, փող պիտի ստանա. հենց որ ստացավ, կգնան։ Բայց, ավելացրեց այրին, գլուխը խորհրդավոր կերպով շարժելով, — դժվար թե շուտով կարողանան գնալ։ Բժիշկն ասել է, որ Վարվառեն այժմ չի կարող երկար ճանապարհորդություն անել... վնաս է...

Ռոստամյանը գունաթափվեց։ Այդպես, ուրեմն, նա բժշկվում է, կնշանակե — իսկապես հիվանդ է և գուցե — վտանգավոր։ Այլևս Ռոստամյանը չշարունակեց յուր հարց ու փորձը. նա խոսակցության նյութը փոխեց, մի քանի րոպե ևս մնաց և հետո գնաց յուր սենյակը։

Շտապով նստելով սեղանի մոտ, նա սկսեց գրել մի նամակ Վարվառեի անունով։ Նա աղերսում էր Վարվառեին — թույլ տալ մի կերպ, գեթ մի կես ժամով տեսնվել նրա հետ։ Նամակը վերջացրեց, ծրարեց, մնում էր ուղարկելու միջոցը գտնել։ Ռոստամյանը նախ մտածեց փոստով ուղարկել, բայց այդ կասկածելի մի միջոց էր. նամակը կարող էր անցնել Սինաս Կիրիլլիչի ձեռքը, այնուհետև հետևանքը պարզ էր։ Երկու ամբողջ օր, նամակը գրպանում, Ռոստամյանը դարս էր գնում և ներս գալիս։ Երրորդ օրն, առավոտը նա տեսավ, որ ծերունին դուրս գնաց։ Նա լուսամուտից նայեց ծերունու հետևից և երբ վերջինն անհայտացավ, նա դուրս եկավ պատշգամբ։ Մատրենան ստեպ-ստեպ անց ու դարձ էր անում խոհանոցից դեպի սենյակներն և հետ։ Ռոստամյանը որսաց հարմար վայրկյան և մատով կանչեց պառավին յուր մոտ։

— Մատրենա, քեզ մի խնդիր ունիմ, պիտի կատարես, — ասաց նա, աղախնին տանելով պատշգամբի անկյունը։

— Հրամայեցե՛ք, — ասաց ռուս պառավը, ուրախանալով, որ մի այնպիսի երիտասարդ գեղեցիկ պարոն խնդիր ունի դեպի նա։

— Ահա, այս թուղթը հենց այս րոպեիս հասցրու Վարվառա Մինաևնային։ Բայց ոչ ոք չիմանա։ Բռնի՛ր։

Այս ասելով, Ռոստամյանը պառավի մի ափում սեղմեց ծրարը, մյուսում մի թղթադրամ։ Պառավն երկմտությամբ նայեց նրա երեսին և անշարժ մնաց։

— Դեհ, գնա , ոչ ոք չիմանա, հասկանո՞ւմ ես, ոչ ոք։

Պառավը խորհրդավոր կերպով այս ու այն կողմ նայեց և քայլերն ուղղեց դեպի յուր տիրուհու սենյակը։

Ռոստամյանը մտավ ներս, երեսնիվայր պառկեց անկողնու վրա և խորասուզվեց մտածողության մեջ։ Ի՞նչ կպատասխանե, արդյոք, Վարվառեն կընդունե՞ իրեն, թե՞ ոչ, և ի՞նչպես կընդունե, ո՞րտեղ։ Յուր տան մեջ — չի կարող, Մինաս Կիրիլլիչն արթուն պահնորդի պես հսկում է, այժմ յուր աղջկա յուրաքանչյուր քայլր և միայն հսկում է, թե՛ տանջում է նրան յուր հարց ու փորձով, թե՛ նախատում է առավոտ ու երեկո կամ գուցե ավելի խիստ է վարվում կամ գուցե, յուր աղջկա համարձակությունը պատմելու համար, բարբարոսական միջոցներ է գործադրում։ Արդյոք, մի մարդ, որի մեջ պատվասիրությունր հիվանդություն է դարձել, կարո՞ղ է զսպել յուր կատաղությունը հարազատ դստեր դեմ, երբ այդ դստեր վարմունքը նա այնչափ դատապարտելի, այնչափ հանցավոր է համարում։ — Ո՛չ, ամենևին։ Նա չարաչար կպատժի հանցավորին։ Եվ նա ուրիշ կերպ չի կարող վարվել, քանի որ այս է պահանջում նրա աշխարհայացքը, նրան շրջապատող ամբոխը։ Ամբոխը, որի կարծիքի առջև Մինաս Կիրիլլիչը դողում է, սարսափում է, ստրկանում է մինչև գետին։ Ինչո՞ւ, որովհետև նա է նրա միակ անսխալ դատավորը, նա է նրա մտքի և սրտի ղեկավարը։ Սեփական խիղճը, խելքի ինքնուրույնությունը մի կրավորական տարր է նրա մեջ, որ ենթարկված է ուրիշների հայացքներին։ Այո, զարհուրելի է հանրության բարոյական լուծր մեկի վրա. նա մի բռնակալ է, որ անհատի մեջ անզգայաբար ջնջում, ոչնչացնում է ամենայն մի ինքնուրույնություն։ Ահա ինչու, երբ մի անհատ հանդգնում է ընդդիմանալ այդ հանրային բռնակալության, ամբոխը մատնացույց է անում նրա վրա, գոռալով.

— Ահա հանցավորը, որին պիտի պատժել, ահա խելագարը, որի ոտները և ձեռները պիտի շղթայել, պատժեցե՛ք, խեղդեցե՛ք, դո՛ւրս գցեցեք ձեր շրջանից, որովհետև նա համարձակվում է բողոքել մեր նախապաշարմունքների և սնահավատության դեմ...

Կո՛յր մոլեռանդ դատավոր, որ միշտ ուղեղի մի կողմովն է խորհում և դատում։ Իրավունք ունի։ Թո՛ղ դատի և դատապարտի, բայց ո՞չ ապաքեն օրենքներն ևս անհատներն են ստեղծում, ո՞չ ապաքեն եղել է ժամանակ, որ ներկա ավանդություններից շատերը, շատ շատերը բացառություն և դատապարտելի բացառություն էին համարվում և նույնպես պատմվում էին

ամբոխի կողմից: Եվ միթե միևնույն այս դեպքում այն, ինչ որ համարվում է այժմ հանցանք, ապագայում չպե՞տք է դառնա օրենք: Մի՞թե մի ոք կարո՞ղ է դադարեցնել բնության անընդհատ շարժվող մեքենայի անիվը ...

Այս մտքերի ծանրության ներքո Ռոստամյանը ոտքի կանգնեց, նայեց դեպի գավիթ: Արդեն անցել էր մի ամբողջ մամ, բայց Վարվառեից պատասխան չկար: Յուրաքանչյուր րոպե նա սպասում էր աղախնին: Անցավ երկու, երեք ժամ ևս. պատասխան չկար: Տիրեց տխուր երեկոն: Գավթում արդեն մութն էր, իսկ Վարվառեի պատուհանում լույս չէր երևում: Ի՞նչ անել, ո՞ւմ դիմել: Մի՞թե Վարվառեն այնքան հիվանդ է, որ չի կարող գեթ մի քանի տող պատասխան գրել: Մի գուցե նա չի ուզում պատասխանել... մի գուցե վճռել է... մոռացության տալ: Շատ հավանական է, չէ՞ որ նա «սիրում է հորը»:

Գիշերվա կիսին մոտ էր, այնինչ Ռոստամյանը, դռները բաց թողած, անցուդարձ էր անում պատշգամբի կողմի սենյակում: Նա դեռ հույս ուներ մի լուր ստանալու... մերթ ընդ մերթ դուրս էր գալիս պատշգամբ, հուսալով մի կերպ հանդիպել ռուս աղախնին: Բայց խոհանոցի ճրագն ևս վաղուց հանգցրած էր: Պատշգամբի վրա տիրում էր մի հուսահատիչ խաղաղություն: Մռայլ խավարն աի էր ազդում նրա վրա. նրա սիրտը, կարծես, գուշակում էր մի նոր դժբախտություն: Թվում էր նրան, որ չար օրհասն արդեն հավիտյան զրկել է նրան Վարվառեի տեսությունից: Եվ այլևս հույս չուներ մի լուր ստանալու: Ուստի դռները ծածկեց, հագուստը հանեց և պառկեց անկողին:

Տաժանելի էր այդ գիշերը նրա համար: Ներկան և ապագան մի անթափանցելի քաոս էին ներկայացնում նրա առջև: Ի՞նչպես պատահեց այդ բոլորն, ի՞նչպես հղացավ նրա մեջ և զարգացավ այդ զգացմունքը: Չէ՞ որ կար ժամանակ, երբ նրան ծիծաղելի կթվար, եթե մեկը գուշակեր նրա այն դրությունը, որի մեջ գտնվում է այժմ: Այո՛, կյանքը մի նրբիմաստ, անվերծանելի երևույթ է. որքան խորն ես թափանցում նրա մեջ, այնքան նա գաղտնախորհուրդ է դառնում: Կարո՞ղ էր նա երեք ամիս առաջ երևակայել, թե յուր խաղաղ, անդորր, միատեսակ և ձանձրալի դրությունն այսպես արմատապես պիտի փոխվի: Եվ ի՞նչ է այս զգացմունքը. ի՞նչ մի աներևույթ զորություն է, որ այնքան բռնակալ է և անհաղթելի: Սիրել և չհուսալ, որ երբևիցե կարող ես վայելել — ոչ, սրանից ավելի ծանր տանջանք երևակայել անհնարին է: Չարչարված նյարդերին գեթ մի երկու ժամ հանգիստ տալու համար, Ռոստամյանն աշխատում էր մոռանալ յուր ծանր մտքերը — չմտածել բոլորովին կամ մտածել այլ բաների վրա: Եվ բորբոքված երևակայությունը քանի մի րոպե նրան, ներկայից անջատելով, տարավ դեպի հեռու, դեպի յուր խորին անցյալը: Հիշեց նա յուր մայրենի քաղաքն, յուր ծնողներին, յուր մանկությունը: Ահավասիկ նրանց աղքատիկ տունն, ահա այն ընդարձակ գավիթն, ուր նա ծառերի ստվերում խաղում էր յուր միակ քրոջ հետ, որ այժմ ամուսնացած է և ապրում է մի գավառական քաղաքում, և յուր կրտսեր եղբոր հետ, որ մեռավ մանուկ հասակում: Ահա նրա նիհար, աղքատության լուծի ներքո տանջված, գեզեցկադեմ մայրը, ահա նրա, արդեն ալեխառն մազերով, միջահասակ, բուն ասիական հագուստով հայրը, որ յուր ամուսնուց ամբողջ քսան տարով մեծ էր: Ո՛րքան մոլեռանդ քրիստոնյա էր այդ մարդը — առավոտ և երեկո եկեղեցի հաճախող, սուրբ գրքերի ընթերցանությամբ հափշտակվող: Ռոստամյանը մտաբերեց և՛ այն ձմեռային երեկոները, երբ մի կողմում մայրը գլուխը քաշ կար էր անում, մյուս կողմում հայրը, պատի տակ ծալապատիկ նստած, մեջքը բարձին թեքած, ավետարան կամ աստվածաշունչ էր

կարդում բարձրաձայն: Իսկ ինքն ու քույրը սենյակի մի անկյունում դաս էին սովորում կամ խաղում էին: Երբեմն նա թողնում էր դասը, նստում էր հոր մոտ և լսում էր նրան: Նա այժմ ևս պարզ հիշում է հանգուցյալի անհողդողդ, միահնչյուն ձայնը, որ մերթ ցածրանում էր և մերթ բարձրանում, այն ժամանակ, երբ նա կարդում էր աստվածաշնչի ոգևորիչ հատվածները:

Հիշեց Ռոստամյանն այդ հատվածներից շատերը, հիշեց և այն դարձվածները, որոնք նրա ականջին հնչում էին ավելի հաճախ և որոնց հայրը կարդում էր խորհրդավոր ձայնով և առանձին շեշտելով:

Հանկարծ նա սարսափած վեր թռավ անկողնուց և նստեց:

«Ընդ, առնակնոջ ամենևին մի՛ նստեր», — արտասանեց ինքն իրան:

Ապա նա, ձեռը դնելով ճակատ ի վրա, հիշեց և մի այլ դարձված.

«Կին արամբի ի կենդանի այր յուր կապյալ է օրինոք»:

Ահա ո՛րտեղ է սկիզբն և աղբյուրը, ահա ինչով պիտի արդարացի համարել Մինաս Կիրիլլիչի և մյուս բոլորի նախապաշարմունքները: Ինչո՞ւ մեղադրել նրան, ինչո՞ւ անվանել նրան բռնակալ մարդ, անխիղճ հայր:

— Ինչո՞ւ, — կրկնեց Ռոստամյանը, — քանի որ ես եմ, որ հանդգնում եմ ջնջել այս դարավոր պատգամը:

Այո, հակառակորդը զորավոր է, անհաղթելի, դա դարավոր ավանդության և օրենքի անքակտելի կապանքն է... Այս վաղուց հայտնի է Ռոստամյանին: Բայց սուրբ գրքից հանգուցյալ հոր բերանով արտասանվաօ այդ պատգամը, որ նա այնպես պարզ հիշեց, մի առանձին երկյուղ էր ազդում նրա վրա: Երկար ժամանակ նա տանջվում էր անկողնի մեջ, իսկ առավոտյան լույսն արդեն սկսել էր թափանցել պատուհանից...

XII

Ուշաթափվելուց հետո, Վարվառեն նույն օրն ու գիշերը զգում էր սաստիկ գլխացավ: Գլխացավն անցավ, և նրա ամբողջ մարմնին տիրեց մի անսովոր թուլություն: Բայց նա ուշադրություն չէր դարձնում յուր տկարության վրա, թեև երբեմն երկար չէր կարողանում ոտքի վրա մնալ: Կյանքը, որ մի քանի օր առաջ այնքան հրապուրելի էր դարձել, այժմ երևում էր նրան մռայլ մառախուղով շրջապատված: Ապագան ոչինչ ուրախություն չէր ներշնչում սկսած այն րոպեից, երբ նա հայտնեց յուր հորը, թե համաձայն է հետևել նրան — դուրս գալ Թիֆլիսից: Նա գիտեր, որ հոր վճիռն անդառնալի է. եթե ինքը չհամաձայնվի, ծերունին կթողնի նրան և կգնա միայնակ: Թե ո՛ւր կգնա, աստված գիտե, բայց Վարվառեն զգում էր միայն, որ այնուհետև այլևս չպիտի տեսնի հորը: Գործին մի այլ ընթացք տալ — այլևս անկարելի էր. մնում էր երկու ելք — կամ հետևել հորը հագուրդ չստացած սիրո հավիտենական տանջանքը սրտում, կամ հետևել Ռոստամյանին և դառնալ հայրասպան: Երկար խորհելու ժամանակ չկար, պետք էր ընտրել այս երկու ճանապարհից մեկը, և նա վճռեց ընդունել առաջինը — յուր տանջանքը:

— Ո՛չ, երբեք սերն ինձ չի ստիպիլ ձեռք բարձրացնել ծերունի հորս վրա, — կրկնում էր Վարվառեն անդադար։

Եվ կրկնում էր ո՛չ թե հուսահատված մարդու այն անվեհերությամբ, որ արտահայտում էր խրոխտ, անդառնալի հաստատակամություն, այլ որպեսզի կարողանա յուր վճռին հավատարիմ մնալ մինչև վերջին սարսավելի րոպեն։ Դա մի տեսակ խրախույս էր, որ նա տալիս էր ինքն իրան, աշխատելով, հանուն որդիական սիրո և պարտաճանաչության, զսպել մի ավելի զորավոր սեր։ Բայց եթե նա կարող էր վերջինի վրա մի վճռական հաղթություն գործել, զոհելով յուր երջանկությունը հոր պատվասիրությանն, ապա ի՞նչ անել մի զարհուրելի հանդիմանության դեմ։ Դա Ռոստամյանի վշտահար պատկերն էր, որ, կանգնած նրա աչքերի առջև, վերջին հուսահատությամբ գոչում էր, «Իսկ ե՞ս, մի՞թե դու, որ այդքան ցավում ես մի ծերունու հանգստության համար, պիտի զոհե՞ս մի երիտասարդ կյանք»։

Ահա ինչու Վարվառեն, վճռած լինելով հետևել հորը, միևնույն ժամանակ, տակավին տատանման մեջ էր։ Ի՞նչ կանի Ռոստամյանը, կարո՞ղ է կրել այդ հարվածը, կարո՞ղ է մոռանալ։

Այս մտքերից տանջվելով, Վարվառեն մի երեկո անցուդարձ էր անում յուր սենյակում, բարակ տնային չթյա հագուստով։ Պատուհաններն ու դռները փակ էին, դրսում եղանակը հով էր, իսկ սենյակի մթնոլորտը ծանր էր և տաք։ Նա բաց արավ փողոցի կողմի պատուհանի փեղկերից մինը, կանգնեց երեսը դեպի դուրս մի փոքր մաքուր օդ ներշնչելու։ Փողոցային օդի հով հոսանքը թեթև շոշափեց նրա տաքացած գլուխն ու կիսաբաց կուրծքը, նա զգաց արթնացուցիչ զովություն։

Երեկոն դեռ այնքան ուշ չէր, լսվում էին ձիաքարշի զանգակների հնչյունները, հեռվում անցուդարձ անող կառքերի դղրդյունը և մարդկային խուլ ձայները։ Իսկ ավելի հեռվից թույլ կերպով լսվում էր գարնանային հեղեղներից և լեռնային ձյուների հալոցից հորդացած Քուռ գետի սուր հոսանքը։ Մի ինչ-որ գրավիչ և, միևնույն ժամանակ, ահավոր ազդեցություն էր անում Վարվառեի վրա ընթացող ջրի ձայնը, որ լսվում էր խավար մթնոլորտի մեջ։ Բավական միջոց նա, անշարժ կանգնած, ականջ էր գնում այդ ձայնին։ «Ո՛րքան դժբախտների կյանք է կլանել այդ Քուռը», — անցավ հանկարծ նրա մտքով։ Նա գլուխը դուրս հանեց պատուհանից, որ այլ աղմուկների միջից ավելի որոշ լսի Քուռի հոսանքը։ «Ի՛նչ սարսափելի ձայն ունե, շարունակեց նա յուր մտքում, ջրերը շատացել են, ալիքները պղտոր են և կատաղած... Սի րոպեում կարող են խեղդել... Ահա՛ որտեղ կարելի է հանգստություն գտնել։ Մի րոպե, և ամեն ինչ կվերջանա»...

Նա դեռ ականջ էր գնում, մի վայրկյան նա մտիկ արավ դեպի վայր, փողոցի սալահատակին, որ հազիվ հազ երևում էր։ «Ինչո՛ւ Քուռի մեջ. մահը այստեղ էլ հեռու չէ ինձանից, մի թեթև շարժում անեմ, և սալահատակի վրա կընկնի իմ անշնչացած դիակը»։ Այդ վայրկյանին նրա գլուխը պտտեց, նա սարսափած հետ քաշվեց։ Միևնույն վայրկյանին նա յուր մեջքի վրա զգաց մի սառնություն, և նրա մարմնով անցավ թեթև դողոց։ Զով օդի ազդեցությունն էր այդ, որ մինչև այդ րոպեն ախորժելի էր նրա համար։ Նա պատուհանի փեղկը ծածկեց և հեռացավ դեպի սենյակի ներսը։

Մի ժամ անցած, Վարվառեն մտավ անկողին: Տաք վերմակի ներքո մեջքի սառնությունն ավելի զգալի դարձավ, նա սկսեց դողալ: Երկու ամբողջ ժամ տենդից նրա ատամները սաստիկ զարկվում էին իրար: Հետո նա զգաց ախորժելի ջերմություն և թմրեց:

Առավոտը Վարվառեն, զարթնելով, կամեցավ հագուստը հագնել: Բայց դեռ անկողնից չբարձրացած, նրա գլուխը սաստիկ պտտեց, և նա անզորացած կրկին պառկեց: Ոտից ցգլուխ նա զգում էր անհաղթելի թուլություն, իսկ ոսկորների մեջ մի ծանր ցավ: Մի ժամ անցած, ներս մտավ աղախինն, իմանալու, թե տիրուհին կկամենա՞ արդյոք, երեսը լվանալ: Պառավը զարմացավ, երբ տեսավ, որ տիրուհին դեռ պառկած է, այնինչ նա սովորաբար զարթնում էր ամենից վաղ:

— Պարոնն արդեն թեյ է խմել և յուր սենյակումն է, — հայտնեց պառավը:

— Շա՛տ լավ... հավաքի՛ր սեղանը, Մատրենա, ես թեյ չեմ խմելու, — ասաց Վարվառեն, աչքերը դժվարությամբ դարձնելով դեպի աղախինը:

— Ինչո՞ւ... Տեր աստված... դուք, կարծես, հիվանդ եք, տիրուհի, — գոչեց պառավը, մոտենալով նրան և համարձակ յուր աջ ձեռը դնելով նրա ճակատին: — Իսկ և իսկ հիվանդ եք, տիրուհի, աչքերդ կարմրած են, ճակատդ կրակի պես այրվում է: Գնամ, այս րոպեիս Մինաս Կիրիլլիչին ասեմ:

— Կա՛ց, Մատրենա, ո՛չ, մի՛ ասիր, ես... ոչինչ... մի քիչ թույլ եմ, շուտով կվերկենամ... Դու գնա, ջուր բեր, որ երեսս լվանամ...

Աղախինն իսկույն կատարեց նրա հրամանը:

Վարվառեն նստեց անկողնի մեջ, աշխատելով զսպել յուր թուլությունը: Քանի մի անգամ այտերն և ճակատը սառը ջրով շփելով, նա անզորացած դարձյալ պառկեց, երեսը դարձրեց պատին և աղախնին ձեռով նշան արավ, — որ հեռանա:

Մինաս Կիրիլլիչն յուր օրերն անց էր կացնում դարձյալ յուր սենյակում առանձնացած: Երբեմն նա մինչև անգամ թեյ խմելու կամ ճաշելու ժամանակ ևս չէր դուրս գալիս: Աղախինն ամեն ինչ տանում էր նրա սենյակն և միշտ ծերունուն տեսնում էր երկայն «չիբուխը» ձեռին ծխելիս և խորասուզված մտքերի մեջ: Միամիտ պառավը վաղուց տեղյակ էր Վարվառեի ամուսնական դժբախտությանը և ծերունու տխրությունը վերագրում էր այս հանգամանքին, սակայն վերջին անցքերի մասին նա դեռ ոչինչ չգիտեր: Չկարողանալով զսպել յուր լեզուն, նա մտավ ծերունու սենյակն և հայտնեց, թե տիրուհին հիվանդ պառկած է:

Մինաս Կիրիլլիչը սառն կերպարանքով ընդունեց այս լուրն և, լուռ, գլուխը շարժեց:

Կեսօրվա դեմ Վարվառեի տաքությունը սաստկացավ: Երբ Մատրենան մտավ ներս, որ հարցնի նրա հիմանդության մասին, նա անզգա պառկած, ծանր հառաչում էր: Այս անգամ ռուս պառավը վախեցավ, կրկին վազեց Մինաս Կիրիլլիչի սենյակը:

Վարվառեն պառկած էր երեսնիվայր, սպիտակ հոլանի բազուկները վերմակի վրա տարածած և վառվռուն աչքերը սենյակի առաստաղին հառած, երբ հայրը հանդարտ քայլերով ներս մտավ: Նա չզգաց հոր գալուստը: Երկու շաբաթ էր, որ հայրը ոտ չէր դնում այդ սենյակը, ուր առաջ մտնում էր ժամանակ անժամանակ աղջկա հետ խոսակցելու կամ որևէ լրագրական կամ քաղաքային լուր հաղորդելու:

— Դուք հիվա՞նդ եք, — հարցրեց ծերունին ցածր ձայնով, կանգնելով աղջկա մահճակալից երկու քայլ հեռու:

Վարվառեն չլսեց նրա հարցը, բայց հայացքը դարձրեց դեպի նրա կողմը: Մի քանի վայրկյան հայր ու աղջիկ նայեցին միմյանց: Վերջին երկու շաբաթվա ընթացքում այս առաջին անգամն էր, որ նրանք ուղիղ նայում էին միմյանց երեսին:

— Դուք հիվա՞նդ եք, — կրկնեց Մինաս Կիրիլլիչն ավելի բարձր ձայնով:

— Ո՛չ, — պատասխանեց Վարվառեն, որի միայն շառագունած այտերն և կարմրած աչքերը վկայում էին, թե նա ստում է և ինչ-որ թաքցնում:

— Մատրենան ասաց, որ դուք տկար եք:

— Ո՛չ, ես տկար չեմ…

Վարվառեն, վերջին խոսքը չավարտած, վերմակը քաշեց երեսին:

— Եթե հիվանդ եք, թողեք ուղարկեմ բժշկի հետևից, — ասաց հայրը, մի քայլ ևս մոտենալով:

— Բժի՞շկ: Հարկավոր չէ, չեմ ուզում, իսկույն կանցնի, ես վեր կկենամ, շնորհակալ եմ…

— Թաքցնելը զուր է. հիվանդին բժիշկ է հարկավոր, — ասաց Մինաս Կիրիլլիչն և դուրս գնաց:

Կես ժամ չանցած, նա վերադարձավ, իրանից առաջ ներս թողնելով մի միջահասակ, սափրած և չեչոտ երեսով առույգ, ավելի քան հիսուն տարեկան մարդու, ալեխառն մազերով:

Դա քաղաքի հայտնի հայ բժիշկներից մեկն էր: Բժիշկը խրոխտ քայլերով մոտեցավ հիվանդի մահճակալին և, ուրախ-ուրախ հետը խոսելով, զննեց երակը, նայեց երեսին և սկսեց հարց ու փորձ անել: Հետո նա խորհրդավոր դեմքով, լուռ մոտեցավ գրասեղանին, գրեց հարկավոր դեղերը, մի քանի խիստ պատվերներ տվեց և գնաց, խոստանալով կրկին այցելել:

Դեղերն ընդունելուց հետո, իրիկնադեմին Վարվառեի տաքությունը քառասուն աստիճանից անցավ: Բժիշկն եկավ և այս անգամ ուրիշ դեղեր նշանակեց:

Մինչև ուշ գիշեր հիվանդը սաստիկ տաքությունից զառանցում էր: Մահճակալի մոտ ծառայում էր Մատրենան, իսկ Մինաս Կիրիլլիչը սենյակի մի անկյունում լուռ նստած, լսում էր դստեր զառանցանքը: Եվ նա հիվանդի անկապ արտասանած խոսքերի ու դարձվածների մեջ լսում էր մերթ Ռոստամյանի անունը, մերթ ազգանունը:

— Արդյոք, իսկապե՞ս հիվանդ է, թե՞ կեղծում է, — անցավ մի վայրկյան ծերունու մտքով: Բայց երբ հիշեց բժշկի լուրջ դեմքը և խորհրդավոր ժպիտը, նրա կասկածը փարատվեց: .

Տաքությունը տևեց հինգ օր: Բժիշկը շարունակ օրն երկու անգամ այցելում էր և միշտ դուրս էր դալիս տխուր դեմքով: Վեցերորդ օրը տաքությունն սկսեց նվազել: Հետևյալ օրն առավոտը Վարվառեն ասաց բժշկին, թե առողջ է զգում իրան և խնդրեց, որ վերջինը թույլ տա իրան վեր կենալու: Բայց բժիշկը պատվիրեց պառկած մնալ մի քանի օր ևս: Սակայն Վարվառեն հետևյալ օրն արդեն ոտքի վրա էր: Բժիշկը, տեսնելով, ար յուր պատվերն արհամարհում է հիվանդը, բարկացավ, հանդիմանեց և հայտնեց, թե այլևս յուր այցելությունը ավելորդ է, քանի որ հիվանդն իրան բոլորովին առողջ է զգում: Մինաս Կիրիլլիչը նրա վարձը տվեց և ճանապարհ դրեց:

Այսպես թե այնպես, Վարվառեն ոտքի վրա էր: Իսկ Մինաս Կիրիլլիչը ճանապարհի պատրաստություն էր տեսնում: Սպասած փողը նա արդեն ստացել էր: Մի առավոտ նա առաջարկեց Վարվառեին՝ իրերը կապկապել, որպեսզի երկու օրից հետո պատրաստ լինին առավոտը կանուխ ճանապարհ ընկնելու: Ծերունին արդեն պատվիրել էր կահ-կարասիքի տիրոջը, որ այդ օրը գա և տանե յուր ապրանքը: Իսկ դաշնամուրը պիտի տանեին ուղևորության նախընթաց օրը:

Եվ Վարվառեն զբաղված էր յուր իրեղեններր տեղավորելով, երբ Մատրենան ներս մտավ և լուռ, դողդողալով հանձնեց նրան Ռոստամյանի նամակը:

— Ո՞վ տվեց, — հարցրեց Վարվառեն, որ մինչ այդ րոպե դեռ ծանոթ չէր Ռոստամյանի ձեռագրին:

— Այն երիտասարդ պարոնը, — պատասխանեց աղախինը, ձեռով ցույց տալով դիմացի բնակարանը:

Վարվառեն թուլացած նստեց աթոռի վրա և ձեռով աղախնին նշան արավ, որ դուրս գնա: Նա ծրարը դողդոջուն մատներով բաց արավ և նամակը կարդաց: Նամակը համառոտ էր և խիստ ազդու: Մի քանի րոպե, հոգնած գլուխը դեպի ուսը թեքած, թույլ ձեռները ծնկների վրա դրած, Վարվառեն տատանվում էր — ընդունե՞լ Ռոստամյանին, թե մերժել:

Նամակի տողերը հուսահատություն էին ներշնչում, նա գրված էր հոգեկան ամենավշտալի դրության մեջ: Մի անգամ և միայն մի անգամ Ռոստամյանր տեսակցություն էր խնդրում:

— Նա լսել է իմ գնալն և հույս չունի ինձ տեսնելու, — ասաց Վարվառեն, — ոչ, ես չեմ կարող այսպես սառն անջատվել նրանից, հուսահատությունը նրան կսպանի: Ես նրան սիրտ կտամ... Պիտի կատարել նրա վերջին և միակ աղաչանքը:

Բայց ի՞նչպես, ո՞րտեղ նշանակել տեսակցությունը:

Հայրր տնից դուրս չի գալիս, ուրեմն Ռոստամյանն ինքը գալ չի կարող, մի՞թե Վարվառեն ինքը պիտի գնա նրա մոտ: — Ոչ այս, ոչ այն:

Նույն օրը, նույն գիշերն և հետևյալ օրր մինչև երեկո Վարվառեի միտքը միմիայն այս կետի վրա էր կենտրոնացած, միևնույն ժամանակ, նա շարունակում էր կապկապել յուր հագուստեղենները: Իրիկնադեմին եկան, դաշնամուրը տարան: Մնում էր երկու գիշեր և մի ցերեկ, այնուհետև Ռոստամյանին տեսնել այլևս անկարելի էր: Սինաս Կիրիլլիչը ճեպակառքի տոմսակներն արդեն վերցրել էր երրորդ օրվա առավոտյան գնացքի համար: Հետևաբար — կամ այս գիշեր, կամ վաղը: Բայց ինչո՞ւ համար է ուղում տեսակցել Ռոստամյանը, չէ՞ որ այլևս ուշ է:

Վարվառեն մերթ պահարանից յուր ճերմակեղենները դասավորում էր ճանապարհորդական սնդուկի մեջ, մերթ անց ու դարձ էր անում: Երբեմն նա կանգնում էր լուսամուտի առջև և նայում էր դեպի պատշգամբ: Գավթի բնակիչները ըստ երևույթին քնած էին. այրիի լուսամուտներում լուսո նշույլ չէր երևում, նույնպես և խոհանոցում: Գիշերվա կեսն էր: Քնած էր Մինաս Կիրիլլիչր, թե արթուն — հայտնի չէր, միայն նրա սենյակից ոչ մի ձայն, ոչ մի շշուկ չէր լսվում:

Հանկարծ, ղեպի դուրս նայելու միջոցին, Վարվառեն պատշգամբի վրա նշմարեց մի սև պատկեր: Նա, որի զգայնությունը, վերջին անցքերի ազդեցության ներքո, ավելի նրբացել էր, երկյուղած փակեց դռները, հետ դարձավ և սկսեց ականջ գնել դեպի դուրս:

Մեկը դրսից ապակուն երկու անգամ խփեց: Վարվառեն սիրտ արավ լուսամուտին մոտենալ և լսեց մի թեթև ձայն, որ արտասանեց նրա անունր: Նա, դողդողալով, փեղկերից մեկը բաց արավ և երես առ երես հանդիպեց Ռոստամյանին:

— Ես եմ, մի՛ վախենար, — շշնջաց Ռոստամյանի ձայնը:

Վարվառեն վայրկենաբար ենթադրեց, որ ավելի վտանգավոր է դրսից խոսելը: Նա բաց արավ դռները, ներս թողեց Ռոստամ յանին:

— Ի՞նչ ես կամենում, — հարցրեց նա շփոթված, — ինչո՞ւ ես եկել այսպես անժամանակ:

Ռոստամյանը, պատասխանելու փոխարեն, բռնեց նրա նիհար ձեռներն և երեսը դարձրեց դեպի լամպարը:

— Դու հիվա՞նդ ես, ասա՛, վտանգավո՞ր է հիվանդությունդ, Վարվառե, — գոչեց նա բավական բարձր ձայնով, մոռանալով, թե որտեղ է գտնվում:

— Ե՞ս, ոչ... տեսնում ես, որ պառկած չեմ:

— Նստի՛ր, ես հուզված եմ, այս դրության մեջ խոսել չեմ կարող, նստենք, հետո... Նա քնած է, ես գիտեմ, մի՛ բարկանար, մի՛ վախենար, Վարվառե:

Այս ասելով Ռոստամյանը նստեց մի աթոռի վրա, մյուսն առաջարկելով Վարվառեին: Բայց Վարվառեն չնստեց. նա երկյուղալի դեմքով նայում էր աջ ու ձախ, ականջ էր դնում դեպի հոր սենյակի կողմը:

— Ես վախենում եմ, Ստեփան, մեզ լրտեսում են, նա կարող է ամեն րոպե դուրս գալ, ասա, ինչ որ ասելու ես, և հեռացիր շուտով։

— Վարվառե, ես ոչինչ չունիմ ասելու, ես ուզում էի միայն քեզ տեսնել։ Քո հիվանդությունը վտանգավոր է, ես զգում եմ այդ, ահա, աչքերիդ տակը կապտել է, երեսդ դեղնել է։ Ահա, դու այժմ ևս տաքություն ունես, — ավելացրեց նա, բռնելով Վարվառեի բազուկը, — Ի՞նչ պատահեց քեզ, տեր աստված, մի՞թե այս դրության մեջ պիտի ճանապարհորդես։ Խնայի՛ր քեզ, Վարվառե, խնդրի՛ր այն մարդուն, որ հետաձգի յուր վճիռը, մինչև քո առողջության վերականգնելը…

— Ուշ է։ Տեսնո՞ւմ ես, որ շորերս արդեն կապված են… ամեն ինչ վերջացած է։ Ների՛ր ինձ, Ստեփան, որ քեզ այդքան վշտացրի… մոռացի՛ր ինձ… Գնա՛… գնա՛…

Բայց Ռոստամյանը նրա ձեռներն յուր ձեռների մեջ բռնած, շարունակում էր մերթ աջը, մերթ ձախը համբուրել։ Նա երկյուղած դեմքով մտիկ էր անում Վարվառեի նիհարած, խորն ընկած այտերին, որոնց վրա դրոշմվել էր մի անբնական թեթև կարմրություն։ Նա չէր կարծում, թե հիվանդությունն այսչափ փոխել է Վարվառեին։ Ինչ-որ մի չարագուշակ կասկած ծագեց նրա սրտում, և նա զգաց, որ, արդարև, հիվանդությունը խիստ վտանգավոր է։ Նա խորին վշտակցությամբ մի քանի րոպե նայում էր Վարվառեի երեսին։ Վերջինն երեսը շուռ տվեց մյուս կողմը, հանդարտությամբ ազատեց յուր աջ ձեռը և թուլացած դրեց նրա ուսի վրա։ Իսկ Ռոստամյանը, դառն կսկիծը սրտում, խղճահարված, ընկճված յուր նախազգացման ծանրության ներքո, քնքշությամբ սեղմում էր նրա նիհար ճակատն յուր շրթունքներին։

Անցավ տասն րոպե, լուռ, երջանիկ րոպեներ։ Նրանց սրտերը բաբախում էին սաստիկ։ Վարվառեն րոպե առ րոպե ցնցողաբար դողում էր, իսկ Ռոստամյանն, ավելի ու ավելի ամուր սեղմելով նրա ձեռը, մյուս ձեռով մերթ շոյում էր նրա ճակատն ու մազերը և մերթ գլուխը սեղմում էր յուր ուսին։

Բաց դռներից փչեց մի թեթև զով քամի և, միևնույն ժամանակ, լսվեց ինչ-որ շշուկ։ Վարվառեն արագությամբ գլուխը բարձրացրեց Ռոստամ յանի ուսի վրայից, ձախ ձեռը խլեց նրա ձեռից և երկյուղալի ձայնով գոչեց,

— Գնա՛, Ստեփան, մի՛ փորձիր ինձ, գնա ։

Այս ասելով, նա մոտեցավ դռներին, նայեց դեպի դուրս։ Ոչ ոք չկար, ոչ մի ձայն չէր լսվում, միայն հանդարտ սոսափում էին կանաչազարդ ակացիայի տերևները։

Ռոստամյանը, որ Վարվառեի հրապուրիչ մերձավորությամբ քանի մի րոպե մոռացել էր իրականությունը, մոռացել էր յուր և Վարվառեի վտանգավոր դրությունը, դարձյալ սթափվեց, նստեց աթոռի վրա և թույլ ձայնով արտասանեց.

— Մի՞թե նրա մեջ բոլորովին մեռել է խիղճը, մի՞թե նա վճռել է սպանել յուր միակ աղջկան։ Ոչ, Վարվառե, — շարունակեց նա, ձայնը բարձրացնելով և ոտքի կանգնելով, — նա խղճալի չէ, խղճալին դու ես և ես… ե՛ս։ Թո՛ղ նրան և հեռացիր… գնա՛նք միասին… փախչենք այս հասարակությունից։ Թող մեղադրեն մեզ, փույթ չէ… թող հայրդ անեծք կարդա մեր հետևից։

Նրա անեծքը չի կարող ազդել, նա է մեղավորը… աստված չի լսիլ այն մարդու անեծքը, որ յուր միակ աղջկա կյանքը զոհում է յուր պատվասիրությանը…

Նա դարձյալ մոտեցավ Վարվառեին, կրկնելով անդադար.

— Գնանք, գնա՛նք, Վարվառե։

Այնինչ Վարվառեն անշարժ կանգնած պատի տակ, երեսը ձեռներով ծածկած, հանդարտ հեկեկում էր։ Երբ Ռոստամյանը մոտեցավ, նա ձեռները հեռացրեց երեսից և վճռական եղանակով արտասանեց.

— Բավական է, մի մոտենար, գնա, գնա՛ և մոռացի՛ր ամեն ինչ…

— Մոռանա՞մ, ե՞ս, ե՞ս, — գոչեց Ռոստամյանը, — մոռանա՞մ ամեն ինչ և թողնեմ, որ դու այդ դրության մեջ անջատվե՞ս ինձանից։ Լսի՛ր, Վարվառե, ես այժմ պատրաստ եմ ամեն մի միջոցի դիմել իմ և քո երջանկության համար։ Ես քեզ առաջարկում եմ՝ թողնել ծերունուն և գնալ ինձ հետ այնտեղ, ուր ես կգնամ։ Չե՞ս ուզում։

Վարվառեն մի ձեռով երեսը ծածկեց, մյուսով բացասական նշան արավ։

— Ուրեմն մնում է մի ուրիշ միջոց, թույլ տուր ինձ այս վերջին միջոցին դիմելու։ Թույլ տուր ինձ՝ վաղն անձամբ ներկայանալ հորդ, բացատրել ամեն ինչ, ներումն խնդրել։ Ես նրան կաղաչեմ, կաղերսեմ, որ… Ի՛նչ, միթե այս է՞լ անկարելի է։ Ուրեմն, խնդրիր, ինքդ, ես դեռ հույս ունիմ, որ նա այդքան անխիղճ չէ. դիցուք նա քեզ չի սիրում իբրև հայր, բայց նա մարդ է, ինչևիցե, սիրտ ունե։ Չոքի՛ր նրա առջև, աղաչի՛ր…

Մինչև Ռոստամյանը հուսահատ դրության մեջ առաջարկում էր յուր վերջին միջոցները, Վարվառեն, կարծես, լսել անգամ չէր ուզում նրա դառնահնչյուն խոսքերը։ Դողդոջուն ձեռների ափերն իրար սեղմած, նա միայն աղերսում էր Ռոստամյանին՝ թողնել և հեռանալ միայնակ։ Տնային սպիտակագույն թեթև հագուստով, շագանակագույն շքեղ մազերը մի օրվա ընթացքում նշմարելի կերպով նիհարած՝ ուսերի վրայով դեպի սպիտակ կուրծքը սփռված, մեջքից սակավ ինչ թեքված — այս դրության մեջ նրա կերպարանքը, կանթեղի թույլ լուսո ներքո, ներկայացնում էր մի մարմնացած հուսահատություն։ Եվ ահա այս վիճակում նա աղերսում էր Ռոստամյանին, որ գնա, հեռանա, զրկվի հավիտյան նրա տեսությունից։ Ո՞ւր գնա, ի՞նչպես մոռանա — այս մասին նույն րոպեներին նա դարձյալ չէր մտածում։ Մտածում էր միայն ծերունի հոր մասին, որ րոպե առ րոպե կարող էր ներս մտնել և տեղն ու տեղր հանդիպել յուր մահը։

Վերջապես, Ռոստամյանը բոլորովին յուր հույսր կորցրեց։ Նա սպառնալի դեմքով և աղեկտուր ձայնով, հազիվհազ շունչ քաշելով, արտասանեց.

— Անգո՛ւթ, դու ինձ չես սիրում…

Մի դառն ժպիտ աղավաղեց Վարվառեի հիվանդոտ դեմքը, և նա, լուռ ձեռը մեկնեց դեպի հոր առանձնասենյակի կողմր։

— Ուրեմն, զոհի»ր ինձ նրան, — գոչեց Ռոստամյանը և, առանց վերջին մի համբույր տալու, առանց անգամ վերջին բարևն ասելու, շտապեց դուրս։

Վարվառեն անշարժ արձանացած կանգնած, լսում էր նրա արագ-արագ հեռացող քայլերի ձայնը, որ հետզհետե նվազում էր։

Հանկարծ նա մի խուլ, հուսակտուր հնչյուն արձակեց կրծքից, վազեց դեպի դռները, նայեց դեպի պատշգամբի մյուս ծայրը։

Ռոստամյանն անհետացել էր...

— Վերջապես, — արտասանեց Վարվառեն և ուժասպառ երեսնիվայր ընկավ անկողնակալի վրա...

XIII

Լուսացավ այն առավոտն, երբ հայր ու աղջիկ պիտի Թիֆլիսից ճանապարհ ընկնեին։

Արդեն ամեն ինչ պատրաստ էր. իրեղենները կապկպած, տան կա-կարասիքը մի կողմ հավաքած։ Դեռ երեկոյան Մինաս Կիրիլլիչը խոհարարի վարձը տվել էր և արձակել, որ առավոտյան գա օգնելու։

Մատրենան յուր աղքատիկ իրեղենները փաթաթել էր մի մեծ սփռոցի մեջ, կապոցը խոհանոցի մի ակյունումն էր դրել ու շտապով հեշտաեռը կրակ էր գցում, որ առանց թեյի չուղևորվեն, թե պարոնն ու տիրուհին և թե, մանավանդ, ինքը։

Մինաս Կիրիլլիչը զարթնեց շատ կանուխ։ Նա շտապով հագնվեց, երկայն ճանապարհորդական կոշիկները ոտներին քաշեց և դուրս եկավ սենյակից։ Նրա դեմքն ուրախ է, աչքերը փայլում են, կարծես Թիֆլիսից հեռանալով, նա հավիտյան իրանից թոթափում է տխուր անցքերի ծանր ապավորությունր։ Երեկոյան նա մի քանի անգամ խոսել էր Վարվառեի հետ ուղևորության մասին։ Նա հարցրել էր աղջկան, թե, արդյոք, ոչինչ տկարություն չի զգում, կարո՞ղ է դյուրությամբ ճանապարհորդել։ Վարվառեն նրան հավատացրել էր, թե ինքր բոլորովին առողջ է և թե պատրաստ է ուղևորվել, ուր որ կկամենա հայրը։ Եվ իսկապես նա, ըստ երևույթին, առողջ էր և զվարթ, այտերը փոքր ինչ կարմրած, քայլվածքը սովորականից աշխույժ և ձայնն անհողդողդ, վճռական։

Դեռ վեց ժամն էր. ճեպակառքի գնացքին մնում էր երկու ամբողջ ժամ։ Բայց, իրեղենների շատության պատճառով, պետք էր ժամանակից մի կես ժամ առաջ գնալ և ամեն ինչ տեղավորել։

Մինաս Կիրիլլիչը մի անգամ ևս աչքի անցկացրեց սենյակները, զննեց սնդուկները և կապոցները, թե, արդյոք, բան չի՞ մոռացել: Հետո նա նայեց ժամացույցին, դուրս եկավ պատշգամբը, ուր խոհարարն սպասում էր տիրոջ վերջին պատվերին:

Նա խոհարարին ուղարկեց շուկա՝ ճանապարհի համար պատրաստի ծխախոտ գնելու, իսկ ինքն անցավ խոհանոց:

Կռներր կրծքին ծալած, յուր կապոցի վրա նստած, պառավ Մատրենան նայում էր խշխշող հեշտաեռին, խորասուզված մտքերի մեջ: Ինչո՞ւ եկան, ինչո՞ւ են գնում -հարցնում էր նա ինքն իրան: Երեսուն տարի էր, որ նա ծառայում էր Քիրիշչիևի տանը, տեսել էր նրա կնոջ ու զավակների մահը, իսկ Վարվառեին մեծացրել էր յուր գրկում: Եվ այդ երկար տարիների ընթացքում նա ընտելացել էր հորն ու աղջկան, իբրև մի ընտանեկից: Նա շատ անգամ խոստովանվում էր, թե նրանց սիրում է ավելի, քան յուր երկու որդիներին, որոնցից մեկը հայտնի չէր թե որտեղ է, իսկ մյուսը — Վոլգայի վրա բանվորություն էր անում և վաստակածը թողնում օղետներում: Ուր որ տանում էին, Մատրենան գնում էր անտրտունջ: Մինաս Կիրիլլիչը, մասամբ հարդելով, մասամբ խնայելով ծերությունը, նրան չէր արձակում պաշտոնից, մանավանդ որ Վարվառեն սիրում էր աղախնին:

Վարվառեի ամուսնական տխուր վիճակը ռուս պառավին խիստ վշտացնում էր: Ինչո՞ւ այդ երիտասարդ ամուսնացած կինը պիտի զուրկ մնա յուր մարդուց, — մտածում էր նա և, միևնույն ժամանակ ճանաչելով Միզանդրոնցովի վարք ու բարքը, բարվոք էր համարում, որ Վարվառեն առանց ամուսին ապրի, քան թե այնպիսի մարդու հետ: Հաճախ նա յուր ցավակցությունը հայտնում էր Վարվառեին, մխիթարում էր նրան, անիծում էր նախ Միզանդրոնցովին, ապա բոլոր տղամարդկանց և հետո ողբում կանանց վիճակը:

— Շտապի՛ր, Մատրենա, ժամանակն անցնում է, — հրամայեց Մինաս Կիրիլլիչը մտնելով խոհանոց:

— Այս րոպեիս, — պատասխանեց պառավը, սթափվելով յուր մտքերից:

— Տիրուհիդ զարթնե՞լ է:

— Երևի, զարթնել է, ապա մի գնամ, տեսնեմ:

Մատրենան շտապով անցավ տիրուհու սենյակը: Վարվառեն արդեն արթուն էր, բայց դեռ պառկած էր անկողնի մեջ, երեսը դեպի պատը դարձրած, ձեռները վերմակի վրա տարածած: Մատրենան ներս մտավ թե չէ, լսեց նրա բարձրահնչյուն և հորդոր շնչառությունը: Նա, կարծելով, որ Վարվառեն քնած է, անկողնակալին մոտեցավ զգույշ, ոտների մատն երի վրա:

— Դո՞ւ ես, Մատրենա, — արտասանեց Վարվառեն, դժվարությամբ շուռ գալով մյուս կողմի վրա:

— Այո, տիրուհի, զարթնե՞լ եք, վե՛ր կացեք, մենք պատրաստ ենք. այս րոպեիս սամովարը կբերեմ, պարոնը կոշիկները հագել է:

— Սպասի՛ր, իսկույն կվերկենամ։

Այս ասելով, Վարվառեն թույլ ձեռով վերմակը ձգեց մի կողմ և ոտքի կանգնեց։ Աղախինը աթոռի վրայից վերցրեց նրա հագուստն ու մոտեցրեց նրան։

Վարվառեի ծնկները դողում էին. նա տաքության մեջ էր, բայց չէր հայտնում։ դողդողալով, գլուխը պատելով, նա մի կերպ հագնվեց, ստեպ-ստեպ բռնելով անկողնակալի ծայրից, որ չընկնի։

— Տիրուհի, դուք առո՞ղջ եք, — հարցրեց Մատրենան, մի կասկածելի հայացք ձգելով Վարվառեի երեսին։

— Լավ եմ, Մատրենա, փա՛ռք աստուծո։

— Ոչ, տիրուհի, դուք ինձ խաբում եք, դուք հիվանդ եք։

— Գնա բանիդ, ես իսկույն կգամ, — ընդհատեց աղախնի խոսքը Վարվառեն։

— Ջուր չե՞ք կամենում լվացվելու համար։

— Ոչ, հետո, այժմ չեմ ուզում։

Մատրենան դուրս գնաց։

— Տեր աստված, մի՞թե ինձ չի հաջողվիլ զսպել թուլությունս, — ասաց Վարվառեն ինքն իրան, — նախ և առաջ հարկավոր է թաքցնել այս թաշկինակները.. Կուրծքս... Կուրծքս, — ավելացրեց նա, բարձի տակից երկու արյունաշաղախ սպիտակ թաշկինակներ հանելով և գրպանը դնելով։

Չարագուշակ հազն ընդհատեց նրա խոսքը, նրա այտերը կապտեցին, պարանոցի մուգ-մոխրագույն երակները դուրս ցցվեցին։ Նա թաշկինակներից մեկը բռնեց բերանին, բայց այս անգամ արյուն չերևեցավ։

Հեշտաեռն արդեն սեղանատան պատուհանի վրա դրած էր։ Մինաս Կիրիլլիչը թեյ էր խմում։

— Մատրենա, թեյ ածիր տիրուհուդ համար, ժամանակն անցնում է, — շտապով հրամայեց նա, մի կողմնակի հայացք ձգելով աղջկա կարմրած այտերի վրա, երբ նա ներս մտավ։

Նա տակավին չէր կարծում, թե աղջկա հիվանդությունն այնչափ վտանգավոր է։ Վարվառեն բաց արավ սնդուկը, գնաց յուր սենյակը, այնտեղ մնում էին մի քանի իրեղեններ, որոնց պիտի տեղավորեր։

Մինչ նա զբաղված էր յուր գործերով, ծերունին խոհարարին հրամայեց գնալ երկու կառք բերել, որ իրեղենները ժամ առաջ ուղարկի։ Իսկ Մատրենան, Վարվառեի համար մի բաժակ թեյ ածած, սպասում էր։ Մինաս Կիրիլլիչը ծխելով անցուդարձ էր անում։ Շուտ-շուտ նա նայում էր ժամացույցին և շտապեցնում էր աղջկան, որ գործն ավարտի։ Արդեն յոթը ժամը լրանում էր։

Վարվառեն իրերը տեղավորեց, վերջացրեց և նստեց սնդուկի վրա, որ հանգստանա: Շնչառությունը բոլորովին թուլացել էր, այտերի կարմրությունն անհետացել:

— Դու շատ հոգնեցիր, — ասաց Մինաս Կիրիլլիչը, — ո՛չինչ ճանապարհին կհանգստանանք: Ես վարձել եմ մի ամբողջ ճեպակառք: Բացի մեզանից, ոչ ոք չի լինիլ: Խմի՛ր թեյդ:

Վարվառեն, անշարժ նստած, նայում էր հատակի մի կետին: Նրա շունչն ավելի ու ավելի սպառվում էր. գերբնական ուժ էր հարկավոր նրան, որպեսզի կարողանա զսպել յուր հիվանդությունը:

— Ի՞նչ է, Վարվառե, ինչո՞ւ ծանր ես շնչում...

— Ոչինչ... — ասաց Վարվառեն և, ձեռը հենելով պատին, աշխատեց բարձրանալ:

— Դու տկար ես Վարվառե... Սպասի՛ր, գունաթափվում ես: Մատրենա, օգնի՛ր նրան, հիվանդ է...

Եթե աղախինն և հայրը նույն վայրկյանին չշտապեին մոտենալ, Վարվառեն կընկներ հատակի վրա: Նա հենվեց աղախնի ուսին: Մյուս կողմից բռնեց Մինաս Կիրիլլիրը, գոչելով.

— Ի՞նչ պատահեց, ի՞նչ պատահեց:

Բայց, պատասխանի փոխարեն, նա յուր ձեռի ափի մեծ զգաց դստեր սառույցի պես պաղած բազուկը, որի երակը հաղիվ-հազ զարկում էր: Նա երկյուղով գրկեց աղջկան, նայեց երեսին: Գույն չկար, շունչ չէր լսվում:

— Օգնի՛ր, Մատրենա. նա հիվանդ է, — բացականչեց շվարած հայրն և, աղախնի օգնությամբ, դստեր անշնչացած դիակը տարավ նրա սենյակը:

Մատրենան շուտով բաց արավ կապոցներից մեկը, մի րոպեում անկողինը պատրաստեց: Վարվառեին պառկեցրին:

— Կառքերը պատրաստ են, — լսվեց ծառայի ձայնը:

— Նստիր նրանցից մեկն և շտապիր Միսկարյանցի մոտ, ճանաչո՞ւմ ես, խնդրիր իմ անունով, որ այս րոպեիս գա: Մատրենա, վազի՛ր և տանտիրուհուն հրավիրիր այստեղ, շո՛ւտ:

Մինչ Մատրենայի վերադառնալն և այրի Նատալիայի գալը, ծերունին, Վարվառեի թուլացած ձեռն յուր ափի մեջ բռնած, աշխատում էր խրախուսական խոսքերով ուշքի բերել նրան: Վարվառեն սթափվեց և. մռայլ հայացքով նայեց հոր երեսին:

— Իսկույն կանցնի, — ասաց նա դողդոջուն ձայնով, — բժիշկ հարկավոր չէ... իսկույն կուղևորվենք...

— Ոչ, Վարվառե, այսօր չէ, վաղը կգնանք, դու տկար ես... մի՛ վախենար, բժիշկը կգա և կօգնի...

Ներս մտավ այրի Նատալիան և, ճակատի մազերը հետ քաշելով, կես զարմացած և կես վախեցած մոտեցավ Վարվառեի անկողնակալին։

— Չէ՞ի ասում ձեզ, որ հիվանդ է, տեսա՞ք, — դարձավ նա ծեբունուն հանդիմանորեն։ — Ոչինչ, Վարվառե, աղջիկս, ուշքի եկ, սիրտ առ...

Նա շտապով վազեց, մի բաժակ քացախ բերեց և սկսեց նրանով տրորել հիվանդի ճակատը, պարանոցը, ձեռներն ու ոտների մատները։

Ծառան վերադարձավ և հայտնեց, թե բժիշկ Միսկարյանցը չի ուզում գալ։

— Ինչո՞ւ, — »հարցրեց Մինաս Կիրիլլիչը զարմացած և բարկացած։

— Ասում է. զբաղված եմ։

— Անպիտա՛ն, նա իրավունք չունի մերժելու... ես կգնամ և կբերեմ։

— Զուր կլինի աղա, նա բարկանում է, ասում է, ես բժշկում էի նրան, չթողին, որ առողջացնեմ... Այժմ, ասում է, թող ուրիշ բժիշկ կանչեն...

— Դոկտոր Միսկարյանցը շատ կոպիտ մարդ է, նա չի գալ, ես գիտեմ, ուղարկեցեք Միրզախանյանցի հետևից, նա իսկույն կգա, — մեջ մտավ այրի Նատալիան։

Ծառան գնաց և, արդարև, իսկույն բերեց Միրզախանյանցին։

Դա մի երիտասարդ մարդ էր, միջահասակ, ֆրանտ հագնված, սաթի պես սև միրուքով, ծնոտը սափրած ու բերանը գրեթե բոլորովին ծածկված հաստ և երկայն ընչացքով, որ ծիծեռնակի թևերի էին նմանվում։

Նա, յուր դեմքին փորձառու գիտնականի արտահայտություն տալով, որ բոլորովին սազ չէր գալիս նրա կանացի այտերին և ճակատին, զննեց հիվանդին, խրախուսեց և անմիջապես գրիչ ու թուղթ պահանջեց։ Ամեն ինչ կապկպած էր, այրի Նատալիան վազեց Ռոստամյանից բերեց գրիչ, թուղթ ու թանաք։ Մինչև այրիի վերադառնալը բժիշկը հարց ու վարձ էր անում հիվանդի մասին, ինքնուրույն հայացքներ ձգելով յուր շուրջը։ Երբ նա կողմնակի հարցերով իմացավ սենյակների դատարկության պատճառը, նրա դեմքի արտահայտությունը փոխվեց։ նա սկսեց ավելի մեղմ խոսել։ Մինաս Կիրիլլիչը չքավոր մարդ չէր...

Վարվառեն դեղերը ընդունեց այրի Նատալիայի օգնությամբ, որ մոր պես փայփայում էր նրան։

Մինաս Կիրիլլիչը, հարկավ, ուղևորությունը հետաձգեց անորոշ ժամանակով։ Կապոցներն և սնդուկները նորից բաց արին, սենյակներն ընդունեցին իրանց առաջվա տեսքը, խոհարարը մնաց, կյանքը սկսեց ընթանալ, ինչպես առաջ։

Բժիշկը գալիս էր առավոտ ու երեկո և միշտ խրախուսում էր, թե ոչինչ, շուտով հիվանդը կառողջանա,..

Այրի Նատալիան օրական մի քանի անգամ այցելում էր Վարվառեին և ժամերով նստում էր նրա մահճակալի մոտ: Բարեսիրտ կինն ուղղակի տանջվում էր, ակնհայտ տեսնելով, թե ինչ արագությամբ կյանքը սպառվում է գեղեցիկ և ծաղիկ մարմնի մեջ: Տաքությունը մերթ սաստկանում էր, մերթ նվազում: Իսկ բժիշկը շարունակում էր հուսադրել թե՛ հորն և թե աղջկան:

Եվ ինքը հիվանդը միայն ժպտում էր, երբ լսում էբ բժշկի խրախույսը: Նրա համար այլևս այսոլիետև միևնույնն էր — կառողջանա, թե չէ, նա մտածում էր հոր մասին: Ի՞նչ կպատահի, արդյոք, ծերունուն, ո՞վ կմխիթարի նրան և ինչո՞վ: Սակայն երբեմն նա ինքն իրան սիրտ էր տալիս, թե վերջին տխուր անցքերը նվազեցրել են հոր սերը, ուրեմն հարվածն այնքան զգալի չի լինիլ ծերունու համար, որչափ եթե նա սիրեր Վարվառեին նախկին սիրով: Ավելի վշտացնում էր հիվանդին Ռոստամյանի վիճակը, — այրին անմխիթար լուրեր էր հաղորդում յուր կենողի մասին:

Վարվառեի հիվանդությունն առիթ տվեց Ռոստամյանին, վերջապես, հայտնել այրիին յուր սերը, հայտնել այն, ինչ որ վաղուց հայտնի էր վերջինին: Ինչու և ինչպես թաքցներ այլևս, քանի որ ամեն օր նա անհամբեր, դառն տանջանքով, սպասում էր, մինչև որ տանտիրուհին լուր կբերեր հիվանդի մասին:

Վերջին օրերը նա դարձյալ տանից դուրս չէր գալիս, բացի այն դեպքերից, երբ իշխանավորի կողմից կանչվում էր: Իշխանավորն առաջին անգամ նրան մի թեթև ակնարկ արավ, թե շատ է ուշացնում յուր աշխատությունն, երկրորդ անդամ ուղղակի նկատողություն արավ, իսկ երրորդ անդամ սաստիկ հանդիմանեց:

Այս տեսակցությունների ժամանակ Ռոստամյանն յուր իշխանավորի և պաշտոնակիցների մոտ տարօրինակ էր պահում իրան: Մինչ գործերի մասին նրանից տեղեկություններ էին պահանջում, նա, կարծես, չէր լսում իրան առաջարկված հարցերն և մի անգամ տված հարցը կրկնել էր տալիս կամ ապշած նայում էր իշխանավորի երեսին: Կային այնպիսի համարձակները, որ ուղղակի իրարու մեջ սկսեցին խոսել, թե նրա ուղեղը վնասվել է: Այս կարծիքն, ինչպես աշխարհի բոլոր չար լուրերը, կայծակի արագությամբ տարածվեց Ռոստամյանի մասին նրա բոլոր պաշտոնակիցների շրջանում և հետո, իբրև մի ստույգ իրողություն, սկսեց անցնել փողոց:

Վերջապես, մի անգամ ևս Ռոստամյանին կանչեցին և մի քանի օր ժամանակ տալով, պարտավորեցրին այս անգամ գործն անպատճառ ավարտել և ներկայացնել: Հակառակ դեպքում սպառնում էին զրկել նրան յուր պաշտոնից: Բայց ո՛ւր... Ռոստամյանն ոչ միայն աշխատելու, այլև գործի մասին մտածելու կարողություն ու ցանկություն չուներ:

Նրան զրկեցին պաշտոնից, գործերն առան և հանձնեցին մի ուրիշ պաշտոնյայի: Ռոստամյանն հարվածն ընդունեց ամենայն անտարբերությամբ:

Ի՞նչ օգուտ այսուհետև պաշտոնից և գործից և ո՞ւմ համար, քանի որ նրա գոյության նեցուկը օրըստօրե խախտվում ու քայքայվում է:

— Նատալիա Պետրովնա, միթե հույս չկա՞, որ նա առողջանա:

— Աստծուն է հայտնի, որդի…

Եվ Ռոստամյանը գլուխը քաշ էր գցում հուսահատ ու լռում: Ինչ փույթ բժշկի հույս տալուց, քանի որ և՛ այրիի անորոշ պատասխանը, իմաստալի հայացքները, և պատշգամբի վրա մերթ ընդ մերթ երևացող Մինաս Կիրիլլիչի վշտահար դեմքը, և՛ ամեն ինչ, և՛, կարծես, նույնիսկ օդը ներշնչում են Ռոստամյանին, թե այլևս անկարելի է հուսալ…

Այսպես, ուրեմն, մարդիկ հասան իրանց նպատակին — սպանեցին նրան, որ հանդգնում էր ձեռք բարձրացնել նրանց կուռքերի վրա… Դատաստանն ապագայի ծնոքումն է…

Այրի Նատալիան, տեսնելով, որ յուր երիտասարդ կենողը շատ է տանջվում, աշխատում էր մխիթարել նրան: Բայց զուր… Խեղճ կինը կեղծելու ընդունակությունից զուրկ էր, վասնորո նրա սուտ հույսերը ազդեցություն չէին անում: Պատահում էր, որ նա, Վարվառեի մոտից վերադառնալուց հետո, միայնակ երկար ժամանակ մտածում էր գտնել երիտասարդ կնոջ դժբախտության իսկական պատճառը: Նա մերթ մեղադրում էր Մինաս Կիրիլիչին, մերթ Միզանդրոնցովին, երբեմն և՛ Ռոստամյանին, բայց նրա մեղադրանքը և ոչ մեկի վրա կանգ չէր առնում: Ի վերջո նա գլուխը տարակուսանքով շարժում էր և լուսամուտից նայում հեռու ու հեռու…

Կատոն առաջվա պես շուտ-շուտ այցելում էր մորն և երկար հարց ու փորձ էր անում նրան թե Վարվառեի և թե Ռոստամյանի մասին: Ռոստամյանն, ինչպես միշտ, տակավին և այժմ խույս էր տալիս նրանից: Բայց նախանձամիտ կինը նախկին խստությամբ չէր դատապարտում Վարվառեին: Բարեսիրտ Նատալիան այնպիսի տխուր գույներով էր նկարագրում հիվանդի դրությունը, որ աղջիկը լռում էր:

Մի օր, երբ այրին յուր սենյակներից մեկը կահավորում էր յուր որդու համար, որ շուտով պիտի գար, Կատոն ներս մտավ — սաստիկ հուզված և բարկացած:

— Ի՞նչ է պատահել, — հարցրեց մայրը զարմացած և երկյուղով:

Կատոն ձեռի հովանին և գլխարկը շպրտեց սեղանի վրա և գոչեց.

— Գնա ու Վարվառա Մինաևնային ասա, որ ես շատ ու շատ հավանում եմ նրա արածը: Անպիտան, կինտո, հավլաբարցի, բազազ…

— Ո՞ւմ վրա ես բարկացած, Կատո, ի՞նչ կա, — հարցրեց մայրը:

— Այն կա, որ դու ինձ դժբախտացրել ես:

— Ե՞ս եմ դժբախտացրել քեզ, ի՞նչպես:

— Այնպես, որ ինձ տվել ես այն հավլաբարցի կինտոյին… Կոպիտ, անկիրթ… համարձակվում է կասկածել իմ մասին…

— Կասկածե՞լ, — կրկնեց մայրն ապշած, — ի՞նչ ես ասում, Կատո:

— Լսիր ու կիմանաս, թե ինչ եմ ասում. ես այսուհետև... էլ... չեեեմ կա... րող.. Լազրոյի... հետ... ապրեեել. Նա խելագարվել է, գիտե՞ս, խելագարվել է: Նա իմ հյուրերին իմ տնից դուրս է փախցնում, նա ինձ քաղաքի մեջ խայտառակ է անում, անունս կեղտոտում է...

— Ո՞ւմ է դուրս արել, ե՞րբ, — ընդհատեց այրին կատաղած աղջկա խոսքը:

— Սպասի՛ր, պատմեմ:

Եվ Կատոն պատմեց: Առավոտյան Լազար Մակարիչը գնում է յուր գործին: Կատոն մնում է տանը միայնակ և սկսում է տնային գործերով զբաղվել: Տասն ու մեկ ժամին տիկին Մեյբարովի եղբայրը — իշխան Սերաֆիոն Բեգխանովը — գալիս է յուր քրոջ կողմից հարցնելու, թե երբ են ամառանոց գնալու: Առաջինը չի ու վերջինն էլ չի լինիլ աշխարհում — ծանոթը ծանոթի մոտ կգա ու կգնա: Նստում է, խոսում է դեսից ու դենից: Էհ, Կատոն, քաղաքավարության համար, իշխանին սուրճի է պահում, մնում է «խեղճ» երիտասարդը: Այդ ժամանակ վերադառնում է Լազար Մակարիչը, տեսնում է իշխանին և քիթը քաշ է անում: Կատոն աշխատում է իշխանի հետ ավելի քաղաքավարի վարվել, էհ, հյուր է, ինչո՞ւ վիրավորվի: Մի ժամ, մի ամբողջ ժամ այդ կոպիտ, անկիրթ, բազազ Լազրոն աչքունքը թթվեցրած կամ լուռ է մնում կամ եթե խոսում է, կարծես, ականա: Վերջն իշխանը գնում է, և Լազրոն սկսում է գոռալ այ դես, այ դեն, ինչ գործ ունի իմ տանն այդ երիտասարդ իշխանը, ե՞ս ով, նա՞ ով:

— Ասում եմ, — շարունակեց Կատոն վրդովված, — չէ որ երկու տարի է ծանոթ ենք դու էլ, ես էլ. «Ծանոթս ո՞րն է, ասում է, դու ես իմ վզին կապել, ես այդ տեսակ դատարկ մարդկանց հետ գործ չունիմ: Քաղցած է, ասում է, նրանից օգուտ չկա, մի որ էլ կամ պարտք կուզի կամ մի ուրիշ վատ բան կանի»: Ի՞նչ վատ բան կանի, — հարցնում եմ ես: «Նրա աչքունքից, ասում է, երևում է, որ իստակ մարդ չէ՛»: Հիմա, տեսնո՞ւմ ես, մամա, հավլաբարցի քաչալ Լազարեն այնքան մեծ մարդ է դառել, որ իշխաններին էլ չի հավանում: Ես սկսում եմ խաղաղացնել... Չի լինում, տեսնում եմ, որ աչքերը կարմրած, գայլի պես կատաղած, մարդը փոքր է մնում, որ ինձ տեղն ու տեղը խեղդի: Վերջը, էլ համբերությունս կտրվեց, սկսեցի հանդիմանել: Նա ավելի կատաղեց և մի այնպիսի հիշոց տվեց... Ամոթից դուրս եկա ու փախա այստեղ, որ չլսեմ: Չէ, չէ, մամա, ես այն տեսակ մարդու կնիկ լինել չեմ կարող, նա գժվել է:

Այրին սկսեց խաղաղացնել աղջկան, հրավիրեց ճաշին մնալ, խոստացավ նախատել Լազար Մակարիչին և հաշտեցնել:

— Ես չեմ հաշտվիլ նրա հետ, — գոչեց Կատոն, — թող գնա, ուր որ ուզում է, թող ինձանից լավ կնիկ ճարի իրան համար...

Հետևյալ օրը Կատոյի բարկությունն անցավ, և նա խոստացավ մորը, հաշտվել, եթե միայն վերջինը կգնա, Լազար Մակարիչին մի լավ կնախատի և այնպես կանի, որ նա ինքր գա, ներողություն խնդրի...

— Թե չէ, ես նրա մոտ չեմ գնալ, — ավելացրեց Կատոն:

Լազար Մակարիչն առաջին օրը շատ կատաղած էր, բայց երբ Կատոն հակառակեց և գիշերեց յուր մոր տանը, առավոտը սկսեց ափսոսալ, որ այնպես կասկածել էր նրա հավատարմության

մասին և այնքան կոպիտ էր վարվել հետը: Սակայն ինքնասիրությունը նրան թույլ չէր տալիս հաշտության ձեռք կարկառել Կատոյին: Նա սպասում էր և հույս ուներ, որ կինն ինքը կվերադառնա և ներումն կխնդրի: Վերջապես, երկու օր անցած զոքանչը ներս մտավ, նա մտքումն ուրախացավ, բայց արտաքուստ այրի Նատալիային ընդունեց սառնությամբ: Այրին սկսեց համոզել նրան, որ հաշտվի, աղջկա կողմից ներողություն խնդրեց, մեղադրեց Կատոյին և, վերջ ի վերջո, փեսայի համառությունը կոտրեց, հետը տարավ յուր տունը, ուր Կատոն անհամբեր սպասում էր: Նրանք միասին ճաշեցին: Հաշտությունն ավելի ամրացնելու համար, Նատալիան նրանց ստիպեց երեք անգամ համբուրել մեկզմեկու: Սակայն այրին դարձյալ տխրեց: Ով գիտե, թե ինչ անցավ նրա մտքով, տեսնելով յուր աղջկա դյուրափոխությունը...

Մինչ մարդ ու կին, ճաշից հետո, կես լուրջ և կես կատակի ձևով հանդիմանում էին միմյանց, Նատալիան շտապեց Վարվառեի մոտ: Կես ժամ անցած վերադարձավ այնտեղից, այս անգամ ավելի տխուր:

— Ի՛նչ է պատահել, — հարցրեց Կատոն:

Այրին, լուռ, գլուխը խորհրդավոր կերպով շարժեց: Հաշտված ամուսինները վերադարձան իրենց տուն: Այրին անմիջապես գնաց Ռոստամյանի մոտ: Սա, սենյակի մի անկյունում նստած, գլուխը կրծքին քաշ արած, մռայլ հայացքը բևեռել էր հատակի մի կետին: Տեսնելով տանտիրուհուն, սթափվեց, բայց տեղից չշարժվեց: Արդեն նա պատրաստված էր վերջին սարսափելի հարվածն ընդունելու: Այրին հանդարտ քայլերով մոտեցավ և նստեց սեղանի մոտ, հառաչելով և «ախ ու վախ» քաշելով:

— Այնտեղի՞ց եք գալիս, Նատալիա Պետրովնա, — հարցրեց Ռոստամյանը:

— Կես ժամ առաջ այնտեղ էի, — պատասխանեց այրին և, շրթունքները սեղմելով, քթի ծակերով ներս շնչեց օդը:

Ռոստամյանը մի հարցական հայացք ձգեց տանտիրուհու վրա:

— Աստված ողորմած է, որդի. — ասաց այրին, — բժիշկն այնտեղ էր, էլի հույս է տալիս:

— Խոսո՞ւմ է:

— Ինչու չէ, մեկ-մեկ խոսում է: Ինձ տեսնելիս խիստ ուրախանում է, ձեռս, միշտ բռնած, բաց չի թողնում, քանի որ մոտը նստած եմ վինում: է՛հ, ինչ ասեմ, տա աստված, որ առողջանա խեղճ կնիկը, ես խոմ նրան իմ որդուս չափ: սիրում եմ: Ո՞վ ունի նրա հոգին ու սիրտը: նա բարի է, հրեշտակի պես: Տեր աստված, աշխարհիս երեսին քիչ կան վատ, չարահոգի մարդիկ, ինչո՞ւ հիվանդությունը նրանց չի մոտենում:

Ռոստամյանը լսում էր թե չէր լսում, բայց անթարթ աչքերով նայում էր նրա երեսին: Հանկարծ նա հարցրեց.

— Նատալիա Պետրովնա, դուք էլ, ուրիշների նման, մեղադրո՞ւմ եք Վարվառեին:

Նատալիա Պետրովնան հասկացավ Ռոստամյանի հարցի միտքը, բայց իսկույն չպատասխանեց: Նա մի քանի վայրկյան հառաչելով, նայեց դեպի գավիթ և նույն դրության մեջ ասաց.

Աստծու գործն է, ես ի՞նչ գիտեմ: Մարդս չի կարող աստծու արած բանին հակառակել...

Արդյոք, ո՞րն է «աստծու արած բանը», որին մարդ չի կարող հակառակել — Վարվառեի ամուսնությո՞ւնը, թե՛ սերը: Այնինչ, այրին, մի փոքր անցած, կրկին ախ քաշեց ե, ավելացրեց.

— Երանի թե ամենքն էլ Վարվառեի պես արդար լինեին... Աստծուն է հայտնի, ինչպես սիրեցի նրան:

Ավելի նա ոչինչ չասաց: Բայց վերջին անորոշ խոսքը, որ այրին արտասանեց մի առանձին եղանակով, պարզ արտահայտում էին խղճի բողոքը մանկությունից նրա մեջ արմատացած գաղափարների դեմ:

Ռոստամյանն այլևս ոչինչ չհարցրեց: Դարձյալ գլուխը թեքեց կրծքին և դարձյալ աչքերը հառեց հատակի մի կետին...

XIV

Անցել էր մոտ ամիս ու կես: Հունիսի սկիզբն էր, տարվա այն ժամանակն, երբ Թիֆլիսի բնակիչներ ցրվում են ամառանոցները, քաղաքը դատարկվում է, փողոցները զրվում են կենդանությունից, շոգն անտանելի է դառնում:

Վարվառեի հիվանդությունն օրից-օր զարգանում էր: Բժիշկը շարունակ այցելում էր և տակավին սփոփում էր Մինաս Կիրիլլիչին: Բայց ծերունին նրա ձայնին, դեմքի արտահայտությանն և հիվանդին վերաբերվելու եղանակին ավելի էր հավատում, քան թե խոսքերին, որոնց մեջ չէր զգացվում անկեղծ համոզմունք հիվանդի առողջանալու մասին:

Օրըստօրե հիվանդի գլխատակն ավելի ու ավելի բարձրացնում էին. արյունն այնքան պակասել էր, որ նրա շնչառությունը հետզհետե նվազում էր: Վերջին ժամանակ բժիշկը միանգամայն նրան արգելել էր երկար խոսել, իսկ հորը խստիվ պատվիրել էր երբեք տխուր դեմքով չերևալ նրա առջև և երբեք որևէ բանով չհուզել նրան:

Այնինչ, Վարվառեն ո՛չ բժշկի խորհուրդների վրա էր ուշադրություն դարձնում և ո՛չ յուր հոր խնդիրն էր լսում: Նա անդադար խոսում էր, լսում էր, ծիծաղում էր, ուտում և խմում էր այն, ինչ որ արգելված էր, և եթե չէին տալիս, երեխայի պես լալիս էր: Նա դարձել էր ավելի հուզվող, դյուրագրգիռ, զգայուն և մանրակրկիտ:

Այրի Նատալիան, ժամանակ-անժամանակ, այցելում էր հիվանդին և ժամերով նստում նրա մահճակալի մոտ: Վարվառեն, նրան տեսնելիս, ուրախանում էր: Շատ անգամ, յուր ոսկրոտ ձեռը դնելով այրիի փափուկ ափի մեջ, թույլ և փոքր ինչ խռպոտ ու երերուն ձայնով այնքան խոսում էր, որ այրին երբեմն, վախենալով վատ հետևանքից, ստիպված էր լինում ընդհատել նրա խոսքը: Խոսում էր նա անկապ, այլ և այլ բաների վրա, ստեպ-ստեպ փոխելով

խոսակցության առարկան: Ամեն օր նա խնդրում էր այրիին, որ սա մխիթարի ծերունուն, թույլ չտա, որ նա շատ տխրի յուր աղջկա հիվանդության մասին:

— Ես հույս ունեմ, որ շուտով կառողջանամ, — կրկնում էր նա վերջին օրերը:

Քանի հիվանդությունն, ըստ երևույթին, վտանգավոր չէր, բնավ չէր երկնչում մահից: Բայց վերջին օրերն, երբ միայն թույլ շնչառությունն էր մնացել, երբ նրա կանաչ-հողագույն դեմքը մահ և միայն մահ էր արտահայտում, նրա մեջ ծագեց զարմանալի հույս, թե շուտով առողջանալու է: Որքան կյանքը սպառվում էր, նույնքան այն քաղցրանում էր հիվանդի համար և նույնքան առողջանալու հույսը զորանում էր նրանում: Միևնույն ժամանակ, որքան նա մարմնապես տկարանում էր, նույնքան նրա խելքն ու միտքը պարզվում էին, նույնքան առողջ դատողություն էր անում այս կամ այն խոսակցության ժամանակ: Կարծես, մարմնից պակասող ուժն ավելանում էր հոգու և մտքի կորովին:

— Ախ, ի՞նչ լավ օր է, — ասում էր նա այրիին, խորը խորշերի մեջ ընկած աչքերի լայնացած բիբերը դարձնելով դեպի փողոցի կողմի լուսամուտը: — Գիտեք, Նատալիա Պետրովնա, ես ձեր Թիֆլիսը շատ հավանեցի, շա՜տ, ոչ մի տեղ երկինքն այսպես պարզ և կապույտ չէ: Հենց որ առողջանամ, մի օր միասին գնանք քաղաքից դուրս, հեռու, մի ամառանոց...

— Աստուծով, ասաուծով, դուք միայն լավացեք, գնալը հեշտ է, — սփոփում էր բարեսիրտ այրին, մայրական քնքշությամբ շոյելով նրա նիհար ձեռը, որ գծավորվել էր կապտագույն երակներով:

— Ի՞նչ է ասում բժիշկը, շո՞ւտ կազատվեմ անկողնից... Գիտեք, երկար պառկելուց մեջքիս վրա խոցեր են գոյացել:

— Շուտով վեր կկենաս, որդի, շուտով, — պատասխանում էր այրին, հազիվ կարողանալով զսպել յուր բուռն վիշտը,

— Ես առողջ եմ, Նատալիա Պետրովնա, միայն այս հազն է մնում, ձանձրացրել է ինձ: Կարծես մեկը ներսից ձեռով կոկորդս քորում է... ահա... հը՛ հը՛ հը՛...

Նրա այտերն ու ականջները սաստիկ կարմրում էին, ճակատի երակները դուրս էին ցցվում, շրթունքները կապտում էին, աչքերի բիբերն ավելի լայնանում, տալով նրա դեմքին մի սարսափելի արտահայտություն, և նա մի ամբողջ րոպե չէր կարողանում ազատ շնչել:

Մի օր երեկոյան Մինաս Կիրիլլիչը միայնակ, վշտահար նստած էր աղջկա մահճակալի մոտ և մերթ մտիկ էր անում նրա դեմքին, մերթ հանդարտ շոյում էր նրա երեսը, ճակատն ու երկայն մազերը, որ անկանոն և շքեղ ալիքով սփռված էին սպիտակ բարձի վրա: Հիվանդի աչքերր փակ էին. սակայն նա քնած չէր, այլ գտնվում էր մի տեսակ անդորրության մեջ — անդորրությունն, որ առաջանում էր սաստիկ տաքությունից:

Օրը բավական մթնել էր, լուսամուտներր բաց էին և իրիկնային թեթև զեփյուռը զովացնում էր տապացուցիչ օդը:

Աղախինը զգույշ քայլերով ներս մտավ, Վարվառեի սեղանի վրայի լամպարը վառեց և դուրս գնաց: Լույսն ընկավ հիվանդի փակ կոպերի վրա. նա բաց արավ աչքերն ու նայեց դեպի հոր կողմը:

— Ի՞նչ ես ուզում, Վարիա, — հարցրեց վերջինը, աթոռն առաջ քաշելով և ավելի մոտենալով մահճակալին,

— Ո՛չինչ, մտածում էի:

— Ինչի՛ վրա էիր մտածում, Վարիա...

— Մտածում էի... մորս մասին, Ես ուզում եմ նրա պատկերը տեսնել, կարելի՞ է, պապա:

Մինաս Կիրիլլիչը, լուռ, գլուխը թեքեց կրծքին և տեղից չշարժվեց: Հիվանդի տաքությունը սաստիկ էր. նա, առանց այն ևս, հուզված էր, իսկ ծերունին գիտեր, որ մոր պատկերն ավելի կհուզի նրան:

— Չի՛ կարելի, չե՞ք տալիս, որ նայեմ: Լավ, մի տվեք, ես արժանի չեմ նրա երեսին ուղիղ աչքերով նայելու: Հասկան ում եմ...

— Հանգստացի՛ր, Վարիա, հետո կտեսնես... Գիտես, որ բժիշկն արգելել է քեզ երկար խոսելու...

— Արգելե՛լ է, ինչո՛ւ, մի՞թե իմ մոր պատկերն էլ չեմ կարող տեսնել... Ոչ. բժիշկը սուտ է ասում, ևս թույլ չեմ, ես կարող եմ երկար ու երկար խոսել...

Հազը դարձյալ ընդհատեց նրա խոսքը, դարձյալ նրա երեսի գույնը փոխվեց: Նա դողդոջուն ձեռով նշան արավ: Հայրը մոտեցրեց նրա բերանին թաշկինակը, որ ընկած էր վերմակի վրա, և հետ դարձրեց պարզ-աղյուսագույն թաց բիծերով շաղախված:

Անտանելի կսկիծը, սուր ասեղի պես, խայթեց հոր տանջվող սիրտը: Նա երեսը հետ դարձրեց, որ հիվանդից թաքցնի յուր դեմքի արտահայտությունը:

Իսկ բժիշկը դեռ մխիթարում է ծերունուն: Ոչ, հույս չկա: Մի՞թե, միթե հույս չկա՞ այլևս, մի՞թե նա հավիտյան զրկվելու է յուր վերջին մխիթարությունից: Ինչո՞ւ, ո՞ւմ պատճառով:

— Հա՛յր, — լսեց ծերունին հիվանդի խռպոտ ձայնը:

— Հա՛յր, — կրկնեց հիվանդը, երեսը շուռ տալով դեպի պատի կողմ:

— Վարիա, Վարինկա, բավական է, ինչքան խոսեցիր, ահա, բժիշկը գալիս է:

Բայց բժիշկը չկար, իսկ հիվանդը շարունակեց.

— Գիտեմ, թե ինչու համար եք այդքան վատ աչքով նայում ինձ վրա... Բայց միթե դուք չպիտի՞ ներեք ինձ, ասացեք, չպիտի՞ ներեք...

— Վարիա, այդպես հուզվել չի կարելի… Ի՞նչ, դու լա՞ց ես լինում… Ի սեր աստծո, հանգստացիր։

Թույլ, ընդմիջվող հեկեկանքին հետևեց չարագուշակ հազը։ Հիվանդն աջ ձեռի արագ շարժումով վերմակի ծայրը դեն ձգեց կրծքի վրայից։

— Ոչ, դուք ինձ այն ասացեք, չպիտի ներեք ինձ, — շարունակեց նա, հեկեկանքը մի կերպ զսպելով։

Հայրը մի ձեռով բռնեց նրա բազուկը, մյուս ձեռով ծածկեց յուր աչքերն և, մի քանի վայրկյան լռելուց հետո, թույլ և դողդոջուն ձայնով ասաց.

— Ես արդեն ներել եմ քեզ…

Հիվանդն երեսը դարձրեց նրա կողմը։ Խորին գոհունակության ժպիտը շրթունքների վրա և ուրախության փայլն աչքերում՝ նա հոր ձեռը մոտեցրեց բերանին և երեք անգամ համբուրեց։ Հետո նա, աչքերը հառելով առաստաղին, կարծես, ինքն իրան սկսեց խոսել այսպես.

— Շնորհակալ եմ, ես արժանի չէի։ Ես նրա համար, էի ուզում մորս պատկերը, որ տեսնեմ, նա այժմ էլ այնպես է նայում ինձ վրա, ինչպես առաջ, տխուր, հանդիմանելով ինձ։ Դուք բարի եք, նա էլ բարի է եղել։ Իսկ ե՞ս… Գնա՛ք այստեղից։ Ես չեմ ուզում մնալ… Հեռացրե՛ք ինձ այստեղից, շուտով, շուտո՛վ հեռացրեք։ Դուք կարծում եք, որ ես չե՞մ կարող ճանապարհորդել… Բժիշկը սխալվում է։ Բժիշկները միշտ սխալվում են… Ես այս գիշեր մի երազ տեսա, լավ երազ էր. ես առողջ էի, զվարթ էի, ուրախ էի, մենք — ես, դուք, մայրս — միասին գտնվում էինք մի կայարանում։ Հեռու, շատ հեռու տեղ պիտի գնայինք…

— Ա՛խ, այս ինչ սարսափելի շոգ է, ծանր է, — շարունակեց հիվանդը, վերմակը բոլորովին մի կողմ ձգելով։ — Ես ճշմարիտն եմ ասում, որ պետք է գնամ։ Ո՛վ կարող է ինձ արգելել… Ոչ ոք։ Պատկե՞րը, պատկե՞րն եք ասում։ Չէ՛ հարկավոր չէ… Ես մորս գերեզմանը տեսել եմ, էլի ուզում եմ տեսնել։ Ուզում եմ ընկնել նրա քարի վրա, լաց լինել… Ա՛խ, լաց լինել, ես լաց լինել եմ ուզում, թողեք, որ ես լաց լինեմ։ Սուտ է. աշխարհիս երեսին աղջիկ չկա, որ յուր ծնողներին չսիրի՛ Երանի նրան, որ կենդանի մայր ունի։ Ես չունիմ, Նատալիա Պեարովնա, ես չունիմ։ Նա ինձ կսիրեր, եթե տեսած լիներ։ նա հիմա էլ է սիրում… Սիրո՞ւմ է, սիրո՞ւմ է, ասացե՛ք։ Նա ո՞վ է,… Դո՛ւրս, չեմ ուզում։ Նա կգա, լավ չէ, Ստեփա՛ն, Ստեփա՛ն, Ստեփա՛ն։ Նա ինձ չի թողնում, հայրս է, արգելում է… Ախ, այս ի՝նչ շոգ է…

Հիվանդն արդեն զառանցանքի մեջ էր խոսում։ Շվարված, երկյուղած ծերունին մերթ տեղից բարձրանում էր, ուղղում էր վերմակը, մերթ նստում էր, բռնում զառանցող ,դստեր ձեռը, նայում երեսին և արտասուքն աչքերին անդադար կրկնում.

— Վարիա, հանգստացիր, Վարիա, հանգստացի՛ր…

Հիվանդը չէր հանգստանում։ Խելագարի պես արագ-արագ շուռ էր գալիս այս և այն կողմի վրա, արտասանելով ինչ-որ անորոշ և անկապ դարձվածքներ։

Ներս մտավ բժիշկը, շտապով ձեռնոցը հանեց, մոտեցավ և հիվանդի բազուկը բռնեց: Երբեք տաքությունն այն աստիճանին չէր հասած մինչև այն օրը:

Խորին ակնածությամբ լի հայացքը բժշկի երեսին հառած, Մինաս Կիրիլլիչը մահճակալի մյուս կողմում կանգնած էր անշարժ, գունաթափ, նիհարած, մեջքից թեքված:

Բժիշկը փորձեց խոսել հիվանդի հետ: Կարմրած, լայնաբիբ աչքերր բաց, անխոս հիվանդը նայում էր նրա երեսին: Նա ճանաչեց բժշկին, ձեռով մի բացասական շարժում արավ, երեսը շուռ տվեց պատի կողմն և վերմակը քաշեց գլխին…

— Այսօր շա՞տ է հուզվել, — հարցրեց բժիշկը շշնջյունով:

Ծերունին գլխով դրական նշան արավ:

Բժիշկն անցավ սենյակի մյուս անկյունն և, ձեռները գրպանը դնելով ասաց.

— Երբ բժշկի պատվերները չեն կատարվում, ինչպես հարկը պահանջում է, բժշկի պատասխանատվությունը պակասում է: Ես անպարտ եմ:

Հետո նա մի հանգստացուցիչ դեղ գրեց տաքության դեմ և ծառային կանչելով, անձամբ պատվիրեց, որ շուտով դեղը բերի այն հայտնի դեղատնից, որ առաջ ինքը նծանակել էր:

Ծերունին կանչեց նրան մի կողմ:

— Պարոն բժիշկ, այնտեղ աստված, այստեղ դուք, — ասաց նա, նախ ձեռը բարձրացնելով դեպի վեր և ապա ցույց տալով սենյակի հատակը, — ասացե՛ք, հույս կա՞, թե՞ ոչ:

Այս վճռական հարցը բժիշկ Միրզախանյանցին նեղը գցեց, շփոթեցրեց: Նա աջ ձեռով բռնեց երկճյուղ միրուքի ծայրն և, ձախ ձեռը կողքին հենելով, քանի մի վայրկյան լուռ նայեց սենյակի հատակին:

Դա մի կասկածավոր և խորհրդավոր լռություն էր: Ծերունին իսկույն նախազգաց, թե բժիշկն եթե խոսեր, ինչ պիտի ասեր:

— Բժիշկ, խնդրում եմ, առանց ուշացնելու, հրավիրեցե՛ք մի քանի այլ բժիշկներ խորհրդակցելու համար:

— Ախ, դուք կոնսիլիո՞ւմ եք ուզում, լավ, եթե կամենում եք, հրավիրեցե՛ք, — պատասխանեց բժիշկ Միրզախանյանցն և, գլուխը ծռելով դեպի աջ ուսն, ավելացրեց, — իմ կողմից ոչինչ արգելք չկա:

— Անվանեցե՛ք, խնդրեմ, այն բժիշկներին, որոնց կարելի է հրավիրել:

Միրզախանյանցր հիշեց յուր արհեստակիցներից երեքի անուններն և, անմիջապես գրելով նրանց հասցեները, տվեց Մինաս Կիրիլլիչին:

— Իսկ Միսկարյանցին չհրավիրե՞մ, — ասաց ծերունին, տեսնելով, որ ցուցակի մեջ չկա այն բժշկի անունը, որի մասին նա շատ գովասանք էր լսել։

— Նա կոպիտ է։

— Բայց հասկացող է, ասում են։

— Նրա հասկացողության չափը մեզ բժիշկներիս է հայտնի։ Ամբոխը կույր է…

Այսուամենայնիվ, Մինաս Կիրիլլիչը պնդեց, որ անպատճառ Միսկարյանցը հրավիրվի, գեթ այն հիման վրա, որ սկզբում նա է դարմանել Վարվառեին։

— Ձեր կամքն է, պարոն Քիրիշչիև, հրավիրեցեք, ում կամենում եք, — պատասխանեց բժիշկ Միրզախանյանցն և շտապով, բարկացած, դուրս եկավ ու գնաց հիվանդի մոտ։

Հետևյալ օրն առավոտյան տասը ժամին, հիվանդին հերթով քննելուց հետո, կայացավ հինգ բժիշկների համախորհուրդը։ Ներկա էր և բժիշկ Միսկարյանցը, հակառակ Միրզախանյանցի ցանկության։

Այդ ժամանակ Մինաս Կիրիլլիչը նստած էր Վարվառեի մահճակալի մոտ։ Լուսադեմին հիվանդը մի քանի ժամ ննջել էր. տաքությունն այժմ թեթև էր և հիվանդի ուշքն էլ վրան։ Նա, հոր օգնությամբ, կաթն էր խմում։

Համախորհուրդը բավական երկար տևեց։ Ծերունին անհամբեր սպասում էր գիտության վերջին դատավճռին։ Նա, որի հույսը ղստեր առողջանալու վերաբերմամբ բոլորովին սպառվել էր, բժիշկներին տեսնելով, կրկին լեցվեց խաբուսիկ հույսերով։ Այո, զուր չեն վիճաբանում գիտնականներն այդքան երկար միջոց, եթե հիվանդի դրությունն անհուսալի լիներ, նրանք ապարդյուն ժամանակ չէին կորցնիլ… Անպատճառ, անպատճառ նրանք կփրկեն Վարվառեի կյանքը։

Եվ նա ստեպ ականջ էր դնում դեպի առանձնասենյակ, ուսկից թույլ կերպով լսվում էին վիճաբանողների ձայները։

Վերջապես, համախորհուրդն ավարտվեց։ Ամենից առաջ դուրս եկավ Միսկարյանցը։ Նրա հետևից դուրս եկան նաև մյուսները, ապա, Միրզախանյանցը, հուզված, այլայլված դեմքով, ականջների ծայրերը կարմրած։

Ծերունին ընդառաջ վազեց և, սեղանատանը հանդիպելով բժիշկներին, ձեռները առաջ պարզած, դողդոջուն ձայնով հարցրեց, արդյոք, փրկության միջոց մնում է։ Բոլորը տատանվելով նայեցին միմյանց երեսին, բացի Միսկարյանցից, որ այսպիսի դեպքերում ճշմարտությունը թաքցնելու խոհեմությունից զուրկ էր։

— Բժշկականությունը տկար է աստուծո կամքի առաջ, — ասաց նա դրական եղանակով, — դեղերն այսուհետև ավելորդ են, մնում է միայն, որ հիվանդին հանգիստ թողնեք։

Արտասանեց այս սարսափելի խոսքերն անգութ բժիշկը և իսկույն դուրս գնաց սենյակից, գլուխը թեթև շարժելով դեպի ծերունու կողմը, իսկ յուր արհեստակիցների վրա ձգելով արհամարհական հայացք:

Մինչ նա արագ-արագ հեռանում էր, ծերունին սենյակի մեջտեղում անշարժ, ապուշ դարձած, ողորմելի, այո, ողորմելի հայացքով նայում էր յուր շրջապատողներին: Անխի՜ղճ մարդիկ, ոչ ոք, ոչ ոք, չբողոքեց բժիշկ Միսկարյանցի անողոք դատավճռի դեմ: Եվ որքա՞ն ատելի էին անգութ էին նույն րոպեին բժիշկների անտարբեր դեմքերը թշվառ ծերունու աչքում...

Կեսօրվա չորս ժամն է. հիվանդի մահճակալի մոտ. Գլխի կողմում է այրի Նատալիան, իսկ ոտքի կողմում աղախինը:

Կես ժամ առաջ Վարվառեն անընդհատ խոսակցում էր այրիի հետ: Այժմ, աչքերր փակ, հանգիստ պառկած էր: Այրին, ծնոտը ձախ ձեռի ափին դրած և արմունկը հենած աթոռի մեջքին, մերթ նայում է հիվանդի, մերթ աղախնի երեսին, մերթ ոչ ոքի ու ո՛չ մի բանի վրա չի նայում, և նրա անորոշ հայացքը թափառում է այս ու այն կողմ:

Դռները բացվում են, ներս է մտնում ծերունին, նայում է այրիի երեսին, նայում է աղախնի երեսին և հուշիկ քայլերով ուզում է մոտենալ հիվանդին:

— Արթո՞ւն է, — հարցնում է նա շշնջյունով:

Այրին ձեռը դնելով բերանին, զգուշացնում է, որ նա չխոսի: Հիվանդը քնած է:

Ծերունին մանկական խոնարհությամբ հեռանում է մահճակալի մոտից, նստում է սենյակի անկյունում, ձեռները դնում է ծնկների վրա և գլուխր թեքում կրծք»ին: Ոլրեմն, մահն անխուսափելի է. այսօր թե վաղը, ուշ թե կանուխ, նա զրկվելու է յուր միակ և վերջին մխիթարությունից: Վարվառեն մեռնելու է:

— Մեռնելո՜ւ է, — կրկնում է ծերունին, մի զորեղ ցնցում գործելով, և նայում է մահճակալի կողմը:

Այրին ու աղախինը միևնույն դրության մեջ լուռ նստտած են, ինչպես երկու անշարժ իստուկաններ: Հիվանդի հորդոր շնչառության ձայնր որոշ հասնում է ծերունու ականջին, և նա լսում է միմիայն այդ շնչառությունը: Նրան թվում է, որ հետզհետե այն թուլանում է, երբեմն բոլորովին անլռելի է դառնում: Այդ վայրկյանին նա, տեղից քիչ բարձրանալով, նայում է աղջկա մեռելագույն դեմքին: Հանկարծ հիվանդն երկարատև հառաչում է, գլուխը շարժում է դեպի այրիի կողմն և զարթնում...

Ամենքը սթափվում են իրանց անշարժությունից: Ծերունին մոտենում է, ձեռը մեղմիկ դնում է աղջկա ձեռի վրա և սկսում է խոսել նրա հետ: Հիվանդը մտիկ է տալիս նրա հրեսին անթարթ աչքերով: Սարսափելի և գերբնական հայացք: Վարվառեի աչքերն, այն խոշոր, կենսալի, մելամաղձոտ աչքերը, մի տարօրինակ ազդեցություն են ստացել, բիբերն ապակու պես փայլում են, իսկ սպիտակուցն ավելի սպիտակել է և, կարծես, ոսկորի պես կարծրացել:

Ծերունին երկյուղածությամբ նայում է այրիի երեսին: Սա շոշափում է Վարվառեի ոտները, ձեռով խորհրդավոր նշան է անում և շտապով վազում դուրս:

— Մի բաժակ կա՛թն, — լսում է ծերունին Վարվառեի ձայնը — մի ձայն, որ, կարծես, անդունդի խորքից էգալիս:

Ծերունին կաթով լի բաժակը մոտեցնում է աղջկա բերանին: Նա մի քանի կաթիլ խմում է ու բաժակը զզվանքով հեռացնում իրանից, արտասանելով:

— Դա ջուր է:

Մահվան առաջին հաղթությունը. նա արդեն սպանել է հիվանդի հինգ զգայարանքներից մեկը — ճաշակը:

— Վա՛րիա, — գոչում է ծերունին բոլորովին հուսահատված և թեքվում է, որ համբուրի դստեր պարզ-հողագույն ճակատը:

Վարվառեն, լուռ, ձեռները տարածում է աջ ու ձախ: Հայրը և դուստրը համբուրվում են:

Երկար և երկար ժամանակ ծերունին չի բաժանվում աղջկանից, մինչև որ մեկը բռնում է նրա թևից:

Ծերունին հետ է նայում և տեսնում է սևազգեստ, բարձրահասակ, սպիտակ միրուքով անձնավորության, որ ինչ-որ շշնջալով նրա ականջին, աշխատում է հեռացնել նրան մահճակալի մոտից:

Քահանայի հետևից ներս է մտնում այրին, իսկ այրիի հետևից Կատոն:

Խորհրդավոր լռությունը տիրում է: Լսվում է միայն քահանայի միահնչյուն, մռայլ և անտարբեր ձայնը:

Նույն միջոցին աննկատելի ներս է մտնում մեկն, անցնում է և կանգ առնում սենյակի դատարկ անկյունում, Մինաս Կիրիլլիչի հետևում: Օրն անցել է, սենյակում մութն է, այնպես, որ նորեկը կարող է աննկատելի մնալ: Բայց ներկա են Կատոյի սրատես աչքերը: Կատոն, որին Վարվառեի մահվան անկողնի մոտ բերողն ավելի բուռն հետաքրքրությունն է, քան վշտակցությունը, մի փոքր առաջ է գալիս, արդյոք, ներս մտնողը նա՞ է: — Այո, նա է:

Քահանան վերջացնում է հաղորդությունը, մասնատուփը դնում է գրպանը և մոտենում է ծերունուն, որ նրան մխիթարի: Բայց մինչ նրա մի խոսք արտասանելը, ծերունին հետ է նայում, և մի վայրկյանում նրա խորին վշտերից բութ արտահայտություն ստացած դեմքն այլայլվում է: Նրա աչքերը փայլում են կատաղի հրով, բռունցքներն ակամա սեղմվում են, շրթունքներն սկսում են դողալ: Նա անզգայաբար մի քանի քայլ առաջ է դնում և, ատամները կրճտելով արտասանում է, — Անզգա՛մ…

Բայց Ռոստամյանն արդեն կանգնած է մահճակալի մոտ: Ավելի խղճալի պատկեր դժվար է երևակայել, քան այդ գունասպառ, նիհար, քրքրված և ճակատի վրա անկանոն կերպով սփռված կեղտոտ մազերով, դեմքի ապուշ արտահայտությամբ, աչքերի անիմաստ փայլով երիտասարդը: Որպես յուր երկարատև կապանքը նոր խորտակած կատաղի գազան, որ ազատության առաջին վայրկյանին չի կարող սթափվել, կանգնած է նա անշարժ, իմաստազուրկ աչքերը հառած Վարվառեի փակ աչքերին: Քահանան սարսափելով հետ է քաշվում, Կատոն երկյուղից մի թույլ ճիչ է արձակում, այրին տեղից բարձրանում է, հիվանդն աչքերը բաց է անում, մտիկ անում: Ծերունին բոնում է այցելուի թևից: Վերջինը մի քանի վայրկյան տատանվում է աջ ու ձախ, երկու անգամ բացականչում է Վարվառե, Վարվառե և չոքում է մահճակալի առջև:

Կարծես, մոռանալով, որ կանգնած է մահամերձ դստեր մահճակալի մոտ, ծերունին ուժգին բռնում է երիատասարդի օձիքից: Նավն վայրկյանին Վարվառեն յուր կիսամար աչքերը հառում է հոր երեսին: Բոլոր ներկա եղողները շվարած հետևում են լուռ, տարօրինակ տեսարանին, նկատում են աղջկա հայացքը, բայց ոչ ոք չի հասկանում, արդյոք, նա հանդիմանում է հորը, թե խնդրում է ձեռք չտալ ծնկաչոք ողբողին: Միայն ծերունու ձեռները թուլանում են. նա բաց է թողնում Ռոստամյանին:

Մահամերձ դստեր վերջին հայացքը թափանցում է նրա սրտի խորքը, որ այնտեղ մնա առ միշտ, որպես մեզապարտ հոր հավիտենական ընկեր…

Պարզ է, որ Վարվառեն ճանաչում է Ռոստամյանին: Եվ քանի մի վայրկյան նրա արյունաքամ, սպիտակ մեղրամոմի գույն ընդունած շրթունքները շարժվում են, անմիտ հայացքը բևեռվում է վերջինի դեմքին: Այնուհետև երեսը կրկին դարձնում է դեպի պատը, աչքերը փակում է, և այս անգամ… հավիտյան… Այրին յուր ձեռի թաշկինակը սեղմում է նրա աչքերին, ապա նույն թաշկինակով կապում է ծնոտը…

Հետևյալ օրը շաբաթ էր: Վարվառեի թաղումը հետաձգեցին կիրակի օրվան: Մինաս Կիրիլլիչն իբրև պանդուխտ, Թիֆլիսում բարեկամներ և. ազգականներ չուներ: Նրա դստեր թաղման հանդեսին, բացի ընդամենը չորս հոգուց, ուրիշ ո՛»վ պիտի մասնակցեր մի հասարակ օր: Այնինչ, կիրակին տոն օր է. բարեպաշտ մարդիկ թեև շատ քիչ թվով, բայց և այնպես այդ օրն են միայն եկեղեցի գալիս: Եթե չեն լինի այնպիսի մարդասերներ, որ պանդխտի դագաղն ուղեկցեն մինչև Խոջիվանքի գերեզմանատուն, գոնե եկեղեցին շատ էլ դատարկ չի լինիլ պատարագի ժամանակ:

Այսպես էր մտածում այրի Նատալիան, որին ծերունին խնդրել էր կարգադրել այնպես, ինչպես ինքը կամենում է և ինչպես պահանջում են տեղային ավանդությունները:

Առավոտյան տասը ժամին դիակր տարան եկեղեցի: Այդտեղ բավական թվով հանդիսականներ կային, որոնցից շատ քչերն էին լսել Քիրիշչիև ազգանունը: Կանանց դասի առջև կանգնած էին այրի Նատալիան և աղջիկը: Պատարագեց հետո, երբ սկսեցին հոգեհանգիստը, այրին արտասվեց: Շատ կանայք հետաքրքրվեցին, թե ինչու է նա արտասվում և ով է հանգուցյալը: Կատոն մեջ մտավ և սկսեց պատմել հանգուցյալի մասին, հարկավ, չմոռանալով հիշել և՛ Ռոստամյանի անունը: Պառավները ցավակցություն

արտահայտեցին և կամեցան տեսնել հանգուցյալի դժբախտ հորը: Կատոն ցույց տվեց: Ծերունին, ձեռները կրծքին դրած, գլուխը աջ ուսին թեքած, կանգնած էր քահանաների շարքում, աչքերը հառած դագաղի վրա: Նա չէր լալիս և ոչ էլ անգամ հառաչում: Արտասուքը վաղուց չորացել էր նրա աչքերում…

Երբ Կատոն հիշում էր հանգուցյալի կյանքի վերջին անցքերը, երիտասարդ կանայք, գլուխները վշտակցությամբ աջ ու ձախ շարժելով, հառաչում էին: Մեկը մինչև անգամ արտասվեց և խնդրեց Կատոյին, որ ցույց տա Ռոստամյանին: Կատոն աչքերով որոնեց երիտասարդին: Ռոստամյանը չէր երևում:

Պատարագը վերջացավ, դագաղը դուրս տարան: Այրիի պատվերով, Բեզիրգանովը հրավիրել էր համքարների երկու խումբ, բերել էր տվել քաղաքի ամենաընտիր դիակառքը, դագաղը լցնել էր տվել վարդերով, խուփը զարդսարել էր տվել թարմ ծաղիկներով: Մի խոսքով, այրին աշխատել էր, որ թաղումը շատ էլ անշուք չլինի:

Կանայք ցրվեցին իրանց տները: Այրին անթիվ անգամ համբուրեց հանգուցյալին, հեկեկաց և, կարծես, չէր ուզում բաժանվել նրանից, որպես թե յուր հարազատ զավակը լիներ: Կատոն նույնպես համբուրեց Վարվառեի դիակը, արտասվեց նա, թե չէ, բայց, նայելով աջ ու ձախ, աչթերը ծածկեց յուր ձեռի գեղեցիկ բատիստյա թաշկինակով…

Բարեպաշտ մարդիկ դագաղը մի փոքր տեղ ուղեկցեցին և, շուտով հոգնելով, երեսները խաչակնքեցին ու հետ դարձան:

Օրը պարզ էր, եղանակը բավական զով, գիշերը հորդառատ անձրև էր եկել, և օդն այնպես մաքուր էր, որպես միայն լինում է աշնանը:

Ծերունին ինքն էր ընտրել Խոջիվանքի դերեզմանատունը և անձամբ նշանակել էր յուր դստեր գերեզմանի տեղը, մի փոքր հեռու մյուս գերեզմաններից, պարսպի մոտ:

Դագաղը դրեցին նորավար գերեզմանի խոնավ հողի վրա, վերջին հոգեհանգիստը կատարվեց: Իսկ ծերունին դարձյալ չէր լալիս, նա նույն դրության մեջ, ինչպես եկեղեցում, կանգնած էր անշարժ, դարձյալ աչքերը հառած հանգուցյալի երեսին: Կարծես նա ոչինչ չէր զգում, ոչինչ չէր նկատում և չգիտեր թե ինչ է կատարվում յուր շուրջը:

Քահանաները լռեցին. նրանցից մեկը, խաչի ծայրը դնելով ծերունու ձեռի վրա, ինչ-որ ասաց և ցույց ավից դագաղը: Հայրը վերջին անգամ պիտի համբուրեր յուր միակ զավակի սառը դիակը: Եվ նա համբուրեց: Հետո դագաղը ցած իջեցրին, քահանաները դարձյալ սկսեցին երգել: Հետո ծերունուն, առաջարկեցին մի բուռն հող վերցնել, քահանան ինչ-որ կարդաց, խաչակնքեց և, ծերունին հողը սփռեց դագաղի մեջ… աղջկա երեսին: Այնուհետև նա վերցրեց երկրորդ բուռը, հետո երրորդն, և այդ րոպեին համքարների մեջ մի թեթև իրարանցում ընկավ:

— Ես ասո՞ւմ էի, ես ասո՞ւմ էի, որ ավազակները նրան հավւշտակել են, որ ուղում են սպանել: Իսկ նրանք ինձ չէին թողնում, որ գամ և ազատեմ նրան…

Այսպես գոչելով, առաջ վազեց մեկն և թուլացած ոչ թե չոքեց, այլ միանգամայն ընկավ դագաղի մոտ: Ամենքն ապշած նայեցին միմյանց: Բեղիրգանովը, ձեռով ցույց աալով յուր ճակատը, աչքունքով մի նշան արավ քահանաներին, հետո մոտեցավ և ուժով նորեկին բաժանեց դագաղից:

Հագուստը մի քանի տեղ պատառոտված, վարտիկի ծնկները փոշոտ, գլուխը բաց, երեսը գունաթափ, մազերը քրքրված, մեջտեղ կանգնած էր... Ռոստամյանը, անշարժ հայացքը հառած դեպի գերեզմանի խորքը, ուր հետզհետե նրա աչքերից անհետանում էր Վարվառեի դագաղը...

Այլևս ծերունին կարողություն չուներ կատաղելու: Բայց երբ հանկարծակի նայեց Ռոստամյանի երեսին և երբ տեսավ նրա աչքերի անմիտ, սարսափելի և միևնույն ժամանակ, խղճալի փայլը — երեսը հետ դարձրեց:

Այո, այդ արդեն խելագարի հայացք էր և ծերունու համար նույնքան ազդու, նույնքան նրա սրտի խորքը թափանցող, որքան դստեր վերջին հայացքը...